

Անկախության և անցումային

10

տարիները Հայաստանում



ԵԱԿԸ

Մարդկային
զարգացման
ազգային
գեկույց

Հայաստան
2001

Յեղիսակային խումբ

Ծրագրի ազգային ղեկավար՝ **Զոհրաբ Մնացականյան**
Ծրագրի ազգային համակարգող՝ **Նունե Եղիազարյան**

Գլուխ 1 **Մկրտիչ Զարդարյան**, պատմական գիտ. թեկ.
Արամ Զարուքյունյան
Խաչատուր Բեգիրջյան, կենսաբանական գիտ. թեկ.
Ավետիք Իշխանյան, երկրաբանական գիտ. թեկ.
Բորիս Նավասարդյան
Աշոտ Զալինյան, տնտեսագիտության թեկ.
Էդուարդ Օրդյան, տնտեսագիտության դոկտոր
Սոս Գիմիշյան

Գլուխ 2 **Արա Քառյան**, տնտեսագիտության թեկ.
Ստեփան Մանթարյան, տնտեսագիտության թեկ.
Բագրատ Թունյան, տնտեսագիտության թեկ.
Նարինե Սահակյան, տնտեսագիտության թեկ.

Գլուխ 3 **Գյուլնարա Զովհաննիսյան**, տնտեսագիտության թեկ.
Անահիտ Սարգսյան, տնտեսագիտության թեկ.
«Հոգևոր Զայաստան» ՀԿ, **Անահիտ Զարուքյունյան**, բանասիրական գիտ. թեկ.

Գլուխ 4 **Վիկտորիա Տեր-Նիկողոսյան**, կենսաբանական գիտ. թեկ.
Աղավնի Կարախանյան
Տնտեսական հետազոտությունների ինստիտուտ, **Արմենակ Դարբինյան**, տնտեսագիտության թեկ.
Նունե Եղիազարյան
Զրաչ Գալստյան, կենսաբանական գիտ. թեկ.

Ներդրումների հեղինակներ

Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Տեղեկատվական համակարգ

Գագիկ Գյուրջյան, ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության պետ
Սերգեյ Վարդանյան, «Հոգևոր Զայաստան» ՀԿ

Գևորգ Պողոսյան, «Հայկական սոցիոլոգիական ընկերակցություն»
Երևանի մամուլի ակումբ

Բագրատ Սահակյան

Արևիկ Պետրոսյան, **Ահարոն Մկրտչյան**, ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի քաղաքացիական ծառայության բարեփոխումների աշխատանքային խումբ

Արմեն Խուրազբեկյան, ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի քարտուղար
«Լոգիկա» գործարար և ֆինանսատնտեսական անկախ հետազոտությունների կենտրոն

«Օրրան» հասարակական կազմակերպություն

Միգրացիայի միջազգային կազմակերպության Հայաստանի գրասենյակ

«Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն»

Կարինե Դանիելյան, «Հանուն մարդկային կայուն զարգացման» ասոցիացիա

«Միջազգային օժանդակությունը համակարգելու և մոնիտորինգի համար ազգային ենթակառուցվածքների ուժեղացում» ՄԱԶԾ ծրագիր

Սեդա Վերմիշևա

Ծրագրի գծով օգնական՝ **Աննա Գյուրջյան**

Թարգմանիչներ՝ **Աղասի Եսայան**, **Վլադիմիր Օսիպով**, **Արտաշես Էմին**
Խմբագիրներ՝ **Այդին Մորիկյան** (հայերեն), **Էլիզաբեթ Ուինչիփ** (անգլերեն)

Սրբագրիչ՝ **Սամվել Խաչատրյան**

Զևակորումը և կազմը՝ **Սամվել Փարթամյանի**

«Անկախության և անցումային տասը տարիները Հայաստանում» խորագրով զեկույցն արդյունք է Միավորված ազգերի Զարգացման ծրագրի աջակցությամբ և հովանավորությամբ կատարված ծավալուն աշխատանքի:


Մենք կարևորում ենք անկախ փորձագետների կողմից մշակված նմանօրինակ զեկույցները և գնահատում դրանք որպես աջակցություն՝ ժողովրդավարական և տնտեսապես զարգացած պետություն կառուցելու Հայաստանի Հանրապետության իշխանությունների որդեգրած անշրջելի ուղեգծին: Ամենամյա զեկույցներում արտահայտված տեսակետները միշտ չէ, որ համընկնում են պաշտոնական տեսակետներին: Այդուհանդերձ, նման զեկույցները կարող են հարուցել առողջ բանավեճեր և հասարակական լայն քննարկումներ, որոնք իրենց հերթին կնպաստեն մեր պետության ու հասարակության նպատակների և անելիքների ավելի խոր ընկալմանը:

Անցած տասը տարիների ընթացքում Հայաստանում իրականացվել են գրեթե բոլոր բնագավառներն ընդգրկող բարեփոխումներ: Իրականացված և ընթացքի մեջ գտնվող ժողովրդավարական և տնտեսական բարեփոխումների արդյունքում ստեղծվեցին այն անհրաժեշտ իրավական դաշտն ու նախադրյալները, որոնք թույլ տվեցին մեզ այսօր մտնել զարգացման մի նոր որակական փուլ: Մենք մեր փորձով գիտենք, որ անցումային երկրի համար քաղաքական կայունությունը զարգացման գլխավոր խթանն է:

Հայաստանը տնտեսական և սոցիալական վերելքի իր հույսերն առաջին հերթին կապում է ժողովրդավարության իր անշրջելի ընտրության և պետության կազմակերպվածության հետ՝ միաժամանակ մեծապես կարևորելով միջազգային ինտեգրացիայի խորացումը:

Իրականացված բարեփոխումների արդյունքները բարձր են գնահատվել միջազգային հանրության, այդ թվում նաև համապատասխան միջազգային կազմակերպությունների կողմից: Դրա հետ մեկտեղ, չնայած մակրոտնտեսական ցուցանիշների զգալի աճին, մնում են չլուծված կամ լրացուցիչ կարգավորում պահանջող մի շարք խնդիրներ. մասնավորապես հարկային, էներգետիկայի, պետական ծառայության և այլ բնագավառներում: Բարեփոխումները պետք է շարունակվեն նաև ներդրումների խրախուսման, կրթության և առողջապահության ոլորտներում: Համոզված ենք, որ այսօր Հայաստանի առջև ծառայած խնդիրներն, իրենց ողջ բարդությամբ ու բազմաշերտությամբ, լուծելի են:

Ողջունում են 2001 թվականի Ազգային զեկույցը կազմողներին, հեղինակներին ու աջակիցներին և շնորհավորում այս աշխատանքն իրականություն դարձնելու կապակցությամբ:



Վարդան Օսկանյան

ՀՀ արտաքին ործերի նախարար

Անկախության հռչակումը և անցումը շուկայական տնտեսության 1990-ական թվականներին լուրջ խնդիրների առաջ կանգնեցրեց գրեթե բոլոր ետխորհրդային պետություններին: Հայաստանը բացառություն չէր, և տնտեսապես արդարացված ժողովրդավարության տանող նրա ճանապարհին քիչ չէին բացթողումներն ու օգտագործված հնարավորությունները, ձախողումներն ու հաջողությունները: 2001 թվականը, որը Հայաստանի համար հատկապես հազեցած էր իրադարձություններով, խորհրդանշորեն մեկտեղում է այս ազգի հնադարյան իմաստնությունը և նորերս ձեռք բերած ժողովրդավարությունը՝ նշանավորելով անկախության հռչակման 10-ամյակը և քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակը: Հայաստանի անկախության տասնամյակին և անցումային ժամանակաշրջանի տասնամյակին նվիրված 2001թ. Մարդկային զարգացման ազգային զեկույցի (ՄՁԱԶ) ուշադրության կենտրոնում հենց այդ ժամանակաընթացքում ծառայած հիմնահարցերն են:

Մարդկային զարգացման ազգային զեկույցները կառավարության, Միավորված ազգերի կազմակերպության Ջարգացման ծրագրի և երկրի մտավորականության համագործակցության լավագույն ապացույց են: ՄՁԱԶ-ները պատրաստվում են մի խումբ անկախ ազգային փորձագետների կողմից, ՄԱԶԾ հովանավորությամբ և ՀՀ նախագահի աշխատակազմի օժանդակությամբ, սկսած 1995թ.-ից: Դրանք ներկայացնում են տրված հիմնախնդրի վերաբերյալ տարբեր տեսակետներ ու կարծիքներ, քննարկում են երկրում տիրող իրավիճակը՝ ուշադրության կենտրոնում ունենալով մարդկանց և անցման հետ կապված խնդիրները լուծելու առաջարկություններ են անում:

Առաջին ՄՁԱ-ն ձեռնարկվել է դեռևս 1990թ., որում ներկայացվել էր մարդկային զարգացման հայեցակարգը՝ աշխարհի ուշադրությունը սևեռելով մարդու՝ որպես զարգացման համար միջոցի և նպատակի վրա: Այնուհետև ՄՁԱ-ները գլոբալ միտումները դիտարկելու և քաղաքականության մեջ սրբագրումներ անելու առաջարկությունների շնորհիվ նշանակալի դեր ունեցան նոր մոտեցումներ ձևավորելու, զարգացման այլընտրանքային սցենարներ նախանշելու և համայն աշխարհի բնակչության հիմնախնդիրները վեր հանելու գործում: 90-ականների կեսերից ի վեր ՄՁԱ-ները, որ պատրաստվում են ավելի քան 130 երկրներում, գիտելիքի, տեղեկատվության և հայեցակարգերի անփոխարինելի աղբյուր են դարձել:

2001թ. Մարդկային զարգացման զեկույցը՝ «Նոր տեխնոլոգիաներն ի շահ մարդկային զարգացման» խորագրով, դարձյալ մարդկանց մասին է, որ ուշադրություն է հրավիրում այն հնարավորությունների և վտանգների վրա, որոնք բերում են մարդկանց նոր տեխնոլոգիաները, աշխարհի որ անկյունում էլ նրանք լինեն: Ջեկույցի հիմնական խնդիրներից մեկը երկրների օժանդակությունն է «գլոբալ և ազգային քաղաքականությունները և հաստատությունները տարբերակելու խնդրում, որպեսզի լավագույնս օգտվեն տեխնոլոգիական առաջընթացից և միաժամանակ պաշտպանվեն այն նոր ռիսկերից, որոնք անխուսափելիորեն ուղեկցում են այդ գործընթացը»¹: Ինչ-

¹ Human Development Report 2001, Mark Malloch Brown, Administrator, UNDP


պես նախորդ զեկույցներում, այս տարի ևս բոլոր արժարժված խնդիրները, մտահոգությունները և դժվարությունները վերաբերում են բոլոր երկրներին՝ անկախ իրենց կարգավիճակից, զարգացումից և առաջնայնություններից:

ՄՁԱԶ 2001-ում քննության են առնվել հետևյալ հիմնախնդիրները. հաղորդակցական և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառը Հայաստանում, որը կառավարությունն առաջնահերթ է համարում երկրի զարգացման համար, ներկայումս իրողություն դարձած զլոբալացման և ինտեգրացման միտումները, ինչպես նաև լավ կառավարման հիմունքները՝ ամրապնդված մարդկային զարգացմամբ: Ձեկույցը կենտրոնանում է վերջին տասնամյակի քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացումների վրա: Նաև մատնանշում է անցման և անկախության տասը տարվա ընթացքում ունեցած ձեռքբերումներն ու կորուստները, քաղված դասերը և հետագա քայլերի առաջարկություններ ներկայացնում: Այս համատեքստում միանգամայն տեղին էր ՄՁԱԶ 2001-ի հիմնական թեմայի՝ լավ կառավարման, ընտրությունը, քանզի «լավ կառավարումը եզակի ու առավել արդյունավետ գործոն է աղքատության կրճատման և մարդկային զարգացման խթանման համար»²: Ձեկույցում փորձ է արվել այս բոլոր հարցերը դիտարկելու փոխադարձ կապի մեջ:

Ձեկույցում տեղ գտած գնահատականները ու առաջարկությունները կարող են վիճելի լինել, սակայն մենք հույս ունենք, որ դրանք Հայաստանը ժողովրդավարական պետություն դարձնելու ուղիների և միջոցների շուրջ բանավեճերի ծավալման առիթ կդառնան և այդպիսով կնպաստեն իրական քաղաքական մասնակցությանը, որոշումների ընդունման գործընթացի թափանցիկությանը և աղքատության վերացմանն ուղղված զարգացմանը:

Հեղինակային խումբը, առաջնորդվելով անկողմնակալության, հրապարակայնության և երկխոսության գաղափարներով, իր հիմնական նպատակը համարել է մարդկային զարգացման համատեքստում տեղեկատվական-վերլուծական փաստաթղթի պատրաստումը: Ձեկույցի հեղինակներին հաջողվել է երկրի վերջին տարիների ձեռքբերումների ամփոփ նկարագիրը տալու բարդ խնդիրը՝ ապահովելով այլընտրանքային տեսակետներն ու մոտեցումները: Մենք գնահատում ենք հեղինակների ազատ և անկախ մտածելակերպը և մասնագիտական համերաշխությունը, ինչպես նաև ամբողջ աշխատանքի ընթացքում մասնակցության և թափանցիկության սկզբունքի պահպանումը:

Կցանկանայի մեկ անգամ ևս շնորհավորել հեղինակային խմբին ՄՁԱԶ 2001-ի բարեհաջող ամփոփման կապակցությամբ և հույս հայտնել, որ նրանց քրտնաջան աշխատանքի արդյունքը կնպաստի Հայաստանի ապագային:



Ժոյել Բուտրո

*ՄԱԿ-ի մշտական համակարող,
ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ*

² Kofi A. Annan, Secretary General of the United Nations.

Խոսք Երախտագիտության

Մարդկային զարգացման ազգային զեկույցն անհնար կլիներ պատրաստել առանց մի շարք կազմակերպությունների և անհատների գործուն օժանդակության:

Խուճը շնորհակալություն է հայտնում ՀՀ նախագահի աշխատակազմին, մասնավորապես ծրագրի ազգային տնօրեն պարոն Զոհրաբ Մնացականյանին սերտ համագործակցության համար:

Ձեկույցը մեծապես շահել է արտաքին խորհրդատուների աջակցությունից, մասնավորապես՝ Միա Սեպպոյի, (ՄԱԶԾ, Նյու Յորք) և Ջուլիեթ Էլ Հաժի (ՄԱԶԾ, Բրասիլիա) կողմից արված հայեցակարգային առաջարկություններից և խորհուրդներից:

Խուճը երախտագիտություն է հայտնում ՀՀ կառավարությանը, ինչպես նաև ՀՀ սոցիալական ապահովության, ֆինանսների և էկոնոմիկայի, կրթության և գիտության, առողջապահության, կապի և տրանսպորտի, բնապահպանության, պետական գույքի կառավարման, մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություններին, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին, ՀՀ կենտրոնական բանկին, ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչությանը, ՀՀ ԱԺ սոցիալական, առողջապահության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովին, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիային և Ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոնին զեկույցն ուսումնասիրելու և արժեքավոր լրացումների ու առաջարկությունների համար: Առանձնակի շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը՝ պաշտոնական վիճակագրական տվյալներ տրամադրելու համար:

Ձեկույցի վերջնական խմբագրմանը նպաստել է նաև Մարդկային զարգացման փորձագետների ակումբի անդամների, մասնավորապես Կարինե Դանիելյանի, Նելսոն Շահնազարյանի, Անահիտ Մելքունյանի, Հեղինե Մանասյանի, Ռուբեն Եգորյանի, Ռիմա Տեր-Մինասյանի, Միքայել Վերմիշևի և Էդվարդ Մելքոնյանի կողմից կատարված աշխատանքը: Ցանկալի է նշել նաև զեկույցի անկախ ուսումնասիրողներին և հատկապես Վոլֆ Սկոտին և Սուսաննա Եղիազարյանին:

Ձեկույցում տեղ են գտել մի շարք հասարակական կազմակերպությունների կողմից պատրաստված ներդրումները: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում «Հանուն կայուն մարդկային զարգացման» սոցիալապահպան, «Հայկական սոցիոլոգիական ընկերակցությանը», «Լոգիկա» գործարար և ֆինանսատնտեսական անկախ հետազոտությունների կենտրոնին, «Օրրան» և «Հոգևոր Հայաստան» հասարակական կազմակերպություններին, Երևանի մամուլի ակումբին, «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությանը» տրամադրված նյութերի համար:

Ծրագիրը ցանկանում է ընդգծել նաև Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակի, ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության, ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի և դրան կից քաղաքացիական ծառայության բարեփոխումների աշխատանքային խմբի կողմից արված գնահատելի ներդրումը:

Օգտակար դիտողություններ ու կառուցողական առաջարկություններ են արել նաև ՄԱԶԾ աշխատակիցները: Խուճը երախտագիտություն է հայտնում ՄԱԶԾ գրասենյակի աշխատողներ Դավիթ Հակոբյանին, Բարբարա Քալաշյանին, Անահիտ Սիմոնյանին, Քրիստինե Կարապետյանին և Աստղիկ Միրզախանյանին:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Այդին Մորիկյանին՝ հայերեն բնագրի խմբագրման, Էլիզաբեթ Ուինչֆիլդին՝ անգլերեն տարբերակի խմբագրման համար և Սամվել Փարթամյանին՝ զեկույցի գեղեցիկ ձևավորման համար:

Ողջ հեղինակային խուճը իր խորին երախտագիտությունն է հայտնում 1997-2001 թվականներին Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Կատիցա Ցեկալովիչին, որի օժանդակությունը և նվիրվածությունը անկախ ազգային զեկույցի պատրաստման գործին ոգեշնչում էր բոլորին:

Առանձին շնորհակալություն ՄԱԶԾ մշտական ներկայացուցչի պաշտոնակատար Գասպար Կամպին, ինչպես նաև Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Ժոյել Բուտրոյին օգտակար խորհուրդների և օժանդակության պատրաստակամության համար:

Հեղինակային խուճը շնորհակալություն է հայտնում բոլոր նրանց, ովքեր այս կամ այն չափով նպաստել են զեկույցի պատրաստման աշխատանքներին, և ստանձնում է ներկայացված կարծիքների ողջ պատասխանատվությունը:

Հապավումներ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԱԶՅԾ	Աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայություն
ԱԺ	Ազգային ժողով
ԱՀԿ	Առևտրի համաշխարհային կազմակերպություն
ԱՀՅ	Ամերիկայի հայկական համագումար
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՄԳ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՇ	Անավարտ շինարարություն
ԱՇՕ	Անավարտ շինարարության օբյեկտ
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԱՆՈԾ	Աղքատության նվազեցման ռազմավարական ծրագիր
ԲԱԲ	Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրություն
ԲԸ	Բաժնետիրական ընկերություն
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵԽ	Եվրոպայի Խորհուրդ
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՄԱ	Երևանի մամուլի ակումբ
ԶԳԾ	Զբաղվածության հանրապետական ծառայություն
ԶՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ԺՀՄԻԳ	Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
ԼԴՀ	Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
ԽՍՀՄ	Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
ԿԱԳՀ	Կառավարման արդյունավետության ապահովման համակարգ
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԿԳԱՀ	Կառավարման գիտական ապահովման համակարգ
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
ԿԶ	Կայուն զարգացում
ԿԾԱՀ	Կառավարման ծրագրային ապահովման համակարգ
ԿՀ	Կենսաթոշակային համակարգ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԲԸՄ	Հայկական բարեգործական ընդհանուր միություն
ՀԺԿ	Հայաստանի ժողովրդական կուսակցություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՅ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԱԿԾ	ՀՀ ազգային վիճակագրության ծառայություն
ՀՅԴ	Հայ հեղափոխական դաշնակցություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՈԸ	Հեռուստառադիոընկերություն
ՄԱ	Մարդկային անվտանգություն
ՄԱԶԾ	Միավորված ազգերի Ջարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱՓ	Մարդկանց անօրինական փոխադրում
ՄԶ	Մարդկային զարգացում
ՄԶԱԶ	Մարդկային զարգացման ազգային զեկույց
ՄԶՀ	Մարդկային զարգացման համաթիվ
ՄԻ	Մարդու իրավունքներ
ՄՄԿ	Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ԿԱՀ	Կենսաթոշակային ապահովության համակարգ
ՈԿԿ	Ոչ կառավարական կազմակերպություն
ՊԲԸ	Պետական բաժնետիրական ընկերություն
ՊԿՀ	Պետական կառավարման համակարգ
ՊԳԾ	Պարենի համաշխարհային ծրագիր
ՌԱԿ	Ռամկավար-ազատական կուսակցություն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՏԵՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԳՏ	Տեղեկատվական - հաղորդակցական տեխնոլոգիաներ
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՔԾՀ	Քաղաքացիական ծառայության համակարգ
ՕՈՒՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ

Բովանդակություն

Առաջաբան	3
Նախաբան	4
Խոսք երախտագիտության	6
Հապավումներ	7
Հակիրճ նկարագրություն	11
Հայաստանի Հանրապետության վերաբերյալ վիճակագրական տվյալներ	23
Ներածություն	26
Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակը	29

Գլուխ 1 Ժողովրդավարությունը քաղաքական կառավարման ոլորտում 33

1.1	Հայաստանի Հանրապետության անկախության տասնամյակը	35
1.2	Հայաստան-Սփյուռք հարաբերությունները	37
1.3	Օրենքի գերակայության ամրապնդումը	41
1.4	Ժողովրդավարական քաղաքական ինստիտուտների կայացումը ՀՀ-ում	44
1.4.1	Քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանց ընտրովիություն և ժողովրդավարական ընտրություններ	44
1.4.2	Խոսքի ազատությունն ու տեղեկատվության անկախ աղբյուրները	45
1.4.3	Անկախ միավորումներ	46
1.5	Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում	48
1.5.1	ՀՀ պետական կառավարման համակարգը	48
1.5.2	Տեղական ինքնակառավարում	57
	Վարչատարածքային համակարգը: Տեղական ինքնակառավարման տարածքային հիմքերը	58
	Տեղական ինքնակառավարման համակարգը, համայնքի ֆինանսական ապահովվածությունը, համայնքի սեփականությունը	59
	Համակարգի զարգացման ռազմավարությունը, համայնքի կառավարման համակարգի բարելավման ուղղությունները	61

Ներդիրներ

1.1	Անկախության արդյունքների գնահատականը
1.2	Սփյուռքը որպես Հայաստանի տնտեսական զարգացման լուրջ գործոն
1.3	Հայաստանի առաջին քայլերը Եվրոպայի խորհրդի կազմում
1.4	Մարդու իրավունքների հիմնախնդիրները Հայաստանում
1.5	Հայաստանում ընտրությունների ընթացքում արձանագրված թերությունները
1.6	Ով է որոշում ՁԼՄ-ների բովանդակությունը
1.7	Քաղաքացիական ծառայության մասին օրինագծի հիմնադրույթները
1.8	Ծառայողների կարծիքը «Քաղաքացիական ծառայողի էթիկայի կանոնների» ներդրման վերաբերյալ
1.9	Տեղական ինքնակառավարումը և ՀՀ օրենսդրությունը
1.10	ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի թերությունները
1.11	Համայնքային զարգացման ծրագրեր

Նկարներ

1.1	ՀՀ-ում գործող ՀԿ-ների թիվը՝ ըստ գործունեության ոլորտների
-----	--

Աղյուսակներ

1.1	Պետական ոչ արդյունավետ կառավարման պատճառները ըստ հարցման արդյունքների
1.2	1995-2000թթ. ՀՀ կառավարության կառուցվածքը և փոփոխությունները
1.3	Նախարարությունների կողմից իրականացվող յուրաքանչյուր գործառնության տեսակարար կշիռը գործառնության ընդհանուր ծավալում (ըստ կատեգորիաների)
1.4	ՀՀ ՏԻՄ-երի ֆինանսական ապահովվածության մակարդակը

Գլուխ 2 Տնտեսություն. բարեփոխումներ, զարգացում, խոչընդոտներ 63

2.1	Անցումային շրջանի արդյունքում ձևավորված տնտեսության մակրոտնտեսական բնութագիրը	65
2.2	Մասնավորեցման գործընթացը 1991-2001թթ.	67
2.3	Կապիտալի շուկա	71
2.4	Մրցակցության հավասար պայմանների ձևավորումը և պետական հատվածի կարգավորման խնդիրները	72
2.5	Դրամավարկային քաղաքականություն	73
2.6	Ֆինանսական շուկայի ձևավորմանն ուղղված բարեփոխումները	74
2.7	Չարկային քաղաքականություն	75
2.8	Չայաստանի ստվերային տնտեսությունը	77
2.9	Կոռուպցիան որպես երկրի տնտեսական զարգացման խոչընդոտ	81
2.10	Բյուջետային գործընթաց	86
2.11	Ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորումը	88

Ներդիրներ

- 2.1 Բաժնետիրական ընկերություններ
- 2.2 Չայաստանի ստվերային տնտեսության ծավալների հաշվարկը
- 2.3 Կոռուպցիայի առանձնահատկությունները անցումային երկրներում
- 2.4 Չայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի պետական ծրագրի հիմնական ուղղությունները

Նկարներ

- 2.1 Փոքր օբյեկտների մասնավորեցման ընթացքն ըստ տարիների (1994-2001թթ.)
- 2.2 Միջին և խոշոր բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման ընթացքն ըստ տարիների (1995-2001թթ.)
- 2.3 Միջին և խոշոր բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման ընթացքն ըստ մարզերի
- 2.4 ՀՀ-ում հարկային եկամուտների և անվանական ՀՆԱ-ի հարաբերակցության գործակցի դինամիկան 1994-2000թթ.
- 2.5 Փողի պահանջարկի մեթոդով և ՀՀ ԱՎԾ կողմից հաշվարկված Չայաստանի ստվերային տնտեսությունը բնութագրող ցուցանիշները 1994-2000թթ.
- 2.6 ՀՀ պետական բյուջեի փաստացի հավաքագրված հարկային եկամուտները և ստվերային տնտեսության առկայության հետևանքով հարկային կորուստները 1994-2000թթ.
- 2.7 Կոռուպցիայի դասակարգումը
- 2.8 Կոռուպցիայի հիմնական պատճառները ՀՀ-ում
- 2.9 Պետական բյուջեի կատարողականը 1999-2000թթ.
- 2.10 ՕՈՒԽ-ի դինամիկան ՀՀ-ում

Աղյուսակներ

- 2.1 ՀՀ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները

Գլուխ 3 Անկախ Չայաստանի սոցիալական կողմնորոշումը 91

3.1	Աղքատությունը և սոցիալական աջակցության քաղաքականությունը	94
3.2	Կենսաթոշակային ապահովություն	98
3.3	Զբաղվածություն և աշխատանք	101
3.4	Միգրացիան որպես սոցիալական խնդիր	105
3.5	Կրթություն	107
3.6	Առողջապահություն	110
3.7	Մշակույթ. ավանդույթներ և հնարավորություններ	112
3.8	Մշակութային քաղաքականության իրականացման գործիքները	113

Ներդիրներ

- 3.1 Փոքրիկ օրրան փոքրիկների համար
- 3.2 Մարդկանց անօրինական փոխադրումներ և մաքսանենգ ճանապարհով մարդկանց փոխադրումներ
- 3.3 Մշակութային ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը

Նկարներ

- 3.1 Բնակչության եկամուտների միջին չափերը և նվազագույն սպառողական զամբյուղը
- 3.2 Ջբաղվածների, կենսաթոշակառուների և փաստացի հատկացում կատարողների թվաքանակը 1998-2000թթ.
- 3.3 Կենսաթոշակային ապահովության ուղղված ֆինանսական միջոցները
- 3.4 Միջին աշխատավարձի և միջին կենսաթոշակի աճի դինամիկան ԶՀ-ում 1997-2000թթ.
- 3.5 Կենսաթոշակային ապահովության նոր (առաջարկվող) համակարգի կառուցվածքը ԶՀ-ում
- 3.6 Գործազուրկների տարիքային կազմը ԶՀ-ում
- 3.7 ԶՀ-ում աշխատանքի և զբաղվածության ոլորտի կառավարման պետական համակարգը
- 3.8 Անունությունների թվի և բնական աճի գործակիցը 1000 բնակչի հաշվով
- 3.9 Կրթության ոլորտի ֆինանսավորման ծախսերը ԶՀ-ում 1992-2000թթ.
- 3.10 Արդի կյանքում հաջողության հասնելու նախադրյալների ստորակարգումը
- 3.11 Ժողովրդագրական ցուցանիշների շարժը 1991-2001թթ.

Աղյուսակներ

- 3.1 ԶՀ հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները անկախության 10 տարիներին (1991-2000թթ.)
- 3.2 Աղքատության ցուցանիշների միտումները 1996 և 1998/1999 թթ. ընթացքում
- 3.3 Ջբաղվածության հիմնական ցուցանիշները ԶՀ-ում
- 3.4 ԶՀ կրթական համակարգի որոշ բնութագրեր

Գլուխ 4	Հայաստանի զարգացման հեռանկարային ուղղությունները	115
4.1	Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ. զարգացման նախադրյալները	117
4.1.1	ՏՀՏ զարգացումը կարգավորող միջավայրը	119
4.1.2	ՏՀՏԱ զարգացման ներուժը	119
4.1.3	ՏՀՏԱ զարգացման դերը համաշխարհային տնտեսության մեջ ԶՀ-ի ներգրավման առումով	121
4.2	Գլոբալացում և ինտեգրացում	122
4.2.1	Գլոբալացման տնտեսական գործընթացը և Հայաստանը. իրողություններ և հնարավորություններ	125
4.3	Գիտական և ծրագրային ապահովումը՝ արդյունավետ կառավարման կարևորագույն նախապայման	128
4.3.1	Կառավարման ծրագրային ու գիտական ապահովման և արդյունավետության գնահատման համակարգեր	129
4.4	Մարդկային զարգացման հայեցակարգը և հարացույցի փոփոխությունը	132
4.5	Հայաստանի ապագան գլոբալացվող աշխարհում	133
4.6	Ամփոփում	137

Ներդիրներ

- 4.1 ԶՀ ՏՀՏ արդյունաբերության ենթաբաժինները
- 4.2 Հայաստանից ուղեղների արտահոսքը և դրա առանձնահատկությունները
- 4.3 Գլոբալացումը որպես երևույթ
- 4.4 Բնապահպանական հիմնախնդիրները գլոբալ համատեքստում
- 4.5 Ի՞նչ կարելի է սպասել ԱՀԿ-ին Հայաստանի մոտալուտ անդամակցությունից
- 4.6 Հայաստանի Միջազգային օժանդակության տվյալների շտեմարանը
- 4.7 Նոր մոտեցումներ Հայաստանի զարգացման համար

Նկարներ

- 4.1 ՏՀՏ ձեռնարկությունների ստեղծման միտումները
- 4.2 ՏՀՏ հատվածի անձնակազմի աճի միտումները 1995-2000թթ.
- 4.3 Հայաստանի արտահանման կառուցվածքը 2000թ.
- 4.4 Անցումային երկրներում 1991-99թթ. ընթացքում կատարված ՕՈՒՆ-երի գումարային մեծությունը մեկ շնչի հաշվով

Աղյուսակներ

- 4.1 ԶՀ-ին հատկացված և առաքված գումարները

Գրականություն		138
Հավելված	1	142
Հավելված	2	156
Հավելված	3	165
Հավելված	4	169

Հակիրճ նկարագրություն

Երկար սպասված անկախությունն ու տնտեսական ազատության նոր հնարավորությունները, որ հաստատվել են Հայաստանում, միաժամանակ առաջ բերեցին քաղաքական և տնտեսական համակարգերի կտրուկ փոփոխություններ: Երկակի անցումը բազմաթիվ ձեռքբերումների հետ մեկտեղ (խոսքի ազատություն, բազմակուսակցականություն, ժողովրդավարական ինստիտուտների կայացում և այլն) ունեցավ նաև բացասական հետևանքներ. աղքատություն և գործազրկություն, մարմնավաճառություն և թմրամոլություն, օրինազանցություն և կոռուպցիա*, միգրացիա և սոցիալական բևեռացում, կախվածություն արտաքին ֆինանսական և տնտեսական կենտրոններից: Բնակչության դժգոհությունը և արտագաղթը հստակ մատնանշում են, որ քաղաքական անկախության ձեռք բերումը չի արդարացնում տնտեսական և սոցիալական կորուստները: Անաչառ և անկողմնակալ արդարությունը դեռևս զարգացման կարիք ունի: Դեռևս նոր-նոր ձևավորվող ժողովրդավարական արժեքների անկումը կանխելու և հասարակությանը հասցված կորուստները արդարացնելու համար կառավարությունը պետք է առաջնորդվի սոցիալական կարիքների բավարարման գաղափարախոսությամբ՝ քաղաքականությունը և պրակտիկան հասցնելով այն մակարդակին, որը համապատասխանում է գլոբալ և ազգային առաջադիմական միտումներին, ինչպես նաև մատնանշում է Հայաստանի ապագայի հեռանկարները:

Անցած տասը տարիների ընթացքում առաջացած խնդիրներն արդեն իսկ որոշ չափով համակարգվում և լուծվում են, սակայն այդ գործընթացը հունի մեջ դնելու համար առանձնացվում են մի շարք կարևոր խնդիրներ:

Աղքատության կրճատում

Տնտեսական բարեփոխումների տասնամյակի արդյունքում առավել կարևոր և բարդ խնդիրներից է լայնածավալ աղքատությունը, երբ բնակչության 55%-ը գտնվում է աղքատության գծից ցած: Այդ տարիների ընթացքում հետազոտությունների համեմատական վերլուծությունը դրական միտումներ մատնանշեց աղքատության խորությունը և սրությունը բնութագրող ցուցանիշներում, ինչպես նաև արձանագրեց ծայրահեղ աղքատների տեսակարար կշռի նվազումը 27,7%-ից 22,9%-ի: Սակայն ընդհանուր առմամբ աղքատությունը կրճատման որևէ միտում չի ցուցաբերել: ՀՀ-ում աղքատությունը առավել տարածված է աղետի գոտում, քաղաքային և գյուղական շրջանների հողազուրկ բնակչության և սահմանափակ շրջաններում: Հայաստանի աղքատության առանձնահատկություններից է (յուրահատուկ է բոլոր ԱՊՀ երկրներին) այն հանգամանքը, որ կրթության և զբաղվածության բարձր ցուցանիշները չեն օժանդակում մարդկանց դուրս պրծնել աղքատության ճիրաններից:

Հայաստանը ԱՊՀ այն վեց երկրներից մեկն է, որ ընտրվել է պատրաստելու Աղքատության նվազեցման ռազմավարական ծրագիրը (ԱՆՌԾ): Այն նախատեսված է երեք տարվա համար և պետք է այդ խնդրին համակողմանի անդրադառնա, ներառյալ եկամտային և մարդկային աղքատությունը: ԱՆՌԾ-ն դիտվում է երկրի համար գործընթացը կասեցնելու հնարավորություն, քանի դեռ աղքատությունը ամբողջությամբ չի փոխել իր անցումային բնութագիրը և չի արմատավորվել բնակչության ապրելակերպում և մտածելակերպում: Հայաստանի կառավարության հովանու ներքո, միջազգային հանրության աջակցությամբ և քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությամբ գործընթացը փոքր-ինչ առաջադիմել է. ԱՆՌԾ առաջնայությունների շարքում հավասար աճի, առողջապահության և կրթության մատչելիության, զբաղվածության ու վստահելի սոցիալական ապահովության համակարգի ապահովումն է:

Ժողովրդավարական ինստիտուտների ուժեղացում և օրենքի գերակայության ապահովում

Ժողովրդավարական կառավարման օրենսդրական հիմքը հիմնականում դրվեց այս տասը տարվա ընթացքում, ինչը սակայն Հայաստանը չդարձրեց դասական իմաստով «օրինական» պետություն: Օրենքները դեռևս հետագա զարգացման կարիք ունեն: Ընտրական գործընթացը և թերությունների վերացումը, որոնցից մի քանիսը տարեցտարի կրկնվում են, պահանջում են և օրենսդրության կատարելագործում, և իրականացնող մեխանիզմների ուժեղացում, և հասարակական գիտակցության հասունացում: Լրատվամիջոցների իրական անկախությունը հիմնականում կախված է երկրի տնտեսական զարգացման մակարդակից, հայկական ժողովրդավարության հասունությունից և պետության իրավական երաշխիքներից (լրատվամիջոցների վրա ճնշում գործադրելու ձևերը փոխվել են, սակայն իսպառ չեն վերացել):

Իշխանության տարբեր թևերի պատասխանատվության և լիազորությունների միջև համաչափ բաշխումն արդեն որոշ ժամանակ է քննարկման առարկա է դարձել: Այդ խնդիրները լուծելու, ինչպես նաև ՀՀ նախագահի լիազորություններն ու պատասխանատվությունը համաչափ դարձնելու նպատակով նախատեսված Սահմանադրության բարեփոխումների մշակումն արդեն ավարտվել է և պետք է դրվի քննարկման: Չնայած դատաիրավական բարեփոխումների լայնամասշտաբ գործընթացին՝ ՀՀ Սահմանադրությամբ հռչակված դատական իշխանության անկախությունը դեռևս իրականություն չի դարձել: Այդ համակարգը դեռևս կատարելագործման կարիք ունի: Ազգային ժողովը՝ որպես մարդկանց շահերի հիմնական սատարող, ներկայումս

* Գևորգ Պողոսյան. «Աննախուժան առուներին զննհատականո»

այնքան էլ գործուն չէ: Նրա կազմը չի ենթադրում, որ մարդկանց շահերն ու իրավունքները պաշտպանվում են կանոնավոր կերպով: Խորհրդարանական խմբակցություններում արագ հոսունությունը վկայում է քաղաքական ուժերի պառակտվածության մասին:

Արդյունավետ և նպատակաուղղված գործունեությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է, որ կառավարության և ԱԺ պատգամավորների գոնե միջուկը կազմված լինի քաղաքական կայացած, պրոֆեսիոնալ գործիչներից:

Քաղաքացիական հասարակությունը տարբեր գնահատումներով դեռևս կայացման փուլում է՝ չնայած գրանցված կազմակերպությունների մեծ թվին: Հայաստանի ներկայիս քաղաքական կյանքի առանձնահատկություններից մեկն այն է, որ քաղաքական դաշինքները հիմնականում ստեղծվում են ոչ թե գաղափարական, այլ իրավիճակային շահերից ելնելով, հնարավոր չէ կուսակցությունները հստակ դասակարգել հաղթող և պարտվող, իշխող և ընդդիմադիր թևերի, իշխող կուսակցությունները հաճախ պատասխանատվություն չեն ստանձնում զարգացումների համար, դեռևս ներկուսակցական հանդուրժողության մթնոլորտ չի ձևավորվել:

Լուրջ խնդիր է դարձել այն հանգամանքը, որ ներկայումս ՀՀ-ում գրեթե բոլոր շահագրգիռ խմբերը (այդ թվում նաև արհմիությունները) գրանցվում են որպես հասարակական կազմակերպություն, ինչը խիստ սահմանափակում է իրենց գործունեության շրջանակը: Արհմիություններին վերաբերող օրենսդրությունը որոշակի փոփոխությունների կարիք ունի, որպեսզի վերջիններս վերականգնեն իրենց կարևորությունը և պաշտպանեն աշխատավորների շահերը: Հասարակական կազմակերպությունները բավական ակտիվ են, գործում են զանազան բնագավառներում, տարբեր հետաքրքրություններով ու նպատակներով՝ հաճախ լրացնելով բացերը, սակայն դեպքեր կան, երբ նրանց գործունեությունը հիմնականում իրագործվում է շահույթ հետապնդելու նպատակով: ՀՀ-ները ավելի շատ հետաքրքրված են սոցիալական ծառայությունների մատուցմամբ, քան ժողովրդավարական գործընթացի խթանմամբ: Վերջերս ձևավորված ՀԿ խորհուրդների նպատակն է ուժեղացնել ենթակառուցվածքները, ընդլայնել ծառայությունների մատուցման շրջանակը և մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացում:

Սփյուռքի միավորում

Հայ ժողովրդի երկու թևերի փոխհարաբերությունները անկախության տարիների ընթացքում որակապես նոր հեռանկարներ ձեռք բերեցին: Դրանք մի շարք փուլեր են անցել, և ներկա փուլը բնորոշվում է որպես «միմյանց նոր դերերի դիտարկում»: Սփյուռքահայության ջանքերի շնորհիվ իրականացվող համագործակցության, բարեգործության և զարգացման նախագծերի հետ մեկտեղ գոյություն ունեն մի շարք խնդիրներ՝ կապված հայրենիքում գտնվող սփյուռքահայերի իրա-

վական կարգավիճակի հետ: Եկուն օրենքները պետք է նրանց համար որոշակի ու հստակ պարտավորություններ ու արտոնություններ սահմանեն, անհրաժեշտ է հստակեցնել նաև նոր ակիքի՝ 90-ականներին Հայաստանից արտագաղթածների կարգավիճակը Սփյուռքի ավանդական կառույցներում և ընդհանրապես նրանց՝ որպես լիիրավ անդամների արագ ինտեգրացումը համայնքային գործող կազմակերպություններում:

Պետական կառավարման բարեփոխումների իրականացում

ՀՀ-ում առկա է պետական կառավարման նախկին և ներկայիս համակարգերի կառույցները՝ անձնակազմի չհիմնավորված ուռճացվածությամբ, լիազորությունների ոչ հստակ սահմանմամբ և հաճախ կրկնվող «դեկավար կադրերի ոչ ճիշտ ընտրությամբ»: ՀՀ պետական անարդյունավետ կառավարման պատճառներից են պաշտոնական գաղափարախոսության, նպատակադրման, իշխանության թևերի միջև մատչելի և անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման մեխանիզմների բացակայությունը, տարբեր մակարդակների գործադիր իշխանության հանձնարարականների անճշտությունները և գործառույթների կրկնությունները: Կառավարության կողմից ձեռնարկվող միջոցառումներից են ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի ստեղծումը, մի շարք փաստաթղթերի նախագծումը, ներառյալ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը, որը այս գործընթացի առավել կարևոր բաղադրարարներից է: ՊԿԳ-ի կառուցվածքային բարեփոխումների արդյունավետ իրականացումից ակնկալվելիք հիմնական արդյունքները ներառում են պետական կառավարման մարմինների օպտիմալ թվաքանակի և կառուցվածքի սահմանում, կառավարման կենտրոնական մարմինների որոշակի լիազորությունների փոխանցում գործադիր այլ մարմիններին, տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեությունում պետության միջամտության նվազում, հասարակության կողմից կառավարության նկատմամբ վստահության ամրապնդում, սովորաբար մակարդակի իջեցում, կառավարման կայուն համակարգ, պետական ծառայողների անձնական պատասխանատվության բարձրացում, առանձին բնագավառներում ինքնակառավարվող՝ պետության կողմից կարգավորվող համակարգերի ներդրում:

Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացում

Լինելով ժողովրդին ամենամոտ կանգնած իշխանությունը՝ տեղական ինքնակառավարումն ապահովում է քաղաքացիական հասարակության ձևավորումը, իշխանության ապակենտրոնացումը, տնտեսության զարգացումը և բնակչության կենսապահովման խնդիրների լուծումը: Չնայած 1995թ. ընդունված Սահմանադրությունը օրենսդրական հիմք հանդիսացավ տեղական ինքնակառավարման համակարգի ներդր-

ման համար, այդ ոլորտին վերաբերող օրենսդրական դաշտը կատարելագործման կարիք ունի, որպեսզի մշակվեն համայնքների իրավունքների իրականացման մեխանիզմները, համապատասխանեցվեն համայնքի պարտադիր լիազորությունները և դրանց իրականացման համար անհրաժեշտ տեղական բյուջեներին ամրագրված ֆինանսական միջոցները, ապահովվի օրենքով համայնքներին պետության կողմից պատվիրակված լիազորությունների ֆինանսավորումը, հաշվի առնվեն մեծ և փոքր համայնքների առանձնահատկությունները և հստակեցվեն պետական և տեղական իշխանությունների փոխհարաբերությունները: Համակարգի կատարելագործման համար առավել հրատապ է բարելավել վարչատարածքային բաժանումը և օպտիմալացնել համայնքների թվաքանակը, խորացնել ապակենտրոնացման աստիճանը և ընդլայնել համայնքների լիազորությունները, բարելավել համայնքների ֆինանսական ապահովվածությունը և դա համապատասխանեցնել համայնքների պարտադիր և պատվիրակված լիազորությունների կատարմանը, բարելավել համայնքների կառավարումը և տեղական ինքնակառավարման օրենսդրական դաշտը, ընդունել և ներդնել նոր օրենք:

Տնտեսական բարեփոխումներ

Հայաստանում վերջին տասը տարիներին իրականացված տնտեսական բարեփոխումները նպատակաուղղված էին շուկայական տնտեսությանը բնորոշ հարաբերությունների, ինստիտուտների և կառավարման համակարգի ձևավորմանը: Արդյունքում ստացվել են բավականաչափ դրական, արդյունավետ լուծումներ, սակայն ընդհանուր առմամբ դրանք զուրկ էին ամբողջական և համակարգված մոտեցումներից և հաճախ ունեցել են անավարտ, թերի, որոշ դեպքերում՝ ուշացած և տարանջատ բնույթ: Արդյունքում անգամ ժամանակի առունով առավել հաջողված օրենքներն ու որոշումներն իրենց դրական ներգործությամբ սահմանափակ են եղել, քանի որ նախորդի տրամաբանական շարունակությունը կազմող մյուս հատվածն աշխատում էր այլ կարգավորման դաշտում և շատ հաճախ կարգավորման հակառակ մոտեցումների հիման վրա:

Մասնավորեցման գործընթացը, որը Հայաստանում բարեփոխումների առանցքն է կազմում և նախաձեռնվել է դեռևս 1991թ., կարող է պայմանականորեն բաժանվել երեք փուլերի՝ սկզբնական, մեծածավալ և դանդաղեցված: Մասնավորեցման գործընթացը մասսայական դարձնելու նպատակով տարբեր եղանակների կիրառումն ինքնին մնաց սոցիալական արդարության պահպանման պատրանք, քանի որ իրենց տրամաբանական շարունակությունը չստացան դրանցով ներդրումներ կատարելու համար անհրաժեշտ գործիքներն ու դաշտը: Արդեն մի քանի տարի է, ինչ պետությունը չի ընդունում, որ մասնավորեցման գործընթացում առանձնակի առաջընթաց չի նկատվել, քանի որ մասնավորեցման նպատակով կատարված ներդրումները ձեռնարկությունների գործարկման համար խիստ

անբավարար են: Զգալիորեն նվազեց գործող ձեռնարկությունների թիվը, որի հետևանքով էլ ավելացավ գործազուրկների քանակը, չստեղծվեց արդյունավետ շուկա, չձևավորվեց մասնավոր ձեռնարկատերերի լայն խավ: Մնացած ձեռնարկությունները արդյունավետ կերպով մասնավորեցնելու նպատակով անհրաժեշտ է հստակեցնել մասնավորեցման ծրագրերի նպատակները, իրականացնել մասնավորեցման ենթակա գույքի ճիշտ գնահատման քաղաքականություն, մասնավորեցումից առաջ իրականացնել ձեռնարկությունները նախապատրաստելու համալիր աշխատանքներ, մասնավորեցման տարբեր տեսակների համար լայնորեն կիրառել տարածամկետ վճարման ձևը:

Տնտեսական աճը ցանկացած երկրի զարգացման սցենարի կարևոր գործոն է, սակայն այն ինքնանպատակ չէ: Հայաստանում այն պետք է նպատակաուղղված լինի աղքատության կրճատմանը, որի համար առաջին հերթին անհրաժեշտ են որակական փոփոխություններ, մասնավորապես, բաշխման հարաբերություններում նպատակաուղղված եկամուտների անհավասարության կրճատմանը, մարդկային կապիտալում կատարվող ներդրումների, փոքր բիզնեսի, սոցիալական ապահովագրության զարգացման հիմնախնդիրներում:

2001թ. առաջին կիսամյակում տնտեսությունում արձանագրված դրական միտումների, ինչպես, օրինակ, բացառիկ տնտեսական աճը, բյուջեի եկամտային մասի կատարումը, արտահանման աճը և բացասական առևտրային հաշվեկշռի նվազումը, փոխկապված և հետևողական զարգացումը որակապես նոր տնտեսական աճի հնարավորություն կընձեռնի:

Կապիտալի շուկայի զարգացմանը խոչընդոտում է այն հանգամանքը, որ չեն ձևավորվել մեխանիզմներ ու պայմաններ, որոնց միջոցով խնայողությունները կվերածվեին ներդրումների, ինչպես նաև ներդրումային ու ֆինանսական գործիքների բացակայությունը: Ֆինանսական շուկայի սաղմնային վիճակը պայմանավորված է նաև շուկայի անհրաժեշտ ենթակառուցվածքների, մասնավորապես անկախ գնահատողների, անշարժ գույքի գործակալների (ռիելտորների), բորսայական կառույցների, դրանցում գործող բրոքերների, ներդրումային հիմնադրամների ու ընկերությունների, աուդիտորների թույլ զարգացությամբ, առանձին դեպքերում՝ նաև բացակայությամբ:

Հավասար մրցակցություն ապահովող միջավայրի ձևավորման ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական մեխանիզմների կայացումը պահանջում է գործող օրենսդրության երկակի ստանդարտների կիրառման բացառում և մենաշնորհացման կտրուկ սահմանափակում, ինչպես նաև պետական գույքի արդյունավետ կառավարում:

Հասարակական գիտակցությունում դեռևս առկա է անցյալում տնտեսության «ֆլազմաններ» հանդիսացածների փրկության ու վերակենդանացման մտայնությունը: Մինչդեռ այդ հիմնախնդրի լուծումը պա-

հանջում է պետական ձեռնարկությունների գործունեության կարգավորման, վերահսկողության, գործունեության զննահատման, ինչպես նաև դրանց մասնավորեցման կամ այլընտրանք չլինելու դեպքում լուծարման նախապատրաստման համակարգված մոտեցում: Անցած տասը տարիների ընթացքում պետականության կայացման կարևոր փուլերից էր ազգային արժույթի դրամի ներդրումը: Ներկայումս առավել կարևոր է կիրառության մեջ դնել դրամավարկային քաղաքականության առանձնահատուկ գործիքները և որոշակի ձևով ապահովել ազգային արժույթի փոխարժեքի կառավարելիությունը՝ միևնույն ժամանակ խթանելով տնտեսության զարգացումը: Ֆինանսական շուկայի զարգացումը պայմանավորված է բանկային համակարգի հետագա զարգացմամբ և ֆինանսական շուկայի այլ ինստիտուցիոնալ մասնակիցների (ապահովագրական, ինվեստիցիոն ընկերություններ, ոչ բանկային ֆինանսական և վարկային կազմակերպություններ) ձևավորմամբ և կայացմամբ:

Հարկային քաղաքականություն

ՀՀ-ում հարկային քաղաքականության բացառիկ կարևորությունը պայմանավորված է նրանով, որ այն հանդիսանում է գործարարության, այդ թվում փոքր ու միջին բիզնեսի զարգացման վրա ազդող հզոր տնտեսական լծակ: Հարկային օրենսդրությունը եական բարեփոխումների ենթարկվեց 1997-2000թթ., երբ ընդունվեցին հարկային հիմնական նոր օրենքները հիմնված առավելապես միջազգային չափանիշների վրա: Սակայն հարկային օրենսդրությունում և դրա իրականացումը ապահովող վարչարարության համակարգում դեռևս առկա են սկզբունքային մի շարք չլուծված հիմնախնդիրներ, որոնց պարագայում տնտեսության կայուն ու բարձր տեմպերով աճի խթանումը դեռևս չի վերածվել այնպիսի հարկային քաղաքականության գերակայության, որի ներքո համարժեք լուծում կստանան նաև ընթացիկ ֆիսկալ խնդիրները:

Հարկային օրենսդրության փոփոխությունների արդյունքում 2000թ. վերջում հաջողվեց տնտեսավարողներին տրոհել հարկման երկու խոշոր խմբերի՝ հաստատագրված ու պարզեցված հարկ վճարողների և շահութահարկը նախընտրող խոշոր հարկատուների: Ընդ որում, հարկատուի՝ նշված խմբերից որևէ մեկում հայտնվելը կախված է նաև նրա կամքից և պետական մարմնի պարտադրանքը չէ: Առաջիկա մի քանի տարիների ընթացքում, ելնելով տնտեսության զարգացման որոշակի համամասնություններից, պահպանելով հարկային մեխանիզմների խթանիչ ներգործությունը, տնտեսավարողների հարկային ծանրաբեռնվածությունը նպատակահարմար կլինի աստիճանաբար տեղափոխել դեպի ուղղակի եկամտային հարկերը: Հարկային քաղաքականության արդյունավետության առանցքային հիմնախնդիրներից է կարգազանց հարկատուների նկատմամբ տույժերի և տուգանքների կիրառումը բացառապես դատարանների իրավասությանը փոխանցելու հարցը: Այդ հարաբերությունների որակական

փոփոխության առումով եական ազդեցություն ունեցավ ստուգումների մասին համապատասխան օրենքի ընդունումը, որով ըստ էության խստիվ սահմանափակվում են կրկնակի ստուգումները և, բացի դրանից, արգելվում է կազմակերպության համալիր ստուգումը որևէ պետական մարմնի կողմից:

Սովերային տնտեսություն և կոռուպցիա

Սովերային տնտեսության առաջացմանը և ընդարձակմանը նպաստող գործոնների շարքում առաջնային դիրք են զբաղում հարկային և մաքսային «կոշտ» ու ամարոյունավետ քաղաքականությունը, պետական խիստ կարգավորումն ու սահմանափակումները, ինչպես նաև կոռուպցիան: Այլ երկրների համեմատ՝ Հայաստանի սովերային տնտեսությունն ունի մի շարք առանձնահատկություններ, մասնավորապես այն հիմնականում կապված չէ քրեական խմբավորումների հետ, չափազանց տարածվածության արդյունքում հասարակության համար դարձել է հարաբերականորեն «նորմալ» երևույթ և բավականին «տեսանելի» է: 1990-1994 թթ. Հայաստանի սովերային տնտեսության շնորհիվ որոշակի սոցիալական կայունություն է ապահովվել, մանավանդ բնակչության անապահով խավի համար եկամուտ վաստակելու տեսանկյունից: 1995-2000թթ. տնտեսության և հասարակության բարեփոխումների գործընթացում աստիճանաբար սկսեցին գերիշխել սովերային տնտեսության ապակայունացնող, բացասական գործոնները: Սովերային տնտեսության ընդարձակումը ներքաղաքական լարված պայմաններում իր արտահայտությունն էր գտնում հարկային մուտքերի հարաբերական նվազման մեջ: Ներկայումս քաղաքական իշխանության և սովերային տնտեսության միջև ձևավորվում է մի յուրահատուկ փոխհարաբերություն, երբ սովերային գործունեությամբ ստեղծված գումարները օգտագործվում են երկրի քաղաքական դաշտում իշխանություն ձեռք բերելու համար: Փողի պահանջարկի մեթոդով ստացված զնախատականները վկայում են, որ Հայաստանում սովերային տնտեսությունը նվազագույն մակարդակի վրա է եղել 1994 թ., այնուհետև այն մեծացել է՝ իր առավելագույն ցուցանիշին հասնելով 1997թ.: 2000թ. սովերային տնտեսության ընդլայնումը հիմնականում կարելի է բացատրել տարեսկզբին երկրում տիրող անկայուն քաղաքական վիճակով, որը հաջորդում էր 1999թ. հոկտեմբերի հայտնի իրադարձություններին, և չէր կարող չափազանց խուսափողների և տնտեսության սովերային հատվածում գործող մարդկանց վարքագծի վրա: Եթե Հայաստանի սովերային տնտեսությունը շարունակի աճել, ապա հայերը մոտակա տարիներից բավական դժվար կացության մեջ կհայտնվեն:

Ներկայումս՝ ՀՀ-ում կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում կոռուպցիայի բոլոր տեսակներն էլ լայն տարածում ունեն՝ արտահայտվելով անձնային, ինստիտուցիոնալ և համակարգային մակարդակներում: Հայաստանում կոռուպցիայի մակարդակի վրա

ամենամեծ ազդեցություն ունեցող գործոնների շարքում նշվում են ցածր աշխատավարձը, պատժիչ մեխանիզմների անբավարարությունը, օրենսդրական թերությունները, հասարակության կողմից թողտվությունը և այլն: Հարկ է նշել նաև երկու այլ գործոններ, որոնք անդրադարձել են ՀՀ-ում կոռուպցիայի մակարդակի բարձրացման վրա: միջազգային առևտրի/բիզնեսի ընդլայնումը և սեփականաշնորհման գործընթացը: Հասարակության մեջ կոռուպցիայի ունեցած բացասական հետևանքները, որ կարելի է պայմանականորեն բաժանել չորս խմբերի՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական և զարգացման հիմնախնդիրների, իրականում խոչընդոտում են բոլոր ոլորտներում ձեռնարկվող գործունեությունը: Հայաստանում հակակոռուպցիոն միջոցառումները, որ հասարակության բոլոր խավերի ու միջազգային հանրության աջակցությունն ունեն, ներառում են հակակոռուպցիոն հանձնաժողովի ստեղծումը, կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգի ընդունումը, հակակոռուպցիոն ծրագրի մշակումը, որը նախատեսում է ինչպես գործող օրենսդրական դաշտի, մասնավորապես տնտեսական, դատական և իրավական ոլորտների կատարելագործում, այնպես էլ հակակոռուպցիոն օրենսդրական հատուկ փաթեթի ընդունում:

Բյուջեպային գործընթաց

Հիմնականում ՀՀ-ում բյուջեի կատարման ընթացքում մշտապես արձանագրվող խնդիրներից են ծրագրային ցուցանիշների սահմանման իսկ փուլում անճշտությունների ամրագրումը, կառավարության կողմից բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունների ոչ ժամանակին կամ իսպառ չսահմանումը, բազմաթիվ պաշտպանված հողվածների պարբերական չկատարումը, համայնքային բյուջեների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության բացակայությունը, անգամ ակնհայտ չկատարման պարագայում բյուջեի սեկվեստրի կիրառման անտեսումը: Բյուջեի առանց այն էլ սուղ միջոցների, նրա պաշտպանված հողվածների չկատարման պարագայում կասկածելի է նրա միջոցներով իրականացվող վարկավորման պրակտիկան: Այդ վարկերը, որպես կանոն, ժամանակին չեն վերադարձվում, հաճախ վատնվում են՝ ընկալվելով որպես բյուջետային անվերադարձ ֆինանսավորման յուրօրինակ ձև: «Ավանդական» է դարձել հաշվանցումների միջոցով բյուջեի կատարողականի արհեստական բարձրացումը: Մասնավորապես 2000թ. կատարվել են 23,7 մլրդ. դրամի կամ պետական բյուջեի կատարման ծավալի 11,3%-ի հաշվանցումներ: Իրավիճակը խրախուսող է 2001թ. առաջին կիսամյակի համար, երբ բյուջեն գրեթե 99%-ով կատարվել էր:

Բյուջեի կառուցվածքում հնարավոր կլինի արմատական փոփոխություններ կատարել, եթե էներգետիկ, ինչպես նաև ջրային ռեսուրսների օգտագործման համալիրներում դրանց ռեսուրսների համար վճարելիության սկզբունքն անվերապահորեն ամրագրվի, որի արդյունքում հնարավոր կլինի հանել այդ ոլորտներից

յուրաքանչյուրին տրվող տարեկան շուրջ 4,5-5 մլրդ. դրամ դոտացիաները: Նշված դոտացիաների կրճատումից առաջացող միջոցների և բյուջեի հնարավոր հավելյալ եկամուտների ծախսման առաջնահերթություններում պետք է լինի բյուջետային աշխատողների աշխատավարձերի, ինչպես նաև հանրապետական բյուջեի ծախսումների ապակենտրոնացումը՝ հօգուտ տեղական բյուջեների: Հայաստանում բյուջետային միջոցների ապակենտրոնացումը, հաշվի առնելով դրանց կենտրոնացման խիստ բարձր աստիճանը, համարվում է դրանց ծախսման հասցեագրվածության բարձրացման կարևոր ուղիներից մեկը:

Բյուջեի ծախսերի իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով ձեռնարկվող միջոցառումներից է պետական գնումների միասնական համակարգը: Կարևոր խնդիրներից է նաև վերջին տարիների ընթացքում զանձապետական համակարգի կայացումը, որի սպասարկման մեջ անհրաժեշտ է ներառել նաև արտաբյուջետային ֆոնդերը, մասնավորապես սոցիալական ապահովագրության ֆոնդը:

Ներդրումներ

Ներդրումների ներկայիս ծավալները շատ հեռու են բավարար լինելուց. դրանք խիստ ցածր են տնտեսության կտրուկ և կայուն աճ ապահովելու համար: Չնայած ՀՀ կառավարության և հասարակության կողմից ներդրումների որոշիչ դերի գիտակցմանը, ձևավորված մակրոտնտեսական և ներքաղաքական կայունությանը, ներդրումները կարգավորող օրենսդրական դաշտի, դրանք խրախուսող ու պաշտպանող ենթակառուցների գոյությանը, հարուստ և բավականին հզոր Սփյուռքի առկայությանը՝ Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների գումարային ծավալը 1995-2000թթ. ընթացքում կազմել է մոտ 580 մլն. ԱՄՆ դոլար, որը ամենացածրն է ԱՊՀ երկրներում Մոլդովայից, Դրոզստանից և Տաջիկստանից հետո:

Կարելի է ասել, որ Հայաստանի տնտեսության վրա ներդրումների ազդեցության աստիճանը խիստ սահմանափակ է՝ պայմանավորված ներդրումների փոքր ծավալներով և շատ քիչ թվով ընկերություններում նրանց կենտրոնացվածությամբ:

Հայաստանում այսօր իրականացվող երկու ամենախոշոր ներդրումային ծրագրերի արդյունքում ունենք մենաշնորհներ հեռահաղորդակցության և զագի շուկաներում այստեղից բխող բոլոր բացասական հետևանքներով: ՕՈՒՆ-ները որոշակի ազդեցություն են ունեցել արտահանման զարգացման վրա, բայց հիմնականում հումքատար ապրանքատեսակների գծով:

Վերջին ժամանակներս ներդրումային միջավայրի բոլոր հետազոտություններում, որպես ներդրումների ներգրավումը կասեցնող հիմնական գործոններ, նշվել են կոռուպցիան և մանավանդ վարչարարական խոչընդոտները: Մի շարք առաջնահերթ քայլեր են անհրաժեշտ, որպեսզի ներդրումները (օտարերկրյա և տեղական) կարգավորող օրենսդրական և նորմատիվային դաշտը դառնա կանխատեսելի, դատաիրա-

վական համակարգը՝ վստահելի, ներդրումների խթանման օժանդակող ենթակառուցվածքը՝ արդյունավետ, ձևավորվի ռիսկերից խուսափելու համար ապահովագրական համակարգը, խրախուսվեն ներդրումները խթանող քաղաքականությունները, միջազգային հանրության աջակցությունը, փորձն ու գիտելիքները դառնան մատչելի:

Սոցիալական բարեփոխումներ

ՀՀ-ում իրականացվող սոցիալական բարեփոխումները դեռևս համարժեք չեն բնակչության կենսական հիմնախնդիրներին: Սոցիալական ոլորտի բարեփոխումները հստակ մշակված սոցիալական քաղաքականության գերակայությունների և նպատակների դասակարգմամբ չեն առաջնորդվել և ունեցել են ավելի շատ մարտավարական, քան ռազմավարական բնույթ: Կառավարության ջանքերը՝ ուղղված խոցելի խմբերի կարիքների բավարարմանը, անբավարար են, քանի որ հատկապես երեխաները, կանայք և տարեց մարդիկ անցումային դժվարությունների առաջին գոտիները դարձան: ՀՀ սոցիալական քաղաքականությունը դեռևս կայացման փուլում է, իսկ առկա բացթողումները պայմանավորված են ՀՀ-ում տնտեսական իրական հնարավորությունների վրա հիմնված սոցիալական քաղաքականության միասնական հայեցակարգի բացակայությամբ, սոցիալական ապահովության համակարգի սահմանակարգային (ինստիտուցիոնալ) ու օրենսդրական հիմքերի անբավարարությամբ, ինչպես նաև սոցիալական գործընթացների մոնիտորինգի համակարգի բացակայությամբ, որի ներդրումը կմեծացներ իրականացվող բարեփոխումների սոցիալական հետևանքների կանխատեսումների ճշգրտությունը:

Սոցիալական ոլորտում որպես դրական տեղաշարժ կարելի է նշել համակարգում իրականացված կառուցվածքային բարեփոխումները, բնակչության սոցիալական ապահովության նոր կառուցակարգերի (մեխանիզմների) ստեղծումը, ոլորտը կանոնակարգող բազմաթիվ իրավական ակտերի առկայությունը, սոցիալական աշխատողների պատրաստման և վերապատրաստման ծրագրերը, կայուն համագործակցությունը միջազգային կառույցների հետ, սոցիալական ոլորտի կառավարման համակարգի որոշակի տեխնիկական զինումը և, իհարկե, ոլորտի բարեփոխումներին ուղղված բազմաթիվ ծրագրերի առկայությունը:

Ընտանիքների կարիքավորության աստիճանի վրա հիմնված հասցեական սոցիալական աջակցության միասնական ընտանեկան նպաստների համակարգը՝ ներդրված 1999թ., ներկայումս կատարելագործվում է. սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններին կից ստեղծվեցին սոցիալական աջակցության խորհուրդներ:

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծով համակարգի հետագա զարգացումը նախատեսում է անցնել սոցիալական աջակցության տրամադրման տարբերակված մոտեցման, որը նպատակաուղղված կլինի չափազանց աղքատ տնային տնտեսությունների վիճակի բարելավմանը:

Կենսաթոշակային ապահովություն

Վերջին տասը տարիներին ՀՀ կենսաթոշակային համակարգի (ԿՀ) գործառնությունն ապահովող օրենսդրական դաշտը ենթարկվել է էական փոփոխությունների, թեև ՀՀ ԿՀ-ն ներկայումս գործում է «հընթացս», այսինքն՝ մուտքագրվող բոլոր ֆինանսական միջոցներն ամբողջությամբ ուղղվում են կենսաթոշակների վճարմանը: ԿՀ-ն սպասարկում է 30%-ով ավելի կենսաթոշակառուի, քան 10 տարի առաջ: 100%-ի հասնող պարտադիր սոցիալական ապահովագրական վճարներ կատարելու դեպքում (ինչին մեծ մասամբ խոչընդոտում է ընդարձակվող ստվերային տնտեսությունը) ապահովագրական վճարներ կատարողների կողմից փոխանցված գումարները ներկա մակարդակի համեմատ կաճեին մոտ 2,6 անգամ, իսկ միջին կենսաթոշակը՝ 4481-ից կհասներ 11 650 դրամի:

Պետության որպես ԿՀ-ի հիմնական դոնորի դերը խիստ կրճատվել է. եթե մինչև 1991թ. պետական բյուջեից ֆինանսավորվում էր համակարգի 70%-ը, ապա ներկայումս այն կրճատվել է 14 անգամ և կազմում է ընդամենը 4,81%:

ԿՀ-ում սոցիալական սուբյեկտների՝ պետության, գործատուների և աշխատողների դերն ու գործառնություններն արմատապես փոխվել են: Միաժամանակ դեռևս պահպանվում է համակարգի գործունեության հիմնական սկզբունքը: Կենսաթոշակի չափը կախված չէ ապահովագրական վճարների մեծությունից: «Համահարթեցումը», այսինքն ԿՀ-ի ոչ ապահովագրական բնույթը դրա զարգացման հիմնական խոչընդոտն է: ԿՀ-ի բարելավման նպատակով բարեփոխումները պետք է ուղղվեն ծրագրային քաղաքականության մշակմանը և դրա իրականացման վարչական կառավարմանը: ԿՀ-ի կառավարմանը մասնակցող տարբեր մարմինների աշխատանքում բազմաթիվ գործառնություններ կրկնվում են, բացակայում է դրանց միջև իրավասությունների և պարտականությունների հստակ տարանջումը: Այսպիսով, «վերջնական արդյունքի» նկատմամբ հստակ պատասխանատվության բացակայությունը համակարգի կառավարումը դարձրել է անարդյունավետ, իսկ վերջինս ՀՀ-ում երբևէ չի դիտարկվել որպես արդյունավետության բարձրացման գործոն:

Այդ տեսանկյունից ռազմավարական խնդիր է այնպիսի ԿՀ-ի ստեղծումը, որը պետությանը վերապահելով նոր դերակատարում՝ հասարակության անդամների համար պայմաններ կստեղծի «վաստակելու» իրենց կենսաթոշակը և հոգ կտանի միայն նրանց մասին, ովքեր ի վիճակի չեն այդ անելու: Խնդիրը պահանջում է համակարգված մոտեցում՝ ԿՀ-ի նոր մոդելի ձևավորում, դրա սահմանակարգային բազայի փոփոխություն, սոցիալական գործընկերության ստեղծման միջոցով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև իրավասությունների, գործառնությունների և պարտականությունների իրավական ամրագրում:

Զբաղվածություն և աշխատանք

1994-2001թթ. աշխատաշուկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավիճակը Հայաստանի աշխատաշուկայում դեռևս խիստ լարված է. շարունակում է խորանալ աշխատուժի պահանջարկի և առաջարկի անհամապատասխանությունը: Վերջին տարիներին ՀՀ աշխատաշուկայում նաև թաքնված գործազրկության և թաքնված զբաղվածության աճ է նկատվում: Գործազրկության մակարդակը, ըստ պաշտոնական տվյալների, 2000թ. կազմել է 11,7%, իսկ 1999թ.՝ 11,2% (ըստ անկախ գնահատումների՝ 34,4%): Գործազրկության մակարդակը առավել բարձր է աղետի գոտում և քաղաքներում: Կանանց տեսակարար կշիռը գործազուրկների կազմում շարունակում է մնալ բարձր, իսկ գործազուրկների տարիքային կազմում նկատելի է 31-50 տարեկանների տեսակարար կշիռի աճի միտում: Ցավոք, ներկայումս անգամ աշխատանքի առկայությունը դեռևս ապահով կյանքի գրավական չէ. զբաղված բնակչության 17%-ը դասվում է շատ աղքատների խմբին: Չնայած 1999թ.-ից զբաղվածության քաղաքականությունը սկսեց ձեռք բերել ակտիվ քաղաքականությունը բնորոշ կողմնորոշիչներ, ներառյալ մարդկանց աշխատանքային ակտիվության խթանումը և դրա համար նպաստավոր պայմանների ստեղծումը, սակայն ծրագրով նախանշված միջոցառումները կամ թերի են իրականացվել, կամ էլ բոլորովին չեն կատարվել: Չեն իրականացվել նաև ծրագրով նախատեսված հաշմանդամների մասնագիտական ուսուցման, նրանց աշխատանքի վերականգնման նպատակով նախատեսված կենտրոնի ստեղծման աշխատանքները:

Զբաղվածության ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտը չի համապատասխանում տնտեսության իրական վիճակին և չի նպաստում նրա զարգացմանը: Այն էական բարելավման կարիք ունի:

Մշակման փուլում են «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ նոր օրենքի, «Գործազրկության դեպքերից պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ աշխատանքային նոր օրենսգրքի նախագծերը: Գործող աշխատանքային օրենսգրքը ոչ միայն չի համապատասխանում ազատականացված տնտեսության պահանջներին, այլև չի երաշխավորում սեփականության կազմակերպարական տարբեր ձևերի գոյությունը:

Զբաղվածության ոլորտի կարգավորմանը նպաստող կարևոր խնդիրներից կարելի է առանձնացնել աշխատանքի և զբաղվածության բնագավառների հստակ և ամբողջական գաղափարախոսության մշակումը, կառավարման համակարգի կառուցվածքի և ոլորտին առնչվող օրենսդրական դաշտի կատարելագործումը, ձեռնարկությունների ներսում վերապատրաստման կազմակերպումը, դրա համար ակտիվ մասնակցություն ապահովող մեխանիզմների ստեղծումը, հասարակական աշխատանքների ընդլայնումը, նոր պայմաններին աշխատանքի վարձատրության խնդիրների հարմարեցումը:

Սոցիալական գործընկերություն

Ներկայիս պայմաններում, երբ գործող աշխատանքային օրենսգրքը այլևս անկարող է լուծել հասարակության առջև ծառայած խնդիրները, սոցիալական գործընկերությունը՝ որպես սոցիալ-աշխատանքային հարաբերությունների յուրահատուկ տարատեսակ, կարող է նպաստել զանազան սոցիալական խմբերի՝ առաջին հերթին աշխատողների և գործատուների շահերի լավագույն հաշվեկշիռն ապահովելուն: 2001թ. մարտին կառավարության որոշմամբ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի կառավարման խորհրդում ընդգրկվել են սոցիալական գործընկերության բոլոր երեք սուբյեկտները՝ պետությունը, արհմիությունները, գործատուները: Սակայն տվյալ կառույցների գործունեությունը դեռևս զուրկ է «բովանդակությունից»: Տնտեսական բարեփոխումների նոր փուլը Հայաստանում պահանջում է բոլոր շահագրգիռ կողմերի գործողությունների համաձայնեցված ծրագրի ընդունում, որի մշակումը պետք է իրականացնել սոցիալական գործընկերության բոլոր մակարդակներում և այն դարձնել սոցիալական ապահովության արդարացի քաղաքականության հիմնաքարը:

Միգրացիան՝ որպես սոցիալական խնդիր

1988-1999թթ. ընթացքում Հայաստանի արտաքին միգրացիոն գործընթացներին այս կամ այն կերպ մասնակցել է գրեթե 3 մլն. 250 հազ. մարդ, մինչդեռ 1991-2000թթ. ՀՀ-ից ընդհանուր առմամբ արտագաղթել է մոտ 900 հազ. մարդ: Էմիգրանտների շրջանում բնորոշ է տղամարդկանց բարձր տեսակարար կշիռը (ավելի քան 60%), որոնց մեծամասնությունը ակտիվ աշխատանքային և վերարտադրողական տարիքի է (20-44 տ.), ինչպես նաև երեխաների և հատկապես ծերերի ցածր տեսակարար կշիռը, միջին հանրապետական չափանիշներին զգալիորեն գերազանցող կրթամակարդակը:

Վերջին տասնամյակում ՀՀ-ում միգրացիայի աննախադեպ մեծ չափերը բացասական ազդեցություն են թողել ՀՀ ժողովրդագրական վիճակի վրա՝ դառնալով նրա ապակայունացման, մասնավորապես ամուսնությունների և բնական աճի ավելի քան կրկնակի կրճատման գործոններից մեկը: Այն նաև խարխուլում է ամուսնաընտանեկան հարաբերությունների հիմքերը՝ ամուսնական զույգերի և ընտանեկան կառույցների տևական տարանջատման, զավակների լիարժեք դաստիարակության գործընթացի խափանման, սեռերի և սերունդների փոխհարաբերությունների վատթարացման առումով:

Աշխատանքային միգրացիայի չկարգավորված հոսքերի մեծացումը, բացասական հետևանքներ ունենալուց բացի, որոշակի դրական գործոն է դարձել Հայաստանում գործազրկության խնդրի լուծման համար: Սակայն այդ փոքր դրականն էլ շատ արագ իր բացասական հետևանքն է ունենում այն առումով, որ այդ գան-

զվածն արագորեն դառնում է նոր էմիգրացիոն ակիբի ձևավորման գործոն: Միջպետական համաձայնագրերի բացակայության պայմաններում առկա է նաև աշխատանքային միգրանտների իրավունքների պաշտպանության խնդիրը: Մեծ մասամբ «օրինական կարգավիճակի» բացակայության պատճառով նրանք հաճախ բախվում են թե՛ իրենց փոխադրումը կազմակերպողների, թե՛ ժամանման երկրի գործատուների կողմից պայմանավորվածությունների խախտմանը, շահագործմանը, բռնությունների դեպքերին, այլ բնույթի աշխատանքների կատարման հարկադրմանը և այլ անօրինականությունների:

ՀՀ բնակչության միգրացիոն գործընթացները վերջին տարիներին այնպիսի չափերի են հասել, որ էականորեն սկսել են ազդել երկրի տնտեսական զարգացման ընթացքի, սոցիալ-ժողովրդագրական իրավիճակի, բարոյահոգեբանական մթնոլորտի և, դրանցով պայմանավորված, երկրի ազգային անվտանգության վրա: Մինչև վերջերս, չնայած միգրացիոն իրավիճակի զարգացմանը, չկար միգրացիոն գործընթացների կարգավորմանն ուղղված պետական քաղաքականություն, և միայն 2000թ. նոյեմբերին ՀՀ կառավարության կողմից ընդունվեց ՀՀ բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգը, որը սահմանում է միգրացիոն քաղաքականության առաջնահերթ խնդիրները և նախանշում դրանց լուծման ուղիները:

Կրթություն

Չնայած որ կրթական ոլորտը անցած տասնամյակում անդառնալի կորուստներ չի կրել, ունեցել է շատ լուրջ խնդիրներ. կրճատվեցին ոլորտին տրամադրվող բյուջետային ծախսերը, նվազագույնի հասան ուսումնական հաստատությունների նորոգումն ու տեխնիկական սպասարկումը, փակվեցին ուսուցիչների վերապատրաստման դասընթացները և այլն: ՀՀ կառավարությունը ապահովում է անվճար ուսուցման համակարգը, որն ընդգրկում է միջնակարգ դպրոցն ամբողջությամբ և ետդպրոցական ուսուցման 20%-ը: Իրականում անվճար ուսուցման այդ երկու աստիճաններում էլ անխուսափելի են դարձել ընտանեկան բյուջեներից շոշափելի լրավճարումները, ինչը կտրուկ սահմանափակում է անվճարունակ խավերի՝ որակյալ կրթություն ստանալու հնարավորությունները:

Բոլորի համար կյանքի շեմին հավասար մեկնարկային պայմաններ ապահովելու խնդիրն, անկասկած, մնում է սոցիալական արդարության կարևորագույն նախադրյալը, որը սակայն ավելի է բարդանում վերջին տարիներին կրթության ոլորտում պետական ծախսերի սահմանափակությամբ. այն ՀՆԱ-ի 2-3%-ն է, 1980-ականներին տրամադրվող 7-9%-ի դիմաց, իսկ մեկ դպրոցականի հաշվով բյուջեի հատկացումները կազմում են մոտ 40 ԱՄՆ դոլար: Երկու ցուցանիշներն էլ այլ երկրների համեմատությամբ բավական ցածր են:

Ներկայումս համակարգում ձեռնարկված բարեփոխումները ներառում են կրթության կառուցվածքը, բովանդակությունն ու կառավարումը: Ընդունվելով այս մոտեցումների ներդաշնակությունը ժողովրդավարու-

թյան հիմնական սկզբունքներին և դրանց անհրաժեշտությունը՝ համակարգի կառուցվածքը օպտիմալացնելու, դպրոցների և ուսուցիչների ուռճացված ցանցը կրճատելու, մեկ դպրոցին և մեկ աշակերտին ընկնող հատկացումներն ավելացնելու և ուսուցիչների աշխատավարձը բարձրացնելու առումներով, այնուհանդերձ, հասարակությունը դեռևս բավականին զգուշավոր է մոտենում այդ նորամուծությանը:

Լուրջ անհամապատասխանություն գոյություն ունի մասնագետների պատրաստման ներկայիս համակարգի և շուկայական պահանջարկի միջև: Այժմ, առանց որևէ մասնագիտական պատրաստվածության, տասնյակ հազարավոր երիտասարդներ են աշխատաշուկա մտնում ուսումնական հաստատությունների սակավության հետևանքով ևս: Մյուս կողմից՝ բուհերը շարունակում են «արտադրել» անգամ տեսականորեն աշխատաշուկայում պահանջարկ չունեցող հազարավոր մասնագետներ: ՀՀ կրթական համակարգում կատարվող մի շարք նորամուծությունների թվին է դասվում ԱԺ-ի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2001-2005թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը, որը նպատակամղված է Հայաստանում կրթության որակը ապահովելուն:

Առողջապահություն

Երկրում իրականացվող արմատական վերափոխումները լուրջ ազդեցություն ունեցան նաև առողջապահության համակարգի վրա՝ կտրուկ կերպով վատթարացնելով ծնելիության և բնական աճի ցուցանիշները, նույնիսկ մահացության ցուցանիշի հարաբերական կայունացման պայմաններում: Աճի միտում ունեն սոցիալական վիճակի հետ առնչվող հիվանդությունները, աճել են նաև սրտանոթային համակարգի հիվանդությունները, հատկապես կանանց շրջանում: Հիվանդացությունների շարքում առաջնային տեղ են գրավում չարորակ նորագոյացությունները, որոնց հետևանքով մահացությունը գրավում է իր հաստատուն երկրորդ տեղը: Տուբերկուլյոզը զգալիորեն աճել է հատկապես երիտասարդների շրջանում, վեներական հիվանդությունները աճել են մոտ 10 անգամ:

Բուժօգնության մատչելիությունը հատկապես բնակչության սոցիալապես առավել խոցելի խավերի համար դարձել է կարևորագույն խնդիր, համակարգը աշխատում է իր հնարավորությունների կիսով չափ, պոլիկլինիկաներում հաճախումները նվազել են՝ պայմանավորված ոչ թե մարդկանց առողջության լավացմամբ, այլ բարձր գների և բուժօժանայությունների որակի զգալի անկման ու բնակչության անվճարունակության հետևանքով:

Առողջապահության համակարգի ֆինանսավորման նոր մոդելը կառավարության կողմից ընդունվել է 1997թ.: Առողջապահական համակարգի բարեփոխումները ընթանում են չորս ուղղություններով՝ համակարգի կազմակերպական կառուցվածք և կառավարում, ցանցի կառուցվածք, առողջապահության ֆինանսավորում և բժշկական կրթություն: Առողջապահական պետական

նպատակային ծրագրերի շրջանակներում իրականացված աշխատանքների ծավալները գերազանցում են ՀՀ պետական բյուջեով կատարված կանխատեսումները, ուստի անխուսափելի փուլ է դառնում վճարովի ծառայությունների ներդրումը՝ իր բոլոր բացասական հետևանքներով: Այս գործընթացը բնակչության համար պակաս ցավազին դարձնելու համար առողջապահության համակարգի զարգացման քաղաքականությամբ ներկայումս փորձ է արվում ներդնել առողջապահության ֆինանսավորման բազմաձևություն՝ պետական պատվերի, համավճարի, բժշկական ապահովագրության, ինչպես նաև ուղղակի վճարումների համակարգը: Առողջապահության ֆինանսավորման համակարգում 2000թ. հունիսի 1-ից ներդրված հիվանդանոցային հաստատությունների կողմից իրականացված ծառայությունների դիմաց վճարման գլոբալ բյուջեի մեթոդը նպատակ ունի առավել կառավարելի դարձնել համակարգում ծախսերի վերահսկումը, հստակեցնել պետության պարտավորությունները բուժօգնության տրամադրման հարցում: Բարեփոխումները ընթանում են նաև առողջապահության կրթական համակարգում՝ համապատասխանեցնելով այն շուկայի պահանջարկին: Կրճատվել է բժշկական համալսարան ընդունվողների քանակը, երկարացվել է քույրական գործի բազայի կրթությունը, ընդլայնվել են մասնագիտական կրթական ծրագրերը, բժիշկները, բուժքույրերը և դեղագործները 5 տարին մեկ ենթարկվում են լիցենզավորման:

Երկրում իրականացվող արմատական վերափոխումները նպատակաուղղված են կանխարգելիչ առողջապահական համակարգի զարգացմանը, որակյալ բժշկական ծառայությունների մատչելիության ապահովմանը և ընտանեկան բժշկի ինստիտուտի ստեղծմանը:

Մշակույթ

Անկախ Հայաստանը ժառանգեց մշակութային դարավոր ավանդույթներ և պետական կառավարման տասնամյակների ընթացքում կուտակված պատկառելի փորձ, ինչպես նաև համամարդկային արժեք ունեցող մշակութային իրական նվաճումներ, մշակութային ժառանգության պահպանման, զարգացման, կրթության, նոր արժեքների ստեղծման ու տարածման հաստատությունների հզոր ցանց, մշակութային արդյունաբերության բարենպաստ պայմաններ ու հնարավորություններ:

Անցած տասնամյակին բնորոշ են երեք դրսևորումներ, որոնք գերիշխում էին ժամանակի տարբեր փուլերում. գաղափարականացվածության փոխարինումը պարզապես գաղափարագրկությամբ, մշակութային հաստատություններն ամեն գնով պահպանելու ջանքերը, արտասահմանյան երկրների հետ անմիջականորեն համագործակցելու ձգտումը (հաճախ չհիմնավորված «ցուցադրական» բնույթի):

Անցած տասը տարիների մշակութային զարգացումները գնահատելիս հարկ է վավերացնել, որ կորուստներն ակնբախ են՝ պայմանավորված օբյեկտիվ և

սուբյեկտիվ պատճառներով: Խոսքը մասնավորապես գրահրատարակչության ծավալների կտրուկ անկմանը, կինոարտադրության ճգնաժամին, տասնյակ գրադարանների, մշակույթի տների և ակումբների, թանգարանների, կինոթատրոնների, համույթների ու ստեղծագործական խմբերի կորստյանն է վերաբերում: Անշուշտ, երևան էին գալիս նաև նոր ստեղծագործական խմբեր, որոնց թիվը տասնամյակի փոքր էր անհետացողների համեմատությամբ, դրանց մի մասն էլ թիթեռի կյանք էր ունենում կամ հայտնվում էր ճգնաժամի մեջ: Սակայն ամենալուրջ բացթողումն արձանագրվեց մշակութային կրթության և արժեքների տարածման ու քարոզչության ասպարեզում: Շուկան ողողող մշակութային ցածր արժեքները և համահարթեցնող գլոբալացման վտանգները չափազանց թույլ դիմադրության են հանդիպում:

Մշակութային քաղաքականության հայեցակարգի մշակման նախաձեռնությունները վերջնականապես ձևակերպվեցին և հաստատվեցին միայն 2000թ. հոկտեմբերին: Համաձայն այդ հայեցակարգային հիմնադրույթների, պետական մշակութային քաղաքականության հիմնական նպատակը մշակութային ժառանգության պահպանումն ու անխաթար փոխանցումն է սերունդներին, աջակցումը ստեղծագործական գործունեությանը, ինչպես նաև նպաստումը մշակութային արժեքների ընկալմանն ու տարածմանը: Այս միանգամայն ընդունելի նպատակին հասնելու համար պետությունը որդեգրել է կառավարման ժողովրդավարական, մշակութային գործունեության ազատության, միջազգային նշանակության արժեքների նախապատվության և կառավարման ապակենտրոնացման սկզբունքները:

Անցած տասը տարիներին որոշակի աշխատանք է կատարվել միջազգային համաձայնագրերին միանալու և ազգային օրենսդրական դաշտը ձևավորելու ուղղությամբ, սակայն օրենսդրական գործիքները բավարար չափով չեն կիրառվում մշակույթի ոլորտում, մի շարք ճյուղեր տակավին զուրկ են օրենքներով կարգավորվելու հնարավորությունից: Մշակույթի ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցների ու հովանավորության սղությունը և կառավարման համակարգը թույլ չեն տալիս խոսել այս ոլորտում ժողովրդավարական սկզբունքների մասին, ինչպես ասվում է հայեցակարգում:

Օրենսդրական ու տնտեսական մեխանիզմների բացակայության պատճառով լուրջ խնդիրներ է առաջացրել համակարգի ապակենտրոնացումը: Կառավարման նոր մոդելների մշակման փոխարեն կառավարությունը ջանքեր է գործադրում իր լիազորությունները վերականգնելու ուղղությամբ, որը բնավ հեռանկարային մոտեցում չէ:

Մշակույթի կառավարման համակարգում առայժմ գրեթե չեն օգտագործվում կառավարման տեղեկատվական ու հետազոտական հնարավորությունները: Առանց տեղեկատվական բազայի և իրավիճակի խորքային ուսումնասիրությունների՝ հազիվ թե իրականություն դառնան այն խնդիրները, որոնք առաջադրված են մշակութային քաղաքականության հայեցակարգում:

Հայաստանի ապագան գլոբալացվող աշխարհում

Հեռանկարային ուղղություններ. Կրթական և հաղորդակցական տեխնոլոգիաներ

Երկրի կողմից ձեռնարկվելիք անհրաժեշտ քայլերից են հեռանկարային բնագավառների տարբերակումն ու զարգացումը, երկրի դիրքորոշումը գլոբալացման գործընթացներում և լավ ու արդյունավետ կառավարման մեխանիզմների և հաստատությունների ձևավորումն ու հզորացումը: Ներկայումս հեռանկարային են համարվում բարձր տեխնոլոգիաները, որոնք ներառում են տեղեկատվական տեխնոլոգիաները, գիտական հետազոտությունների և մշակումների ոլորտը (R&D) և ծառայությունների զարգացումը: ՀՀ-ն, հենվելով իր կրթված, հեշտ վերապատրաստվող, ստեղծագործ, նորարար, ճկուն և բարձր արտադրողականություն ունեցող աշխատուժի վրա, «պահից օգտվելու» և այս պայթյունային զարգացումն ապրող անսահման շուկայում իր տեղը գտնելու բացառիկ հնարավորություն ունի:

Տեղեկատվական տեխնոլոգիաների գին-ծավալ բարձր հարաբերակցությունն ունեցող ապրանքների արտադրությունը, համակարգչային ոլորտի և տվյալների մշակման հետ կապված ծառայությունները այժմ սրընթաց վերելք են ապրում՝ հանդիսանալով Հայաստանի զարգացման հիմնական հեռանկարային բնագավառները: Միայն ծրագրային ապահովման արտահանումը, համաձայն հաշվարկային գնահատականի, կազմել է առնվազն 20 մլն. դոլար: ՏՀՏ-ի բոլոր ենթաճյուղերը, բացառությամբ «SS սարքավորումներ» ենթաճյուղի, հաստատուն զարգացում են ապրում: Չնայած ՏՏԱ-ն տնտեսության այլ ճյուղերի համեմատ իրավական և վարչարարական նվազագույն խոչընդոտների է բախվում, սակայն վերջիններս դեռևս առկա են «Հեղինակային իրավունքի մասին» օրենքում, մինչդեռ էլեկտրոնային կոմերցիայի և էլեկտրոնային ստորագրության մասին օրենքների բացակայության պայմաններում առկա են որոշ խոչընդոտներ, որոնք սահմանափակում են այդ առումով Հայաստանի զարգացման հնարավորությունները: Չարգացմանը խոչընդոտող հիմնական գործոններն են Ինտերնետ կապի մատչելիության խնդիրը և իրավական նորմերը, որոնք բարենպաստ չեն Ինտերնետի տարածման համար և, որպես հետևանք, արգելակում են Հայաստանում ՏՀՏ արդյունաբերության և հատկապես էլեկտրոնային կոմերցիայի զարգացումը:

ՏՀՏԱ-ն ՀՀ-ում արդեն իսկ կայուն աճ է ապրում՝ վերապահելով իրեն ՀՀ տնտեսական զարգացման բնագավառում եռամիասնական դեր ու գործառնություն, այն է՝ արդյունաբերության ինքնին հեռանկարային ճյուղ, որպես անհրաժեշտ արտադրական արդիական

հենք այլ ճյուղերի զարգացման համար և ենթակառուցվածք ներդրումների ներգրավման առումով:

ՏՀՏ հատվածը, ըստ էության, բավականին ճկուն է և շատ արագ կարող է փոխել իր ռազմավարությունը, մարտավարությունը, ապրանքների տեսականից և թեթևացնել ՀՀ-ի արդյունաբերության այլ ճյուղերի անցումային շրջանը:

ՏՀՏԱ-ն արդյունաբերության այլ ճյուղերի համեմատությամբ մի շարք էական առավելություններ ունի. մասնավորապես օգտագործում է համապատասխան որակավորում ունեցող առկա մարդկային ռեսուրսները, նվազագույն կապիտալ ներդրումներով ստեղծում է նոր աշխատատեղեր, արագորեն և հեշտությամբ արտահանում է իր ապրանքները՝ ցանկացած ծավալով, առավելապես գրավիչ է օտարերկրյա ներդրողների համար, օժանդակում է ՀՀ-ի ներգրավմանը և մրցունակության ամրապնդմանը միջազգային շուկաներում:

Անգամ միայն ՏՏԱ բնագավառի՝ որպես գերակա ճյուղի ճանաչումը և ոլորտի զարգացմանը նպաստող ծրագրերի մշակումը և արդեն իսկ իրականացումը կարելի է ոլորտի զարգացման համար ՀՀ կառավարության կողմից կատարված առաջին խոստումնալից քայլը համարել:

Ճյուղը արագ վերելք է ապրում և իր զարգացման խոչընդոտները վերացնելու նպատակով ճնշում է գործադրումն պետության վրա, իսկ պետությունն իր հերթին արդեն արձագանքում է դրանց՝ հստակ պատկերացնելով իր անելիքները՝ Ինտերնետի ոլորտում ստեղծել մրցակցային դաշտ և խթանել նրա զարգացումը, վերացնել պետության կողմից հարուցվող վարչարարական խոչընդոտները, վերացնել մտավոր սեփականության իրավունքի հետ կապված օրենսդրական խոչընդոտները, իրականացնել բարեփոխումներ ՏՏ կրթական համակարգում:

Գլոբալացման գործընթացներ

Հայաստանը՝ որպես անկախ ու ինքնուրույն պետություն, ակտիվորեն ներգրավվեց գլոբալացման և ինտեգրացման գործընթացներում՝ անդամագրվելով մի շարք միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների, մասնակցելով գլոբալ համաժողովների և այլն: Չնայած այս ամենին՝ այսօր ՀՀ-ն պետք է լուծի երկմիասնական խնդիր՝ գլոբալացման նկատմամբ հայեցակարգային վերաբերմունքի բանաձևում և գլոբալացմանը մասնակցելու չափի որոշում: Հայաստանի գլոբալացման գործընթացների ազդեցությունը կրող երկրի տեսանկյունից գլոբալացման էությունը նախ և առաջ հանգում է մշակութային ու սոցիալ-տն-

տեսական հետևանքների, քանի որ համաշխարհային շուկայում ինտեգրացումը, մի կողմից, մեծ հնարավորություններ է ընձեռում, մյուս կողմից՝ որոշակի և ոչ միանշանակ խնդիրներ է առաջադրում: Հայաստանի համար գլոբալացման վտանգը եռամիասնական է և սպառնում է տնտեսական ինքնուրույնությանը, մշակութային ինքնությանը և քաղաքական ինքնիշխանությանը: Հայաստանի խնդիրն է լավագույնս հարմարվել գլոբալացվող համաշխարհային հանրությանը՝ հնարավորինս օգտագործելով գլոբալացման առավելությունները, զուգահեռաբար նվազագույնի հասցնելով դրա բացասական ներգործությունը, օրինակ, «ֆիլտրի» համակարգի միջոցով, որ հնարավորություն է ընձեռում ընտրողաբար օգտվել գլոբալացման արդյունքներից ազգային մշակույթի պաշտպանության, նրա հետագա զարգացման և համընդհանուր դառնալու ունակ արժեքների հանրայնացման միջոցով, օգտագործելով տարածաշրջանային համագործակցությունը տնտեսական, սոցիալական ու մշակութային ասպարեզներում հեռանկարային գործընկերներ ձեռք բերելու նպատակով, ինչպես նաև անվտանգության տեսակետից:

Միաժամանակ Հայաստանի իշխանությունները պետք է հաշվի առնեն գլոբալացման գործընթացով պայմանավորված մի շարք օբյեկտիվ իրողություններ, որոնցից ամենաեականներն են.

- ❖ Գլոբալացումը օբյեկտիվ երևույթ է, նրա հետագա զարգացումն ու տարածումը անհնարին է կանխել:
- ❖ Գլոբալացման հետևանքով անհամեմատ ուժեղանում է մրցակցությունը ապրանքների, ծառայությունների, աշխատուժի, կապիտալի և տեխնոլոգիաների միջազգային շուկաներում: Հայաստանի տնտեսությունը միջազգային արդյունավետ ինտեգրացումը հնարավոր է բարձր տեխնոլոգիաներով հագեցված ճյուղերի արտադրանքի արտահանման ծավալների աստիճանական մեծացումով:
- ❖ Հայաստանը պետք է ավելի մեծ ծավալի վերազգային կորպորացիաների ուղղակի ներդրումներ ներգրավի: Միաժամանակ անհրաժեշտ է ակտիվորեն ներգրավվել վերազգային կառույցների և միջազգային տնտեսական կազմակերպությունների աշխատանքներում՝ միջազգային գործընթացների զարգացման միտումները լավ պատկերացնելու և, այդպիսով, սեփական շահերը պաշտպանելու համար:
- ❖ Հայաստանում անցումային խնդիրների լուծման երկարաձգումը կհանգեցնի գլոբալացման բացասական հետևանքների ավելի մասշտաբային դրսևորմանը:
- ❖ Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման դեպքում կարող է մեծ դրական գործոնի վերածվել: Նավթի և գազի խողովակաշարերի անցկացումը երկրի տարածքով, ինչպես նաև հյուսիսը հարավի հետ կապող ավտոճանապարհային և երկաթուղա-

յին հաղորդակցության վերականգնումը տնտեսության մեջ ներդրումների մեծ ներհուսք ապահովող կարևոր գործոն կդառնան: Ի լրումն՝ Սփյուռքը կարող է դառնալ այն երկրորդ կարևոր գործոնը, որի ընձեռած հնարավորությունների լիարժեք օգտագործումը կհանգեցնի գլոբալացման դրական արդյունքների դրսևորմանը:

- ❖ Նման ցնցումների ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով Հայաստանը պետք է ընդլայնի իր արտաքին տնտեսական կապերը տարբեր երկրների հետ, չափավոր մակարդակի հասցնի առանձին երկրներից ունեցած մեծ կախվածությունը և ամրապնդի իր դիրքերը ավելի կայուն և զարգացած շուկաներում:
- ❖ Գլոբալ տնտեսության զարգացման օրինաչափությունները և պահանջները ազգային մակարդակում հաշվի առնելու գործելակերպը պարտադրում է կառավարման նոր հայեցակարգի մշակում՝ գիտա-ծրագրային ապահովմամբ, և համապատասխան մասնագետների պատրաստում:

Լավ կառավարման հիմքը

Կառավարման արդյունավետության բարձրացմանը և կառավարչական որոշումների գիտագործնական բարձր հիմնավորվածությանը ներկայումս մեծ ուշադրություն է դարձվում ողջ աշխարհում, և դրա անհրաժեշտությունը մեծանում է տնտեսության գլոբալացման և ինտեգրացման խորացման ու տնտեսությունում փոփոխությունների ինտենսիվացման (օրինակ, անցումային շրջանի երկրներում) հետ մեկտեղ: Պետական կառավարման արդյունավետության զգալի բարձրացումը ՀՀ-ում ներկա պայմաններում մեծ ջանքեր կպահանջի, որոնց թվում զեկույցը կարևորում է **1.** կառավարման ծրագրային, **2.** գիտական ապահովման և **3.** արդյունավետության գնահատման համակարգերի ստեղծումը: Դրանց գոյությունը և բնականոն գործունեությունը անչափ կարևոր է և պետք է հրատապ իրագործվի: Տնտեսության արդյունավետ կառավարման առաջնային նախապայման հանդիսանալուց բացի, դրանք կհանգեցնեն նաև կառավարման ժողովրդավարացմանը, թափանցիկությանը, մասնագետների ավելի լայն մասնակցությանը որոշումների նախապատրաստման գործընթացին:

Վերը նկարագրված համակարգերի գործունեությունը առնչվում է կառավարման բոլոր ոլորտներին և գործառույթներին, նպաստում է դրանց արդյունավետ իրագործմանը: Կառավարման բուն գործընթացից դուրս լինելով՝ դրանք դառնում են կառավարման համակարգի ենթակառույց, որը հիմնականում կանխորոշում է դրա արդյունավետությունը:

Համակարգերի ստեղծման ծրագրի մշակման հետաձգումը մեծացնում է կորուստների հնարավորությունը, իսկ ստեղծումն ու զարգացումը ապահովում են կառավարման գործընթացների ավելի մեծ թափանցելիություն ու ժողովրդավարացում՝ որոշումների նախա-

պատրաստմանը, փորձաքննությանը, ընդունմանը և իրականացմանը մասնագետների շատ ավելի լայն մասնակցության միջոցով:

Վերը ներկայացված համակարգերի կամ համակարգերի համալիրի գործունեության բարերար ազդեցությունը կարելի է ակնկալել նաև մարդկային զարգացման (ՄԶ) գործընթացներում, ինչը թույլ է տալիս վերանայել նախկինում կիրառված մոտեցումները, ստանալ ավելի հիմնավոր լուծումներ, որոնք հաշվի կառնեն յուրաքանչյուր երկրի, հասարակության առանձնահատկությունները: Նմանատիպ կառույցը հնարավորություն կունենա կառավարությանը և շահագրգիռ մարմիններին հայեցակարգային առաջարկություններ ներկայացնել և տեղեկատվական ծառայություններ մատուցել տվյալ երկրում ՄԶ բնագավառում առկա հիմնախնդիրների վերաբերյալ:

Այդ կառույցը հարիր է նաև մարդկային զարգացման հարացույցին, որը, լինելով ժամանակի հետ և ժամանակի մեջ գործող ու զարգացող իրողություն, դեռևս որոշ հստակեցման կարիք ունի: ՄԱԶԾ-ն, ներկայացնելով մարդկային զարգացումը որպես զարգացման հարացույց, այն դարձրեց մարդկային գործունեության ուղղորդման, այսինքն՝ զարգացման առնչվող որոշումներ ընդունելու և հիմնավորելու սկզբունք կամ հիմնադրույթ: Ներկայումս մարդկային զարգացման հարացույցը մարդուն դիտարկում է որպես զարգացման և՛ օբյեկտ, և՛ սուբյեկտ՝ հիմնական ուշադրությունը սևեռելով մարդու հնարավորությունների և ունակությունների բացահայտմանը և ընտրության ընդլայնման մթնոլորտի ստեղծմանը:

Մոդել ապագայի համար

Վերլուծելով անցման և անկախության տասը տարվա հնարավորությունները, խոչընդոտները, նախադրյալները և սահմանափակումները, զեկույցը միաժամանակ Հայաստանի ապագան դիտում է որպես զարգացման պոստիմդուստրիալ համագործակցության մաս, քանի որ այն Հայաստանի նման սակավառեսուրս երկրի համար զարգացման նոր հնարավորություններ է ստեղծում՝ ի հաշիվ մարդկային ռեսուրսի օգտագործման և զարգացման, իսկ իրենց արդյունավետությունն ապացուցած արժեքային համակարգի և սոցիալական ինստիտուտների վերարտադրումը բա-


վարար հիմք է ապահովում դրա համար: Զարգացման հայեցակարգն իր հիմքում ունի գլոբալ, տարածաշրջանային և տեղական ասպեկտներ:

Հայաստանի զարգացումը դիտվում է լիբերալ տնտեսության, բաց հասարակության և սոցիալական պետության շրջանակներում և կարևորում է ազատություններ երաշխավորող ինստիտուտների սահմանում և ամրապնդումը: Սոցիալական պետության դրույթը հաստատագրված է ՀՀ Սահմանադրության առաջին անփոփոխելի հոդվածում և ենթադրում է բացառապես դեպի սեփական քաղաքացիները կողմնորոշված պետության ձևավորում (իրավական և քաղաքական պրակտիկայում այն մինչ օրս մնում է չկիրառված):

Անհերքելի է համարվում այն դրույթը, ըստ որի երկարաժամկետ հեռանկարում կայունության և անվտանգության ապահովումը հնարավոր է միայն ժողովրդավարության և քաղաքացիական հիմնարար արժեքների ներդրման պայմաններում: Ըստ այդմ, մարդկային զարգացումը և մարդու իրավունքը որպես գլխավոր գերակայություն ճանաչելը բավարար հիմք կդառնան հակամարտությունների լուծման համար: Ժողովրդավարության ավանդույթների բացակայության և քաղաքացիական ինստիտուտների թուլության պայմաններում, ինչպես Հայաստանում է, բարեփոխումների արդյունավետությունը մեծ մասամբ պայմանավորված է պետության գործողություններով: Ըստ այդմ, կառավարման պետական համակարգի բարեփոխումներն առաջնահերթ նշանակություն են ձեռք բերում: Ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված գործողությունները հանգում են տնտեսական ազատության համաթվի բարձրացմանը, միջին դասի ձևավորմանը, ինչը սոցիալական նախագծման առարկա է և որոշակի խնդիրներ է առաջադրում պետության և քաղաքական համակարգին, որոնց իրագործումը հասարակական պայմանագրի առանցքն է:

Կայուն զարգացման ճանապարհին կանգնելու համար պետությունը և քաղաքական համակարգը պետք է հստակ ձևակերպեն այժմյան օրակարգը և այն հասարակության սեփականությունը դարձնեն. հակամարտությունների լուծում, ինտեգրացում, արդյունավետ պետության ձևավորում, ազատությունների երաշխավորում, մրցակցային տնտեսության ձևավորում, մարդկային ռեսուրսի զարգացում:

Հայաստանի Հանրապետության վերաբերյալ վիճակագրական տվյալներ, 2001³



Ընդհանուր տվյալներ

	Կրոն Պաշտոնական լեզու Արժույթ ԱՄՆ դոլարի փոխարժեքը Ֆինանսական տարի	Հայ առաքելական եկեղեցի Հայերեն Դրամ 1 ԱՄՆ դոլար=539.52 դրամ Հունվար/դեկտեմբեր
Մարդկային զարգացման համաթվի կարգը	93/174 (ՄՁՁ 2000*)	72/162 (ՄՁՁ 2001)
Երկրի տարածքը		29, 743 քառ.կմ
	01.01.2000թ.	01.01.2001թ.
Բնակչությունը	3.803.395	3.802.371*
ՀՆԱ 1 շնչի հաշվով	485,0 ԱՄՆ դ.	503,6 ԱՄՆ դ.
Հողի օգտագործում		
Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող հողօգտագործողների հողեր		1,329 հազ. քառ. կմ
Անտառային ֆոնդի և պահուստային հողեր		1,316 հազ. քառ. կմ
Այլ հողօգտագործողների հողեր		0,329 հազ. քառ. կմ

³ Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական ազգային ծառայություն, եթե այլ նշում չկա:

⁴ ՄՁՁ-ները տվյալները ներկայացնում են երկու տարվա տարբերությամբ:

* Սա ՀՀ մշտական բնակչության թվաքանակն է, սակայն ՄՁԱԶ հեղինակները համաձայն են այն անկախ փորձագետների հետ, ըստ որոնց ՀՀ առկա բնակչության թվաքանակը 3,0 մլն-ից քիչ է:

Կարևոր վիճակագրություն

01.01.2000թ.

01.01.2001թ.

Բնակչության խտությունը (մարդ/կմ ²)	128	128
Բնակչության աճը 1997-2000	0.2%	-0.05%

Բնակչության տեղաբաշխումը

Քաղաքային	66.7%	66.6%
Գյուղական	33.3%	33.4%

Առողջապահություն

Նորածնի կյանքի սպասվելիք տևողությունը	73.2 տարի	72.5 տարի
Տղամարդ	70.7 տարի	70.5 տարի
Կին	75.5 տարի	74.5 տարի
Մանկական մահացությունը (1000 կենդանածնի հաշվով)		15.6
Մայրական մահացությունը (1000 կենդանածնի հաշվով)	32.9	52.5
1 բժշկին ընկնող բնակչության թվաքանակը	301.0	319
1 հիվանդանոցային մահճակալին ընկնող բնակչության թվաքանակը	161	172

Կրթություն⁵

1-ին, 2-րդ և 3-րդ մակարդակների բոլոր ուսումնական հաստատություններ ընդունվածների ցուցանիշ (7 և 17 տարեկան, %)	60.2	59.6
Դպրոց ընդունվողների զուտ ցուցանիշը, %	86.7	89.1
1-ին, 2-րդ և 3-րդ մակարդակների բոլոր ուսումնական հաստատություններում ընդգրկվածների ցուցանիշ (7-22 տարեկան, 1000 բնակչի հաշվով), այդ թվում	597	572
Հանրակրթական համակարգ (7-16 տարեկան)	790	776
Միջին մասնագիտական կրթական համակարգ (17-20 տարեկան) ⁶	129	113
Բարձրագույն կրթական համակարգ (17-22 տարեկան)	53	146
Չափահասների գրագիտությունը	99%	99%

⁵ Ցուցանիշները հաշվարկված են՝ հիմք ընդունելով ՀՀ մշտական բնակչության թվաքանակը և պետական ու ոչ պետական ուսումնական հաստատություններում սովորողների ընդհանուր թվաքանակը:

⁶ Ներառյալ նախամասնագիտական ուսումնական հաստատություններում (ուսումնարաններում) սովորողները:

Կարևոր վիճակագրություն

01.01.2000թ.

01.01.2001թ.

Տնտեսական ցուցանիշներ

Իրական ՀՆԱ	1844.6 մլն. ԱՄՆ դ.	1915.2 մլն. ԱՄՆ դ.
Իրական ՀՆԱ-ի աճը (տարեկան տոկոսային փոփոխությունը)	3.3%	6.0%

ՀՆԱ-ի կառուցվածքը ըստ հիմնական բնագավառների

Արդյունաբերություն	21.2%	22.1%
Գյուղատնտեսություն	27.2%	23.1%
Շինարարություն	8.8%	9.1%
Ծառայություններ	34.9%	35.2%

Սղաճ

Սղաճ (ընթացիկ տարվա դեկտեմբերը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)	2.0%	0.4%
Սղաճ (միջին տարեկան)	0.6%	-0.8%

Պետական ֆինանսներ

Ընդհանուր եկամուտներ	356.8 մլն. ԱՄՆ դ.	319.1 մլն. ԱՄՆ դ.
Ընդհանուր ծախսեր	432.9 մլն. ԱՄՆ դ.	413.1 մլն. ԱՄՆ դ.
Բյուջեի դեֆիցիտ	76.1 մլն. ԱՄՆ դ.	94.0 մլն. ԱՄՆ դ.

Արտաքին բաժին

Վճարային հաշվեկշիռ		
Ապրանքների և ծառայությունների արտահանում	383.1 մլն. ԱՄՆ դ.	446.8 մլն. ԱՄՆ դ.
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	919.1 մլն. ԱՄՆ դ.	966.2 մլն. ԱՄՆ դ.
Մասնավոր տրանսֆերտներ	80.3 մլն. ԱՄՆ դ.	85.6 մլն. ԱՄՆ դ.
Ընթացիկ հաշվի պակասորդը	-306.9 մլն. ԱՄՆ դ.	-278.4 մլն. ԱՄՆ դ.
% ՀՆԱ-ից	16.6%	14.5%
Արտաքին պարտքը	840.1 մլն. ԱՄՆ դ.	859.5 մլն. ԱՄՆ դ.
% ՀՆԱ-ից	45.5%	44.9%
Գործազրկություն	11.2%	11.7%

Ներածություն

2001թ. Հայաստանի Մարդկային զարգացման ազգային զեկույցը (ՄՁԱԶ) թվով յոթերորդն է, որ հրատարակվում է Հայաստանում սկսած 1995թ.-ից: Այն պատրաստվել է մի խումբ անկախ փորձագետների կողմից՝ ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի ֆինանսական և կազմակերպչական օժանդակությամբ: Հայաստանի կառավարությունը ներկայացված է հանձնիս ՅՅ նախագահի աշխատակազմի: Հայաստանում պատրաստված յուրաքանչյուր ՄՁԱԶ-ի խնդրո առարկան որոշակի հրատապ հարց է (ասենք՝ անցման սոցիալական գիւնը (1995թ.), աղքատությունը (1996թ.), սոցիալական համագործակցությունը (1997թ.), պետության դերը

(1998թ.), մարդկային զարգացման հինգ տարին Հայաստանում (1999թ.), մարդու իրավունքները (2000թ.), որը քննության է առնվում մարդկային զարգացման տեսանկյունից: 2001թ. զեկույցը վերլուծում է Հայաստանի վերջին տասը տարիների զարգացումները անկախության և անցումային շրջանի համատեքստում: ՄՁԱԶ 2001-ում փորձ է արվում, հիմնվելով ներկայացված վերլուծության, նախանշված հեռանկարային հնարավորությունների, օբյեկտիվորեն առկա և անհրաժեշտ նախադրյալների վրա, ուրվագծել Հայաստանի զարգացման հեռանկարները:

1

Ներդիր

Չլրբալ ՄԶԶ 2001.

Նոր տեխնոլոգիաները ի շահ մարդկային զարգացման

Ձեկույցը նկարագրում է, թե ինչպես մարդիկ կարող են ստեղծել և կիրառել տեխնոլոգիաները իրենց կյանքը բարելավելու նպատակով: Այն նաև այնպիսի պետական քաղաքականությունների մշակման մասին է, որոնք պետք է հեղաշրջումները տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների և կենսատեխնոլոգիաների բնագավառում ուղղեն դեպի մարդկային զարգացում:

Մարդիկ ողջ աշխարհում հույս ունեն, որ այդ նոր տեխնոլոգիաները ավելի առողջ կյանք, սոցիալական ազատություններ, խոր գիտելիքներ և առավել արդյունավետ ապրուստ կապահովեն: Սակայն շատերը նաև մտավախություն ունեն, որ այդ տեխնոլոգիաները գրեթե անօգուտ կլինեն զարգացող երկրներին, կամ կարող են մեծացնել արդեն գոյություն ունեցող դաժան անհավասարությունները հարուստների և աղքատների միջև: 90-ականների սկզբին աշխարհի աղքատ բնակչության 10%-ը ստանում էր աշխարհի հարուստների 10%-ի եկամուտների 1,6%-ը: Առանց նոր պետական քաղաքականության տեխնոլոգիաները կարող են մեկուսացման աղբյուր հանդիսանալ և ոչ զարգացման գործիք: Այնուամենայնիվ, լավ կառավարման դեպքում արդյունքները կզերազանցեն ռիսկերը:

Նոր տեխնոլոգիաները զարգացող երկրներին որոշակի օգուտ են բերում, միաժամանակ նաև մեծ ռիսկերի առաջ են կանգնեցնում, որոնք արդյունք են վատ քաղաքականության, անհամապատասխան կարգավորման և թափանցիկության բացակայության:

Այդ ռիսկերը կարելի է կարգավորել ազգային (օգուտ քաղել՝ տեխնոլոգիաների առումով հետևող հանդիսանալով, տարածաշրջանային համագործակցությունից, զարգացնել ազգային գիտահետազոտական ներուժը, ուժեղացնել կարգավորող հաստատությունները և խթանել ազգային քննարկումները) և Չլրբալ (հետազոտությունների անցկացում, գիտության նկատմամբ հասարակության հավատի վերականգնում, տեղեկատվության և փորձի փոխանակում) մակարդակներում: Տեխնոլոգիական հեղաշրջումը և Չլրբալացումը միավորվում են՝ ստեղծելու նոր ցանցային դարաշրջան, որը գործում է հորիզոնական ցանցերին զուգահեռ, երբ յուրաքանչյուր կազմակերպություն կենտրոնանում է մրցակցային առավելությունների վրա: Ջարգացող շատ երկրներ արդեն իսկ միացել են այդ ցանցերին՝ քաղելով մարդկային զարգացման համար զգալի օգուտներ: Ցանցային դարաշրջանում յուրաքանչյուր երկիր ներուժի կարիք ունի՝ Չլրբալ տեխնոլոգիաները հասկանալու և ներքին կարիքներին հարմարեցնելու համար: Բոլոր երկրները, անգամ ամենաաղքատները պետք է իրականացնեն այնպիսի քաղաքականություններ, որոնք խթանում են.

1. նորարարությունը՝ գիտությունը, զարգացումը և ձեռնարկատիրությունը խրախուսելու միջոցով,
2. կրթական համակարգերը, որոնք որակը բարձրացնելու միջոցով կլուծեն ցանցային դարաշրջանի խնդիրները,
3. Սփյուռքի հավաքագրում՝ իրենց փորձը և միջոցները օգտագործելու միջոցով: Սփյուռքում ապրողների վերաբերմունքը հայրենիք վերադառնալու նկատմամբ պայմանավորված է երկրի զարգացմամբ և բարելավման հեռանկարներով:

Ձեկույցը առաջ է քաշում գլոբալ գործողության չորս ուղղություն.

- ✦ Նոր համագործակցություն և նոր դրոպապատճառներ՝ գիտական հետազոտությունների և մշակույթների համար՝ շահագրգռելով մասնավոր հատվածին, կառավարությանը և գիտնականներին միավորել ուժերը այդ ասպարեզում ինչպես զարգացող երկրներում, այնպես էլ միջազգային համագործակցության միջոցով:
- ✦ Մտավոր սեփականության իրավունքների կարգավորում՝ ճշգրիտ հավասարակշռություն հաստատելով նորամուտություն ստեղծելու մասնավոր դրոպապատճառների և այդ նորամուտությունների մատչելիությունը ապահովելու հասարակական շահերի միջև:
- ✦ Ջարգացման նպատակով ներդրումների ավելացում տեխնոլոգիաների բնագավառում՝ ապահովելով այնպիսի տեխնոլոգիաների ստեղծումը և տարածումը, որոնք հրատապ են, սակայն անտեսվում են գլոբալ շուկայի կողմից:
- ✦ Տարածաշրջանային և գլոբալ ինստիտուցիոնալ օժանդակության տրամադրում՝ խաղի արդար կանոնների և այն ռազմավարությունների առկայությամբ, որ ստեղծում են զարգացող երկրների տեխնոլոգիական ներուժը:

Հայաստանի ՄՁԱԶ 2001-ի թեմայի ընտրությունը այս անգամ ևս տարբեր մակարդակներում լայնածավալ քննարկումների արդյունք էր՝ թելադրված Հայաստանի անկախության և անցումային շրջանի տասնամյա պատմությամբ: Երկրում առկա իրավիճակը՝ հասարակության դժգոհությունը անցումային շրջանի արդյունքներից, ինչպես նաև նպատակադրված հեռանկարային քաղաքականության ընտրության անհրաժեշտությունը, որոշիչ էին այս թեմայի ընտրության համար: Ձեկույցում փորձ է արվում գնահատել տասնամյա ժամանակահատվածում տեղի ունեցածը, համարել առաջընթացն ու հետընթացը, ակնկալիքներն ու իրականությունը, առկա հնարավորությունները և խոչընդոտները: Անկախության և անցումային տասը տարիների արդյունքների քննարկման շեշտն այս անգամ տեղափոխվել է կառավարման ոլորտ՝ դեպի «լավ» կամ արդյունավետ կառավարում, որը բնութագրվում է մասնակցությամբ, թափանցիկությամբ, պատասխանատվությամբ, օրինականությամբ, արդյունավետությամբ, որակով⁷:

Ակնհայտ է, որ վերը նշվածն իր բոլոր դրսևորումներով անհնար է ներկայացնել մեկ զեկույցում: Այդ իսկ պատճառով, ՄՁԱԶ 2001-ը, Հայաստանի տասնամյա զարգացումները ներկայացնելիս, այլոց շարքում ծանրացել է այն հարցերի վրա, որոնք անցյալում արծարծվել են մակերեսորեն (կամ չեն արծարծվել), օրինակ՝ կենսաթոշակային համակարգ, կոռուպցիա, տեղեկատվական տեխնոլոգիաներ, կառավարման գիտական և ծրագրային ապահովման համակարգեր և այլն: Նույն տրամաբանությամբ այս զեկույցում շատ քիչ է խոսվում մարդու իրավունքների և հարակից հարցերի մասին, քանզի ՄՁԱԶ 2000-ը՝ «Մարդու իրավունքները և մարդկային զարգացումը. գործողություն հանուն առաջընթացի», պատշաճ խորությամբ անդրադարձել է դրանց:

Այս տարի ևս զեկույցը հավատարիմ է մնացել իր հիմնական նպատակներից մեկին՝ գիտելիքների տարածում, քաղաքականության, որոշումների ընդուն-

ման մեջ մարդու շուրջ կենտրոնացած հայեցակարգերի ներառման անհրաժեշտության և դրա իրականացման ուղիների շուրջ քննարկումների նախաձեռնում: Ձեկույցում մեծ տեղ է տրվել կառուցողական բազմակարծությանը՝ հասարակական կազմակերպությունների (ՀԿ) և անհատների կողմից պատրաստված ներդրումների միջոցով, հնարավորություն տալով վեր հանել ընդհանուր մտահոգության խնդիրները, ներկայացնել իրենց փորձը և տեսակետը (անգամ եթե այն չի համընկնում հեղինակային խմբի կարծիքի հետ): Կարևոր ենք համարում նշել, որ զեկույցում արտահայտված կարծիքները և եզրակացությունները զուտ հեղինակային են (թե՛ ներդրումները, թե՛ հիմնական շարադրանքը), և միշտ չէ, որ դրանք համընկնում են ՀՀ կառավարության կամ ՄԱԿ-ի տեսակետներին:

Ձեկույցը հիմնականում արծարծում է 1991թ-ից մինչև 2001թ. առաջին կիսամյակի իրադարձությունները: Քննարկումների և վերլուծությունների առանցքը անկախության պատկերացումների և իրականության անհամապատասխանությունն է, անկախության ընձեռած հնարավորությունները, ժողովրդավարացման գործընթացը, պետական և տեղական ինքնակառավարման համակարգերի արդի խնդիրները և նվաճումները, իրականացված տնտեսական և սոցիալական բարեփոխումների ընթացքը և արդյունքները:

Հաշվի առնելով այն, որ զեկույցի նպատակը գնահատական տալն է երկրում տեղի ունեցած կարևոր իրադարձություններին, ապա հեղինակները փորձել են ոչ միայն կենտրոնանալ այդ տասը տարվա վերլուծության վրա, այլ դիտարկել Հայաստանի ապագան գլոբալացվող աշխարհում՝ մատնանշելով հեռանկարային բնագավառները, քննարկելով գլոբալացման գործընթացների ազդեցությունը և ներկայացնելով Հայաստանը պոստինդուստրիալ աշխարհում՝ որպես առավել ընդունելի մոդել: Հայաստանի դեպքում, նոր տեխնոլոգիաները և, մասնավորապես, ՏՀՏ արդյունաբերությունը առաջընթացի համար խթանող ուժ են դիտարկվում, որը և իր ազդեցությունը կտարածի տարբեր բնագա-

⁷ Նույնը:

վառների վրա, ներառյալ աղքատության կրճատումը, տնտեսությունը արդյունաբերականից տեղեկատվականի վերափոխելը:

Գլոբալացման գործընթացները որպես օբյեկտիվ իրողություն, արդեն իսկ առկա են մեր կյանքում, և դրանք անհրաժեշտ է հաշվի առնել՝ առավելագույնս օգտվել դրանց ընձեռած հնարավորություններից և խուսափել գլոբալացման սպառնալիքներից: «Առանց նոր պետական քաղաքականության տեխնոլոգիաները կարող են մեկուսացման աղբյուր հանդիսանալ և ոչ զարգացման գործիք»⁸, ուստի որպես այլ կարևոր պայման ներկայացվում է կառավարման գործիքների դաշտի հիմնադրման անհրաժեշտությունը, որոնք հնարավորություն են ընձեռում ապահովել Հայաստանում ցանկացած ոլորտում ընդունվելիք որոշումների ճշգրտությունը, հիմնավորվածությունը: Այդ որոշումները անկասկած պետք է հաշվի առնեն մարդկային զարգացման գործոնը, և այդ պատճառով լուրջ ուշադրություն պետք է դարձնել զարգացման հարացույցի և մարդկային հայեցակարգերի վրա:

Հարկ է նշել նաև, որ Հայաստանը մարդկային զարգացման հիմնական ցուցանիշներով՝ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով, չափահասների գրագիտությամբ և

կյանքի սպասվելիք տևողությամբ ըստ ԱԶԶ 2001-ի նշանակալի առաջընթաց է ապրել⁹: Այդ երեք ցուցանիշների համակցությունը կազմում է մարդկային զարգացման համաթիվը (ՄԶՀ), որի միջոցով դասակարգվում են շուրջ 170 երկրներ, ըստ դրանց գնահատվում է նրանց վարած քաղաքականությունը մարդկային զարգացման տեսակետից: Ըստ ԱԶԶ 2001-ի, Հայաստանը առաջադիմել է 87-րդ տեղից (ՄԶԶ 2000թ.) բարձրանալով 72-րդ տեղը՝ ՄԶՀ բոլոր բաղադրիչների՝ կրթական մակարդակի (0.90-0.92) և կյանքի տևողության (0.76-0.80) բավականին բարձր ցուցանիշների և երկրում գրանցված որոշակի տնտեսական աճի շնորհիվ (0.51-0.52): Դա մասամբ կարելի է բացատրել այն փաստով, որ 1998թ. Հայաստանի տնտեսության համար առավել հաջողակ է եղել: Բացի այդ, միջազգային մակարդակով, նախկին 174 երկրների փոխարեն 162-ն են ընդգրկվել ՄԶՀ-ի հաշվարկում: Այսպիսով, ավանդաբար ավելի բարձր մարդկային զարգացում ունեցող յոթ երկիր չեն ընդգրկվել՝ մեխանիկորեն ևս բարելավելով Հայաստանի վարկանիշը: ՄԱԶԶ հեղինակային խումբը հույս է հայտնում, որ զեկույցում նշված առաջարկությունները մույնպես կօժանդակեն Հայաստանի առաջխաղացմանը կայուն մարդկային զարգացման տեսանկյունից:

⁸ Նույնը:

⁹ Գլոբալ ԱԶԶ-ների տվյալները հաշվարկվում են երկու տարի ժամանակահատվածի տարբերությամբ:

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակը

«...Անկախ ազգային պետականության պայմաններում անհրաժեշտորեն նոր որակ են ենթադրում Հայ Եկեղեցու և Հայոց պետության հարաբերությունները՝ իրավական հիմքերով ամրագրված: Հայ Եկեղեցին և Հայոց պետությունը՝ հայ ժողովուրդն է իր ամբողջության մեջ: Ազգային կյանքի հոգևոր և աշխարհիկ երկու այս կառույցների միմյանց լրացնող ներդաշնակ միությանը միայն ի գորու ենք կերտել բարգավաճ ու բարօր գալիքը մեր ժողովրդի:

...Եկեղեցու ունեցվածքը՝ որպես համազգային սեփականություն, ծառայել ու ծառայելու է ազգային նպատակների՝ եկեղեցական, հոգևոր-մշակութային, կրթադաստիարակչական, տնտեսական, ընկերային կյանքի այլազան ասպարեզներում:...

...Հավատանք մեր միաբանության հաղթանակող կարողությանը: Եվ թող Աստված զորացնի մեզ ամենքիս մեր պարտքի մեջ: Թող Հոգին Իր ճշմարիտ, Հոգին Իր Բարի առաջնորդի մեզ դեպ երկիր ուղիղ, ի լույսն իմանալի...:

... Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և սերն Աստուծոյ ընդ ձեզ ամենեսին. ամեն:»:

Հատվածներ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ

Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակից

Քրիստոնեությունը Հայաստանում 1700 տարի առաջ պետական կրոն հռչակելը նախ և առաջ ողջ քաղաքակիրթ աշխարհի ընդհանրական ձեռքբերումն է, քանի որ Ք.ժ. 301 թվականին տեղի ունեցած՝ համազգային Դարձի այս պատմական իրողությունը խորհրդանշում է բովանդակ քրիստոնյա աշխարհի համար բեկունային դարաշրջանի հաշվարկի սկիզբը:

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը հավաստում էր նաև, որ երկիրը որդեգրում է պետական կառավարման, ներքին կառուցվածքի և արտաքին աշխարհի հետ գործակցելու սկզբունքորեն նոր ուղենիշներ, որոնք խարսխված են հույսի, սիրո, հավատի, հանդուրժողականության, փոխզիջման վրա: Մարդկային, հասարակական և միջպետական փոխհարաբերությունների երանելի համակարգ է սա, որ առաջին անգամ պաշտոնապես գործի դրվեց 1700 տարի առաջ Հայաստանում, բայց որին արդեն այսօր ձգտում է համաշխարհային քաղաքակիրթ հանրությունը:

Այս հորելյանը պետականորեն նշելը առանձնահատուկ խորհուրդ է կրում XXI դարում, քանի որ «պետություն» հասկացությունն այսօր կարիք ունի կրկին լրացվելու «մարդասիրություն», «բարեգործություն», «խղճատանք», «փոխադարձ հարգանք», «մարդ արարածի արժանապատվություն» և քրիստոնեական կենսակերպին վայել մնացյալ ընկալումներով:

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին



1
Ներդիր

Հայ Առաքելական Եկեղեցին (ՀԱԵ) և ՀՀ մարդկային զարգացումը

Հայ Եկեղեցու գործունեությունը հատկապես ՀՀ անկախության տասնամյակում հիմնականում դրսևորվել է սոցիալական, կրթական, բարեգործական ներդրումների տեսքով, որոնք հասցեագրվել են հասարակության հատկապես կարիքավոր խմբերին՝ թեկուզ համեստ չափերով, բայց հասնելով իրական հասցեատիրոջը:

Խիստ կարիքավոր, տարեց մարդկանց պատշաճ կենսամակարդակի ապահովման ոլորտում Հայ Եկեղեցու սոցիալական ծառայությունների ծրագրերի իրականացման շրջանակներում (Արարատյան, Արմավիրի, Կոտայքի, Գուգարաց, Գեղարքունյաց և Սյունյաց թեմերում) գործում է բարեգործական 9 ճաշարան՝ Մայր Աթոռի ֆինանսավորմամբ: Յուրաքանչյուր ճաշարանում ամեն օր անվճար սնունդ է ստանում շուրջ 200 կարիքավոր: Մայր Աթոռի Սոցիալական ծառայությունը հասարակության ուշադրությունից դուրս մնացած սոցիալական խմբերին տրամադրում է դրամական և նյութական օգնություն, Հայ օգնության ֆոնդը՝ սննդամթերք, դեղորայք, հագուստ:

ՀԱԵ հովանավորությամբ Հայաստանում գործում է շուրջ 5000 աշակերտ ունեցող՝ ավելի քան 150 կիրակնօրյա դպրոց, որոնցում դասավանդում է ԶԻՍՈՆԵՌՈՒՆԵՑՈՒՆԻ ԴԵՏԱԿԱՆ ԿՐՈՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՅՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԴԱՍՆՆՔՆԵՐՆ ավարտած 900 ուսուցիչ:

ՀՀ կալանավայրերում առաջիկայում հոգևոր ծառայություն հիմնելու ուղղությամբ գործադրվող ջանքերը զուգահեռվում են քաղաքակիրթ աշխարհի (մասնավորաբար՝ Մեծ Բրիտանիայի) փորձի ուսումնասիրմամբ:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան Կլոր սեղանի գրասենյակը իրագործում է փոքր բիզնեսի զարգացման և սոցիալական ոլորտների, հոգևոր և հանրակրթական ուսուցման (համակարգչային դասընթացներ) բնագավառների 53 ծրագիր:

ԵՀՆ Կլոր սեղանը համագործակցում է ՀԱԵ Հայաստանի թեմակալ առաջնորդների հետ, իր ծրագրերում ներգրավում է Հայ Կաթողիկե, Հայ Ավետարանական Եկեղեցու ներկայացուցիչների, ինչպես նաև հասարակական որոշ կազմակերպություններ:

ՀՀ զինված ուժերում հոգևոր առաքելություն է իրականացնում ՀԱԵ 25 հոգևորական, սակայն այն առավել լիարժեք դարձնելու համար հարկ է ծառայության ներգրավել ևս 60 հոգևորականի՝ բոլոր գործառնություն և գործառնություններում հոգևոր սպասավորությունը ապահովելու համար: Այս կառույցը համապատասխան կանոնադրությամբ օժտելու նպատակով, Հայ Եկեղեցին համագործակցում է ՀՀ պաշտպանության նախարարության հետ. կանոնադրության նախագիծն արդեն իսկ պատրաստ է:

Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) և Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ամենախնամազուրկ ներքո գործող՝ Նորքի, Արաբկիրի և Մալաթիայի Հայորդյաց տները մանուկներին և պատանիներին համախմբում են արհեստագործական, երաժշտական, սպորտային, պարային և այլ խմբակներում՝ միաժամանակ ապահովելով նաև քրիստոնեական հայեցի ընդհանուր դաստիարակություն:

Քանաքեռում գործում է Մանրանկարչության արվեստի կենտրոնը, որտեղ երեխաները ուսանում են հայ միջնադարյան գրչության և մանրանկարչության արվեստը, ստանում ընդհանուր գեղագիտական դաստիարակություն:

Այս յուրօրինակ բարեկրթական դարբնոցներում ընդհանուր առմամբ ուսանում է ավելի քան 3000 մանուկ և պատանի, դասավանդում է 230 փորձառու մասնագետ: Հայորդյաց Տներին կից գործում են երիտասարդաց միություններ:

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին,
Տեղեկատվական համակարգ

Պատմական հանգամանքների բերումով հայ ժողովրդի կյանքում Հայ Առաքելական եկեղեցին, հոգևոր-կրոնական առաքելությունից բացի, կրթության, գիտության և մշակույթի ոլորտներում իրականացրել է ազգապահպան գործառույթներ, դարեր շարունակ գլխավորել ազգային-ազատագրական պայքարը, եղել մեր ժողովրդի գաղափարական, հասարակական-քաղաքական ամենաազդեցիկ գործոնը:

Հայաստանի առաջին հանրապետության կարճատև և դժվարին ժամանակաընթացքում (1918-1920թթ.) Հայ եկեղեցու իրավական կարգավիճակի ամրագրման և պետության մեջ նրա դերի բարձրացման, պետության և եկեղեցու հարաբերությունների կարգավորման նպատակով պատրաստվեց «Հայաստանյայց Առաքելական Մայր եկեղեցու և Հայաստանի Հանրապետության միջև կնքվելիք դաշնագրի նախագիծ», որը 1920թ. խորհրդային կարգերի հաստատման պատճառով չիրագործվեց: Խորհրդային իշխանության առաջին տասնամյակներում անլուր հալածանքների ենթարկվեցին հարյուրավոր հոգևորականներ, քանդվեցին կամ փակվեցին բազմաթիվ եկեղեցիներ: Թեև ետպատերազմյան տասնամյակներում շատ եկեղեցիներ որպես պատմական հուշարձաններ վերականգնվեցին, սակայն եկեղեցին մնաց իր համար վերևից գծված հստակ սահմանների մեջ:

Հայաստանի կրոնական ոլորտում վիճակը կտրուկ փոխվեց 1991թ., երբ ընդունվեց ՀՀ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը, որը փոփոխվեց և լրացվեց 1997թ.: 1995թ. իր Սահմանադրության մեջ երաշխավորեց յուրաքանչյուր քաղաքացու խղճի և դավանանքի ազատության իրավունքը (հոդվ. 23) և արգելեց կրոնական ատելության բորբոքումը (հոդվ. 48): Օրենքի ընդունումից հետո գրանցվեցին 50 կրոնական և կրոնական-բարեգործական կազմակերպություններ, որոնք ներկայացնում են 13 կրոնական ու դավանական ուղղություններ:

Հայ Առաքելական, Հայ Կաթողիկե, Հայ Ավետարանական եկեղեցիները Հայաստանում իրականացնում են փոխհամաձայնեցված քրիստոնեական և բարեսիրական ծրագրեր, որոնցից Ձինիշյան հիշատակի հիմնադրամը, Հայաստանի Աստվածաշնչային ընկերությունը, եկեղեցիների համաշխարհային խորհրդի էկոլոգիկ եկեղեցական վարկային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը, եկեղեցիների համաշխարհային խորհրդի Հայաստանի Կլոր սեղանը հարյուրավոր բարի գործերի հեղինակ են: Բացի համատեղ ծրագրերից, վերոնշյալ և մյուս եկեղեցիներն ու կրոնա-

կան կազմակերպությունները իրականացնում են նաև առանձին բարեգործական գործունեություն:

Անկախության տասը տարիներին Հայ եկեղեցու առջև բացվեց գործունեության լայն դաշտ. պետք էր համեմատաբար կարճ ժամանակահատվածում լրացնել անցյալ տասնամյակների բաց թողածը, վերականգնել ավերված վանքերն ու եկեղեցիները, կառուցել նորերը, վերափոխել թեմական կառուցվածքը, հիմնել հոգևոր, կրթական ու մշակութային հաստատություններ և այլն (տես ներդիր 1): 1991թ. բացվեց Սևանի Վազգենյան դպրանոցը, այնուհետև Շիրակի թեմի Հոգևոր ընծայարանը, ավելացավ Մայր Աթոռի Հոգևոր ճեմարանի ուսանողների թիվը: Վերջին տարիներին բազմապատկվեց Մայր Աթոռի կողմից հրատարակվող հոգևոր, կրոնաճանաչողական, հայագիտական, աստվածաբանական գրքերի ցանկը: Մայր Աթոռի հովանու ներքո պարբերաբար եթեր են արձակվում «Կանթեղ», «Սիրեցեք զմիմյանս», «Խորան լուսո» հաղորդաշարերը, «Շողակաթ» հեռուստաստուդիան պարբերաբար լուսաբանում է Մայր Աթոռի և թեմերի հոգևոր կյանքը: Տարբեր երկրներում շրջագայած «Հայ եկեղեցու գանձերը» ցուցահանդեսը բազմահազար այցելուներին հնարավորություն տվեց ծանոթանալ մեր բազմադարյան պատմության հոգևոր և ձեռակերտ արժեքներին:

Անկախության 10 տարիներին պետության և եկեղեցու միջև բազմաթիվ հարցեր են ծառայել խորհրդային տարիներին բռնագրավված կալվածքների, արվեստի ստեղծագործությունների, պաշտամունքի առարկաների վերադարձման, կրթամշակութային, առողջապահության, սոցիալական ոլորտներում Հայ եկեղեցու դերի բարձրացման ասպարեզներում: Ծագած հարցերը կարգավորելու մտահոգությամբ, առաջին «Դաշնագրի նախագծից» 80 տարի անց, 2000թ. ՀՀ կառավարության և Հայաստանյայց Առաքելական սբ. եկեղեցու միջև կնքվեց «Մտադրությունների հուշագիր»: Հուշագրի ոգուն համաձայն ՀՀ կառավարության 2001թ. թիվ 616 որոշմամբ Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն վերադարձվեց 156 վանք ու եկեղեցի (ներդիր 2): Անկախության տարիներին եկեղեցիներ են վերադարձվել նաև Հայ Կաթողիկե և Ռուս Ուղղափառ եկեղեցիներին:

Քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի շքեղ տոնահանդեսներին ու հոգևոր միջոցառումներին հայրենիքի և սփյուռքի հարյուր հազարավոր հավատացյալների և ուխտավորների, քույր եկեղեցիների մշանավոր հոգևոր առաջնորդների ու սպասավորների մասնակցությունը դարձան Հայ եկեղեցու միջազգային հեղինակության և հայ ժողովրդի հոգևոր զարթոնքի վկայությունը:

2
Ներդիր

ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությունը

Հայ ժողովուրդը իր պատմության ընթացքում ստեղծել է բազմաթիվ կոթողներ, և Հայաստանում հաշվառված շուրջ 30000 պատմամշակութային հուշարձանների շարքում մեծ տեղ են գրավում քրիստոնեական հուշարձանները: Դրանք համարվում են պետության սեփականություն և մինչև վերջերս տնօրինվում էին բացառապես ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության (այսուհետև՝ Վարչություն) կողմից:

Վարչությունը, որ ստեղծվել է դեռևս 1920թ. և քանիցս փոփոխելով իր անվանումը, գործում է մինչև այսօր, իրականացնում է պատմամշակութային անշարժ հուշարձանների պետական հաշվառումը, պահպանական գոտևորումը, ինչպես նաև դրանց պահպանության, վերականգնման և օգտագործման բնագավառի կառավարումն ու վերահսկողությունը:

Իր գործունեության ընթացքում Վարչությունն ամրակայել, մասնակի կամ ամբողջապես վերականգնել է մոտ 300 հուշարձան, այդ թվում՝ եկեղեցիներ և վանական համալիրներ, և մի մասը հանձնել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տնօրինությանը (Գնդեվանք, Կեչառիսի, Հաղարծնի, Հաղպատի վանքեր, Հայրավանք, Հառիճավանք, Մակարավանք, Մաքենյաց վանք, Նորավանք, Սանահնի և Սևանի վանքեր): Դրանց մեծ մասն օգտագործվում են իրենց նախնական գործառնական նշանակությամբ և ենթակա են պարբերական նորոգման և խնամքի:

1998թ. ընդունվեց «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը, ըստ որի մեր երկիրը իրավասություններ ունի նաև հանրապետության տարածքից դուրս գտնվող հայկական պատմամշակութային հուշարձանների նկատմամբ: Դրա արդյունքում Վարչությունը, մասնավորապես, իր մասնակցությունը բերեց Իսլամական Հանրապետությունում գտնվող Ծործորի եկեղեցու և Ս. Թադեի վանական համալիրի վերականգնմանը, պատրաստականություն է հայտնել մասնակցել Աճիի Մայր տաճարի վերականգնման աշխատանքներին, որ նախատեսված են Թուրքիայի մշակույթի նախարարության կողմից:

Նշված օրենքը առավել մանրամասն է կանոնակարգում հուշարձաններին առնչվող սուբյեկտների իրավասությունները, հուշարձանների և դրանց տարածքների սեփականատիրական խնդիրները: Ներկայումս Վարչության մշակած նախագծերի համաձայն և նրա վերահսկողության ներքո ամրակայման և վերականգնման որոշ աշխատանքներ են ընթանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին պատկանող մի քանի եկեղեցիներում և վանական համալիրներում՝ վերջինիս ֆինանսավորմամբ:

Տարածում է ստանում նաև ՀՀ որոշ բնակավայրերի բնակչության և առանձին կազմակերպությունների նախաձեռնությունը՝ վերականգնել և գործող դարձնել այդ բնակավայրերում գտնվող կիսավեր եկեղեցիները: Այդ աշխատանքները ևս կատարվում են Վարչության հետ սերտ համագործակցությամբ: Վարչության և Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության միջազգային խորհրդի համագործակցության արդյունքում Հաղպատի, Սանահնի վանական համալիրները, Գեղարդավանքը, Էջմիածնի Մայր տաճարը և եկեղեցիները, Ջվարթնոց պատմաճարտարապետական արգելոցը ընդգրկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության գրանցամատյանում:

Գագիկ Գյուրջյան,
ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության
վարչության պետ



Ժողովրդավարությունը

**քաղաքական
կառավարման
ուղորդում**

1.1	Հայաստանի Հանրապետության անկախության փաստամյակը	35
1.2	Հայաստան-Սփյուռք հարաբերությունները	37
1.3	Օրենքի գերակայության ամրապնդումը	41
1.4	Ժողովրդավարական քաղաքական ինստիտուտների կայացումը ՀՀ-ում	44
1.4.1	Քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանց ընտրովիություն և ժողովրդավարական ընտրություններ	44
1.4.2	Խոսքի ազատությունն ու տեղեկատվության անկախ աղբյուրները	45
1.4.3	Անկախ միավորումներ	46
1.5	Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում	48
1.5.1	ՀՀ պետական կառավարման համակարգը	48
1.5.2	Տեղական ինքնակառավարում	57
	Վարչատարածքային համակարգը: Տեղական ինքնակառավարման տարածքային հիմքերը	58
	Տեղական ինքնակառավարման համակարգը, համայնքի ֆինանսական ապահովվածությունը, համայնքի սեփականությունը	59
	Համակարգի զարգացման ռազմավարությունը, համայնքի կառավարման համակարգի բարելավման ուղղությունները	61

Ներդիրներ

- 1.1 Անկախության արդյունքների գնահատականը
- 1.2 Սփյուռքը որպես Հայաստանի տնտեսական զարգացման լուրջ գործոն
- 1.3 Հայաստանի ամառային քայլերը Եվրոպայի Խորհրդի կազմում
- 1.4 Մարդու իրավունքների հիմնախնդիրները Հայաստանում
- 1.5 Հայաստանում ընտրությունների ընթացքում արձանագրված թերությունները
- 1.6 Ով է որոշում ՁԼՄ-ների բովանդակությունը
- 1.7 Քաղաքացիական ծառայության մասին օրինագծի հիմնադրույթները
- 1.8 Ծառայողների կարծիքը «Քաղաքացիական ծառայողի էթիկայի կանոնների» ներդրման վերաբերյալ
- 1.9 Տեղական ինքնակառավարումը և ՀՀ օրենսդրությունը
- 1.10 ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի թերությունները
- 1.11 Համայնքային զարգացման ծրագրեր

Նկարներ

- 1.1 ՀՀ-ում գործող ՀԿ-ների թիվը՝ ըստ գործունեության ոլորտների

Աղյուսակներ

- 1.1 Պետական ոչ արդյունավետ կառավարման պատճառները ըստ հարցման արդյունքների
- 1.2 1995-2000թթ. ՀՀ կառավարության կառուցվածքը և փոփոխությունները
- 1.3 Նախարարությունների կողմից իրականացվող յուրաքանչյուր գործառնության տեսակարար կշիռը գործառնությունների ընդհանուր ծավալում (ըստ կատեգորիաների)
- 1.4 ՀՀ ՏԻՄ-երի ֆինանսական ապահովվածության մակարդակը

Հայաստանի Հանրապետության անկախության փաստաթուղթ

Հայաստանի Հանրապետության անկախության վերահաստատումից անցել է տասը տարի՝ պատկառելի մի շրջափուլ, որն արդյունքները գնահատելու, հնարավորությունները, սպասելիքները և ձեռքբերումները համադրելու իրական հնարավորություն է ընձեռում: Համառոտ խոսքում դժվար է ամբողջապես արժևորել քաղաքական, իրավական և սոցիալական այս բարդ գործընթացի բոլոր դրսևորումները: Այդուհանդերձ փորձենք քաղաքագիտական տեսության, հայաստանյան իրականության և որոշ պատմական զուգահեռների համադրմամբ դիտարկել դրանցից մի քանիսը:

Ինչպես հայտնի է, պետության անկախությունը գնահատվում է որոշակի աշխարհագրական տարածքի, այդտեղ հաստատապես ապրող բնակչության, սույլ տարածքի նկատմամբ առկա լիակատար ինքնիշխանության, նրա միջազգային ճանաչման ու որոշ այլ գործոնների հանրագումարով: Այս ընդհանրացված բանաձևի տեսանկյունից Հայաստանն արդեն շուրջ տասը տարի է, ինչ իրապես անկախ է:

Ընդունելով վերոհիշյալ ավանդական բանաձևի արդարացիությունը՝ պետք է նշել, որ վերջին տասնամյակներում անկախության գաղափարը զգալիորեն ընդլայնվել է՝ ներառելով նաև հավելյալ չափանիշներ: Տարանջատվելով քաղաքական, ռազմական և այլ չափորոշիչներից, անվտանգության և անկախության համակարգերում ինքնուրույն արժեք են ձեռք բերել պետության տնտեսական անվտանգության (ինքնուրույնության), նրանում առկա ժողովրդավարության մակարդակի, բնակչության սոցիալական պաշտպանվածության և բարեկեցության ցուցանիշները:

Մինչդեռ՝ նշված ոլորտները ՀՀ-ում դեռևս շատ հեռու են պատշաճ մակարդակից և նրանց առաջընթացի տեմպերը (եթե այդպիսիք կան) բավարար չեն կառուցված համարվել:

Դեռևս ԽՍՀՄ կազմում հանուն անկախության ընթացող շարժման տարիներին (1988-1991թթ.) և երրորդ հանրապետության կայացման սկզբնական փուլում Խորհրդային Միության, ապա և ԱՊՀ շրջանակներում Հայաստանը ժողովրդավարացման իր նախաձեռնություններով առաջատար դիրքեր էր գրավում: Սակայն մի քանի տարի անց իրավիճակն այս առումով

այնպես փոխվեց, որ հնարավոր դարձավ վաղաժամկետ իշխանափոխության արտակարգ իրավիճակը: Վերջին շրջանում՝ համաեվրոպական կառույցներում ինտեգրացվելու գործընթացին զուգահեռ կացությունը բարելավելու ուղղությամբ որոշակի միջոցառումներ են ձեռնարկվում:

Այդուհանդերձ երկրի բնակչության համար ուղղակի կենսական նշանակություն ունեցող մի շարք բնագավառներում, ինչպիսին է, մասնավորապես, արդարության մատչելիությունը, ժողովրդավարության մակարդակը դեռևս մնում է անբավարար՝ դժգոհություն կուտակելով հասարակության մեջ:

Խորհրդային Միության կազմալուծումից հետո Հայաստանը նորանկախ այլ պետությունների համեմատությամբ հայտնվեց ամենածանր կացության մեջ: Երբեմնի կենտրոնացված տնտեսական համակարգի փլուզման հետ կապված ընդհանրական բնույթի խնդիրներին գումարվեցին երկրաշարժի հետևանքները, պարտադրված հակամարտությունը հարևան երկրի հետ, փախստականներն ու շրջափակումը: Այդ իրավիճակում երկրի ղեկավարությունը նախաձեռնեց տնտեսության արմատական վերակառուցման, ապակենտրոնացման գործընթացը: Վերջինս, ինչ խոսք, ավելի քան անհրաժեշտ լինելով, կատարվեց կառավարման պատասխանատու օղակների մասնագիտական անփորձության, վերակառուցման մեթոդիկայի «դասագրքային» ընկալման պայմաններում: Նման գործելակերպը, գումարվելով վերը նշված օբյեկտիվ և արտաքին գործոնների շարունակական ազդեցությանը, հանգեցրեց ողջ տնտեսության քայքայմանը, հասարակության սոցիալական բևեռացմանը, տեղական աշխատուժի զանգվածային արտահոսքին և, ի վերջո, արտաքին ֆինանսատնտեսական կենտրոններից երկրի լիակատար կախվածությանը: Վերակառուցման գործընթացը զուգորդվում էր ծավալուն չարաշահումներով, բնակչության իրավական ու սոցիալական անպաշտպանության շահագործմամբ, ինչն, իր հերթին, բացասաբար անդրադարձավ պետության նկատմամբ հասարակության վերաբերմունքի վրա:

Վերը նշված հանգամանքների ազդեցությամբ բնակչության մի մասի մեջ անկախության սկզբնապես իդեալիստական ընկալմանը փոխարինելու եկավ անկախության բուն գաղափարի նկատմամբ բացասական վերաբերմունքը: Հայաստանի անկախ կարգավիճակը սկսեց ընկալվել որպես առկա զրկանքների հիմնական սկզբնապատճառ: Պատմական փորձը վկայում է, որ նման ընկալումները բավականաչափ կայուն են և նշա-

նակալի ապակառուցողական ներուժ ունեն, անգամ եթե չեն հանգեցնում սոցիալական պոռթկման: Դրանք հասարակության մեջ արմատավորում են սեփական պետության խեղաթյուրված ընկալումն ու արժևորումը, հանգեցնելով «սա իմ պետությունը չէ» եզրակացության՝ խթանելով քաղաքացիական ապստիան (Ներդիր 1.1): Իսկ վերջինիս խորացումն արդեն ուղղակիորեն վտանգում է պետության անկախությունը:

1.1
Ներդիր

Անկախության արդյունքների գնահատականը

Ավելի քան տասը տարի առաջ Հայաստանում ԽՍՀՄ կազմից դուրս գալուն և հայկական անկախ պետություն ստեղծելուն քչերն էին հավատում: 1991թ. մարտին կատարված հասարակական կարծիքի հարցումները բացահայտում էին այն ժամանակ առկա մտահոգությունների և կանխատեսվող վտանգների ողջ ներկայանկը: Բնակչության մեծամասնությունը չէր էլ պատկերացնում, թե ինչպես կարող է գոյություն ունենալ անկախ Հայաստան՝ առանց ԽՍՀՄ-ի կամ էլ Ռուսաստանի աջակցության: Աղետի գոտու բնակչությունը կտրուկ դեմ էր ԽՍՀՄ կազմից դուրս գալուն. նրանք համոզված էին, որ իրենց ավերված գյուղերն ու քաղաքները չեն վերականգնվի, եթե Հայաստանն անկախ դառնալով՝ զրկվի խորհրդային հանրապետությունների օգնությունից: Իր նշանակությամբ հակասակախական երկրորդ փաստարկը երկրի հարևանությամբ գտնվող Թուրքիան էր, որը, ըստ շատերի կարծիքի, կարող էր հաշված օրերի ընթացքում «գրավել» Հայաստանը:

Այսօր անկախ Հայաստանի քաղաքացիների տեսանկյունից որպես անկախության անցած տասնամյակի ամենակարևոր ձեռքբերում են դիտվում հասարակության ազատականացումը, քաղաքացիների իրավունքների ընդլայնումը և հանրապետության էական հաջողությունները արտաքին քաղաքականության բնագավառում: Խիստ կարևոր ձեռքբերում է համարվում նաև հզոր և մարտունակ բանակի կայացումը և զոհի բարդույթի հաղթահարումը: Ցեղասպանության փաստի ճանաչումը բազմաթիվ երկրների կողմից ժողովրդին հավատ և հույս է ներշնչում, որ ինքն ի վիճակի է պաշտպանելու իր ազգային շահերը: Եսպես աճել և առավել բազմաբովանդակ են դարձել Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները, որոնք արդեն ոչ միայն զուտ մշակութային, այլ նաև տնտեսական ու քաղաքական բնույթ են կրում:

Ի թիվս նշված ձեռքբերումների՝ վերջին տասնամյակը նոր հիմնախնդիրներ առաջացրեց և կորուստների հանգեցրեց: Հսկայական միգրացիոն հոսքերը եսպես փոխեցին հասարակության ավանդական կերպարը: Տնտեսապես թույլ, շրջափակված Հայաստանը այդպես էլ չկարողացավ արժանապատիվ կենսակերպ ապահովել Աղբյուրներից բռնագաղթած 360 հազար իր հայրենակիցների համար: Նվազ բացասական դեր չխաղաց նաև լայնամասշտաբ արտագաղթը: Լրջագույն փոփոխություններ են կատարվել հասարակության ժողովրդագրական կառուցվածքում. ավելացել է կանանց և ծերունիների տեսակարար կշիռը, կրճատվել է երիտասարդ, ակտիվ մարդկանց թիվը, նվազել են բնական աճի տեմպերը, կյանքի միջին տևողությունը, խիստ աճել են ռիսկային խմբերը և մարզինալ սոցիալական խմբերը, նվազել է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների թիվը: Ազգաբնակչության զգալի մասը գտնվում է աղքատության մակարդակից անդին: Աղքատությունն ու գործազրկությունը, մարմնավաճառությունն ու թմրամոլությունը, ապօրինությունն ու կոռուպցիան սովորական երևույթ են դարձել՝ մարդկանց մեջ կոմունիստական հասարակարգի նկատմամբ կարոտախտային տրամադրություններ առաջացնելով, որոնք էլ, իրենց հերթին, արժեզրկում են նոր, դեռևս չամրապնդված ժողովրդավարական արժեքները:

Անցումային շրջանը ՀՀ-ում ձգձգվում է և շատերի համար վեր է ածվում իսկական ողբերգության ավերելով կայունացած կենսակերպի հիմքերը: Բարեփոխումների սոցիալական գինը խիստ բարձր էր հայ հասարակության համար: Եվ միայն դարաբաղյան հիմնահարցի արդարացի լուծումը, Հայաստանի ապաշրջափակումը, օրինականության համընդհանուր հաստատումը և տնտեսության աստիճանական վերածնունդը կարող են արդարացնել հասարակության կրած կորուստները:

Գևորգ Պողոսյան

Հայկական սոցիոլոգիայի իսկական ընկերակցության նախագահ

Այս գործընթացները սկիզբ են առել Հայաստանում շուրջ մեկ տասնամյակ առաջ, դրանք բացասական դրսևորումները, հատկապես բնակչության համար, դեռևս ակներև են և նշանակալի տնտեսական և սոցիալական ոլորտներում: Համապատասխանաբար՝ պահպանվում է պետական անկախության ողջ կառույցի

վրա նրանց էական ներգործության հնարավորությունը: Դրական տեղաշարժերի (օրինակ՝ խոսքի, խղճի և քաղաքական գործունեության ազատության ապահովման խնդրում) և ընձեռված հնարավորությունների շարքում, անկախության տարիներին առանձնակի վերելք ապրեցին Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունները:

1.2

Հայաստան-Սփյուռք հարաբերությունները

90-ականների սկզբից Հայաստանի Հանրապետությունը՝ որպես անկախ պետություն և միջազգային իրավունքի սուբյեկտ, թելադրեց նոր հրամայականներ, որոնք միանշանակ ու անմիջապես չէ, որ ընկալվեցին Սփյուռքի կողմից, քանզի պատմական այդ իրադարձությունը բավական անսպասելի էր:

Ընդամենը տասը տարի է, ինչ հայ ժողովրդի երկու թևերին վերջապես տրված են անսահմանափակ հնարավորություններ սեփական կամքով որոշելու փոխհարաբերությունների առավել հեռանկարային ուղղություններն ու տարբերակները: Սկզբունքային այս խնդրում որոշ հստակեցումներ և փոխադարձ ընդառաջումներ տեղ են գտել, սակայն անելիքներ դեռ շատ կան: Քաղաքական, հասարակական ու գաղափարական ոլորտում համաքայլ առաջանալու և գործելու ձգտումներից զատ, ի հայտ են եկել և անգամ գերիշխող են դարձել բարոյահոգեբանական, պատմական ու սոցիալական տարբեր կարգի խնդիրներ ու հավակնություններ:

Վերջին տարիներին Հայաստան-Սփյուռք քաղաքական ու գաղափարական համագործակցության ոլորտում նկատելի է նշանակալից մի երևույթ, որը պայմանավորված է նախ և առաջ անկախության ձեռքբերումով և ՀՀ-ում ժողովրդավարության սկզբունքների և հիմնական ազատությունների հիմնադրման փաստով: Այսպես, եթե անկախության առաջին տարիներին հայկական ավանդական կուսակցությունները (ՀԶԴ, ՌԱԿ, ՍԴՀԿ և այլն), վերահաստատվելով հայրենիքում, ազգային թարմ շունչ ու ազատականություն բերեցին, որն այդ շրջանում քաղաքական ու հասարակական միավորումների ազատ «մրցակցության» խթան դարձավ, ապա այսօր իրավիճակը բոլորովին այլ է: Հայրենիքն է աստիճանաբար դառնում հայկական ավանդական քաղաքական հոսանքների ու ազգային գաղափարախոսական մտքի դարբնոցը, քանզի այն, ինչ ներմուծվեց, արագ յուրացվեց ու սպառվեց: Ուստի փոխվեցին

նաև պահանջներն ու հրամայականները, որն էլ փաստորեն նշանավորեց փոխհարաբերությունների հաջորդ փուլը: Այսինքն՝ տասնամյակներ շարունակ արտերկրում գոյատևած ու մաքառած քաղաքական կուսակցությունների առջև անկախացած հայրենիքում դրվեցին պատասխանատվության այլ ոլորտներ ու հեռահար այլ խնդիրներ:

Շուտով, իսկ այդ տրամադրությունները օր օրի ավելի են հասունանում, ինքը Հայաստանը Սփյուռք «կարտահանի» հայեցակարգային հիմնադրույթներ ավանդական բոլոր կուսակցությունների ու հասարակական խոշոր կազմակերպությունների համար:

1999թ. սեպտեմբերի 22-23-ին երևանում տեղի ունեցած Հայաստան-Սփյուռք համահայկական խորհրդաժողովը մասամբ հաստատեց հայրենիքի առաջատար դերն ու նշանակությունը: Խորհրդաժողովին մասնակցեցին աշխարհի ավելի քան 50 երկրների հայկական համայնքների ներկայացուցիչներ, որոնք ընդհանուր պատմության ու ճակատագրի հետ մեկտեղ, հավաստեցին աշխարհասփյուռ հայ հավաքականության առաջիկա միասնական նպատակներն ու խնդիրները: Դրանք են՝ արցախցիների կողմից ղարաբաղյան հիմնահարցի ընդունելի կարգավորումը, Հայ դատն՝ ու ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, տնտեսական համագործակցությունն ու ներդրումների հայաստանյան երաշխիքները, Հայաստանյայց առաքելական եկեղեցու աթոռների միացումը և այլն:

Համաժողովի շրջանակներում անցկացվեց նաև ՀՀ և Սփյուռքի գործարարների համատեղ բիզնես ֆորում, որը քննարկեց տնտեսական համագործակցության հիմնական ուղղությունները: Երկուստեք զեկույցներում նշվեց միասնական տեղեկատվական դաշտի, հաղորդակցության ոլորտի զարգացման անհրաժեշտությունը (ներդիր 1.2):

¹ Հայ դատ՝ իր համաձայնագրերի միջոցով պաշտպանում է հայ ժողովրդի պահանջներն ու ազգային ձգտումները, օժանդակում է հայերի զեղասպանությունը դատապարտող օրենսդրական ակտերի ստեղծմանը տեղական, դաշնային և միջազգային մակարդակներով:

1.2
ներդիր

Սփյուռքը որպես Հայաստանի փոփոխական զարգացման լուրջ գործոն

Հայկական ընդարձակ, հարուստ, կայուն շահագրգռություն ունեցող սփյուռքը անվիճելիորեն հանդիսանում է Հայաստանի մրցակցային առավելություններից մեկը և արտաքին տնտեսական քաղաքականության մշակման ելակետ պետք է դառնա:

Գործող ներդրումային ծրագրերի փաթեթում ծավալային առումով ամենախոշոր ծրագրերի ճնշող մեծամասնությունը այս կամ այլ կերպ կապված է Սփյուռքի հետ, իսկ քանակային առումով օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ (ՕԿՄ) ստեղծված ձեռնարկությունները հիմնականում հիմնվել են հայկական մեծ համայնք ունեցող երկրների ներդրողների կողմից (ՌԴ, ԱՄՆ, Իրան, Ֆրանսիա և այլն): Այս միտումը շարունակվում է: Այդ են փաստում այս տարվա ընթացքում իրականացված, ինչպես նաև սպասվող ներդրումները լեռնամետալուրգիայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության, գործիքաշինության ոլորտներում: Սփյուռքահայն է հանդիսանում ՀՀ տնտեսության այսօրվա իրական ներդրողը (աղյուսակ Ա), և վերջինիս նկատմամբ անհրաժեշտ է մշակել և վարել հատուկ ռազմավարություն:

Աղյուսակ Ա	ՕԿՄ գրանցված կազմ.թիվը		Սփյուռքի մեծությունը***
Ռուսաստան	457	23.9	2.5 - 3 միլիոն
Իրան	396	20.8	170.000 - 200.000
ԱՄՆ	276	14.5	1 միլիոն
Ֆրանսիա	75	3.9	350.000 - 400.000
Միացյալ Թագավորություն	57	3.0	6.000
Վրաստան	56	2.9	450.000
Լիբանան	55	2.9	100.000
Սիրիա	41	2.1	60.000
Գերմանիա	40	2.1	20.000
Կանադա	30	1.6	50.000
Կիպրոս	30	1.6	3.000
Բուլղարիա	27	1.4	Ավելի քան 10.000
Այլ երկրներ	368	19.3	

«Լինսի» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրեր

Սփյուռքի կողմից իրականացվող ամենախոշոր և շարունակական ծրագրերը «Լինսի» հիմնադրամի (ԼՀ) կողմից իրականացվող աշխատանքներն են, որոնք որոշիչ գործոն են դարձել ՀՀ տնտեսական զարգացման համար:

1998թ. հուլիսին ԼՀ-ի, ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի միջև ստորագրվել է վարկային ծրագիր՝ ուղղված փոքր և միջին գործարարության զարգացմանը: Վարկերը գործարարներին տրամադրվում են տարեկան ոչ ավելի, քան 15%-ով: Ծրագրի հիմնական նպատակներն են՝ աղքատության կրճատումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, արտադրության ծավալների աճը և ծառայությունների ոլորտի զարգացումը: 2000թ. նոյեմբերին ՀՀ կառավարության և ԼՀ-ի միջև ստորագրվեց մեկ այլ փաստաթուղթ՝ Փոխընթացային հուշագիր, որով դեռ չծախսված միջոցներին ավելացան նոր ֆինանսական միջոցներ՝ ծրագրի ընդհանուր գումարը հասցնելով 165 մլն. դոլարի (75 մլն. դոլար վարկային ռեսուրսներ, 90 մլն. դոլար՝ դրամաշնորհային): Վերոնշյալ գումարների սահմաններում Հայաստանում իրականացվելու են 2 վարկային և 5 դրամաշնորհային ծրագրեր:

Վարկային առաջին՝ փոքր և միջին բիզնեսի զարգացմանը ուղղված ծրագրի միջոցների «պորտֆելից» (45 մլն. դոլար) արդեն տրամադրվել է 20 մլն.: Միջոցների արդյունավետ և հաջող ներդրման օրինակներ են Արարատի և Արտաշատի պահածոների գործարանների (մոտ 4 մլն. դոլար), «Շեն» կոնցեռնի ներկերի արտադրության, «Արմավոտ» գործարանի թուջի ծուլման հզորությունների շահագործումը, ինչպես նաև Հայաստանում հոլանդական ջերմոցային տնտեսության հիմնումը: 2001թ. հուլիսի դրությամբ ֆինանսավորվել է 44 ծրագիր, որոնց ճնշող մեծամասնությունը բաժին է ընկնում արդյունաբերության ոլորտին: Այն կազմում է ծախսված գումարների մոտ 62%-ը: Մնացած ծրագրերը վերաբերում են գյուղատնտեսական և ծառայությունների ոլորտին: ԼՀ-ի ֆինանսավորվող ծրագրերը ունեն մեկ այլ շատ կարևոր բաղադրիչ ևս. այդ ծրագրերով աշխատատեղեր (մոտ 2000 ուղղակի աշխատատեղ և մի քանի հազար էլ՝ անուղղակի) են ստեղծվել ոչ միայն երևանում, այլև մարզերում՝ Կոտայքում, Արարատում, Արմավիրում, Լոռիում, Գեղարքունիքում, Արագածոտնում:

Վարկային 2-րդ ծրագիրը (30 մլն. դոլար) խիստ նպատակային է, այն ուղղված է ներդրումների (բացառապես օտարերկրյա) ներգրավմանը Հայաստանի տնտեսությունում: Այն կտրամադրվի ներդրողներին, որոնք ցանկանում են ՀՀ-ում հիմնել իրենց բիզնեսը: Այս ճանապարհով պետությունը փաստորեն առաջարկում է օտարերկրյա ներդրողներին կիսել նրանց ռիսկերը:

Դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվելու են հետևյալ 5 ծրագրերը՝ բնակարանային շինարարություն աղետի գոտում՝ 15 մլն. դոլար, հանրապետության ներքին ճանապարհային ցանցի կառուցում և արդիականացում՝ 38 մլն. դոլար, շուրջ 20 պատմամշակութային հուշարձանների (այդ թվում՝ Սատենադարան, օպերային և այլ թատրոններ, տուն- թանգարաններ, պատմության և արվեստի թանգարաններ և այլն) վերականգնում և վերանորոգում՝ 10 մլն. դոլար, տուրիզմի ենթակառուցվածքների զարգացում՝ ներառյալ «Զվարթնոց» օդանավակայանի վերականգնումը և ընդլայնումը՝ 20 մլն. դոլար, Երևանի կենտրոնի բարեկարգում՝ 7 մլն. դոլար:

Նարինե Սահակյան

*Աղբյուր: ՀՀ ԱՎԾ (հունվար, 2001),

**Նույնը,

*** ՀՀ արտաքին ործերի նախարարություն

Իսկապես պատմական այդ ժամանակահատվածի պահանջի արդյունքն էր 1992թ. մարտին ծնունդ առած «Հայաստան» համահայկական հիմնադրամը, որի հիմնական խնդիրներն են Հայաստանի տնտեսության զարգացմանն ու բարեփոխումներին օժանդակելը, գիտական, կրթական, մշակութային ու առողջապահական համակարգերի կատարելագործումը, 1988-ի աղետալի երկրաշարժի հետևանքների հաղթահարումը, արցախահայության ու բռնագաղթածների կարիքների և համազգային մշակութային այլ ծրագրերի իրագործմանը նպաստելը:

«Հայաստան» հիմնադրամի այս վերջին տարիներին իրականացրած բազում ծրագրերի շրջանակում ամենանշանակալի 1999-ի նոյեմբերին շահագործման հանձնված Գորիս-Ստեփանակերտ մայրուղին է, որն ամբողջացրեց Հայաստանը ԼՂՀ-ին կապող գլխավոր ճանապարհը: Այդ ծրագրի հանգանակությունները մասամբ հավաքվեցին այլևս ավանդույթ դարձած Երևան-Լոս Անջելես հեռուստամարաթոնի շնորհիվ:

Հայկական ցեղասպանությունը և նրա միջազգային ճանաչումը՝ որպես ազգային ողբերգության գաղափար և ընդհանուր «արժեք», վերջին տարիներին դարձավ մեր ժողովրդի երկու հատվածների միասնական գործելակերպի ամենակարևոր գրավականներից մեկը: Այնուհանդերձ այս գործընթացը և՛ սփյուռքից, և՛ հայրենիքից պահանջում է մոտեցումների ու համահունչ քայլերի առավել հստակեցում, քանի որ արդեն ակնհայտ է՝ այն իր տրամաբանական շարունակությունն է ունենալու միջազգային տարբեր կառույցներում ու ատյաններում, առաջատար պետությունների խորհրդարաններում ու հեղինակավոր համաժողովներում:

Այսօր աշխարհում շատ են խոսում հայկական լրբիհնգի մասին, կապված առավելապես 1915-1923թթ. Օսմանյան կայսրությունում իրականացված հայկական ցեղասպանության միջազգային ճանաչման (Ֆրանսիա, ՌԴ, Հունաստան, Լիբանան, Կիպրոս, Արգենտինա, Ուրուգվայ և այլն) հարաճուն գործընթացի հետ:

Ազգային փոքրամասնությունների համայնքային լրբիհնգը հիմնականում ծառայում է նրանց ինքնահաստատման բարդ գործընթացին, որը բնական երևույթ է: Հայկական լրբիհնգի փորձը ցույց է տալիս, որ առաջադրված խնդիրը դուրս է համայնքային մեղ շրջանակներից, այսինքն՝ շատ ավելի ընդարձակ է՝ համազգային: Այնուհանդերձ, յուրաքանչյուր կարևոր և պատասխանատու նախաձեռնություն երբեք չպետք է վտանգի հայրենաբնակներին ու Հայրենիքը:

Հայաստանի անկախության տարիների Սփյուռքի հետ փոխհարաբերություններում հիշատակման է արժանի Ամերիկայի հայկական համագումարը (ԱՀՀ, Armenian Assembly of America, AAA) խոշորագույն համազգային կազմակերպություն, որ գործում է 1972թ-ից, կենտրոնակայանը՝ Վաշինգտոնում: Այն օժանդակում է հայկական հարցերի ճիշտ ըմբռնմանն ու լուսաբանմանը: ԱՀՀ-ի ծրագրերը նպաստում են հայերի ավելի լայն մասնակցությանը ամերիկյան ժողովրդավարական գործընթացներին, Հայաստանի քաղաքացիական և տնտեսական զարգացմանն ու Լեռնային Ղարաբաղի ազատ ինքնորոշմանը: ԱՀՀ-ի մշտական ուշադրության կենտրոնում են ՀՀ արդի զարգացումները և ամերիկյան կառավարության քաղաքականությունը, մասնավորապես վերջինիս հնարավոր անդրադարձերը հայությանը: Ուստի առանձին կառույցներ մշտապես աշխատում են ԱՄՆ կոնգրեսի ու վարչակազմի հետ:

ԱՀՀ-ի նվաճումների շարքին են դասվում հայկական հարցերով կոնգրեսական հանձնաժողովի ձևավորմանը խթանող առաջատարությունը (ներկայումս այն ունի 105 անդամ) և Հայկական ազգային ինստիտուտի ստեղծումը նվիրված հայոց ցեղասպանության հարցերի ուսումնասիրությանը և ճանաչմանը: ԱՀՀ-ն մեծապես նպաստում է Հայաստանին և Լեռնային Ղարաբաղին ԱՄՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական օգնությանը:

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԼՄ, Armenian General Benevolent Union, AGBU) հիմնադրվել է դեռևս 1906-ին Կահիրեում: Մեծ է

Որա ավանդը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հայրենադարձության կազմակերպման գործում: Շուրջ 50 տարի անց, վերսկսելով իր գործունեությունը հայրենիքում, ՀԲԸՄ-ն նախապատվությունը տալիս է ոչ թե մարդասիրական օգնությանը, այլ երկրի զարգացմանը նպաստող կարևոր ծրագրերին: ՀԲԸՄ-ն Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին նվիրված մայրաքաղաքում կառուցվող Մայր տաճարի, 1999թ. Համահայկական առաջին մարզական խաղերի ու Հայաստան-Սփյուռք վերոհիշյալ խորհրդաժողովի հիմնական հովանավորներից է: Ի դեպ, Համահայկական երկրորդ մարզական խաղերը երևանում են շուրջ անցկացվեցին 2001թ. օգոստոսին:

Հայ դատի արդարացի արծարծման գործում և ընդհանրապես իր հայանպաստ նախածեռնություններով անգնահատելի է ԱՄՆ-ում մեկ այլ կազմակերպության՝ Հայկական ազգային կոմիտեի (Armenian National Committee, ANC) դերն ու նշանակությունը: Օր օրի ամրապնդվում ու ընդլայնվում են նրա կապերը հայրենիքի հետ:

Հայկական համայնքային խոշոր կազմակերպություններ ու միավորումներ են գործում նաև Ֆրանսիայում, Ռուսաստանում, Լիբանանում, Իրանում, Հունաստանում, Սիրիայում, Արգենտինայում, Ուրուգվայում, Ավստրալիայում և այլուր:

Այնուամենայնիվ անհնար է այսօր միանշանակ մեկնաբանել ու սահմանել Հայաստանի սահմաններից դուրս ապրող մեր հայրենակիցների ազգային ընդհանրական գիտակցությունը, որը պայմանավորված է յուրաքանչյուրի ծագմամբ, դաստիարակությամբ, տվյալ երկրի տնտեսական ու քաղաքական պայմաններով, սերնդային և այլ հանգամանքներով:

Միանշանակ չէ նաև այդքան չարչրկվող երկքաղաքացիության նկատմամբ Սփյուռքի իրական վերաբերմունքը: Դրան ձգտող համայնքները շատ չեն, քանի որ այն մեծապես առնչվում է մի շարք լուրջ գործոնների, քաղաքացիական ու տեղական այլ օրենքների հետ, մինչդեռ տպավորությունը հակառակն է:

Սփյուռքահայն իր հասարակական, հոգեբանական ու անգամ ազգային կերպարով երկփեղկված է:

Շատերը հանդես են գալիս, մի կողմից, որպես տվյալ երկրի բարքերի ու սովորույթների կրող և այդ հասարակության լիիրավ անդամ, մյուս կողմից՝ ազգային ավանդական համայնքի անդամ: Դա իր ներգործությունն է ունենում դիրքորոշումների և բազում արժեքների վրա: Բավականին շոշափելի բացասական դեր է խաղում նաև հայոց լեզվի երկփեղկվածությունը (արևելյան ու արևմտյան), որի լուծման ճանապարհները չափազանց բարդ են: Ուստի համընդհանուր, այսինքն հայության երկու հատվածների համար անվիճելի ազգային արժեքների առկայության, նրանց ընդհանրության, կարևորության ու զարգացման մասին համատեղ քննարկումները հրատապ անհրաժեշտություն են:

Թերևս հիմա վաղ է, սակայն մոտ ապագայում արդեն հարկ կլինի խուսափել Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունների պետական, պաշտոնական համակարգումներից կամ անհիմաստ խորհուրդների ու բյուրոկրատական հանձնաժողովների ձևավորումներից: Հիրավի, 80 տարվա արգելքներից ու տարանջատվածությունից հետո, այսօր ասես, մինչանց այլ որակով, անկաշկանդ բացահայտելու պատմական մի շրջան ենք ապրում:

Յոգեբանական, սոցիալական ու բարոյական անջրպետը խորապես պայմանավորված է երկու կողմերի իրավական կարգավիճակներով: Ուստի կարծում ենք, որ անհրաժեշտ է.

- ⚡ վերանայել հայրենիքում Սփյուռքի մեր հայրենակիցների այսօրվա իրավական կարգավիճակը: Ճկուն օրենքները պետք է սահմանեն որոշակի ու հստակ պարտավորություններ և արտոնություններ նրանց համար,
- ⚡ հստակեցնել նաև նոր ալիքի՝ 90-ականներին Հայաստանից արտագաղթածների կարգավիճակը Սփյուռքի ավանդական կառույցներում և ընդհանրապես նրանց արագ ինտեգրացումը համայնքային գործող կազմակերպություններում՝ որպես լիիրավ անդամներ:

Վերը նշված խնդիրների լուծումը կարելի է գտնել միայն օրենքի և օրինականության, ժողովրդավարական արժեքների գերակայության ու համազգային հանդուրժողականության պայմաններում:

Օրենքի գերակայության ամրապնդումը

1988թ. Խորհրդային Միության պատմության մեջ առաջին անգամ Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի երեք թափուր տեղերի ընտրություններում մրցակցային պայքարում պատգամավորներ ընտրվեցին համազգային շարժման ներկայացուցիչները: Հետագայում, արդեն 1990թ. մայիսի 20-ին Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի ընտրություններում կոմունիստական կուսակցությունը պարտություն կրեց և Հայաստանում փաստորեն ձևավորվեց բազմակուսակցական համակարգ: Իշխանության եկավ Հայոց համազգային շարժումը: Հայաստանի Գերագույն խորհրդի 1990թ. օգոստոսի 23-ի հռչակագրով երկրում սկիզբ առան ժողովրդավարական բարեփոխումները: Նորընտիր խորհրդարանը ձեռնամուխ եղավ հասարակության ժողովրդավարացմանը միտված օրենսդրական հիմքերի ստեղծմանը: Պետական մենաշնորհից արտադրության միջոցների սեփականության բազմաձևությանն անցնելու համար հիմք ծառայեցին «ՀՀ-ում սեփականության մասին» (31.10.1990) և «ՀՀ սեփականաշնորհման հիմունքների մասին» (13.02.1991) օրենքները: Բազմակարծությունը և բազմակուսակցականությունը ամրագրվեցին «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքով (26.02.1991), իսկ խոսքի և տեղեկատվության տարածման ազատությունը՝ «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» օրենքով (08.10.1991): Դավանանքի ազատությունն ապահովելու համար ընդունվեց «Խղճի ազատության և կրո-

նական կազմակերպությունների մասին» օրենքը (17.06.1991): 1996թ. ԱԺ-ն ընդունեց «Տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» օրենքները, որոնց հիման վրա էլ նույն տարվա նոյեմբերի 10-ին կայացան այդ մարմինների ընտրությունները: 1996թ. նոյեմբերի 1-ին ուժի մեջ մտավ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքը, որը զգալիորեն լրացրեց քաղաքացիական հասարակության կառուցման իրավական դաշտը:

Անցած 10 տարիների ընթացքում ընդունված Սահմանադրության և օրենքների հիմքում դրված ժողովրդավարական նորմերից շատերը հետագա զարգացման կարիք ունեն: Այդ է վկայում նաև այն, որ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը ընդունել է «Հայաստանի անդամակցության բանաձևը», որով հորդորում է Հայաստանին իրագործել որոշակի պարտավորություններ, այդ թվում՝ միանալ Եվրոպական կոնվենցիաներին և օրենսդրությունը համապատասխանեցնել ժողովրդավարության եվրոպական չափանիշներին: Ներկայումս այդ չափանիշներին համահունչ քայլերի իրականացման և օրինագծերի նախապատրաստման շրջանն է, ընդ որում այս հարցում իրենց խորհրդատվական աջակցություն են ցուցաբերում ԵՄ փորձագետները (ներդիր 1.3): Արդեն ավարտվել է մի քանի տարի ընթացող աշխատանքը սահմանադրական բարեփոխումների ուղղությամբ, և փաթեթը պատրաստ է խորհրդարանում քննարկելու համար:

Հայաստանի առաջին քայլերը Եվրոպայի խորհրդի կազմում

1.3
Ներդիր

ՀՀ-ն Եվրոպայի խորհրդի (ԵՄ) անդամ դարձավ ս/թ հունվարի 25-ին: ԵՄ-ն՝ լինելով քաղաքական կառույց, նպաստում է Եվրոպայում քաղաքական կայունությանը, տնտեսական և սոցիալական առաջադիմությանը, ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանությանը: Թվարկված խնդիրների իրականացման և դրանց հետագա զարգացման համար մշակված են միասնական չափանիշներ և մոտեցումներ: Ս/թ մայիսի 11-ին ՀՀ ԱԳ նախարարը Ստրասբուրգում ստորագրեց «Հանձնման (էքստրադիցիայի) մասին», «Քրեական գործերով իրավական օգնության մասին», «Հանցավոր հասույթների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին» և «Խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կանխելու մասին» եվրոպական կոնվենցիաները, «Տեղական ինքնակառավարման մասին» և «Տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ» եվրոպական խարտիաները, «Փախստականների համար վիզաների վերացման մասին» եվրոպական համաձայնագիրը: Նախատեսվում է թվարկված փաստաթղթերի վավերացում առաջարկված ժամկետներում: Նա ի պահ հանձնեց նաև «Դատապարտված անձանց փոխանցման մասին» կոնվենցիային միանալու մասին փաստաթուղթը:

Խաչատուր Բեգիրջյան

«Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքով փաստորեն Հայաստանն անցավ բազմակուսակցական համակարգի: Սակայն կոմունիստական կուսակցության մենաշնորհի վերացումը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման էր պետական կառավարման ապարատի բարենորոգումների գործընթացում: «ՀՀ նախագահի մասին» և «ՀՀ նախագահի ընտրությունների մասին» օրենքներն (02.08.1991) ընդունելով՝ Հայաստանում ընտրվեց կառավարման կիսանախագահական համակարգը, որը հետագայում վերահաստատվեց ՀՀ Սահմանադրության ընդունմամբ: Շատ քաղաքական ուժերի կարծիքով ՀՀ նախագահի լիազորությունները և պատասխանատվությունը անհամաչափ են բաշխված: Այս հարցը բազմիցս առաջ է քաշվել, և պատահական չէ, որ ՀՀ Սահմանադրության բարեփոխումների փաթեթով վերանայված են նաև նախագահի լիազորությունները:

Չնայած այս օրենսդրական փոփոխություններին՝ Հայաստանը դեռևս հեռու է բառիս բուն իմաստով իրավական պետություն լինելուց, որ պայմանավորված է և սուբյեկտիվ, և օբյեկտիվ պատճառներով:

Վերջինների շարքում թերևս ամենազխալորն այն է, որ, չնայած դատաիրավական բարեփոխումների լայնամասշտաբ գործընթացին, ՀՀ Սահմանադրությամբ հռչակված դատական իշխանության անկախությունը դեռևս իրականություն չի դարձել:

Դատական իշխանության երեք հիմնական գործառույթներից՝ 1) արդարադատության իրականացում, 2) դատական վերահսկողություն և 3) դատական հսկողություն օրենքների նկատմամբ (այսինքն՝ օրենքների հակասության դեպքում դատարանի իրավասությունը իրավունքի գերակայության խնդրում), ՀՀ-ում կատարվում են առաջին երկուսը, որոնք էլ երրորդի բացակայության (այն օրենքով նախատեսված չէ) պայմաններում իրականացվում են ոչ լիարժեք: Մյուս կողմից՝ դատավորի թեկնածության ընտրությունը, նշանակումը, կարգապահական պատասխանատվության կանչելը, լիազորությունների դադարեցումը, ամենամյա առաջխաղացման ցուցակներում հաստատելը կատարվում է գործադիր իշխանության գերիշխող մասնակցությամբ: Այս հանգամանքը էապես խոչընդոտում է դատավորների անկախությանը:

Ներկայումս առանձնապես ցածր են տնտեսական վեճերի քննության արդյունավետությունը և որակը: Չգծգումներն ու քաշքուկը անբարենպաստ են երկրի տնտեսական զարգացման համար և անուղղակիորեն խոչընդոտում են ներդրումներին: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար նախատեսվում է գոյություն ունեցող ՀՀ եռաստիճան դատական համակարգին զուգահեռ տնտեսական վեճերի քննության համար ստեղծել երկաստիճան դատական համակարգ, որը կազմված լինի առաջին ատյանի տնտեսական դատարանից (այս մասին օրինագիծը ԱԺ-ում արդեն ընդունվել է առաջին ընթերցմամբ) և վճռաբեկ դատարանից (մանրամասն տես ՄՁԱԶ 2000):

Սուբյեկտիվ պատճառների շարքում ամենից առաջ հարկ է նշել, որ հարյուրամյակներ շարունակ զրկված լինելով պետականությունից՝ Հայաստանը ժառանգել է ոչ իրավական պետությունների դատական համակարգի ձևավորման ավանդույթներն ու մտածողությունը, որոնք մեկ տասնամյակում վերացնել հնարավոր չէ և դա մի քանի սերունդների խնդիր է: Այդ ավանդույթներն ու մտածողությունն, անշուշտ, արմատացած են ոչ միայն իշխանության օղակներում, այլև հասարակության գիտակցության մեջ: Խնդիրն այն է, որ իշխանության մարմինները պետք է և օրենսդրությամբ, և կառավարման մեխանիզմների միջոցով, և իրավական կրթության ծավալումով նպաստեն այդ մտածողության հնարավորինս արագ փոփոխությանը և դատական իշխանության իրական անկախության հաստատմանը: Այս ամենը, իր հերթին, մարդու իրավունքների պաշտպանության հիմնական երաշխիքներից է: Հայաստանը 1990թ. օգոստոսի 23-ի հռչակագրով ընդունեց արժեքային նոր համակարգ՝ հաստատելով իր հավատարմությունը ժողովրդավարության և մարդու իրավունքների սկզբունքներին (ներդիր 1.4): Անկախություն ստանալով, Հայաստանը, արդեն որպես միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ, վավերացրեց մարդու իրավունքներին վերաբերող հիմնական կոմպենցիաները, ինչպես նաև ձեռնամուխ եղավ այդ բնագավառում ներքին օրենսդրության բարեփոխման աշխատանքներին (ՄՁԱԶ 2000): ՀՀ Սահմանադրության 2-րդ գլուխը ամրագրեց մարդու հիմնական ազատություններն ու իրավունքները:

1.4
Ներդիր

Մարդու իրավունքների հիմնախնդիրները Հայաստանում

Դիտարկելով անցած տասը տարիներին Հայաստանում մարդու իրավունքների (ՄԻ) զարգացումները, կարելի է նշել, որ ՄԻ խախտումների հիմնական պատճառը օրենքների ոչ լիարժեք կատարումն է: Հաճախ չի գործում «օրենքի առաջ բոլորը հավասար են» սկզբունքը. մարդիկ ավելի շատ պաշտպանված են ոչ թե օրենքով, այլ զբաղեցրած պաշտոնով ու դիրքով: Անշուշտ, ՄԻ պաշտպանության երաշխավորը պետությունն է, սակայն Հայաստանում լուրջ խնդիր է այն իրողությունը, որ հասարակությունն իր հերթին չի գիտակցում ՄԻ պաշտպանության անհրաժեշտությունը: Երբեմն հասարակության լայն խավերը ՄԻ այս կամ այն խախտմանը արծագանքում են ոչ թե ՄԻ սկզբունքներից ելնելով, այլ ըստ իրենց քաղաքական կողմնորոշումների և համակրանքների:

Վերջին տասը տարիներին Հայաստանում ՄԻ ոլորտում ամենանշանակալի ձեռքբերումը խոսքի ազատությունն է՝ չնայած առկա որոշ դժվարություններին և թերություններին: Վերջին տարիների ձեռքբերումներից է նաև քաղաքացիների կողմից կամավոր միավորումներ (հասարակական, հասարակական-քաղաքական կազմակերպություններ) ստեղծելու ազատությունը:

Հայաստանում ՄԻ խախտումների հիմնական մասը իրավապահ մարմիններում քաղաքացիների նկատմամբ կատարվող խոշտանգումների, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերն են: Թեև այս առնչությամբ շարունակ բողոքներ և հայտարարություններ են արվում, խոշտանգումների մեջ մեղադրվողների նկատմամբ քննություն չի անցկացվում (բացառություն է կազմում 1999թ. Վանաձորի քննչական մեկուսարանում խոշտանգումների հետևանքով մահացած Տավուշի զինկոմի գործով դատավարությունը):

Շարունակվում է դատարանների կողմից հիմնականում որպես խափանման միջոց կալանք ընտրելը նաև այն գործերով, որոնք հասարակության համար վտանգ չեն ներկայացնում:

Մեծ տարածում ունեն ՉՀ զինված ուժերում ոչ կանոնադրական հարաբերությունները, որոնց հետևանքով հաճախ են արձանագրվում զինծառայողների խեղումների և մահվան դեպքեր:

Չնայած տարեցտարի բարելավվող ընտրական օրենսդրությանը՝ 1995, 1996, 1998, մասամբ 1999թթ. նախագահական և խորհրդարանական ընտրությունների ընթացքում թե՛ տեղական և թե՛ միջազգային դիտողների կողմից արձանագրվել են տարաբնույթ խախտումներ:

2000-01թթ. նկատելի են ՉՀ իշխանությունների կողմից հանրահավաքների, երթերի, ցույցերի, ժողովների թույլտվության սահմանափակումները: Հայաստանի հեղինակյա կոմիտեին հայտնի են ինը դեպքեր, երբ ընդդիմադիր քաղաքական ուժերին մերժվել են հանրահավաքներ, երթեր, ինչպես նաև դահլիճներում ժողովներ անցկացնելու հայտերը, իսկ դրանց անցկացման դեպքում գործի է դրվել վարչական պատժի մեքենան:

Դառնալով ԵՄ անդամ, Հայաստանը մարդու իրավունքների ոլորտում օրենսդրական բարեփոխումներ կատարելու որոշակի պարտավորություններ է ստանձնել, որոնք ներառում են, օրինակ երկու տարվա ընթացքում ստորագրել և վավերացնել Քրեական օրենսգրքի հատուկ մասը՝ վերացնելով մահապատիժը, ապառազմականացնել ազատագրված վայրերը՝ Ներքին գործերի և Ազգային անվտանգության նախարարությունների համակարգից դրանք փոխադրելով արդարադատության համակարգ, ընդունել այլընտրանքային ծառայության մասին օրենք, ինչպես նաև ապահովել փոքրամասնությունների նկատմամբ ոչ խտրական վերաբերմունք:

Ավետիք Իշխանյան

Հայաստանի հեղինակյա կոմիտեի նախագահ

Իրավական պետության հասնելու ճանապարհին չափազանց կարևոր է նաև պետական իշխանության իրավասությունների շրջանակի հստակ որոշումը: Այդ իշխանության սահմանները որոշելիս պետք է առաջին հերթին առաջնորդվել մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական հասարակության լիարժեք կենսագործունեության ապահովման անհրաժեշտությամբ: Պետության և անհատի փոխհարաբերությունները պետք է հիմնված լինեն փոխադարձ պատասխանատվության վրա: Էական է նաև քաղաքացու և պաշտոնատար անձի (պետական մարմնի) միջև սկզբունքային տարբերության գիտակցումը: Եթե քաղաքացին կարող է անել այն, ինչն արգելված չէ օրենքով, ապա «պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ» (ՉՀ Սահմանադրություն, հոդված 5):

Իշխանության մոնոպոլացումը կանխարգելող միջոցներից է իշխանության օրենսդիր, գործադիր և դատական թևերի տարանջատումը: Միմյանցից օրենսդրորեն անրագրված անկախությունն ապահովելու նպատակով նրանց միջև գործում է լծակների և հակակշիռների համակարգը: Այն իրենից ներկայացնում է յուրաքանչյուրի համար որոշակի սահմանափակումների և փոխադարձ զսպումների ամբողջություն: ՉՀ Սահմանադրությունը նույնպես կառուցված է իշխանության թևերի տարանջատման սկզբունքով: Սակայն նրա ոչ լիարժեք գործառնության պատճառը առաջին հերթին իրականացման

մեխանիզմների բացակայությունն է կամ դրանց անկատարությունը, ինչպես նաև սուբյեկտիվ պատճառները:

Պատգամավորներին, օրինակ, արգելված է զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Սակայն 1999թ. ընտրությունների արդյունքում ձևավորված ԱԺ-ում մեծ թիվ են կազմում գործարարները, որոնք փաստորեն պահպանելով իրենց ղեկավար դիրքը գործարար ոլորտում՝ իրավաբանորեն ներկայանում են որպես տվյալ ձեռնարկության կամ հաստատության խորհրդի նախագահ՝ հասարակական հիմունքներով: Քաղաքական գործիչների մեծ մասն այս հարցի լուծումը համարում է ընտրությունների համամասնական, այսինքն կուսակցական ցուցակներով սկզբունքի լիակատար կիրարկումը, սակայն փորձը ցույց է տալիս, որ գործարարները մեծ հաջողությամբ խորհրդարան են մտնում նաև համամասնական ցուցակներով:

Արդյունավետ և նպատակաուղղված գործունեությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է, որ կուսակցությունների գոնե միջուկը կազմված լինի քաղաքական կայացած, պրոֆեսիոնալ գործիչներից, որոնցից էլ պետք է հետագայում ձևավորվի խորհրդարանը: Նման խնդիր առկա է նաև կառավարության կազմավորման ժամանակ: Քաղաքականության մշակումը և քաղաքական որոշումների ընդունումը գործընթաց է, որը պետք է իրականացնեն բարձր պրոֆեսիոնալ մակարդակ ունեցող քաղաքական գործիչները:

1.4

Ժողովրդավարական քաղաքական ինստիտուտների կայացումը ՀՀ-ում

1.4.1 Զաղաքական պաշտոններ գրադեցնող անձանց ընտրովիություն և ժողովրդավարական ընտրություններ

Ազատ և արդար ընտրությունները ժողովրդավարության առաջին անհրաժեշտ պայմանն են. դրանք ազատ են, եթե քաղաքացին մասնակցում է քվեարկությանը, կատարում իր ընտրությունը՝ առանց որևէ մտավախության, որ այն կարող է բացասական հետևանքներ ունենալ իր համար, և արդար են, եթե բոլոր ձայները հավասար «կշիռ» ունեն: 1990թ. ընտրությունները կայացան Խորհրդային Միության ժամանակաշրջանում, սակայն ազատ և արդար, իշխանության եկան իրոք ժողովրդի քվեն ստացած ուժերը: Անկախացումից հետո անցկացվել են ՀՀ նախագահի երկու հերթական (1991թ., 1996թ.) և մեկ արտահերթ (1998թ.), Ազգային ժողովի երկու հերթական համընդհանուր (1995թ., 1999թ.) և տեղական ինքնակառավարման մարմինների երկու համընդհանուր (1996թ., 1999թ.) ընտրություններ, սակայն իշխանափոխություն՝ դասական իմաստով, տեղի չի ունեցել: Սկսած 1995թ. ընտրություններից դիտորդական առաքելությամբ ՀՀ-ում են գտնվել բազմաթիվ դիտորդական խմբեր: Դիտորդական առաքելություններին ներկայացվող միջազգային չափանիշներին համապատասխանել են միայն ԵԱՀԿ Ժողովրդական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՅՄԻԳ) դիտորդական առաքելությունները:

1995թ. խորհրդարանական ընտրությունները ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ դիտորդների կողմից որակվեցին ազատ, բայց ոչ արդար: 1996թ. նախագահական ընտրությունները բողոքի մեծ ալիք առաջացրին հասարակության լայն շերտերի շրջանում: 1998 և 1999թթ. ընտրություններում զգալի առաջընթաց նկատվեց, սակայն եթե նախորդ ընտրություններում էական դեր էին խաղում իշ-

խանական լծակները, ապա վերջին՝ 1999թ. խորհրդարանական ընտրություններում վճռական նշանակություն ունեցան ոչ այնքան իշխանական, որքան ֆինանսական լծակները: Այնուամենայնիվ ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ զեկուցագրերը նշում են, որ 1995թ. խորհրդարանական ընտրություններից հետո յուրաքանչյուր հաջորդ ընտրությունը նոր քայլ է հանդիսացել դեպի ԵԱՀԿ կողմից սահմանված չափանիշները, որոնք հիմնականում շարադրված են 1990թ. ԵԱՀԿ Կոպենհագենի փաստաթղթում: ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի դիտորդական առաքելությունների վերջին զեկույցում (1999թ.) որպես հիմնական թերություններ նշվել են որոշ խախտումներ ու թերություններ, որոնց մի մասը հիշատակվել է ոչ միայն ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ վերջին զեկույցում, այլ նաև նախորդներում (ներդիր 1.5): Նշված խնդիրների լուծումը պահանջում է և օրենսդրության կատարելագործում, և հասարակական գիտակցության հասունացում: Գործող ընտրական օրենսդրության թերություններից է նաև այն, որ թեև համաձայն դրա ՀՀ-ում de jure բոլոր չափահաս քաղաքացիները օգտվում են ընտրական իրավունքից (բացառություն են կազմում դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները), իրականում ընտրողների մի մեծ խումբ զրկված է իր ընտրական իրավունքը իրականացնելու հնարավորությունից: Խոսքը ընտրությունների օրը գործուղման, բուժման կամ այլ հանգամանքներով իրենց բնակավայրից բացակայող, հանրապետության այլ վայրերում գտնվող քաղաքացիների, ինչպես նաև հիվանդների մասին է, որոնք չեն կարող, կամ որոնց հակացուցված է տեղամասային կենտրոն գնալ: Ժողովրդավարությունը պահանջում է քաղաքացիների համընդհանուր ներգրավվածություն ընտրական գործընթացում, որը չի ապահովվում գործող ընտրական օրենսգրքով:

Հայաստանում ընտրությունների ընթացքում արձանագրված թերությունները

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկուցագրերում որպես հիմնական թերություններ նշվել են՝ ա) ընտրողների ցուցակների ցածր որակը, բ) ընտրությունների ժամանակացույցով նախատեսված ժամկետների խախտումը, գ) քվեարկության ժամանակ ժամկետային զինծառայողների կամքի ազատ արտահայտման խոչընդոտումը, դ) ընտրություններին փախստականների մասնակցության հետ կապված խառնաշփոթը, ե) ընտրական տեղամասային կենտրոններում քվեարկության, ձայների հաշվման ընթացակարգերի ժամանակ չլիազորված անձանց ներկայությունը, զ) ընտրական հանձնաժողովների մասով՝ 1) ընտրությունների կազմակերպումը քաղաքական, այլ ոչ անկախ մարմնի կողմից (ԵԱՀԿ/ՄԱԿ 1995թ. ընտրությունների դիտորդների միացյալ խումբ), 2) բոլոր մակարդակների ընտրական հանձնաժողովների կազմավորումը նախընտրական ժամանակաշրջանում, որի հետևանքով հանձնաժողովների նոր անդամները չեն ունենում անհրաժեշտ փորձ և բավարար ժամանակ՝ ընտրություններին պատշաճ ձևով նախապատրաստվելու համար, 3) կուսակցությունների՝ իրենց նշանակած ընտրական հանձնաժողովների անդամներին փոփոխելու իրավունքը, որը հնարավորություն չի տալիս ունենալ արհեստավարժ և անկախ հանձնաժողովներ, 4) մարզային ընտրական հանձնաժողովների միանման կարգով կազմավորումը, որի հետևանքով նրանք ունենում են հավասար թվով անդամներ՝ անկախ մարզում գրանցված ընտրողների թվից, որը բարդացնում է Երևանի քաղաքային և մեծ մարզերում մարզային ընտրական հանձնաժողովների աշխատանքը:

Խաչատուր Բեգիրջյան

1.4.2 Խոսքի ազատությունն ու տեղեկատվության անկախ աղբյուրները

Խոսքի ազատությունն ու քաղաքացիների համար տեղեկատվության մատչելիության իրավունքը՝ իբրև Հայաստանի անկախ հանրապետության հիմնարար արժեքներ, հռչակվել են նրա գոյության առաջին օրերից: Այնուհետև դրանք ամրագրվել են 1995թ. հունիսին ընդունված ՀՀ Սահմանադրությամբ: 1990թ. հիմնականում, իսկ 1991թ.՝ վերջնականապես վերացվեց նախնական գրաքննությունը: 1991թ. հոկտեմբերին ընդունված «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքը բոլոր իրավաբանական և ֆիզիկական անձանց ՁԼՄ հիմնելու իրավունք տվեց:

Հայաստանի հետխորհրդային պատմության առաջին իսկ տարում ձևավորվեց բազմակուսակցական և մասնավոր պարբերականների շուկան: 1991թ. խարխվեց հեռուստաթերի, իսկ 1995թ.՝ ռադիոթերի պետական մենաշնորհը:

Միաժամանակ հռչակվող և օրենսդրորեն ամրագրվող տեղեկատվական ազատությունների գործնական կիրառումը հանդիպել է և շարունակում է հանդիպել որոշակի խոչընդոտների: Դրանցից գլխավորը զանգվածային լրատվության անկախ միջոցների զարգացման համար անհրաժեշտ տնտեսական պայմանների բացակայությունն է: Սակայն, եթե այդ խնդիրն օբյեկտիվ բնույթ ունի և հիմնականում պայմանավորված է երկրի տնտեսական զարգացման մակարդակով, ապա խոսքի ազատության ճանապարհին հանդիպող մի շարք այլ խոչընդոտների հաղթահարումը կախված է հայկական ժողովրդավարության հասունությունից և պետության իրավական երաշխիքներից (ներդիր 1.6):

Անկախության տարիներին որոշակի քաղաքական ուղղվածության ՁԼՄ-ներն ապրել են իշխանությունների ուղղակի ճնշումների, ընդդիմադիր թերթերի

գրանցման հետ կապված բյուրոկրատական քաշքշուկների ժամանակաշրջան: Եթե 90-ականների կեսերին արձանագրվել են անցանկալի լրագրողների և ՁԼՄ-ների դեմ ֆիզիկական բռնությունների մի շարք դեպքեր (ընդ որում, իրավապահ մարմինները հարուցված քրեական գործերից ոչ մեկը չեն բացահայտել), ապա վերջին տարիներին նկատվում է լրագրողների վրա ճնշում գործադրելու նպատակով դատարաններն օգտագործելու միտում:

Երկրի առաջադեմ ուժերը և հենց հայկական պետության ու հասարակության զարգացման տրամաբանությունը մերժում են բազմակարծության և կարծիքի արտահայտման ազատության նկատմամբ անհանդուրժողականության նման դրսևորումները: Մամուլը ճնշելու նախկինում օգտագործված մեթոդները վարկաբեկված են և հազիվ թե նորից լայնորեն կիրառվեն: Սակայն միջազգային ժողովրդավարական ընկերակցության մեջ ՀՀ-ի ներգրավումը նաև տեղեկատվական ազատությունների բնագավառում է նոր չափանիշներ պարտադրում:

Ես-ի՝ Հայաստանին ներկայացված պահանջների շարքում նշված են ՁԼՄ-ների մասին նոր օրենքի ընդունումը և ազգային հեռուստատեսությունը հանրային վերափոխելը: Վերջինիս ղեկավարումը պետք է իրականացնի անկախ խորհուրդը: Այս պահանջներին համապատասխան, 2001թ. սկզբին իրականացվեց պետական հեռուստատեսության իրավական կարգավիճակի փոփոխությունը: Սակայն արդեն ապրիլին խոսքի և տեղեկատվության ազատության մասին Ես Խորհրդարանական վեհաժողովի հատուկ զեկուցման մեջ նշվեց, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը «երկրի նախագահին հեռարձակող լրատվամիջոցների նկատմամբ չափազանց մեծ իշխանություն է տալիս: Այսպես, նախագահը հնարավորություն է ստացել մի-

անձնյա նշանակելու Չանրային հեռուստառադիոընկերության խորհրդի, ինչպես նաև մասնավոր հեռուստառադիոընկերությունների գործունեությունը կարգավորող Չեռուստատեսության և ռադիոյի ազգային համձեռնաժողովի անդամներին»:

Անկախ Չայաստանի ՁԼՄ-ների տասնամյա պատմության այս դրվագը վկայում է, որ երկիրն այդ ոլորտում ընթանում է ժողովրդավարական բարեփոխումների ուղիով, սակայն այդ բարեփոխումները վճռականության և հետևողականության կարիք են զգում:

1.6 **Ով է որոշում ՁԼՄ-ների բովանդակությունը**

Ներդիր

Չայաստանի տեղեկատվական ոլորտի զարգացման գլխավոր խոչընդոտներից մեկը անկախ լրատվամիջոցների զարգացման համար անհրաժեշտ տնտեսական պայմանների բացակայությունն է: Բնակչության ցածր գնողունակությունը, գովազդային շուկայի թերզարգացածությունը, տարածման սահմանափակությունը (լրատվամիջոցների հիմնական մասն իրացվում է մայրաքաղաքում) հանգեցնում են օլիգարխիական շրջանակներից ՁԼՄ-ների ֆինանսական կախվածության: Չեռուստառադիոյի մեծամասնությունը և հեռարձակող ընկերությունների նշանակալի մասը կողմնորոշված են ոչ թե դեպի լայն սպառողի, այսինքն՝ ողջ հասարակության կարիքները, այլ՝ նեղ քաղաքական տնտեսական շահերի բավարարումը:

Սրա համոզիչ պատկերն են տալիս նաև վերջին տարիներին Երևանի մամուլի ակումբի (ԵՄԱ) անցկացրած հետազոտությունները: 2001 թ. մայիս-հունիսի սոցիոլոգիական հարցման տվյալներով երկրի բնակչությունը նախապատվությունը տալիս է ՁԼՄ-ներում միջազգային կյանքի (57,5%), Ռարաբայան խնդրի (46,5%), տնտեսական (44,9%), սոցիալական (40,2%) հարցերի լուսաբանմանը: Պետական մարմինների (26,4%) և քաղաքական կուսակցությունների (16,2%) գործունեությունը հասարակությանն ավելի քիչ է հետաքրքրում և չի մտնում նույնիսկ առավել ընթերցվող թեմաների տասնյակի մեջ:

Սինչդեռ, ինչպես ցույց է տվել ԵՄԱ 1998-2000թթ. անցկացրած հայկական ՁԼՄ-ների դիտարկումը, հենց պետական մարմինների գործունեությունն ու ներկուսակցական խնդիրներն են մամուլի էջերում և եթերում առաջնայինների թվում եղել (համապատասխանաբար 4-րդ և 3-րդ տեղեր):

Երևանի մամուլի ակումբ

1.4.3 **Անկախ միավորումներ**

Ներկայումս Չայաստանում գրանցված է շուրջ 100 կուսակցություն. դրանց զգալի մասը կայացման փուլում է, մի մասն էլ, փաստորեն, չի գործում: Դիմամիկան այսպիսին է. 1991-1995թթ. ընդհանուր առմամբ գրանցվել է 50 կուսակցություն (91թ.՝ 20, 92թ.՝ 8, 93թ.՝ 4, 94թ.՝ 11, 95թ.՝ 7): Եթե 1991-92թթ. նոր ստեղծված բազմակուսակցական համակարգում կուսակցությունների առաջացումը բնականոն գործընթաց էր, ապա 1994-95թթ. սկսած՝ ընտրությունների նախաշեմին, կարծես թե միտումը փոխվեց. կուսակցությունները ստեղծվում էին ավելի շատ արհեստականորեն, կոնյունկտուրային նպատակներով: Եթե այսօր դիտարկելու լինե՞նք բոլոր գրանցված կուսակցությունները, ապա հստակ կերևա, որ խորհրդարանական կամ ազդեցիկ կուսակցությունները հիմնականում գրանցվել են հենց 1991-92թթ. (բացի ԴԺԿ-ից, որն առանձին խոսակցության նյութ է). Չայ հեղափոխական դաշնակցություն, Չայոց համազգային շարժում, Ազգային ինքնորոշում միավորում, Չայաստանի կոմունիստական կուսակցություն, Ազգային ժողովրդավարական միություն:

Քաղաքական զարգացումներին զուգընթաց, կուսակցությունների գերխնդիրը դարձավ զանգվածային դառնալը՝ արհեստականորեն համալրեցին իրենց շարքերը՝ հիմնականում դառնալով ընտրություններ ապահովող կառույցներ: Քաղաքական դաշինքները հիմնականում ստեղծվում են ոչ թե գաղափարական,

այլ իրավիճակային շահերից ելնելով: Խոսքը վերաբերում է և՛ իշխանական, և՛ ընդդիմադիր ուժերին:

Չայաստանի ներկայիս քաղաքական կյանքի առանձնահատկություններից մեկն այն է, որ հնարավոր չէ կուսակցությունները հստակ դասակարգել հաղթող և պարտվող, իշխող և ընդդիմադիր թևերի: Չեռաքրքրական է նշել ԵԱԶԿ/ԺՅՄԻԳ 1999թ. դիտորդական առաքելության կարծիքը ընտրարշավին մասնակցող կուսակցությունների մասին. «Շատ դեպքերում քաղաքական կուսակցությունների պլատֆորմները էապես չէին տարբերվում, որն անհնար էր դարձնում բաժանարար գծի անցկացումը ընդդիմության և կառավարման կուսակցությունների միջև: Շատ դեպքերում պարզվում էր, որ հասարակության վստահությունը մասնավոր կուսակցության նկատմամբ պայմանավորված էր նրա ղեկավարների հանդեպ առկա անձնական վստահությամբ»: Շրջանառության մեջ են, օրինակ, «կառուցողական ընդդիմություն» (կուսակցություններ, որոնք իրենց հռչակում են «պետականամետ», իսկ իրականում իշխանություններին սատարող կամ աջակցող) և «արմատական ընդդիմություն» (կուսակցություններ, որ ամեն պարագայում մերժում են գործող իշխանություններին) հասկացությունները: Թե մեկը, թե մյուսը չեն բնորոշում դասական իմաստով ընդդիմություն հասկացությունը, որ երկրի ժողովրդավարության զարգացման հիմնական երաշխիքներից է:

Քաղաքական կուսակցությունների զարգացմանը խոչընդոտող հիմնական պատճառներից մեկն էլ իշխող կուսակցությունների պատասխանատվություն չստանձնելն է, երբ նրանք հրաժարվում են պատասխանատվություն կրել «ոչ կուսակցական» նախարարների համար: Մյուս կողմից, իշխանության օղակներում որոշ քաղաքական գործիչներ, ժամանակի զարգացումներին հետևելով, իրենց անկախ կամ անկուսակցական են հռչակում, կամ, քաղաքական դասավորության փոփոխության դեպքում, հաջողությամբ մի բանակից մյուսն են անցնում:

Մյուս խոչընդոտման այն է, որ դեռևս չի ձևավորվել ներկուսակցական հանդուրժողության մթնոլորտը. ցանկացած հակասության դեպքում փոքրամասնությունը կամ դուրս է գալիս, կամ հեռացվում ստեղծելով նոր կուսակցություն: Ներկայումս կուսակցությունների տրոհման աննախադեպ գործընթաց է նկատվում:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ) ժողովրդավարության կարևորագույն տարրերից են: Քաղաքական կուսակցություններից տարբեր խնդիրներ և նպատակ ունենալով, դրանք միավորում են մարդկանց շահագրգիռ խմբերի: Վերջին տասը տարում դրանք աննախադեպ աճ են ապրել: ՔՀԿ-ները փորձում են իրենց առջև ծառայած խնդիրները լուծել կամ ուղղակիորեն ազդելով քաղաքական մարմինների և պաշտոնատար անձանց վրա, կամ էլ անուղղակի ազդեցությամբ՝ հասարակական կարծիքի, կուսակցությունների և առանձին անհատների միջոցով: Շահագրգիռ խմբերը կարող են դրսևորվել հասարակական կազմակերպությունների, արհմիությունների,


բարեգործական հիմնադրամների, լրբիստական կազմակերպությունների և այլ ձևերով: Օրինակ ՀԿ-ների զարգացման դինամիկան այսպիսին է. 1991-93թթ. գրանցվել է 505, 1994-96թթ.՝ 568, 1997թ.՝ 359, 1998թ.՝ 400, 1999թ.՝ 286, 2000թ.՝ 287, 2001թ. մինչև հունիսի 1-ը՝ 174 ՀԿ:

Ներկայումս ՀՀ-ում գրեթե բոլոր շահագրգիռ խմբերը (այդ թվում նաև արհմիությունները) գրանցվում են որպես հասարակական կազմակերպություն (ՀԿ), քանի որ այդ ոլորտում գործում է միայն «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը: Բացառություն են կազմում հիմնադրամները, որոնք գրանցվում են համաձայն «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի»: Հայաստանի ՀԿ-ները վերջերս հիմնում են ՀԿ խորհուրդներ՝ կապերի հաստատման, գաղափարների փոխանակման, ռեսուրսների միավորման ու խոշոր նախագծերում շահառուների քանակի ընդլայնման համար:

Ընդլայնվել է նաև գրանցված ՀԿ-ների (ս/թ հունիսի 1-ի դրությամբ՝ 2579) գործունեության և հետաքրքրությունների շրջանակը (նկար 1.1): Վերջերս անցկացված ՀԿ սեկտորի հետազոտության համաձայն² ՀԿ-ներն ավելի շատ հետաքրքրված են սոցիալական ծառայությունների մատուցմամբ և խոցելի խմբերի օգնությամբ, քան շահերի պաշտպանությամբ և ժողովրդավարական գործընթացի խթանմամբ: Դրանք բավական ակտիվ են հասարակական տեղեկատվության և կրթական գործընթացում սովորաբար առնչվելով հասարակական կարգին, առողջությանը կամ երեսնների կրթությանը:

ՀՀ-ում գործող ՀԿ-ների թիվը՝ ըստ գործունեության ոլորտների

Նկար 1.1



² «Հայաստանի ՀԿ սեկտորի զննատու» զեկույցի նախագիծ: Հետազոտությունն անց է կացվել Համաշխարհային ուսուցում/ ՀԿ հզորագման ծրագրի կողմից 2001թ. մարտին:

Հիմնադրամները թվով 226-ն են: Գործող ՀԿ-ներից շատերն իրենց ծրագրային գործունեությունն իրականացնում են միջազգային և օտարերկրյա կազմակերպություններից ստացած դրամաշնորհների միջոցով: Վերջերս ԱԺ-ն ընդունել է «Արհմիությունների մասին» օրենքը (գործողության մեջ է մտել 2001թ. օգոստոսի 18-ից), որի հիման վրա արհմիությունները (գրանցվածների թիվը մոտ 40 է) պետք է առանձին վերագրանցվեն:

Թե որքանով է կայացած քաղաքացիական հասարակությունը ՀՀ-ում, վկայում է, օրինակ, «Քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացում հեռուստատեսության և ռադիոյի մասնակցության արդյունավետության բարձրացման» ուղղված հարցումը³, որին մասնակցել են հեռուստառադիոընկերությունների (ՀՌԸ), ոչ կառավարական կազմակերպությունների (ՈԿԿ) ներկայացուցիչներ և ՀՀ քաղաքացիներ: Ըստ

հարցվողների 25-30%-ի՝ քաղաքացիական հասարակության ձևավորումը դեռ չի սկսվել և, մոտավորապես նույն թվով հարցվողների կարծիքով, այն սկզբնական փուլում է: Հարցումը նաև մատնանշում է, որ ՀՌԸ-ները և ՈԿԿ-ների մեծամասնությունը հիմնականում գործում են ինքնամեկուսացված:

Հայաստանի բարգավաճմանը հասնելու համար նրան նետված մարտահրավերները ընդունելու խնդրում հավասարաչափ կարևոր նշանակություն ունեն բոլոր դերակատարների ներուժը, բարեփոխման հաստատակամությունը և համագործակցելու պատրաստակամությունը և յուրաքանչյուրի՝ պետության, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի պարտականությունների ու իրավասությունների համամասնությունը, ինչպես և կառավարման հստակ գործելակերպը:

1.5

Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում

ՀՀ հասարակությունն իր իշխանությունն իրականացնում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով: Այդ մարմինների կայացումը, նրանց իրավասությունների, գործառույթների և պատասխանատվության հստակ տարանջատումը հիմք է հանդիսանում զարգացող և բարեկեցիկ երկրի կառուցման համար:

1.5.1 ՀՀ պետական կառավարման համակարգը

Պետական իշխանության համակարգը օրենսդրական դաշտի, պետական կառավարման համակարգի ու պետական ծառայության ամբողջությունն է, որի շնորհիվ էլ իրականացվում են պետության հիմնական գործառույթները և լուծվում երկրի առջև ծառայած խնդիրները:

ՀՀ-ում պետական կառավարման համակարգը ներառում է պետական գործադիր մարմինները, իսկ ՀՀ գործադիր իշխանությունը իրականացվում է ՀՀ կառավարության կողմից, որը կազմված է վարչապետից և

նախարարներից⁴: ՀՀ Նախագահը հանդիսանում է հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորը, հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը⁵:

Պետական կառավարումը նպատակաուղղված է երկրի տնտեսական հզորացմանը, անկախ պետականության ամրապնդմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, հասարակական հարաբերությունների կայուն զարգացման ապահովմանը: Այն անհրաժեշտ է դիտարկել թե՛ որպես համակարգ, որը ներառում է պետական կառավարման մարմինները և դրանց կողմից իրականացվող գործառույթները, կիրառման մեթոդներն ու միջոցները, կառավարման սուբյեկտների և օբյեկտների միջև փոխադարձ կապերը, թե՛ որպես գործընթաց, քանզի իրենից ներկայացնում է իշխանական լիազորությունների շարունակական իրականացում, որի արդյունքում տեղի են ունենում հասարակական կեցության, երևույթների փոփոխություններ:

48 | ³ «Սոցիոմետր» անկախ սոցիոլոգիական կենտրոն, TV&R հանդես, հատուկ թողարկում, N5, 2000թ.:
⁴ ՀՀ Սահմանադրություն, հ.85
⁵ ՀՀ Սահմանադրություն, հ.49

Հայաստանի պետական կառավարման ներկա համակարգը չի բավարարում ժամանակի պահանջները և բարեփոխման կարիք ունի: ՀՀ պետական անարդյունավետ կառավարումը իշխանության համընդհանուր «հիվանդությունների» հետևանք է, որոնցից Հայաստանին մասնավորապես, բնորոշ են պետական կառավարման պաշտոնական գաղափարախոսության, նպատակադրման, իշխանության թևերի միջև մատչելի և անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման մեխանիզմների բացակայությունը, տարբեր մակարդակների գործադիր իշխանության հանձնարարականների անճշտությունները և գործառույթների կրկնությունները և այլն (արդյունակներ 1.1, 1.2, 1.3):

Հաճախ հասարակությանը անհասկանալի են պետական կառավարման տարբեր մակարդակներում կայացվող որոշումների նպատակն ու անհրաժեշտությունը, որն իշխանության գործունեության թափանցիկության բացակայության, կատարվելիք գործողությունների մասին նախապես հասարակությանը չիրազեկելու արդյունք է:

ՀՀ-ում այսօր բացակայում է պետական կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման ռազմավարությունը, որը պետք է հիմք հանդիսանա պետական կառավարման համակարգի (ՊԿՀ) կառուցվածքային և գործառույթային բարեփոխումների և պետական ծառայության կատարելագործման համար:

ՊԿՀ-ի կառուցվածքային բարեփոխումների համալիրը պետք է նպատակաուղղված լինի.

- ❖ պետական կառավարման հստակ և հայեցակարգային միասնական սկզբունքներով համակարգի ստեղծմանը;
- ❖ կառավարման մարմինների կազմակերպական կառույցների նկատմամբ միասնական մոտեցման ձևավորմանը;
- ❖ կառավարման մարմինների բոլոր գործառույթների իրականացման ընթացքում թափանցիկության և գործողությունների փոխկապակցված իրականացման ապահովմանը;
- ❖ նպատակների, խնդիրների և գործառույթների շրջանակների՝ միմյանցից հստակ սահմանազատմանը:

Պետական արդյունավետ կառավարման համակարգի հիմքում պետք է ամրագրել հետևյալ սկզբունքները՝

- ❖ անձի իրավունքի և ազատության գերակայությունը,
- ❖ ժողովրդավարությունը՝ պետական մարմինների ձևավորման և գործունեության կազմակերպման գործում հասարակության անմիջական մասնակցության ապահովումը,
- ❖ իշխանության թևերի խնդիրների և գործառույթների հստակ տարանջատումը,
- ❖ գործունեության թափանցիկությունը,
- ❖ պետական ծառայողների պրոֆեսիոնալիզմը,
- ❖ կենտրոնացման և ապակենտրոնացման մակարդակների օպտիմալ հարաբերակցությունը,

❖ պետական կառավարման մարմինների հիերարխիայի հստակ կառուցվածքը:

Մինչ այժմ, պետական իշխանության համակարգի գործունեությունն առավել ռազմավարական խնդիրների լուծմանն ուղղելու փոխարեն, իրականացվել են միայն մարտավարական խնդիրներ՝ կառավարման մարմինների կառուցվածքային մասնակի փոփոխություններ, բյուջետային միջոցների կրճատումներ, որոնք հանգեցրել են պետական ծառայությունների որակի անկմանը:

Նախկին խորհրդային համակարգից ժառանգած պետական գործառույթների մեծ ծավալն այսօր հնարավոր չէ սեփական ուժերով լիովին ֆինանսավորել, մինդեռ ՀՀ-ում առկա է ՊԿՀ-ի նախկին և ներկայիս միմյանցից էապես տարբեր համակարգերի կառավարման կառույցների զուգորդում՝ պետական կառավարման մարմինների ոչ օպտիմալ կառուցվածքներով և հնից մնացած, ավանդույթներով կարծրացած, սակայն այսօր չիրականացվող գործառույթներով:

Պետական կառավարման մարմինների չհիմնավորված ուռճացումը կարելի է բացատրել աշխատողների խնդիրների, գործառույթների, լիազորությունների ոչ հստակ սահմանմամբ և տարանջատմամբ, կազմակերպական կառուցվածքների ոչ հիմնավորվածությամբ, պետական ծառայության համակարգի անարդյունավետությամբ և, թերևս ամենակարևորը՝ ՊԿՀ-ի կազմավորման և կառուցվածքային կազմակերպման պետական միասնական հայեցակարգի բացակայությամբ:

Պետական կառավարման անարդյունավետ իրականացման պատճառների վերաբերյալ 1996թ. և 2000թ. անցկացված հարցման արդյունքները՝ ցույց են տալիս, որ «համակարգում աշխատողների անպաշտպանվածության», «օրենսդրական և ենթօրենսդրական դաշտի անկատարության» հարցերը շարունակում են դիտվել որպես հրատապ, մինչդեռ «ղեկավար կադրերի ոչ ճիշտ ընտրությունը» և «կառավարման մարմինների կառուցվածքային ոչ ճիշտ կազմավորումը» ձեռք են բերել առանձնահատուկ կարևորություն (աղյուսակ 1.1):

ՀՀ ներկայիս պետական կառավարման համակարգը 18 նախարարություններից բացի, իր մեջ ներառում է նաև կառավարությանն առընթեր և նախարարությունների համակարգում գործող շուրջ 30 տարբեր գերատեսչություններ և օրենքով ստեղծված մարմիններ: 11 մարզերում իրականացվում է պետական կառավարում, ներառյալ Երևանը, որը նույնպես ունի մարզի կարգավիճակ:

Մինչ ներկայիս կառուցվածքի ձևավորումը, դրան նախորդող տարիների ընթացքում տեղի են ունեցել կառուցվածքային բազմաթիվ փոփոխություններ: Միայն 1995-2000թթ. իրականացվել են կառավարության կազմի և կառուցվածքի 20-ից ավելի փոփոխություններ (վերակազմավորում, միավորում, լուծարում), որոնք առնչվել են 15-ից ավելի նախարարությունների:

❖ Հարցումը անց է կացվել «Պետական կառավարում» բաժնի հեղինակ Աշոտ Զալինյանի կողմից:

Միաժամանակ իրականացվել են գործող նախարարությունների կառուցվածքային բազմաթիվ փոփոխություններ (աղյուսակ 1.2):

Կառուցվածքային հաճախակի փոփոխությունները պայմանավորված են նաև գործադիր մարմինների խնդիրների և լիազորությունների ոչ հստակ տարանջատմամբ, աշխատողների քանակի չհիմնավորված սահմանմամբ:

ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող գործառնությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաճախ նկատվում են թե խնդիրների և թե գործառնությունների կրկնություններ կառավարման տարբեր մակարդակներում: Մասնավորապես՝ նախարարությունների կողմից իրականացվող գործառնություններում առկա են ծառայությունների մատուցման և տեսչական գործառնություններ, որոնք, համաձայն ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հայեցակարգի, պետք է իրականացվեն գործակալությունների ու տեսչությունների կողմից:

Ներկայումս ՀՀ գործադիր իշխանության մարմինների լիազորությունների ապակենտրոնացման աստիճանը գնահատելու և գործառնությունների իրականացման մեխանիզմների մշակման համար կատարվում է գործառնությունների տարանջատման համալիր վերլուծություն: ՀՀ պետական կառավարման համակարգում գործառնության-կառուցվածքային վերլուծությունները կատարվել են կազմակերպական գործառնությունները 5 խմբերի դասակարգելու սկզբունքով⁷: Վերլուծությունները ցույց են տալիս, որ առանձին նախարարություններում բոլոր գործառնությունների ավելի քան 20%-ը կազմում են ծառայությունների մատուցումը և վերահսկողությունը, որոնք, հայեցակարգային մոտեցմամբ, պետք է իրականացվեն առանձին գործակալությունների և տեսչությունների կողմից (աղյուսակ 1.3):

Փորձելով շտկել վիճակը՝ ՀՀ իշխանությունները իրենց ուշադրությունը սևեռում են պետական ապարատի գործունեության արդյունավետության և ազգաբ-

նակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացման վրա: Այդ նպատակով 1998թ. ստեղծվել և այսօր հաջողությամբ իր գործունեությունն է շարունակում ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովը, որի կողմից մշակվել է «ՀՀ պետական կառավարման համակարգի կառուցվածքային բարեփոխումների հայեցակարգը», լայնածավալ աշխատանքներ են կատարվում ՀՀ նախարարություններում և պետական կառավարման մյուս գերատեսչություններում մշակված հայեցակարգային դրույթներին համապատասխան կառուցվածքային և գործառնության բարեփոխումների իրականացման ուղղությամբ:

Առանցքային մշանակություն է տրվել նաև «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմանը և կիրառմանը: Այդ նպատակով ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի քաղաքացիական ծառայության բարեփոխումների աշխատանքային խմբի կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել հիշյալ օրենքի նախագիծը: ՀՀ Ազգային ժողովը 1-ին ընթերցմամբ ընդունել է ՀՀ կառավարության նախաձեռնությամբ ներկայացված «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Ելնելով քաղաքացիական ծառայողների կայունության, օրենքի առջև իրավահավասարության, քաղաքական զսպվածության, պրոֆեսիոնալիզմի, իրավական և սոցիալական պաշտպանվածության, այլ կարևորագույն սկզբունքներից և քաղաքացիական ծառայության բնագավառում առկա միջազգային պրակտիկայից՝ փորձ է արվել «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծով կարգավորել քաղաքացիական ծառայության համակարգի իրավական հիմքերը, ամրագրել ենթաօրենսդրական ակտերի ընդունման համար անհրաժեշտ հիմնարար դրույթները (ներդիր 1.7):

⁷ Վերլուծությունները իրականացվել են հեղինակի դիտարկումների հիման վրա՝ հիմք ընդունելով ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի կողմից որդեգրված մեթոդիկան:

Պեճերական ոչ արդյունավետ կառավարման պատճառները ըստ հարցման արդյունքների

(հարցվող անձը կարող էր նշել միանգամից մի քանի պատճառ) (մարդիկ մասնագետա սխան հարցվողների մեջ %)

Աղյուսակ

1.1

1999թ.	Հարցվողները ընդամենը 1200 մարդ, այդ թվում՝	2000թ.	Հարցվողները ընդամենը 1200 մարդ, այդ թվում՝
	ղեկավար պաշտոնյաներ (800 անձ)		ղեկավար պաշտոնյաներ (800 անձ)
Պատերազմական իրավիճակի արդյունք (օբյեկտիվ)	550 (92%)	Պատերազմական իրավիճակի արդյունք, օբյեկտիվ/	400 (67%) ↓ 25 %-ով
Նոր անտականության իրավիճակ (օբյեկտիվ)	535 (89%)	Նոր անտականության իրավիճակ /օբյեկտիվ/	450 (75%) ↓ 14 %-ով
Օրենսդրական և ենթօրենսդրական դաշտի անկատարություն	500 (83%)	Օրենսդրական և ենթօրենսդրական դաշտի անկատարություն	450 (75%) ↓ 8 %-ով
Արտաքին ճնշումներ	400 (67%)	Արտաքին ճնշումներ	270 (45%) ↓ 22 %-ով
Դեկավար կարողերի ոչ ճիշտ ընտրություն	300 (50%)	Դեկավար կարողերի ոչ ճիշտ ընտրություն	470 (78%) ↑ 28 %-ով
Հանակարգում աշխատողների անպաշտպանվածություն	400 (67%)	Հանակարգում աշխատողների անպաշտպանվածություն	450 (75%) ↑ 8 %-ով
Կառավարման կատարողների ոչ ճիշտ կազմավորում	380 (63%)	Կառավարման կատարողների ոչ ճիշտ կազմավորում	450 (75%) ↑ 12 %-ով
Չափ աշխատակարծ	540 (90%)	Չափ աշխատակարծ	470 (78%) ↓ 12 %-ով
Ինտիլիգենտի ոչ հստակ ձևավորում	450 (75%)	Ինտիլիգենտի ոչ հստակ ձևավորում	510 (85%) ↑ 10 %-ով
Կազմող փյունների և գործառույթների անհամաչափ բաշխում համակարգում	450 (75%)	Կազմող փյունների և գործառույթների անհամաչափ բաշխում համակարգում	480 (80%) ↑ 5 %-ով
Գործառույթների կրկնություններ տարբեր մարմիններում	400 (67%)	Գործառույթների կրկնություններ տարբեր մարմիններում	480 (80%) ↑ 27 %-ով
Անտականության իրավիճակի արդյունք (օբյեկտիվ)	500 (83%)	Պատերազմական իրավիճակի արդյունք, օբյեկտիվ/	250 (42%) ↓ 41 %-ով
Նոր անտականության իրավիճակ (օբյեկտիվ)	500 (83%)	Նոր անտականության իրավիճակ /օբյեկտիվ/	300 (50%) ↓ 33 %-ով
Օրենսդրական և ենթօրենսդրական դաշտի անկատարություն	400 (67%)	Օրենսդրական և ենթօրենսդրական դաշտի անկատարություն	340 (57%) ↓ 10 %-ով
Արտաքին ճնշումներ	300 (50%)	Արտաքին ճնշումներ	300 (50%) ↔
Դեկավար կարողերի ոչ ճիշտ ընտրություն	570 (95%)	Դեկավար կարողերի ոչ ճիշտ ընտրություն	500 (83%) ↓ 12 %-ով
Հանակարգում աշխատողների անպաշտպանվածություն	540 (90%)	Հանակարգում աշխատողների անպաշտպանվածություն	500 (83%) ↓ 7 %-ով
Կառավարման կատարողների ոչ ճիշտ կազմավորում	200 (33%)	Կառավարման կատարողների ոչ ճիշտ կազմավորում	350 (58%) ↑ 25 %-ով
Չափ աշխատակարծ	580 (97%)	Չափ աշխատակարծ	500 (83%) ↓ 14 %-ով
Ինտիլիգենտի ոչ հստակ ձևավորում	300 (50%)	Ինտիլիգենտի ոչ հստակ ձևավորում	420 (70%) ↑ 20 %-ով
Կազմող փյունների և գործառույթների անհամաչափ բաշխում համակարգում	400 (67%)	Կազմող փյունների և գործառույթների անհամաչափ բաշխում համակարգում	500 (83%) ↑ 16 %-ով
Գործառույթների կրկնություններ տարբեր մարմիններում	380 (63%)	Գործառույթների կրկնություններ տարբեր մարմիններում	450 (83%) ↑ 20 %-ով

↑ : ↓ - նախորդ հարցման արդյունքի նկատմամբ նվազում կամ բարձրացում %-ային արտահայտությամբ:
↔ - նախորդ հարցման արդյունքի նկատմամբ անփոփոխ:

1995-2000 թթ. ՀՀ կառավարության կառուցվածքը և փոփոխությունները

(ըստ ՀՀ նախաժառի հրամանագրերի), (սլաքները ջուլը են տալիս միաժուլումները և տարա նրատումները, իսկ ս+ս և ս-ժ նշանները ջուլը են տալիս մարմիններին նշված կազմակերպական ծնով Որոշումն ունենալու փաստը համապատասխան ժամանակաշրջանում)

Այլուսակ

1.2

	25.07 1995	20.10 1995	08.11 1996	10.06 1997	20.04 1998	17.11 1998	15.06 1999	13.11 1999	28.02 2000	20.05 2000
ՀՀ ազգային անվտանգության նախարարություն	+	+	-	-	-	-	+	+	+	+
ՀՀ ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարություն	-	-	+	+	+	+	-	-	-	-
ՀՀ ներքին գործերի նախարարություն	+	+	-	-	-	-	+	+	+	+
ՀՀ առևտրի, սպասարկումների և գրտաշրջիկության նախարարություն	+	+	+	+	+	+	-	-	-	-
ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	-	-	-	+	+	+	+	+	+	+
ՀՀ արդյունաբերության նախարարություն	+	+	+	-	-	-	-	-	-	-
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	+	+	+	+	+	+	+	+	+	+
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	-	-	-	+	+	+	-	-	+	+
ՀՀ ֆինանսների նախարարություն	+	+	+	-	-	-	+	+	-	-
ՀՀ պետական եկամուտների նախարարություն	-	-	-	-	-	-	+	+	+	+
ՀՀ հարկային տեսչություն	+	-	-	-	-	-	-	-	-	-
ՀՀ տրանսպորտի և հաղորդակցության նախարարություն	+	+	-	-	-	-	-	-	-	-
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	-	-	-	-	-	-	-	+	+	+
ՀՀ տրանսպորտի նախարարություն	-	-	+	+	+	+	+	-	-	-
ՀՀ փոստի և հեռահաղորդակցության նախարարություն	-	-	-	-	+	+	+	-	-	-
ՀՀ կապի նախարարություն	+	+	+	+	-	-	-	-	-	-
ՀՀ պաշտպանության նախարարություն	+	+	+	+	+	+	+	+	+	+
ՀՀ արդարադատության նախարարություն	+	+	+	+	+	+	+	+	+	+
ՀՀ եներգետիկայի նախարարություն	+	+	+	+	+	+	+	+	+	+
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	+	+	+	+	+	+	+	+	+	+

1995-2000 թթ. ՀՀ կառավարության կառուցվածքը և փոփոխությունները

Այլուսակ
1.2

	25.07 1995	20.10 1995	08.11 1996	10.06 1997	20.04 1998	17.11 1998	15.06 1999	13.11 1999	28.02 2000	20.05 2000
ՀՀ բնապահպանության և բնօրրոգի մախարարություն	+	+	-	-	-	-	-	-	-	-
ՀՀ բնապահպանության մախարարություն	-	-	+	+	+	+	+	-	-	+
ՀՀ գյուղատնտեսության և բնօգտագործման մախարարություն	-	-	-	-	-	-	-	+	+	-
ՀՀ գյուղատնտեսության մախարարություն	-	-	+	+	+	+	+	-	-	+
ՀՀ գյուղատնտեսության և պարենի մախարարություն	+	+	-	-	-	-	-	-	-	-
ՀՀ առողջապահության մախարարություն	+	+	+	+	+	+	+	+	-	+
ՀՀ առողջապահության և սոցալ. մախարարություն	-	-	-	-	-	-	-	-	+	-
ՀՀ սոցալ. մախարարություն	-	-	+	+	+	+	+	+	-	+
ՀՀ սոցիալական ապ., գրադվածության, բնակչության տեղաշարժի և փախստականների հարցերի մախարարություն	+	+	-	-	-	-	-	-	-	-
ՀՀ կրթության և գիտության մախարարություն	+	+	+	+	+	+	+	+	+	+
ՀՀ նշակալի, երիտասարդության հարցերի և սպորտի մախարարություն	+	+	+	+	+	+	+	+	+	+
ՀՀ պետ. գույքի կառավարման մախարարություն	-	-	-	-	-	-	-	+	+	+
ՀՀ սեփականաշնորհման մախարարություն	-	-	-	-	-	-	-	-	-	-
ՀՀ սեփականաշնորհման և օտարերկրյա ներդրումների մախարարություն	-	-	-	-	-	-	-	-	-	-
ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության մախարարություն	-	-	-	-	+	+	+	+	-	-
ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության վարչություն	+	+	+	+	-	-	-	-	-	-
ՀՀ տարածքային կառավարման և բաղաքաշինության գործունեությունը համակարգող մախարարություն	-	-	-	-	-	-	-	+	+	+
ՀՀ բաղաքաշինության մախարարություն	+	+	+	+	+	+	+	-	-	-
ՀՀ արտակարգ իրավիճակների վարչություն	+	+	+	+	-	-	-	-	-	-
ՀՀ տեղեկատվության մախարարություն	+	+	-	-	-	-	-	-	-	-

Ներկայումս ՀՀ բաղաքաշինության մախարարությունը և ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը գործում են որպես ինքնուրույն կառույցներ:

Նախարարությունների կողմից իրականացվող յուրաքանչյուր գործառույթի տեսակարար կշիռը գործառույթների ընդհանուր ծավալում (ըստ կատեգորիաների)

(Ներկայացված ցուցանիշները ընդգրկում են մինչև 2000թ. վերջվար աճից 33 նախագահի կողմից կատարված մոր կառուցվածքի սահմանում և արդյունքների հետադարձ շեղումները կադրի ընդհանուր ծավալի 15%):

Նախարարությունների անվանումը	Շնորհանք գործառույթների քանակը	որից					Այլուսակ
		1	2	3	4	5	
1. Սոցիալական ապահովության նախարարություն	26	Ա - 13 (50%)	Դ - 7 (27%)	Ե - 3 (11,5%)	Գ - 2 (7,5%)	Բ - 1 (4%)	
2. Պետական եկամուտների նախարարություն	51	Ա - 22 (43%)	Դ - 9 (17%)	Բ - 7 (14%) Գ - 7 (14%)	-	Ե - 6 (12%)	
3. Աշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն	36	Ա - 20 (55,5%)	Դ - 5 (14%) Ե - 5 (14%)	Գ - 4 (11%)	Բ - 2 (5,5%)	-	
4. Առողջապահության նախարարություն	41	Դ - 18 (4,5%)	Գ - 10 (24%) Ա - 10 (24%)	Ե - 2 (5%)	Բ - 1 (2%)	-	
5. Տրանսպորտի նախարարություն	18	Ա - 5 (28%) Դ - 5 (28%) Ե - 5 (28%)	Բ - 2 (11%)	Գ - 1 (5%)	-	-	
6. Արդյունաբերության և առևտրի նախարարություն	45	Ա - 24 (53%)	Գ - 7 (16%) Դ - 7 (16%)	Ե - 6 (13%)	Բ - 1 (2%)	-	
7. Վիճակագրության, պետական ռեզիտրի և վերլուծության նախարարություն	31	Ե - 12 (39%)	Ա - 11 (35%)	Բ - 3 (10%) Դ - 3 (10%)	Գ - 2 (6%)	-	
8. Բնապահպանության նախարարություն	57	Ա - 17 (30%)	Դ - 16 (28%) Ա - 11 (27%)	Գ - 12 (21%) Դ - 9 (23%)	Բ - 7 (12%) Ե - 4 (10%) Գ - 4 (10%)	Ե - 5 (9%)	
9. Սեփականաշնորհման նախարարություն	40	Գ - 20 (30%) Դ - 20 (30%)	Ա - 16 (24%)	Ե - 8 (13%)	Բ - 2 (3%)	-	
10. Գիտության և կրթության նախարարություն	66	Ա - 23 (40%)	Բ - 12 (21%)	Դ - 10 (16%)	Ե - 9 (16%)	Գ - 3 (5%)	
11. Գյուղատնտեսության նախարարություն	58	Ա - 18 (31%)	Դ - 14 (24%) Դ - 7 (11%)	Գ - 11 (19%)	Բ - 9 (16%)	Ե - 6 (10%)	
12. Կրթության նախարարություն	60	Ա - 52 (87%)	Դ - 12 (30%)	Բ - 1 (2%)	Ե - 3 (7,5%)	Բ - 2 (5%)	
13. Երևանի նախարարություն	40	Ա - 19 (47,5%)	Գ - 28 (25%) Դ - 7 (26%)	Ա - 25 (24%) Գ - 1 (4%)	Բ - 14 (12%)	Ե - 6 (4%)	
14. Զարգացման նախարարություն	109	Դ - 36 (35%)	Դ - 7 (26%) Ե - 7 (26%)	Գ - 1 (4%)	-	-	
15. Ֆինանսների նախարարություն	25	Ա - 10 (40%)	Դ - 13 (30%)	Գ - 7 (16%)	Ե - 5 (13%)	Բ - 3 (8%)	
16. Էներգետիկայի նախարարություն	42	Ա - 14 (33%)	Դ - 13 (30%)	Գ - 7 (16%)	Ե - 5 (13%)	Բ - 3 (8%)	

Նախարարությունների կողմից իրականացվող յուրաքանչյուր գործառույթի տեսակարար կշիռը գործառույթների ընդհանուր ծավալում ընդհանրապես տեսելով ունի հետևյալ պատկերը՝ Ֆարսիսի անուրան և Վաղարշապատի մշակման գործառույթներ՝ Ա - 316 (89%), Գանակարգման և կատարողականների մոնիտորինգի գործառույթներ՝ Դ - 188 (25%), Կանոնակարգող և կարգավորող գործառույթներ՝ Գ - 123 (18%), Օճանալի գործառույթներ՝ Ե - 82 (11%), Ցածայությունների մատուցման գործառույթներ՝ Բ - 79 (10%):

Քաղաքացիական ծառայության մասին օրինագծի հիմնադրույթները

Ներկայումս, որպես ՊԿՅ-ի բարեփոխումների առանցքային մաս, կարևորվում են պետական ծառայության հարաբերությունների կանոնակարգման և կիրարկման հարցերը և մասնավորապես քաղաքացիական ծառայության համակարգի (ԹԾՅ) ձևավորումը և կայացումը: Վերջինիս ներդրմամբ ՅՅ կառավարությունը նախատեսում է արդյունավետ և կշռադատված կադրային քաղաքականության իրականացում, պետական ապարատը որակյալ, բանիմաց և բարոյական բարձր հատկանիշներով օժտված, քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ կադրերով համալրում, ծառայողների սոցիալական և իրավական պաշտպանության պետական երաշխիքների ապահովում:

Օրենքով կամրագրվի,

- ❖ որ քաղաքացիական ծառայության բոլոր պաշտոնները կարող են զբաղեցնել միայն բաց և թափանցիկ մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձինք:
- ❖ որ մրցույթն անցկացվելու է մրցութային հանձնաժողովի կողմից տեստավորման և հարցազրույցի փուլերով:
- ❖ քաղաքացիական ծառայողին ներկայացվող հիմնական պահանջները և լիազորությունների հստակ շրջանակը՝ տվյալ պաշտոնի անձնագրով, որը հայկական իրավական դաշտում համարվում է նոր ինստիտուտ, ինչպես նաև օրենքի գործողության ոլորտը, պաշտոնների դասակարգման, քաղաքացիական ծառայողների դասային աստիճանների, պաշտոններում նշանակման, քաղաքացիական ծառայողների ատեստավորման, վերապատրաստման և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվի, քաղաքացիական ծառայողների իրավական վիճակի, նրանց խրախուսման, կարգապահական տույժի ենթարկելու, պաշտոնից ազատելու, ինչպես նաև քաղաքացիական ծառայության ղեկավարման և կազմակերպման, քաղաքացիական ծառայության անցնելու հետ կապված հարաբերությունները:

Նախագիծը նաև մանրամասն կանոնակարգել է ներկայացվող պահանջներին քաղաքացիական ծառայողների համապատասխանության պարբերական ստուգումը՝ սահմանելով նրանց գնահատման, ատեստավորման և վերապատրաստման համակարգերը: Բավական իրատեսորեն նախատեսվել են նաև քաղաքացիական ծառայողների իրավունքների, պարտականությունների, նրանց ներկայացվող սահմանափակումների և պատասխանատվության շրջանակները, ինչպես նաև այն առանձնահատուկ դրույթները, որոնք վերաբերում են խրախուսման, կարգապահական տույժերի, պաշտոնից ազատելու մեխանիզմներին: Օրենքով ձևավորվելու են քաղաքացիական ծառայության ղեկավարման և կազմակերպման, քաղաքացիական ծառայության միասնական պետական քաղաքականություն վարող մարմիններ, նաև անկախ մարմին՝ քաղաքացիական ծառայության խորհուրդ, և համապատասխան մարմինների աշխատակազմերի ղեկավարներ:

Իհարկե, ասվածը չի նշանակում, թե օրենքի ընդունումից հետո կադրային քաղաքականության իրականացման բոլոր խնդիրները միանգամից կլուծվեն: Վերջինիս արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է նաև ստեղծել համապատասխան կառուցակարգեր, մշակել օրենքի կիրարկումն ապահովող բազմաթիվ նորմատիվ իրավական ակտեր (ի դեպ, դրանց մշակման աշխատանքներն ընթացքի մեջ են), ինչպես նաև ապահովել առկա համակարգի սահուն և բնականոն անցումը ԹԾՅ-ի, ինչը կարգավորվելու է հիշյալ օրենքի անցումային դրույթներով:

Ընթացքում են նաև պետական ծառայության այլ տարատեսակների՝ դիվանագիտական, հարկային, մաքսային ծառայությունների մասին օրենքների նախագծերի մշակման աշխատանքները:

Միաժամանակ հարկ է նշել, որ պետական ծառայության հարաբերությունների կանոնակարգումները իրենց նպատակին չեն ծառայի, եթե պետական կառավարման համակարգի բարեփոխումների բոլոր ուղղությունները չընթանան զուգահեռ և փոխկապակցված:

Արևիկ Պետրոսյան, ՅՅ արդարադատության նախարարի տեղակալ,
ՅՅ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի քաղաքացիական ծառայության բարեփոխումների աշխատանքային խմբի ղեկավար

Ահարոն Սկրտչյան, ՅՅ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի քաղաքացիական ծառայության բարեփոխումների աշխատանքային խմբի խորհրդական

Օրենքի նախագծով նախանշված է նաև քաղաքացիական ծառայողի էթիկայի կանոնների մշակումը: Նման նախաձեռնությամբ հանդես է եկել «Հայ պետական ծառայողների միություն» հասարակական կազմակերպությունը՝ ձևակերպելով քաղաքացիական ծառայողի բարոյական վարքականոցի սկզբունքները:

Սույն կանոնների ներդրման նպատակահարմարության և նշանակության նկատմամբ մոտեցումները պարզելու նպատակով անկախ փորձագետների կողմից անցկացվել են ուսումնասիրություն–հարցումներ հինգ մարզպետարաններում (ներդիր 1.8):

1.8 Ներդիր

Ծառայողների կարծիքը «Քաղաքացիական ծառայողի էթիկայի կանոնների» ներդրման վերաբերյալ

Քաղաքացիական ծառայողի (ՔԾ) էթիկայի կանոնների մշակման փորձ է արվել Հայ պետական ծառայողների միության կողմից (ՀԿ): Սույն կանոնների (ընդհանուրը վեցը կետ) վերաբերյալ անցկացված ուսումնասիրություն հարցումները հինգ մարզպետարաններում ընդգրկել են 198 մասնակիցների, որոնց 72%-ը աշխատանքային տարիքում (25-55 տարեկան) արական սեռի ներկայացուցիչներ են, որը շատ բնորոշ է մեր կառավարման ապարատին: Հարցվողների 72 %-ը գտնում է, որ էթիկայի կանոնները նշանակալի դեր կխաղան ՔԾ գործունեության կարգավորման գործում:

Հարցվողների մեծ մասը ընդունում է, որ ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որը ՔԾ-ից պահանջում է ղեկավարվել պետական շահերով և պաշտպանել որոշումների ընդունման և իրականացման ընթացակարգերը (1.1 կետը), նրանք կողմնակից չեն իրենց աշխատանքում քաղաքական գործունեություն ծավալելուն: ՔԾ-ները միանշանակ անթույլատրելի են համարում ոչ մասնագիտական գործունեությունը:

Հարցվողների 60%-ը սկզբունքորեն ընդունում է, որ քաղաքացիական ծառայությունը արտոնությունների համակարգ չէ (1.2 կետը), այլ իրենց ազատությունների կամուրջն սահմանափակում, սակայն համաձայն չեն (70%) դրանց ամրագրմանը: Բացասական արձագանք է ստացվել նաև ՔԾ-ի ծառայությունից դուրս, իշխանության հետ բախումների մեջ մտած անձանց հետ գործնական շփումներից խուսափելու վերաբերյալ (1.5) կետը, որը, թերևս վերանայման կարիք ունի քանի որ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծում ամրագրված է ծառայությունից դուրս ՔԾ-ի՝ իր գործողություններում ազատությունը:

Քաղաքական իշխանության հանդեպ լոյալությանը, քաղաքական զսպվածությանը, օրենսդրության պահանջների պահպանմանը, ազնվության սկզբունքների կիրառմանը (2 և 3 կետերը) հարցվողները լիովին համաձայն են:

Ծառայողական գործունեության ընթացքում անձնական խոստումների անթույլատրելիության մասին դրույթը (4 կետը) առանձին ուշադրության է արժանի պատասխանների բևեռացմամբ, քանի որ արտացոլում է հայ իրականությունում հարաբերությունների ձևավորված դաշտը, որտեղ պարտականությունների կատարումը, հատկապես ծառայությունների մատուցումը, առանց «անձնական խոստումների» հիմնականում չի իրականացվում:

Ծառայողական պարտականությունների կատարման, կոլեգիալ վարք ցուցաբերելու պահանջը ՔԾ-ի կողմից ընդունելի է համարվում (5 և 6 կետեր): Այստեղ ևս առանձնանում է քաղաքական հետագա կարիերայի հնարավորությունը՝ ծառայությունից ազատվելուց հետո: Հարցվողների 46.5%-ը համաձայն չէ այս դրույթի հետ: Սա նույնպես այն ավանդույթն է, որ կառավարման ապարատի պաշտոնները սանդուղք են քաղաքական կարիերայի համար:

Արմեն Խուդավերդյան

ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի քարտուղար

ՊԿՀ-ի կառուցվածքային բարեփոխումների արդյունավետ իրականացումից ակնկալվելիք հիմնական արդյունքները ներառում են պետական կառավարման մարմինների օպտիմալ թվաքանակի և կառուցվածքի սահմանում, կառավարման կենտրոնական մարմինների որոշակի լիազորությունների փոխանցում գործադիր այլ մարմինների, տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեությանը պետության միջամ-

տության նվազում, հասարակության կողմից կառավարության նկատմամբ վստահության ամրապնդում, ստվերայնության մակարդակի իջեցում, կառավարման կայուն համակարգ, պետական ծառայողների անձնական պատասխանատվության բարձրացում, առանձին բնագավառներում ինքնակառավարվող՝ պետության կողմից կարգավորվող համակարգերի ներդրում:

1.5.2 Տեղական ինքնակառավարում

Տեղական ինքնակառավարումը ժողովրդավարական պետության հիմքն է: Լինելով ժողովրդին անենամոտ կանգնած իշխանությունը, տեղական ինքնակառավարումն ապահովում է քաղաքացիական հասարակության ձևավորումը, իշխանության ապակենտրոնացումը, տնտեսության զարգացումը և բնակչության կենսապահովման խնդիրների լուծումը:

Ինչպես ետսոցիալիստական այլ երկրներում, Հայաստանի Հանրապետությունում ևս անկախացումից հետո ձևավորվեց տեղական ինքնակառավարման համակարգ: Վերջինիս արմատավորումն ապահովվեց

քաղաքականապես՝ 1995թ. ընդունված Սահմանադրությամբ և 1996թ. ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, գործնականում՝ 1996 և 1999թթ. կայացած տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) ընտրությունների արդյունքում, տնտեսապես՝ ՏԻՄ-երին ամրագրված համայնքային սեփականությամբ և ինքնուրույն բյուջեով, կազմակերպորեն՝ համապատասխան լիազորություններով օժտված ՏԻՄ-երի ձևավորմամբ, օրենսդրորեն՝ տեղական ինքնակառավարման իրավահարաբերությունները կարգավորող օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով (ներդիր 1.9):

Տեղական ինքնակառավարումը և ՀՀ օրենսդրությունը

1.9
ներդիր

Սահմանադրությունը և տեղական ինքնակառավարման մասին օրենքը հանդիսանում են համակարգի ձևավորման, կայացման և զարգացման հիմքը: Տեղական տուրքերի և վճարների մասին օրենքով համայնքներին հնարավորություն է ընձեռվում իրենց կողմից իրականացվող գործառնությունների և ծառայությունների դիմաց լրացուցիչ ֆինանսական միջոցներ մուտքագրել տեղական բյուջեներ, որոնց դրույքաչափերը համայնքը որոշում է ինքնուրույնաբար:

Ֆինանսական համահարթեցման օրենքով պետական բյուջեի ներքո ստեղծվել է հիմնադրամ, որի միջոցները օրենքով սահմանված կարգով, ֆինանսական համահարթեցման սկզբունքի համաձայն, բաշխվում են համայնքների միջև, դրանով իսկ օժանդակելով և նպաստելով ֆինանսապես թույլ համայնքների զարգացմանը:

Բյուջետային համակարգի մասին օրենքով կանոնակարգվում են պետական և տեղական բյուջեների փոխհարաբերությունները, բյուջետավարման գործընթացները և պետական բյուջեի պարտավորությունները համայնքների նկատմամբ:

Քաղաքաշինության, տրանսպորտի, գույքահարկի, հողի հարկի և այլ օրենքներով սահմանվում են քաղաքաշինության և տրանսպորտի ոլորտում համայնքների իրավունքները և տեղերում համայնքային խնդիրները լուծելու հնարավորությունները, ինչպես նաև համայնքի բյուջեի հարկային մուտքերի ապահովումը: Տեղական ինքնակառավարման համակարգի կայացման և զարգացման համար առանցքային նշանակություն ունի վարչատարածքային բաժանման մասին օրենքը: Ընտրական օրենսգիրքը կանոնակարգում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության կարգը:

Սկրսիչ Գիմիչյան

1995թ. ընդունված Սահմանադրությունը օրենսդրական հիմք հանդիսացավ քաղաքակրթության փորձի վրա խարսխված տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման համար: Սահմանադրությունը սահմանեց տեղական ինքնակառավարման համակարգի կայացման համար կարևորագույն դրույթներ, ամրագրեց, որ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է պետական մարմինների և ՏԻՄ-երի միջոցով: Դրանք հստակորեն տարանջատվեցին միմյանցից, ինչպես նաև ընդգծվեց այդ մարմինների իրավահավասարությունը, բացառվեց կառավարման մի մարմնի ենթակայությունը մյուսին:

ՏԻՄ-երի (համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի) ժողովրդի կողմից փակ, գաղտնի քվեարկության և ուղղակի ընտրությունների միջոցով ձևավորումը երաշխավորում է համայնքային իշխանությունների անկախությունը, սեփական պատասխանատվությամբ ինքնուրույն գործելու, ինչպես նաև

համայնքային սեփականությունը ինքնուրույն տնօրինելու և ինքնուրույն կադրային քաղաքականություն իրականացնելու իրավունքը,

համայնքային լիազորությունները կարելի է սահմանել միայն օրենքով, որով բացառվում է տեղական ինքնակառավարման համակարգի ենթակայությունը պետական կառավարման մարմիններին և նրանց կողմից ընդունված որոշումներին, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Տեղական ինքնակառավարման համակարգին վերաբերող Սահմանադրության թերություններից պետք է համարել համայնքների կայացման և գործունեության երաշխիքների բացակայությունը (չեն ուրվագծվում լիազորությունների և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների նվազագույն շրջանակները): Համակարգի կայացմանը խոչընդոտում է նաև սահմանադրական այն դրույթը, որով կառավարությունը մարզպետի ներկայացմամբ կարող է

անվստահություն հայտնել համայնքի ղեկավարին: Բացի դրանից, ոչ միայն չեն գործում որոշ սահմանադրական դրույթներ, այլև ընդունվել և գործում են օրենքներ, որոնք ուղղակի հակասության մեջ են մտնում դրանց հետ (ներդիր 1.10):

Սահմանադրության հետ հակասության մեջ է նաև պետական գնումների մասին օրենքը, որը խախ-

տում է համայնքի՝ իր սեփականությունն ինքնուրույն տնօրինելու սահմանադրական իրավունքը: Իր սեփականությունը և ֆինանսական միջոցներն ինքնուրույն տնօրինելու համայնքի իրավունքը հաճախ խախտվում է նաև պետական կառավարման և զանձապետական օղակների կողմից:

1.10 ԿԵՐԴԻՐ ԶՅ ՎԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽԱՄԱԿԱՐԳԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեղական ինքնակառավարման խամակարգում ի հայտ են եկել տարաբնույթ թերություններ, որոնցից արժե առանձնացնել հետևյալները.

- ա) տեղական ինքնակառավարման մասին օրենքի բազմաթիվ դրույթներ հռչակում են համայնքի այս կամ այն իրավունքը, սակայն դրա իրականացման մեխանիզմների բացակայությունը համայնքներին զրկում է դրանք կիրառելու հնարավորությունից: Բացի դրանից, օրենքի որոշ դրույթներ ընդհանրապես չեն գործում՝ հիմնականում պետական կառավարման խամակարգի կողմից օրենքով սահմանված կարգով իրենց պարտականությունները չկատարվելու հետևանքով:
- բ) համապատասխանեցված չեն համայնքի պարտադիր լիազորությունները և դրանց իրականացման համար անհրաժեշտ տեղական բյուջեներից ամրագրված ֆինանսական միջոցները:
- գ) խամակարգի հիմնադրման պահից պետական բյուջեից չեն ֆինանսավորվում օրենքով համայնքներին պետության կողմից պատվիրակված լիազորությունները, որի հետևանքով դրանք փաստացի չեն իրականացվում կամ իրականացվում են մասնակիորեն՝ համայնքի սեփական միջոցներով:
- դ) օրենքը հաշվի չի առնում մեծ և փոքր համայնքների առանձնահատկությունները և հնարավորությունները, որոնց հետևանքով փոքր համայնքներին վերապահված բազմաթիվ լիազորություններ չեն իրականացվում:
- ե) հստակեցման կարիք ունեն պետական և տեղական իշխանությունների փոխհարաբերությունները, չեն կանոնակարգված պետական հսկողության իրականացման մեխանիզմները:

Սկրտիչ Գիմիշյան

Վարչապարածքային խամակարգը: Տեղական ինքնակառավարման փարածքային հիմքերը

ՀՀ-ում տեղական ինքնակառավարման խամակարգի ձևավորման համար ելակետային նշանակություն ունեն նաև «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը (1995թ.): ՀՀ տարածքը բաժանվեց 10 մարզի և մարզի կարգավիճակ ունեցող Երևան քաղաքի, որոնցում իրականացվում է պետական տարածքային կառավարում: Վերջիններս հանդիսանալով պետական կառավարման ստորին օղակներ՝ կառավարումն իրականացնում են ՀՀ նախագահի հրամանագրերի համապատասխան: Տեղական ինքնակառավարումը իրականացվում է վարչատարածքային բաժանման մասին օրենքով սահմանված 930 համայնքներում՝ 47 քաղաքային, Երևանի 12 թաղային և 871 գյուղական:

Վարչատարածքային բաժանման խամակարգի մշակման հիմնական սկզբունքը հետևյալն էր. հաշվի առնելով համայնքների բնակչության թիվը, տնտեսական, աշխարհագրական, պատմական և այլ գործոններ՝ ամեն բնակավայր օժտել ինքնակառավարման իրավունքով:

Քանի որ ՀՀ-ում նշված գործոնները խիստ տարաբնույթ են, վարչատարածքային բաժանման արդյունքում գոյացած համայնքներն զգալիորեն տարբերվում են միմյանցից՝ բնակչության թվով, ըստ աշխարհագրական դիրքի, զարգացածության աստիճանի և այլ հատկանիշներով: Համայնքների 21,0%-ը լեռնային է՝ ծովի մակերևույթից 1700-2000 մետր բարձրության վրա, իսկ 15,4%-ը՝ բարձր լեռնային է և տեղակայված է ծովի մակերևույթից 2000 և ավելի մետր բարձրության վրա, 18,7%-ը սահմանամերձ է:

Նշված տարբերությունների ու առանձնահատկությունների բացահայտումը կարևոր նշանակություն ունի համայնքների նկատմամբ տարբերակված պետական քաղաքականության մշակման համար: Մասնավորապես որոշակի արտոնությունների, զեղչերի ու հավելումների կառուցակարգեր են գործում սահմանամերձ համայնքների համար: Նկատի ունենալով, որ ՄԱԿ-ի որոշմամբ 2002թ. հայտարարվել է «Լեռների տարի», ցանկալի կլիմեր հավելյալ ուշադրություն դարձնել լեռնային համայնքների հոգսերին: Համայնքները միմյանցից խիստ տարբերվում են նաև բնակչության թվով: Միջին հաշվով հանրապետության 1 համայնքում բնակվում է 4084 մարդ, առանց Երևան քաղաքի՝ 2777,

Իսկ միայն գյուղական համայնքներում՝ 1443 մարդ⁸: Ընդ որում, կա մինչև 100 բնակիչ ունեցող 36 համայնք, 101-ից 200 բնակիչ ունեցող՝ 60, 201-ից 500 բնակիչ ունեցող՝ 176, 501-ից 1000 բնակիչ ունեցող՝ 185, 1001-ից 3000 բնակիչ ունեցող՝ 318, 3001-ից բարձր բնակիչ ունեցող՝ 96 գյուղական համայնք⁹: Փոքր համայնքներում մեծ դժվարություններ են ստեղծվում տեղական ինքնակառավարման լիազորությունների կատարման համար:

Ապահովելով բնակավայրերի տեղական ինքնակառավարման իրականացման իրավունքը՝ հաշվի չի առնվել այդ իրավունքի իրականացման համայնքների ունակությունը, առանց որի այն կրում է սոսկ դեկլարատիվ բնույթ:

Ակնհայտ է, որ վարչատարածքային համակարգում անհրաժեշտ է իրականացնել բարեփոխումներ, հաշվի առնելով Հայաստանի առանձնահատկությունները՝ ձեռնամուխ լինել համայնքների թվաքանակի օպտիմալացմանը՝ համայնքները խոշորացնելով ի հաշիվ այն համայնքների, որոնց բնակավայրերը միաձուլված են: Դա հնարավորություն կտա խուսափել ֆինանսական միջոցների փոշիացումից, միավորված միջոցների հաշվին լուծել այդ համայնքների սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, բարձրացնել միջոցների օգտագործման արդյունավետությունը:

Տեղական ինքնակառավարման համակարգը, համայնքի ֆինանսական ապահովվածությունը, համայնքի սեփականությունը

ՏԻՄ-երի գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է համայնքների ֆինանսական ապահովվածության աստիճանից (աղյուսակ 1.4): ՀՀ համայնքների 2000թ. պլանային բյուջեն 20,0 մլրդ. դրամ էր, փաստացին՝ 13,9 մլրդ. դրամ (հարկային մուտքերի և դոտացիաների կրճատման պատճառով), որը համապատասխանաբար կազմում էր ՀՀ համախմբված բյուջեի 8,1 և 6,8%-ը: Անցած տարիների ընթացքում այդ ցուցանիշի էական բարելավում չի նկատվել: Համեմատության համար արժե նշել, որ եվրոպական երկրներում այդ ցուցանիշի նշագիծը 30%-ից բարձր է: Մտահոգիչ է նաև միջին հաշվով մեկ համայնքին ընկնող բյուջետային միջոցների գումարի մեծությունը, որը ՀՀ համայնքներում 2000թ. կազմել է 21,6 մլն. դրամ, առանց Երևանի թաղային համայնքների՝ 14,0 մլն. դրամ, իսկ զուտ գյուղական համայնքներում՝ 7,8 մլն. դրամ: Ընդ որում, մինչև 500 բնակիչ ունեցող գյուղական համայնքների բյուջեները, որպես կանոն, չեն գերազանցում 5 մլն. դրամի սահմանագիծը¹⁰:

ՀՀ ՏԻՄ-երի ֆինանսական ապահովվածության մակարդակը¹¹

Աղյուսակ

1.4

N	Ցուցանիշներ	1999		2000	
		պլան	փաստացի	պլան	փաստացի
1.	ՏԻՄ-երի եկամուտների տեսակարար կշիռը համախմբված բյուջեի եկամուտների մեջ (%)	8,5	5,2	8,1	6,8
2.	Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի եկամուտների մեջ (%)	77,5	81,3	57,3	62,5
3.	Համայնքի բյուջեի եկամուտների պլանի կատարումը (%)	-	58,6	-	68,9

⁸ Հաշվարկի հիմքում դրվել են ՀՀ պաշտոնական վիճակագրության տվյալները, ըստ որոնց ՀՀ բնակչությունը նշված ժամանակահատվածում կազմել է 3798,2 հազ. մարդ:

⁹ Տեղական ինքնակառավարման հիմունքներ. Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Պետական ծառայություն», 2000, էջ 43-45, ինչպես նաև ՀՀ կառավարության տարածքային վարչության նյութերը:

¹⁰ Ապակենտրոնացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Պետական ծառայություն», 2000, էջ 24-26:

¹¹ Աղյուսակը կազմված է ՀՀ ֆինեկոնոմիկոս տարեկան հաշվետվությունների հիման վրա:

Ֆինանսական այսպիսի նվազ ապահովվածությունը ՏԻՄ-երի պարտադիր և պատվիրակված լիազորությունների թերակատարման հիմնական պատճառն է: Ըստ ուսումնասիրության արդյունքների, ՏԻՄ-երը իրականացնում են իրենց լիազորությունների միջին հաշվով 30%-ից ոչ ավելին¹²: Մինչդեռ տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիայում (հոդված 9, կ. 2) նշված է. «Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական միջոցները պետք է համաչափ լինեն սահմանադրությամբ կամ օրենքով տրված իրենց լիազորություններին»¹³:

Ներկա իրավիճակում կարելի է դիտարկել հիմնախնդրի լուծման երկու հնարավոր տարբերակ: Առաջին՝ կրճատել ՏԻՄ-երին վերապահված լիազորությունները և դրանք համապատասխանեցնել ֆինանսական ապահովվածության առկա մակարդակին: Երկրորդ տարբերակը ֆինանսական լրացուցիչ միջոցների որոնումն է և դրանք ներկա լիազորությունների ապահովման մակարդակին հասցնելը: Սա, անկասկած, դժվարին խնդիր է, սակայն այս տարբերակը, մեր կարծիքով, միակ արդյունավետն է:

Աղյուսակ 1.4-ից երևում է, որ համայնքի բյուջեի շուրջ 2/3-ը կազմում են սեփական եկամուտները, որոնք բաղկացած են հարկերից, տուրքերից և ոչ հարկային վճարներից: Համայնքների ինքնավարության և տնտեսական անկախության ապահովման համար նախ պետք է ավելացվեն սեփական եկամուտները: Դա կարող է կատարվել պետական այլ հարկատեսակներից որոշ տոկոսադրույքներ համայնքի բյուջեին ամրակցելու միջոցով: Նշենք, որ այդպիսի կարգ կիրառվում է այլ երկրներում. օրինակ՝ եվրոպական երկրներում և Ռուսաստանի Դաշնությունում տեղական բյուջեներին են ուղղվում շահութահարկի, ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի որոշակի մասնաբաժիններ¹⁴: Երկրորդ՝ կարելի է ավելացնել տեղական տուրքերի ու վճարների բաժինը: Եվրոպական շատ երկրներում այդ բաժինը 25%-ից բարձր է¹⁵:

Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական ապահովվածության կարևոր ուղի է նաև պաշտոնական տրանսֆերտների (դոտացիաների ու

սուբվենցիաների) պլանի կատարումը: 1999թ. համայնքներին է տրանսֆերվել օրենքով պլանավորված տրանսֆերտների 48,7%-ը, իսկ 2000թ.՝ 64,9%-ը:

Համայնքի բյուջեի հարկային եկամուտների հավաքագրման համար նպատակահարմար է, մի կողմից, ուժեղացնել հարկային վարչարարությունը և, մյուս կողմից, ապակենտրոնացնել հարկահավաքման գործառնությունները՝ ՏԻՄ-երին տալով համայնքի բյուջեի եկամուտների հավաքագրման իրավասություններ:

Տեղական ինքնակառավարման համակարգի կայացման կարևորագույն պայմաններից է դրա համար անհրաժեշտ տնտեսական հիմքերի ստեղծումը, որի առանցքը համայնքի սեփականությունն է:

Ներկայումս համայնքի սեփականության ինստիտուտի կայացման գործընթացը շարունակվում է: Անցած չորս տարիների փորձը վկայում է պետական սեփականության ապակենտրոնացման քաղաքականության արդարացիությունը, սակայն դեռևս որոշակի խզվածություն է նկատվում համայնքի լիազորությունների ծավալի և դրանց կատարման համար համայնքին հատկացված սեփականության միջև: Պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման համար համայնքն այսօր չունի համարժեք գույքային միջոցներ: Հետևապես, անհրաժեշտ է ընդլայնել համայնքի սեփականության շրջանակները և ավելի խորացնել ապակենտրոնացման գործընթացները:

ՏԻՄ-երի լիազորությունների կատարման կարևոր ուղղություններից է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրավորումը, որն իրականացվում է առանձին ճյուղերի, ոլորտների և բնագավառների զարգացման, նպատակային-համալիր և արտակարգ իրավիճակային ծրագրերի կազմման և իրականացման միջոցով (ներդիր 1.11): Ծրագրերի արդյունավետության բարձրացման համար ներկայումս անհրաժեշտություն է առաջացել լուծել համայնքի համալիր զարգացման հեռանկարային և ընթացիկ ծրագրավորման մեթոդաբանական և գործնական բնույթի մի շարք իրատապ խնդիրներ:

1.11 Ներդիր

Համայնքային զարգացման ծրագրեր

Համայնքների զարգացումը ենթադրում է նաև համայնքների նախաձեռնության խթանում և դժվարությունները սեփական ուժերով հաղթահարելու վստահության ամրապնդում: ՏԻՄ-երի գործունեության արդյունավետությունը զգալիորեն բարձրանում է, երբ համայնքն ինքն է որոշում իր առջև ծառայած խնդիրների առաջնայնությունը և դրանց լուծման ճանապարհը, ինչպես նաև անմիջականորեն մասնակցում է դրանց իրականացմանը: Այս տեսակետից արժի հիշատակել ԳԿ-ները, մասնավորապես 1998թ. հիմնադրված «Շենը»՝ Հայաստանի բազմաթիվ համայնքներում իրականացված իր ծրագրերով:

Օրինակ, Լոռու մարզի Այրում համայնքում 1999 թ. «Շենի» աջակցությամբ կառուցվեց արևային չորանոց՝ տեղում մրգի և բանջարեղենի առատ բերքը վերանշակելու համար. առաջին իսկ տարում ստացված շահույթով համայնքը խմելու ջրագիծ անցկացրեց մինչև գյուղի կենտրոն, իսկ հաջորդ տարի, պատրաստի արտադրանքի իրացումից հետո, որոշվեց շահույթն օգտագործել ոռոգման նպատակով: Բացառապես փախստականներով բնակեցված Այրումը ամբողջ համայնքով ընդունեց ԳԳ քաղաքացիություն և ընտրեց նոր գյուղապետ, որն ակտիվորեն նպաստել է համայնքի կյանքի աշխուժացմանը:

¹² Տեղական ինքնակառավարման հիմունքներ. Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Պետական ծառայություն», 2000, էջ 227:

¹³ Եվրոպական խարտիա տեղական ինքնակառավարման մասին, Ստրասբուրգ, 15.10.1985:

¹⁴ Шугрина Е.С., Муниципальное право. М., Дело, 1999, стр. 230-231.

¹⁵ Васильев В.И.. Местное самоуправление. М., 1999. стр. 419.

Նոր գյուղապետ ընտրեց նաև փախստականներով բնակեցված մեկ այլ գյուղ՝ Արագածոտնի մարզի Դպրեվանքը, երբ այնտեղ հաջորդաբար իրականացվեցին մի շարք ծրագրեր: Խմելու ջրից զրկված համայնքում «Շենը» կառուցեց օրվա կարգավորիչ ջրամբար և երկու արևային չորանոց: Համայնքը նախաձեռնեց նաև բուժկետի հիմնումը:

Արագածոտնի մարզի Լուսակն գյուղում կառուցվեց 10 արևային չորանոց և անցկացվեցին ուսուցման մի քանի դասընթացներ: Չորանոցներին հաջորդեց 40 հա ծիրանի այգու հիմնումը, որը աշխատանք է ապահովում ոչ միայն Լուսակնի, այլև շրջակա գյուղերի բնակչության համար: Համայնքը իրագործեց գյուղը մայրուղուն կապող 1400 մ երկարությամբ ասֆալտապատ ճանապարհի կառուցումը: Իսկ վերջերս համայնքը դիմեց Սոցիալական ներդրումների հիմնադրամին խմելու ջրագիծ անցկացնելու խնդրանքով խոստանալով ապահովել անհրաժեշտ ներդրում:

2001թ. հունիսից ՀԲ-ի ֆինանսավորմամբ «Շենը» իրականացնում է «Տաթև և Գոշ գյուղերում համայնքային զարգացման ծրագրերի մշակման աջակցություն» ծրագիրը, որի արդյունքում երկու գյուղերում կստեղծվեն հիմնադրամներ, իսկ նախաձեռնող խմբին կտրվեն համայնքային կարևորագույն հիմնախնդիրները որոշելու և ծրագրերի առաջարկներ կազմելու հնարավորություններ:

Բազրատ Սահակյան

Համակարգի զարգացման ռազմավարությունը. համայնքի կառավարման համակարգի բարելավման ուղղությունները

Հայաստանում նախապատրաստվող սահմանադրական փոփոխություններով անհրաժեշտ է ապահովել տեղական ինքնակառավարման համակարգի կայացման և զարգացման երաշխիքները՝ ամրագրել համայնքների լիազորությունների և ֆինանսական միջոցների համարժեքությունը: Սահմանադրությամբ պետք է բացառել կառավարության կողմից համայնքներին անվստահություն հայտնելու իրավունքը՝ ապահովելով միայն դատական կարգով այդ մարմինների փոխհարաբերությունների կանոնակարգումը: Սահմանադրությամբ անհրաժեշտ է համայնքներին հնարավորություն ընձեռել տեղական ինքնակառավարման որոշ լիազորությունների համատեղ իրականացման համար օրենքով սահմանված կարգով միավորվել միջհամայնքային միավորումներում:

Տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է լրամշակել և զարգացնել օրենսդրական դաշտը՝ համապատասխանեցնելով այն եվրոպական խարտիայի պահանջներին, բարձրացնել օրենսդրական կարգապահությունը, համայնքների համար ապահովել դատական մարմինների միջոցով իրենց իրավունքների համար պայքարելու մեխանիզմներ: Անհրաժեշտ է ընդլայնել համայնքի ավագանու լիազորությունները և նրա կողմից համայնքի ղեկավարի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունը:

Նշված փոփոխությունները կարելի է ապահովել նախապատրաստվող տեղական ինքնակառավարման մասին ՀՀ նոր օրենքի ընդունման միջոցով:

Տեղական ինքնակառավարման համակարգի բարելավումը մեծապես պայմանավորված է նրանով, թե ինչպիսի արդյունավետությամբ են գործում կառավարման կառուցակարգերը, որքանով է ռացիոնալ հա-

մայնքի կառավարման կազմակերպական կառուցվածքը: Վերջինս այժմ կարիք ունի բարելավման: Խոսքը վերաբերում է՝

- ✦ տեղական ինքնակառավարման գործառույթների ընդլայնմանը և դրանց բնույթի փոփոխությանը,
- ✦ լիազորությունների կենտրոնացման ու ապակենտրոնացման նոր հաշվեկշռի զոյացման անհրաժեշտությանն ու դրանում ՏԻՄ-երի դերի բարձրացման միտումները հաշվի առնելուն,
- ✦ տեղական ինքնակառավարման կառուցվածքում կառավարման աստիճանների կրճատմանը և կառավարելիության նորմերի պահպանմանը,
- ✦ քաղաքային, թաղային և գյուղական համայնքների առանձնահատկությունները հաշվի առնելուն:

Տեղական ինքնակառավարման համակարգի կայացման գործում ներկայումս առաջնակարգ դեր է վերապահվում կադրային համարժեք ապահովվածությանը: Նկատի առնելով, որ համակարգի կադրերի նորացման և շարունակական ուսուցման տարեկան պահանջը (աշխատողների թվի 1/3-ը՝ 2000 մարդ) մեծ չափով գերազանցում է գործող ուսումնական բազաների հնարավորությունները, անհրաժեշտություն է առաջանում՝

- ✦ ընդլայնել ուսումնական կենտրոնների ցանցը,
- ✦ մշակել և գործողության մեջ դնել ուսուցման միասնական ստանդարտներ և ծրագրեր,
- ✦ լուծել կադրերի ուսուցման ֆինանսավորման հարցերը (ճիշտ կլիներ համայնքի բյուջեի հաշվին):

Կարևոր նշանակություն ունի տեղական ինքնակառավարման գիտական ապահովվածության մակարդակի բարելավումը: Տեղական ինքնակառավարման համակարգը լիարժեքորեն կարող է գործել միայն համապատասխան տեղեկատվական բազայի առկայության պայմաններում: Դրա համար անհրաժեշտ է ստեղծել տեղեկատվության նոր համակարգ (տեղեկատվության մշակման և փոխանցման համակարգչային և ինտեգրացված կոմունիկացիոն գլոբալ ցանցով), որը լի-

1.5 | ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

նի արժանահավատ, ամբողջական, համալիր, արդիական և միջազգային չափանիշներին համապատասխան:

Տեղական ինքնակառավարման մասին մշակվող նոր օրենքի նախագծով համայնքը ճանաչվում է իրավաբանական անձ և հողի սեփականության սուբյեկտ, համայնքային բյուջեներում ամրագրվում են տնտեսական գործունեության հետ կապված հարկերի մասհանումներ: Օրենքի նախագծով համայնքին է վերապահվում նաև շինարարության թույլտվության և հողահատկացման իրավունքը, որի շնորհիվ համայնքները, դառնալով շահագրգիռ կողմ, ակտիվորեն, առանց քաջքշուկների կնպաստեն փոքր և միջին բիզնեսի զարգացմանը:

Այսպիսով՝ տեղական ինքնակառավարման համակարգը, հաղթահարելով կայացման փորձությունները, թևակոխել է կուտակված փորձի հենքի վրա հետագա կատարելագործման փուլ:

Չամակարգի կատարելագործման համար առավել հրատապ է հետևյալ հիմնահարցերի լուծումը.

- ✦ վարչատարածքային բաժանման բարելավում և համայնքների թվաքանակի օպտիմալացում, ապակենտրոնացման աստիճանի խորացում և համայնքների լիազորությունների ընդլայնում,
- ✦ համայնքների ֆինանսական ապահովվածության բարելավում և դրա համապատասխանեցումը համայնքների պարտադիր և պատվիրակված լիազորությունների կատարմանը,
- ✦ համայնքների կառավարման բարելավում,
- ✦ տեղական ինքնակառավարման օրենսդրական դաշտի բարելավում և նոր օրենքի ընդունում ու ներդրում:

Չամակարգի ապագան մեծապես կախված կլինի իշխանությունների քաղաքական կանքից, նշված հիմնախնդիրների լուծման արդյունավետությունից, տեմպերից և աստիճանից:



Տնտեսություն.

**բարեփոխումներ,
զարգացում,
խոչընդոտներ**

2.1	Անցումային շրջանի արդյունքում ձևավորված տնտեսության մակրոտնտեսական բնութագիրը	65
2.2	Մասնավորեցման գործընթացը 1991-2001թթ.	67
2.3	Կապիտալի շուկա	71
2.4	Մրցակցության հավասար պայմանների ձևավորումը և պետական հատվածի կարգավորման խնդիրները	72
2.5	Դրամավարկային քաղաքականություն	73
2.6	Ֆինանսական շուկայի ձևավորմանն ուղղված բարեփոխումները	74
2.7	Հարկային քաղաքականություն	75
2.8	Հայաստանի ստվերային տնտեսությունը	77
2.9	Կոռուպցիան որպես երկրի տնտեսական զարգացման խոչընդոտ	81
2.10	Բյուջեարային գործընթաց	76
2.11	Ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորումը	78

Ներդիրներ

- 2.1 Բաժնետիրական ընկերություններ
- 2.2 Հայաստանի ստվերային տնտեսության ծավալների հաշվարկը
- 2.3 Կոռուպցիայի առանձնահատկությունները անցումային երկրներում
- 2.4 Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի պետական ծրագրի հիմնական ուղղությունները

Նկարներ

- 2.1 Փոքր օբյեկտների մասնավորեցման ընթացքն ըստ տարիների (1994-2001թթ.)
- 2.2 Միջին և խոշոր բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման ընթացքն ըստ տարիների (1995-2001թթ.)
- 2.3 Միջին և խոշոր բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման ընթացքն ըստ մարզերի
- 2.4 ՀՀ-ում հարկային եկամուտների և անվանական ՀՆԱ-ի հարաբերակցության գործակցի դինամիկան 1994-2000թթ.
- 2.5 Փողի պահանջարկի մեթոդով և ՀՀ ԱՎԾ կողմից հաշվարկված Հայաստանի ստվերային տնտեսությունը բնութագրող ցուցանիշները 1994-2000թթ.
- 2.6 ՀՀ պետական բյուջեի փաստացի հավաքագրված հարկային եկամուտները և ստվերային տնտեսության առկայության հետևանքով հարկային կորուստները 1994-2000թթ.
- 2.7 Կոռուպցիայի դասակարգումը
- 2.8 Կոռուպցիայի հիմնական պատճառները ՀՀ-ում
- 2.9 Պետական բյուջեի կատարողականը 1999-2000թթ.
- 2.10 ՕՈՒՆ-ի դինամիկան ՀՀ-ում

Աղյուսակներ

- 2.1 ՀՀ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները

Հայաստանում վերջին տասը տարիներին իրականացված տնտեսական բարեփոխումների առաջըը շուկայական տնտեսությանը բնորոշ հարաբերությունների, ինստիտուտների և կառավարման համակարգի ձևավորումն էր՝ նպատակաուղղված հետևյալ խնդիրների լուծմանը.

- ❖ գների և արտաքին առևտրի ազատականացում, դրամավարկային քաղաքականության իրականացման գործիքների և մեխանիզմների յուրացում,
- ❖ մասնավորեցում, սեփականության բազմաձևություն ու մրցակցության հավասար պայմանների ապահովում,
- ❖ ֆինանսական շուկայի ինստիտուտների ձևավորում և կայացում,
- ❖ հարկաբյուջետային համակարգի և հարաբերությունների վերակառուցում,
- ❖ պետական կառավարման համակարգի վերակառուցում և կառավարման նոր մեթոդների ու ձևերի յուրացում, բնական և տեխնոգեն մոնոպոլիաների գործունեության կանոնակարգում,
- ❖ սոցիալական պաշտպանության և երաշխիքների համակարգի ձևավորում,
- ❖ միջազգային շուկաների հետ փոխսերտաճում:

Վերը նշված բոլոր ուղղություններով իրականացվել են որոշակի քայլեր՝ օրենսդրական դաշտի ձևավորման և դրանց կիրառումը ապահովող մեխանիզմների ներդրման առումներով: Բարեփոխումների արդյունավետության գնահատման առումով հարկ է նշել, որ բոլոր ոլորտներում էլ եղել են բավականաչափ դրական, արդյունավետ լուծումներ, սակայն ընդհանուր առմամբ դրանք զուրկ էին ամբողջական և համակարգված մոտեցումներից և հաճախ ունեցել են անավարտ, թերի, որոշ դեպքերում՝ ուշացած և տարանջատ բնույթ: Առանձին դեպքերում բարեփոխումների հիմքում արմատական ու արդյունավետ լուծումներ ի սկզբանե չեն դրվել: Արդյունքում անգամ ժամանակի առումով առավել հաջողված օրենքներն ու որոշումներն իրենց դրական ներգործությամբ սահմանափակ են եղել, քանի որ նախորդի տրամաբանական շարունակությունը կազմող մյուս հատվածն աշխատում էր այլ կարգավորման դաշտում և շատ հաճախ կարգավորման հակառակ մոտեցումների հիման վրա: Իհարկե, անցումային փուլը եմթադրում և հաճախ պահանջում է ծագող խնդիրների նկատմամբ արագ արձագանք, սակայն դրանք այնուհետև անհրաժեշտ է ամրագրել համարժեք հիմնարար լուծումներով:

2.1

Անցումային շրջանի արդյունքում ձևավորված փոփոխության մակրոփոփոխական բնութագիրը

Անկախության ձեռք բերումից հետո Հայաստանում իրականացված տնտեսական բարեփոխումները մինչև 1994թ. ընթացել են տնտեսական կտրուկ անկման ֆոնի վրա, որի պատճառները կապված էին տարածաշրջանի ռազմաքաղաքական հակամարտությունների հետևանքով հիմնական տրանսպորտային ու հաղորդակցման ուղիների բնականոն աշխատանքի խաթարման, Հայաստանի փաստացի շրջափակման, էներգետիկ համակարգի ճգնաժամի, տնտեսական քաղաքականության արտաքին ուղենիշների պարտադրված փոփոխությունների, նախկինում ձևավորված տնտեսական կապերի կտրուկ խզման հետ: Դրանք միաժամանակ զուգակցվեցին տնտեսական բարեփոխումների

համար առաջնային՝ գների ազատականացման, երկրի արտաքին առևտրի և տնտեսական սահմանների բաց գործելակերպի հաստատման քայլերով, որոնց օբյեկտիվորեն բնորոշ է շուկոթերապիայի էֆեկտը: Այդ ամենը ուղեկցվում էր նաև նոր արտաքին շուկաներում ներկայացվելու և հաստատվելու փորձի բացակայության, արտադրանքի ցածր մրցունակության հետ: Նշված գործընթացների գործոնային ազդեցությունը բավականաչափ խորը հետք թողեց երկրի սոցիալ-տնտեսական կացության և տնտեսական բարեփոխումների հետագա ընթացքի վրա: Սկսած 1994թ-ից հաջողվեց կասեցնել երկրի տնտեսական անկումը և ապահովել մակրոտնտեսական որոշակի կայունություն (աղյուսակ 2.1):

Աղյուսակ 33 մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները¹

2.1

	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000
ՀՆԱ, մլն. ԱՄՆ դոլար		323.7	492.2	643.3	1286.5*	1597.0	1638.9	1892.3	1844.6	1915.2
ՀՆԱ աճի տեմպը, %, նախորդ տարվա նկատմամբ	88.3	58.2	91.2	105.4	106.9*	105.9	103.3	107.3	103.3	106.0
ՀՆԱ մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար		87.8	131.9	172	342.2	423.2	429.8	499	485.0	503
Սղաճ, %, նախորդ տարվա նկատմամբ	3 անգամ	13.4 անգամ	110 անգամ	18.6 անգամ	32.2	5.7	14.0	8.7	2.0	-0.8
ՀՀ դրամի և ԱՄՆ դոլարի փոխարժեքը	—	—	—	286.0	405.9	412.6	490.5	504.8	524.1	539.5
Արտահանում (առանց ծառայությունների), մլն. ԱՄՆ դոլար		82.9	156.2	215.5	270.9	290.3	232.5	220.5	231.7	300.5
Ներմուծում (առանց ծառայությունների), մլն. ԱՄՆ դոլար		205.9	254.2	393.8	673.9	855.8	892.3	902.4	881.3	884.7
Օտարերկրյա ուղղակի ներդրումներ, մլն. ԱՄՆ դոլար	19.6	2.4	0.8	9.2	24.4	17.6	51.9	232.4	139	120
Պետ. բյուջեի եկամուտներ և տրանսֆերտներ (% ՀՆԱ-ից)				15.8	18.1	14.9	15.8	17.7	19.1	16.7
Պետ. բյուջեի ծախսեր (% ՀՆԱ-ից)				21.8	24.1	19.3	18.4	21.5	23.2	21.6

* Աղյուսակում ՀՆԱ-ի բացարձակ մեծությունը տրված է ընթացիկ մերով և արտահայտված է արտարժույթով, ուստի այն կրում է նաև փոխարժեքի ազդեցությունը: Իսկ աճի տեմպերը հաշվարկելիս ՀՆԱ-ն վերցվել է համադրելի մերով ազային արժույթով արտահայտված: Դրանով է պայմանավորված 1994թ. և 1995թ. ՀՆԱ-ի բացարձակ մեծությունների և աճի տեմպերի կտրուկ տարբերությունը:

Միաժամանակ հարկ է նշել, որ ձեռք բերված կայունությունը չի դարձել տնտեսական համաչափ ու դինամիկ աճի հիմք, որը տարբեր ոլորտներում իրականացված բարեփոխումների անհամաչափության, բացթողումների և սխալների, վիճակը բարելավելու ոչ ամբողջական, այլ իրավիճակային լուծումների հետևանք է, որոնց արդյունավետությունը պայմանավորված է ընդունված որոշումների կատարման վարչարարության աստիճանով և օբյեկտիվորեն սահմանափակված է ժամանակի գործոնով:

Անհրաժեշտ է նշել, որ երկրի տնտեսությանը բնորոշ են արտահայտված անհամասնությունները, մասնավորապես՝ եռամսյակների ՀՆԱ-ի առավելագույն և նվազագույն մեծությունները տարբերվում են շուրջ 4 անգամ: Դա պայմանավորված է ՀՆԱ-ի կառուցվածքում գյուղատնտեսության գերակայությամբ, որը խորհրդային շրջանում կազմում էր 12-12,5%², իսկ անցումային տարիներին դրա տեսակարար կշիռը կազմել է առավելագույնը՝ 50,6%, նվազագույնը՝ 23,1%³, որն արձանագրվեց 2000թ.-ին (որպես խիստ երաշտի արդյունք):

ՀՆԱ-ի կառուցվածքը տարբերակված է նաև ըստ տարածաշրջանների: Երկրի տնտեսական ակտիվությունը բևեռացած է մայրաքաղաքում: 1998-99թթ. Երևանի ծավալը հանրապետական միջին ցուցանիշը մանրածախ առևտրում գերազանցել է 2,4 անգամ, ծառայությունների շուկայում՝ 2,2 անգամ⁴:

Երկրի տնտեսության համար անցանկալի գործոններից է արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը, որը վերջին տարիներին մեղմվելու միտում ունի, ի հաշիվ երկրում ներմուծմանը փոխարինող որակյալ ապրանքների արտադրության, ինչպես նաև արտահանման աճի:

1990թ. արտաքին պարտք չունեցող Հայաստանը 2000թ. վերջին կուտակել էր 859,5 մլն. ԱՄՆ-ի դոլարի չափով պարտք⁵, որի ընթացիկ սպասարկման ծավալները մոտեցել են կառավարելիության ռիսկի սահմանագծին:

Տնտեսության ներկայիս գերխնդիրներից է աղքատության հիմնահարցը. բնակչության շուրջ 55%-ի եկամուտները ցածր են աղքատության շեմից⁶: Այս պարագայում աղքատությունը վեր է ածվում տնտեսական զարգացման վրա ազդող ինքնուրույն գործոնի, որն ուղղակի սահմանափակում է ընդհանուր պահանջարկը: Աղքատությունը հետևանք է ոչ միայն աշխատատեղերի բացակայության, նաև արտադրության տեխնոլոգիական հետամնացության և աշխատանքի խիստ ցածր արտադրողականության: Բնակչության եկամուտների և ծախսերի խորացող բևեռացման պայմաններում երկրում չձևավորվեց հասարակության կայուն և բնականոն զարգացման համար անհրաժեշտ միջին խավը, որի եկամուտները բավարար կլինեին սեփական խնայողությունների հաշվին սոցիալական պաշտպանվածության որոշակի աստիճան ապահովելու և

¹ Տնտեսական բարեփոխումների առանձնահատկություններն ու փուլերը Հայաստանում 1991-98թթ., վիճակագրական պատկեր, ՀՀ վիճմախ, Երևան, 1999թ.: Տես աղբյուրը և ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 1997թ., 1998թ., 1999թ., 2000թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ վիճմախ.:

² Հայկական ԽՍՀ ժողովրդական տնտեսությունը 1988թ., 1989թ., 1990թ., ՀԽՍՀ վիճակագրական կոմիտե (ներկայացված է ՀՀԱ կառուցվածքը, որի մեթոդոլոգիան որոշակի տարբերվում է ՀՆԱ-ից):

³ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2000թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱԿԾ:

⁴ ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճ-վերլուծական զեկույց, Երևան, 2001, ՀՀ ԱԿԾ:

⁵ ՀՀ ԿԲ-ի 2001թ.-ի դրամավարկային քաղաքականության ծրագիր:

⁶ Տես 4-րդ աղբյուրը:

գործարար ակտիվությունը դրսևորելու համար: Դրա պատճառներից մեկն էլ այն է, որ ՀՀ-ում օրինականության շրջանակներում իրականացվող գործարարության միջոցով չափազանց դժվար է ապահովել բարեկեցիկ կենսամակարդակ, առավել ևս՝ հարստանալ: Այս գործոնը շատերի համար բարոյափոխման հիմք է Հայաստանից հեռանալու որոշում կայացնելու համար:

Միջին խավի չկայացման էական գործոններից է նաև միգրացիան, քանզի անցման տասը տարիներին երկրից հեռացավ հիմնականում բնակչության գործարար, ակտիվ մասը, որը ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու, այդ թվում որոշակի ներդրումներ կատարելու հնարավորություն ուներ: Հեռացան նաև բարձրորակ մասնագետներ: Բազմաթիվ մեկնողների համար դրդապատճառ են եղել ոչ թե ծագած դժվարությունները, այլ անցած տասը տարիների ընթացքում իշխանությունների՝ տնտեսական ու սոցիալական հստակ նպատակաուղղվածություն, ուղենիշներ, առաջադրված խնդիրների իրականացման ժամկետներ չպարունակող, դրանով իսկ՝ քիչ հուսադրող քաղաքականությունը, քաղաքական անկայունության պարբե-

րաբար ի հայտ եկող դրսևորումները, որը անվստահություն է առաջացրել ապագայի հանդեպ:

Միաժամանակ հարկ է նշել, որ 2001թ. առաջին կիսամյակում տնտեսությունում արձանագրված դրական միտումների, ստորև նշված ցուցանիշների փոխկապակցված վարքագծի հետագա պահպանումը հնարավորություն կտա ձեռք բերել տնտեսական աճի նոր որակ: Մասնավորապես առաջին կիսամյակում ծրագրավորվածի նկատմամբ գրեթե 100%-ով ապահովվեց բյուջեի եկամտային մասի կատարումը*, ՀՆԱ-ի աճը կազմեց 106.6%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 102.6%-ի դիմաց, ընդ որում, հունիսին մայիսի նկատմամբ վերջինիս աճը կազմեց 143.3%, որը չի կարելի բացատրել միայն ՀՆԱ-ի սեզոնայնության դրսևորմամբ: Նշված ժամանակահատվածում արտահանումը աճել է 9.3%-ով, ընդ որում, առանց վերջին տարիներին ավանդական դարձած թանկարժեք քարերի արտահանման, այդ աճը կազմել է շուրջ 30%, իսկ բացասական առևտրային հաշվեկշիռը նվազել է 18.3%-ով**: Վերը թվարկված ցուցանիշների փոխկապակցված և հետևողական զարգացումը որակապես նոր տնտեսական աճի հնարավորություն կընձեռի:

2.2

Մասնավորեցման գործընթացը 1991-2001 թթ.

Հայաստանում ժողովրդավարության հաստատումից հետո կառավարությունը անմիջապես ձեռնամուխ եղավ գյուղատնտեսական հողերի, իսկ այնուհետև պետական (հանրային) բնակարանային ֆոնդի և, որպես շուկային անցման գլխավոր պայման՝ պետական ձեռնարկությունների ու անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցման ծրագրերի իրականացմանը: Վերջին 10 տարիների մասնավորեցման գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլերի՝ սկզբնական (1991-1994), մեծածավալ (1995-1998) և դանդաղեցված (1998- 2001):

Մասնավորեցման **սկզբնական** փուլն իրականացվեց ընդգծված քաղաքական բաղադրիչի գերակայությամբ: Համայնավարության հիմքերի շուտափույթ վերացման նպատակով մասնավորեցումը դիտվեց տնտեսական վերափոխումների միակ փրկօղակ, այն ընթացավ ակնհայտորեն արագացված քայլերով: Դրա վառ օրինակը հողի սեփականաշնորհումն է, որը ետխորհրդային պետությունների շարքում Հա-

յաստանն իրականացրեց առաջինը՝ դեռևս 1991թ.: Արդյունքում, առանց գյուղացու համար անհրաժեշտ պետական աջակցության ամբողջական քաղաքականության մշակման, ձևավորվեցին չափազանց մասնատված հողակտորներով շուրջ 320 հազար գյուղացիական և գյուղացիական կուլեկտիվ տնտեսություններ, այն դեպքում, երբ գյուղատնտեսությունում բոլոր արտադրական միջոցները, ներառյալ նաև տեխնիկական, նախատեսված էին խոշոր տնտեսությունների համար:

Պետական գույքի մասնավորեցման գործընթացին նախապատրաստվելու առումով կարևոր քայլ էր ՀՀ կառավարության կողմից 1991-1992թթ. ընթացքում (մինչև սեփականաշնորհման մասին ՀՀ օրենքի ընդունումը) 335 (ընդհանուրի մոտ 4%-ը) «փոքր» օբյեկտների փորձնական վաճառքը (մանրածախ առևտուր, հասարակական սնունդ, կենցաղսպասարկում) դրանց կուլեկտիվներին 173,1 մլն. ռուբլի (մոտ 1,6 մլն. ԱՄՆ դոլար) ընդհանուր գնով:

* «ՀՀ 2001թ. պետական բյուջեի 1-ին կիսամյակի կատարման վերաբերյալ տեղեկանք»: ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատ:
 ** ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2001թ. հունվար-հունիս: ՀՀ ԱԿԾ ամսական գեկույզ:

Պետական գույքի մասնավորեցման գործընթացը սկսելու համար անհրաժեշտ օրենսդրական (իրավական) հիմքերի ձևավորման սկիզբը դրվեց 1992թ. օգոստոսին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» ՀՀ օրենքի ընդունումով:

Սակայն լուրջ ուշադրության չարժանացավ մի այնպիսի կարևոր հանգամանք, ինչպիսին նպատակադրումն է: Նույն մոտեցումը պահպանվեց նաև մասնավորեցման երկրորդ՝ 1997թ. դեկտեմբերին ընդունված «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքում: Նպատակադրումների անտեսումը բնականաբար բացասական ազդեցություն պետք է թողներ մասնավորեցման գործընթացի վրա:

Երկրորդ՝ **մեծածավալ** մասնավորեցման փուլին նախորդեց մասնակի անհատույց սեփականաշնորհումը. պետական գույքի հաշվեկշռային արժեքի 20 տոկոսը անհատույց տրվեց մասնավորեցվող ձեռնարկության՝ առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ ունեցող աշխատողներին: Փաստորեն մի քանի ամիսների (08.1994-04.1995) ընթացքում հանրապետության տարբեր ճյուղերի 1010 միջին ու խոշոր ձեռնարկություններ (ընդհանուրի 53%-ը) սեփականաշնորհվեցին այդ եղանակով, որը տվյալ ժամանակաշրջանում ձեռնարկություններում սկիզբ առած համատարած թալանի կանխման և սեփականատերերի սովոր խավի ստեղծման համար կարևոր միջոցառում էր: Դրա հետևանքով բաժնետեր դարձավ հանրապետության 126571 քաղաքացի, ինչը նախկին սոցիալիստական երկրների համեմատ աննախադեպ արդյունք էր: Սակայն, մյուս կողմից, ընկերությունների գործունեության բարելավմանը այն որևէ ձևով չնպաստեց:

Օգտագործելով համաշխարհային փորձը և նկատի ունենալով բնակչության ֆինանսական միջոցների անբավարար վիճակը՝ ՀՀ իշխանություններն ընտրեցին անհատույց մասնավորեցման ուղին: Համա-

ծայն օրենքի, մասնավորեցման ծրագրերում ընդգրկված ձեռնարկությունների արժեքի 30%-ը հավասար բաժիններով՝ 20000-ական դրամ անվանական արժեք ունեցող սեփականաշնորհման սերտիֆիկատներով, բաշխվեց հանրապետության բնակչությանը: Պետական գույքի մասնավորեցման գործընթացը մասսայական դարձնելու նպատակով սերտիֆիկատների կիրառումն ինքնին մնաց սոցիալական արդարության պահպանման պատրանք, քանի որ իրենց տրամաբանական շարունակությունը չստացան դրանցով ներդրումներ կատարելու համար անհրաժեշտ գործիքներն ու դաշտը, մասնավորապես ինվեստիցիոն հիմնադրամներն ու շուկայական այլ ենթակառուցվածքները: Փոխարենը քաղաքացիները, չունենալով այլընտրանք, սերտիֆիկատների հիմնական զանգվածը վերածեցին դրամի՝ հիմնականում անվանական արժեքի 30-40%-ի չափով: Այսպիսով սերտիֆիկատները, կյանքի կոչվելով որպես մասնավորեցման նպատակներին ծառայող վճարամիջոց, վերածվեցին մասնավորեցման վճարումները արհեստականորեն նվազեցնող գործոնի:


Անցած տարիների ընթացքում մասնավորեցված պետական գույքի դիմաց ընդհանուր գումարը կազմել է 130926,4 մլն. դրամ⁷ (մոտ 276,3 մլն. ԱՄՆ դոլար), որից սերտիֆիկատներով վճարը կազմում է 48,7%:

Հետաքրքրական է նաև մասնավորեցման գործընթացը դիտարկել ըստ պետական գույքի առանձին խմբերի՝ «փոքր» օբյեկտների, անավարտ շինարարության օբյեկտների և պետական բաժնետիրական ընկերությունների (միջին և խոշոր):

Մասնավորեցման օրենքի ընդունումից հետո իրականացված «փոքր» օբյեկտների վաճառքից ստացված ընդհանուր գումարը կազմում է 26893,8 մլն. դրամ (մոտ 59,5 մլն. ԱՄՆ դոլար), որում սերտիֆիկատներով վճարը կազմում է 88,7%: 1994-2001թթ. ժամանակահատվածում վաճառված «փոքր» օբյեկտների (ներառյալ վարձակալների կողմից ետ գնված և խոշոր ձեռնարկություններից առանձնացված օբյեկտները) շարժն ըստ տարիների ներկայացված է նկար 2.1-ում:

Նկար «Փոքր» օբյեկտների մասնավորեցման ընթացքն ըստ փառիների

2.1




Անավարտ շինարարության օբյեկտների (ԱՇՕ) մասնավորեցման գործընթացը, կարելի է փաստել, որ ըստ էության ձախողվել է: Ցայսօր մասնավորեցվել է ընդամենը 511,4 մլն. դրամի (մոտ 1,0 մլն. ԱՄՆ դոլար) 48 օբյեկտ: Այս հանգամանքը պայմանավորված է ԱՇՕ նկատմամբ գործարարների հետաքրքրությամբ՝ հաշվի առնելով ԱՇՕ-ները գործարկելու համար պահանջվող մեծ ծախսերը, ընդհատված շինարարության պատճառով տարիների ընթացքում դրանց քայքայվելը, թալանվելը, ոչ պիտանի դառնալը: Այդ ոլորտում նկատելի արդյունք ապահովելու և դրանք հասարակությանը օգ-

տակար դարձնելու համար անհրաժեշտ է լուրջ փոփոխություններ կատարել ԱՇՕ-ների մասնավորեցման պայմաններում և մեթոդներում:

Միջին և խոշոր պետական բաժնետիրական ընկերությունների (ՊԲԸ) մասնավորեցումը իր ընդգրկումով և արդյունքների նշանակությամբ առավել կարևոր էր: 1995թ. սկսած մասնավորեցվել են 1562 ընկերություններ կամ նախատեսվածի 63,4%-ը, ներառյալ 2001-2003թթ. ծրագրով նախատեսված 900-ը: ՊԲԸ մասնավորեցման ընթացքն ըստ տարիների ներկայացված է նկար 2.2-ում:

Միջին և խոշոր բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման ընթացքն ըստ տարիների

Նկար 2.2



1998թ. հետո մասնավորեցման գործընթացը խիստ դանդաղել է (նկարներ 2.1 և 2.2): Արդյո՞ք դրա պատճառը, ինչպես հաճախ է նշվում, սեփականաշնորհման սերտիֆիկատներից հրաժարումն է, կամ, այլ կերպ ասած, անցումը զուտ դրամական մասնավորեցման:


Մասնավորեցման 3-րդ՝ դանդաղեցված փուլի հիմնական պատճառը մասնավորեցման ենթակա գույքի ոչ ճիշտ գնահատման քաղաքականությունն է: Կարևորն օտարվող գույքի արժեքի ճիշտ որոշումը, կամ այդ նպատակի համար մի այնպիսի հիմնավոր ու կիրառելի մեթոդի մշակումն է, որը կարտացոլի պետական գույքն ընդունելի բնութագրերով ու արդյունավե-

տությամբ մասնավորեցնելու պայմանը: Արդեն մի քանի տարի է, ինչ պետության կողմից մասնավորեցման գործընթացում էական առաջխաղացում չլինելու փաստն անտեսվում է, և պետք է ընդունել, որ այն նորմալ հունի մեջ դնելու համար անհրաժեշտ են կտրուկ միջոցներ՝ մնացած պետական սեփականության հետագա փոշիացումը կանխելու համար:

ՀՀ-ում պետական գույքի մասնավորեցումն ընթանում է օրենքով սահմանված ձևերով. առավել տարածված է բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության ձևը, որը կիրառվել է 1058 ընկերության դեպքում՝ ներառելով հանրապետության բոլոր մարզերը (նկար 2.3):

Միջին և խոշոր բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման ընթացքն ըստ մարզերի

Նկար 2.3



Այս ձևով մասնավորեցման դեպքում առկա է օտարման ընդամենը մեկ պայման՝ վաճառվող բաժնետոմսերի արժեքը, և վաճառքից հետո տվյալ օբյեկտը պետության կողմից հիմնականում մատնվում է մոռացության: Պետության կամ մասնավորեցվող կողմի ստանձնած որևէ պարտավորության (տնտեսական կամ սոցիալական) բացակայության մթնոլորտում ներկայումս շատ ընկերություններ բաժին են հասել անարդյունավետ գործող և դրա համար որևէ պատասխանատվություն չկրող սեփականատերերի:

Միջին և խոշոր ՊԲԸ օտարումից ստացված գումարը կազմում է 103521,1 մլն. դրամ (մոտ 215,8 մլն. ԱՄՆ դոլար), որում զուտ դրամական մուտքերը կազմում են 61,6%:

Մասնավորեցման ընթացքում պետական բյուջե մուտք եղած միջոցների մեծությունն ինքնին կարևոր է, սակայն դրանց ծավալը չի կարող դիտարկվել որպես մասնավորեցման արդյունավետության չափանիշ. առավել կարևոր է, որ դրանք մասնավորեցվեն արդյունավետ կառավարող ներդրողների կողմից:

Ներկայիս դանդաղ մասնավորեցման գլխավոր պատճառներից են նաև վաճառվող ընկերություններում, ոչ իրենց մեղքով, ժամանակի ընթացքում կուտակված հսկայական պարտքերը, որոնք մասնավորեցման գործընթացը նախաձեռնելուց առաջ, համաձայն «Պետական գույքի մասնավորեցման մասին» ՀՀ օրենքի (հոդված 24), պետության կողմից պետք է հնարավորինս կարգավորման ենթարկվեն՝ «մաքրվեն», ինչը, ցավոք, չի արվում: Նախապատրաստական աշխատանքների շրջանում ձեռնարկությունների մասնավորեցումից առաջացած միջոցներով չեն կարգավորվում նաև այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսին են, օրինակ, մասնավորեցման ենթակա ՊԲԸ ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի անցկացումը և դրանց բաժնետոմսերի գրանցումը:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ պետական ձեռնարկությունների մասնավորեցման գործընթացի հետ կապված ժողովրդի սպասելիքներն առ այսօր չեն արդարացել: Մասնավորապես,

- ✘ չձևավորվեց մասնավոր ձեռնարկատերերի լայն խավ,
- ✘ չստեղծվեց արդյունավետ շուկա,
- ✘ զգալիորեն նվազեց գործող ձեռնարկությունների թիվը, որի հետևանքով էլ ավելացավ գործազուրկների քանակը,
- ✘ մասնավորեցման նպատակով կատարված ներդրումները ձեռնարկությունների գործարկման համար խիստ անբավարար են:

Պետական գույքի մասնավորեցման գործընթացը ՀՀ-ում արդյունավետ կարող է լինել միայն այն դեպքում, եթե հաշվի առնվեն յուրաքանչյուր միջոցառման հետևանքները և լուրջ նախապատրաստական աշխատանքներ կատարվեն յուրաքանչյուր ձեռնարկության մասնավորեցման դեպքում: Պետական գույքի մասնավորեցման 2001-2003թթ. ծրագրով մասնավորեցման ենթակա է դեռևս մոտ 900 ձեռնարկություն, և այդ գործընթացը լավագույնս ծրագրելու նպատակով առաջարկում ենք՝

- ✘ մշակել մասնավորեցման նպատակների հատուկ ծրագիր/հստակեցնել մասնավորեցման ծրագրերի նպատակները,
- ✘ իրականացնել մասնավորեցման ենթակա գույքի ճիշտ գնահատման քաղաքականություն,
- ✘ մասնավորեցումից առաջ ձեռնարկությունները նախապատրաստելու համալիր աշխատանքներ իրականացնել՝ ֆինանսական առողջացման և գործարար ծրագրերի կազմում, պետության (մասնավորեցումից առաջացած) միջոցներով դրանց աուդիտի անցկացում և արժեթղթերի գրանցում,
- ✘ լայնորեն կիրառել ԱՇՕ-ների մասնավորեցման համար տարաժամկետ վճարման ձևը՝ վճարման ժամկետների մեծացում, սկզբնավճարից ազատում և այլ արտոնությունների սահմանում:

2.3

Կապիտալի շուկա

Տնտեսական բարեփոխումներն առանց արդյունավետ գործող ֆինանսական ոլորտի, առանց կայացած կապիտալի շուկայի դժվար է համարել ավարտված: Այս առումով Հայաստանը դեռևս բարեփոխումների սկզբնական փուլում է: Այն դեպքում, երբ երկրում գոյություն ունեն որոշակի խնայողություններ (բնակչության ժամկետային ավանդները ՀՆԱ-ի նկատմամբ կազմում են մոտ 4%*) դեռևս չեն ձևավորվել այն մեխանիզմներն ու պայմանները, որոնց միջոցով խնայողությունները կվերածվեն ներդրումների: Դրա կայացումը անցումային փուլի ավարտն արձանագրելու նախա-

պայմաններից է, քանի որ միաժամանակ լուծումներ կստանան բազմաբնույթ, այդ թվում սոցիալական հիմնախնդիրները: Մինչ այդ պետք է արձանագրել կապիտալի շուկայի սաղմնային վիճակը և այն, որ կորպորատիվ արժեթղթերի շրջանառության բացակայությունը սահմանափակում է փոքր և մեծ ներդրումների պատրաստ անձանց հնարավորությունները:

Ներդրումային ու ֆինանսական գործիքների բացակայությունը սահմանափակում է նաև կորպորատիվ և մասնավոր բիզնեսի ձեռնարկատիրական ռիսկերի դիվերսիֆիկացման հնարավորությունները:

Բաժնետիրական ընկերություններ

ՀՀ-ում ներդրումային դաշտի համար, ըստ էության, լուրջ խոչընդոտ է այն, որ բաժնետիրական ընկերությունները (ԲԸ) չեն բավարարում կորպորատիվ կառավարման անհրաժեշտ պահանջները: Անգամ բաց ԲԸ-ները, ըստ էության, այսօր փակ են նրանց բաժնետոմսերի կայուն գնանշման բացակայության պատճառով: Ըստ ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի 2001թ. ծրագրի, ՀՀ-ում գործող ընկերությունների 84%-ը չի պահպանում թափանցիկության սկզբունքը, այն է՝ չի հրապարակել իր ֆինանսական հաշվետվությունները, իսկ 81%-ը աուդիտ չի իրականացրել: Դրանց 68%-ը խախտել է կորպորատիվ կառավարման սկզբունքները, թույլ է տվել բաժնետերերի իրավունքների և օրինական շահերի կոպիտ խախտումներ, 52%-ը խախտել է ռեեստրի վարման կանոնները, 29%-ը չի հրավիրել տարեկան ընդհանուր ժողովներ: ՀՀ-ում ԲԸ-ների մեծ մասը դեռևս չի անցել ֆինանսական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին, որոնք ընդունվեցին 1999-2000թթ.: Դրանք թափանցիկության անհրաժեշտ պայմաններից են առաջին հերթին օտարերկրյա ներդրողների համար:

ՀՀ-ում գործող 1170 բաց ԲԸ-ների բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը կազմում է 63,3 մլրդ⁷. դրամ կամ ՀՆԱ-ի 6%-ը: Դրանք հիմնականում բաժնետոմսերի բաց բաժանորդագրությամբ մասնավորեցված ընկերություններն են (150 հազար բաժնետերերից 100 հազարը⁸ ընկերությունների աշխատակիցներն են՝ շնորհիվ պետական ձեռնարկությունների կոլեկտիվի անդամների օգտին կատարված 20% անհատույց մասնավորեցման): Սակայն նշված ցուցանիշները լիարժեք պատկերացում չեն տալիս այդ ընկերությունների կորպորատիվ բնույթի մասին, քանի որ դրանց բաժնետոմսերի հսկիչ փաթեթը հիմնականում կենտրոնացված է մեկ կամ մի քանի անձանց ձեռքում: Այս կերպ գործող ֆորմալ բնույթի բաց բաժնետիրական ընկերությունները խախտում և ոտնահարում են փոքր և միջին բաժնետերերի իրավունքներն ու շահերը:

«Լոզիկա»

գործարար և ֆինանսատնտեսական անկախ հետազոտությունների կենտրոն

Հայաստանում ֆինանսական շուկայի սաղմնային վիճակը պայմանավորված է նաև շուկայի անհրաժեշտ ենթակառուցվածքների, մասնավորապես անկախ գնահատողների, անշարժ գույքի գործակալների (ռիելտորների), բորսայական կառույցների, դրանցում գործող բրոքերների, ներդրումային հիմնադրամների ու ընկերությունների, աուդիտորների թույլ զարգա-

ցածությամբ, կամ առանձին դեպքերում՝ նաև բացակայությամբ:

Կապիտալի շուկայի կայացման գործում լուրջ խթան կդառնա 2000թ. ընդունված «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքը, դրա հիման վրա ստեղծված Արժեթղթերի հանձնաժողովի գործունեությունը:

⁷ Աղբյուր՝ ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն: 2001թ. մասնավորեցմանը վերաբերող տվյալները ներկայացվում են առ 1.04.2001թ.:

⁸ Բանկային լրատու, ՀՀ ԿԲ, 2000թ., դեկտեմբեր:

⁹ ՀՀ պետական գույքի մասնավորեցման 1998-2000թթ. ծրագրի կատարման հաշվետվության մասին օրենքի նախագիծ:

¹⁰ ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի 2001թ. գործունեության պետական նպատակային տարեկան ծրագիրը հաստատելու մասին ՀՀ օրենք, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, թիվ 19, 2001, էջ 12:

2.4

Մրցակցության հավասար պայմանների ձևավորումը և պետական հարվածի կարգավորման խնդիրները

Կապիտալի ազատ հոսքին խոչընդոտող մյուս կարևոր գործոնը հավասար մրցակցություն ապահովող միջավայրի ձևավորման բարդություններն են ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական մեխանիզմների կայացման առումով: Այն առաջին հերթին պահանջում է գործող օրենսդրության երկակի ստանդարտների կիրառման բացառում և մենաշնորհացման կտրուկ սահմանափակում: Իրականում բազմաթիվ են հակառակ դրսևորումները, որի հետևանքով ներմուծման, արտահանման, ինչպես նաև առևտրի, արտադրության առանձին ոլորտներ մենաշնորհացվում են: Դրանց զարգացումն ու արմատավորումը խաթարում են հավասար մրցակցության հնարավորությունները, որի պատճառով էապես սահմանափակվում են կապիտալի ազատ հոսքերը: Հակամենաշնորհային օրենսդրության բացակայության պատճառով պետությունը ստիպված էր անցած տասը տարիների ընթացքում իրավիճակային և գրեթե անարդյունավետ պայքար մղել տեխնոգեն և կազմակերպական հիմքով ձևավորված մենաշնորհների դեմ: Համապատասխան օրենքը ընդունվեց միայն 2000թ., սակայն դեռևս կիրառության մեջ չեն դրվել այդ օրենքի գործընթացային նորմերը:

Գործող օրենսդրության կիրառման երկակի ստանդարտների համատարած բնույթի, տնտեսական ոլորտը կարգավորող դատաիրավական համակարգի օրենսդրական անկատարության պայմաններում տնտեսությունում կողք կողքի գործում են սնանկ և առողջ սուբյեկտները: Դրա հետևանքով մասնավորապես առաջանում են տնտեսավարողների միջև չվճարումների, բյուջեի ապառքների, չվերադարձվող փոխառությունների գծով պարտքերի աննախադեպ կուտակումներ, որոնք մուլտիպլիկատիվ ձևով ընդարձակվելով՝ վերածվում են տնտեսության աճը սահմանափակող գործոնի: Միայն խոշոր և միջին ձեռնարկությունների կրեդիտորական պարտքերը 2000թ. հուլիսի դրությամբ կազմել են 1 մլրդ. ԱՄՆ դոլարին համարժեք մեծություն¹¹:

Երկակի ստանդարտների կիրառման հետևանքով օրենքի շրջանակներում գործող տնտեսավարող-

ները հայտնվում են բացահայտ անշահեկան, իսկ սնանկները՝ շահավետ վիճակում, քանզի շատ հաճախ լինելով պետական օժանդակության ներքո՝ պետությունից ստանում են անուղղակի, քողարկված սուբսիդավորում, շարունակելով պահպանել իրենց սեփականության իրավունքը: Թաքնված սուբսիդավորումը հանգեցնում է նրան, որ դրանք ստացող տնտեսավարողների արտադրանքի (ծառայությունների) ինքնարժեքը նվազում է, որի հետևանքով էապես խաթարվում է վճարունակ պահանջարկի կառուցվածքը, սպառողներն ու արտադրողները ստանում են խեղաթյուրված գնային ազդակներ և արդյունքում տնտեսության որոշ հատվածներ ու սուբյեկտներ դուրս են մղվում հավասար մրցակցության դաշտից:

Հասարակական գիտակցությունում դեռևս առկա է վերը նշված հովանավորչության արդյունքում պետական հատվածում մնացած, անցյալում տնտեսության «ֆլագմաններ» հանդիսացածների փրկության ու վերակենդանացման մտայնությունը: Մինչդեռ այդ հիմնախնդրի լուծումը այլ հարթությունում է. այն պահանջում է պետական ձեռնարկությունների գործունեության կարգավորման, վերահսկողության, գործունեության գնահատման, ինչպես նաև դրանց մասնավորեցման, կամ այլընտրանք չլինելու դեպքում լուծարման նախապատրաստման համակարգված մոտեցում: Քանզի ակնհայտ է, որ պետական բաժնետիրական ընկերությունների կարգավիճակի ֆորմալ շնորհումը էական ազդեցություն չունեցավ նրանց գործունեությունը շուկայական չափորոշիչներին համապատասխանեցնելու առումով:

Կարծում ենք, որ մինչև պետական ձեռնարկությունների մասնավորեցումը դրանց նկատմամբ իրականացվելիք համարժեք կարգավորումն ու վերահսկողությունը հնարավորություն կտան առավել շահավետ ձևով նախապատրաստել դրանք մասնավորեցմանը և կանխել դրանց հատկացվող բյուջետային սուղ միջոցների վատնումը:

Պետական հատվածում գործող կազմակերպությունների հետագա այլընտրանքներն են.

Քելնելով պետության կողմից գնահատման ռազմավարական նշանակության չափորոշից՝ խիստ սահմանափակ թվով ձեռնարկություններ ներառել պետական գանձապետական ձեռնարկությունների առանձնահատուկ խմբում՝ դրանից բխող նրանց ֆինանսական հոսքերի ուղղակի վերահսկման և վերաբաշխման գործելակարգով (նման ձեռնարկությունները հարկատուներ չեն հանդիսանում, նրանց

եկամուտները ամբողջությամբ ուղղվում են պետական բյուջե, իսկ ծախսերը տրամադրվում են բյուջեից),

- Ք հանձնել հավատարմագրային կառավարման,
- Ք մնացած բոլոր ձեռնարկություններում, որոնք, ըստ էության, գտնվում են մասնավորեցման մախապատրաստական կամ բուն փուլում, իրականացնել ֆինանսական հոսքերի վերահսկման անընդմեջ մոնիտորինգ:

2.5

Դրամավարկային քաղաքականություն

Անցած տասը տարիների ընթացքում պետականության կայացման կարևոր փուլերից էր 1993թ. վերջում ազգային արժույթի՝ դրամի ներդրումը, որն, ի դեպ, այդ պահին պարտադրված էր. երկիրը դրան փաստորեն պատրաստ չէր համապատասխան ինստիտուտի՝ Կենտրոնական բանկի ձևավորվածության, ազգային արժույթի կայունության համար անհրաժեշտ արժութային պահուստների բացակայության պատճառով: Այդ, ինչպես նաև գների ազատականացման ազդեցության ու այլ գործոնների ներքո ձևավորված գերբարձր սղաճի պայմաններում այն դատապարտված էր կտրուկ արժեզրկման: Սակայն երկու տարուց պակաս ժամանակահատվածում ԿԲ-ին հաջողվեց ստանձնել ազգային արժույթի էմիսիոն կենտրոնի՝ օրենքով իրեն վերապահված գործառույթը, կիրառության մեջ ներդրել դրամավարկային քաղաքականության առանձնահատուկ գործիքները և որոշակի ձևով ապահովել սղաճի մակարդակի ու դրանից ածանցյալ ազգային արժույթի փոխարժեքի կառավարելիությունը:

1995թ. վերջից երկրի տնտեսական կառավարման ամենակարևոր ձեռքբերումներից է մակրոտնտեսական կայունությունը: Այն բնութագրվում է ցածր սղաճով և արդյունք է դրամավարկային ու հարկաբյուջետային քաղաքականությունների որոշակի փոփոխանաձայնեցվածության ու կոշտ վարքագծի: Մյուս կողմից՝ սղաճի կտրուկ զսպմամբ բնութագրվող մակրոտնտեսական քաղաքականության արդյունքում, սկսած 1998թ. վերջից, արձանագրվում են դեֆլյացիոն միտումներ, որոնք բարենպաստ չեն վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի զգալի ճեղքվածք ունեցող ՀՀ տնտեսության համար:

Սղաճի կառավարման, դրամական բազայի կտրուկ զսպման մոդելի գերակայությունը չի խթանում նաև տնտեսական աճը:

Վերջին երկու տարիների ընթացքում կանխատեսվում էին սղաճի տարեկան ավելի բարձր տեմպեր, քան ձևավորվեցին փաստացի. 1999թ.՝ 8%, իսկ 2000թ.՝ մինչև 5%¹²:

¹² ՀՀ ԿԲ-ի 2001թ.-ի դրամավարկային քաղաքականության ծրագիր:

2.6

Ֆինանսական շուկայի ձևավորմանն ուղղված բարեփոխումները

Ֆինանսական շուկայի ձևավորման ոլորտում իրականացված բարեփոխումներում, դրանց համակարգվածության ու ամբողջականության աստիճանով առանձնանում է բանկային համակարգը: Արդյունքում ֆինանսական շուկայի միակ կայացած ինստիտուցիոնալ մասնակիցները բանկերն են: 2001թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում գործում էին 31 բանկեր՝ 192 մասնաճյուղերով, 169 գործառնական գրասենյակներով, որոնց ընդհանուր ակտիվները կազմում են 236,3 մլրդ. դրամ, իսկ ընդհանուր կապիտալը՝ 33,6 մլրդ. դրամ¹³, որը համապատասխանաբար կազմում է ՀՆԱ-ի 23 և 3,2%-ը: 1995-97թթ. անցնելով կայացման փուլը՝ բանկային համակարգը դարձավ անցումային շրջանի տնտեսության ամենակայուն հենասյուներից մեկը և անգամ ստանձնեց ֆինանսական շուկայի այլ չձևավորված ինստիտուցիոնալ կառույցների ֆինանսական գործառույթների հիմնական իրականացնողի դերը: Ֆինանսական շուկայի այլ ինստիտուցիոնալ մասնակիցների չկայանալն ու ոչ համարժեք զարգացումը ուղղակի սահմանափակում է ինչպես ամբողջ ֆինանսական շուկայի, այնպես էլ տնտեսության իրական հատվածի զարգացումը:

Դեռևս լիարժեք չի կայացել ֆինանսական շուկայի ապահովագրական համակարգը, որը կարող է բացառիկ կարևոր դեր ունենալ իրական հատվածի զարգացման ու սոցիալական խնդիրների լուծման գործում: Մինչ օրս ընդունված չէ պարտադիր ապահովագրության որևէ օրենք: Գործող օրենսդրությամբ սահմանված ապահովագրական համակարգի գործունեության կանոնակարգումը խիստ հեռու է միջազգային պրակտիկայում ընդունված մոտեցումներից ու մեխանիզմներից: Իսկ ապահովագրական ընկերությունները կապիտալիզացիայի և գործառնությունների մակարդակով խիստ փոքր են և երկրի շուկայում որևէ լուրջ ռիսկերի ապահովագրության դեպքում հանդես են գալիս որպես արտերկրի վերաապահովագրողների միջնորդներ: Ըստ էության գրեթե զրոյական մակարդակի վրա են կյանքի, բժշկական ապահովագրության ո-

լորտները, որոնք բացի ընդգծված սոցիալական ուղղվածությունից, կարող են նպաստել նաև երկրի ներսում երկարաժամկետ փոխատվական և ներդրումային միջոցների ձևավորմանը:

Շնորհիվ ՀՀ բանկային համակարգի, 1996-97թթ. առաջին անգամ տնտեսություն մուտք գործեցին միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից նրանց վստահված երկարաժամկետ փոխառություններ, որի արդյունքում սկսվեց տնտեսության իրական հատվածին խիստ անհրաժեշտ երկարաժամկետ վարկավորման գործընթացը, կայացան որոշ չափով մրցունակ և կայուն դրամական հոսքեր ունեցող ձեռնարկությունները: Ներկայումս բանկային համակարգը իրականացնում է շուրջ 10 մման ծրագրեր: Միայն 2000թ. տնտեսությունում կատարված վարկային ներդրումները աճել են 45%-ով, այդ թվում գրեթե կրկնապատկվել են¹⁴ երկարաժամկետ (մեկ տարուց ավելի) վարկերը:

Բանկային համակարգի որակապես նոր աստիճանի զարգացման առումով կարևորվում է դեպոզիտների ապահովագրության ինստիտուտի կայացումը, որի պարագայում հնարավոր կլինի առավելագույնս բանկային համակարգ մղել բնակչության ունեցած ազատ միջոցները:

Զարգացման արդի փուլում վերանայման կարիք ունի բանկային համակարգի կարգավորման ու վերահսկողության հայեցակարգը, քանզի օբյեկտիվորեն փոխվել են կարգավորման օբյեկտները՝ բանկերը, և մյուս կողմից՝ պետք է հաշվի առնել ֆինանսական շուկայի այլ հատվածների և իրական հատվածի բարեփոխումների հետևանքներն ու պահանջները: Նպատակահարմար է վերանայել բանկային համակարգի երկաստիճան կառուցվածքը: Արդեն իսկ շերտավորում ունեցող և կայացած սուբյեկտների պարագայում այն կարող է անցնել բազմաստիճան դասակարգման, որի արդյունքում կշահեն և ֆինանսական շուկան, և նրա սուբյեկտները, և ֆինանսական շուկայի ծառայությունների ու սպասարկումների սպառողները:

¹³ ՀՀ ԿԲ-ի 2000թ. տարեկան հաշվետվություն:

¹⁴ Բանկային լրատու, ՀՀ ԿԲ, 2000թ. դեկտեմբեր:

2.7

Հարկային քաղաքականություն

Հարկային օրենսդրությունը էական բարեփոխումների ենթարկվեց 1997-2000թթ., երբ ընդունվեցին հարկային հիմնական նոր օրենքները՝ հիմնված առավելապես միջազգային չափանիշների վրա: Այն որոշակի բեկում մտցրեց նախկինում բացառապես ֆիսկալ բնույթ ունեցող հարկային օրենսդրությունում և գործող համակարգում: Սակայն հարկային օրենսդրությունում և դրա իրականացումը ապահովող վարչարարության համակարգում դեռևս առկա են սկզբունքային մի շարք չլուծված հիմնախնդիրներ, որոնց պարագայում տնտեսության կայուն ու բարձր տեմպերով աճի խթանումը դեռևս չի վերածվել այնպիսի հարկային քաղաքականության գերակայության, որի ներքո համարժեք լուծում կստանան նաև ընթացիկ ֆիսկալ խնդիրները:

ՀՀ-ում հարկային հարաբերությունները կարգավորվում են հարկերի մասին, շահութահարկի, եկամտահարկի, գույքահարկի, հողի հարկի (ուղղակի հարկեր), ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի, պարզեցված հարկի մասին օրենքներով, ինչպես նաև հաստատագրված վճարների մասին օրենքով (որը հանդիսանում է շահութահարկը և ավելացված արժեքի հարկը փոխարինող վճար):

Վերջին տարիներին հարկային օրենսդրության փոփոխությունների արդյունքում 2000 թ. վերջում հաջողվեց տնտեսավարողներին տրոհել հարկման երկու խոշոր խմբերի՝ հաստատագրված ու պարզեցված հարկ վճարողների և շահութահարկը նախընտրող խոշոր հարկատուների: Ընդ որում հարկատուի՝ նշված խմբերից որևէ մեկում հայտնվելը կախված է նաև նրա կամքից և պետական մարմնի պարտադրանքը չէ:

Վերը նշված գործընթացը նաև նպատակաուղղվեց ու հանգեցրեց անուղղակի հարկերի փաստացի գերակայությանը: Հարկային մուտքերի կառուցվածքում անուղղակի հարկերի տեսակարար կշիռը 2000թ. 1994թ. համեմատ եռապատկվել է և կազմում է շուրջ 70%¹⁵: Նշված գերակայությունը տեղափոխվում է վերջնական սպառողների, այդ թվում նաև քաղաքացիների վրա: Ներկա իրավիճակում հարկերի սահմանված գերակայությունը ստվերային տնտեսությունը և դրա հաշվին նաև շահութահարկի դրույքաչափը էապես նվազեցնելու առումով այլընտրանք չունի, որը նաև կնպաստի չնչին ներդրումներով մասնավորեցված ընկերությունների կապիտալիզացիայի և ըստ էության ներքին ներդրումների աճին:

Առաջիկա մի քանի տարիների ընթացքում, ելնելով տնտեսության զարգացման որոշակի համաձայնություններից, պահպանելով հարկային մեխանիզմների խթանիչ ներգործությունը, տնտեսավարողների հարկային ծանրաբեռնվածությունը նպատակահարմար կլինի աստիճանաբար տեղափոխել դեպի ուղղակի եկամտային հարկերը:

Հարկային բեռի հաշվեկշռվածության առումով հարկ է նշել, որ հարկային եկամուտների կառուցվածքում ընդունելի չէ գույքահարկի խիստ նվազ տեսակարար կշիռը (այն դասվում է ուղղակի հարկերի թվին), քանզի այդ հարկի ֆիսկալ էֆեկտը չնչին է, միևնույն ժամանակ տնտեսական ներգործության էֆեկտը՝ գրոյական: Մինչդեռ այս պարագայում այն պետք է ունենա հստակ տնտեսական խթանիչ դեր:

Գույքահարկի պրոգրեսիվ դրույքաչափ պետք է կիրառվի թե անձնական անշարժ և շարժական, թե արտադրական նշանակության գույքի նկատմամբ: Սասնավորապես դա է անհրաժեշտ կիրառել այն մասնավորեցված ընկերությունների նկատմամբ, որոնք ուղղակի գործունեություն չեն իրականացնում: Շահութահարկի և գույքահարկի դրույքաչափերը այս դեպքում որոշակի ձևով պետք է փոխկապակցվեն: Դա հնարավորություն կտա մասնավորեցման ընթացքում չնչին ներդրումներ կատարած և որևէ կերպ կառավարելու ցանկություն չունեցող սեփականատերերին ստիպել կամ աշխատեցնել անգործության մատնված ձեռնարկությունները, կամ դրանք դուրս բերել երկրորդային շուկա, որտեղ դրանց կարող են տիրամալ արդյունավետ կառավարողներն ու ներդրումների պատրաստ անձինք:

Հարկային քաղաքականության արդյունավետության առանցքային հիմնախնդիրներից է կարգազանց հարկատուների նկատմամբ տույժերի և տուգանքների կիրառումը բացառապես դատարանների իրավասությանը փոխանցելու հարցը, որով վերջապես կվերականգնվի գործող Սահմանադրության պահանջը, ըստ որի՝ անձը սեփականության իրավունքից կարող է զրկվել միայն դատարանի վճռով: Այդ հարաբերությունների որակական փոփոխության առումով էական ազդեցություն ունեցավ ստուգումների մասին համապատասխան օրենքի ընդունումը, որով, ըստ էության, խստիվ սահմանափակվում են կրկնակի ստուգումները և, բացի դրանից, արգելվում է կազմակերպության համալիր ստուգումը որևէ պետական մարմնի կողմից:

¹⁵ Տես 1-ին և 2-րդ աղբյուրները:

Անցած տասը տարիների ընթացքում հարկային ոլորտում կիրառվող տուգանային ռեժիմները շատ հաճախ հանգեցրել են հարկատուի համար ֆինանսական ծանր և անելանելի վիճակների: Ելքը հաճախ հանգել է պետության կողմից համաներումների կիրառմանը, որը ստեղծելով արդարության պատրանք, միաժամանակ օրինականացրել է երկակի ստանդարտների կիրառումը: Արդյունքում հարկային ապառքներ կուտակած անձինք, ըստ էության, պետությունից ստացել են անուղղակի վարկավորում կամ սուբսիդիաներ, իսկ օրինապահ հարկատուները, չօգտվելով նշված հարկային արտոնություններից, օրենքի շրջանակներից դուրս պարտադրվող կանխավճարների հաշվին, ըստ էության, ստիպված են եղել փակելու անբարեխիղճ հարկատուների ապառքների կուտակումից առաջացող բյուջեի մուտքերի չնախատեսված ճեղքվածքի մի մասը՝ փաստորեն իրականացնելով բյուջեի անտոկոս վարկավորում: 1997թ. վերջում և ամբողջ 1998թ. ընթացքում կիրառված համաներումը նախ հանգեցրեց ապառքների նվազած գումարի նկատմամբ հաշվանցումների կրկնապատկմանը, իսկ 1998թ. վերջում գրեթե կրկնապատկեց ապառքների գումարը: 2001թ. հունվարի 1-ի դրությամբ պետական բյուջեի ապառքները կազմել են 143 մլրդ. դրամ¹⁶, որը հավասար է 2000թ. բյուջեի հարկային եկամուտներին:

2000թ. հարկային օրենսդրությունում կատարված փոփոխությունները առավելապես միասնականացրեցին շահութահարկի և եկամտահարկի սկզբունքները: Շահութահարկի միասնական սանդղակի սահմանումը հավասար պայմաններ է ստեղծել ներդրողների համար և նպաստում է մրցունակ ձեռնարկությունների կապիտալիզացիայի մակարդակի բարձրացմանը:

Եկամտահարկի հարկման մեխանիզմում պրոգրեսիվ հարկման սկզբունքից հրաժարվելը կնպաստի տնտեսության սովորյալացման ամենատարածված

դրսևորումներից մեկի՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների ոչ լրիվ հայտարարագրման նվազեցմանը:

Հարկային հարաբերություններում վերջնականապես պարզություն մտցնելու նպատակով անհրաժեշտ է ընդունել այն իրողությունը, որ ներկայիս սոցիալական ապահովագրության պարտադիր վճարները իրենց տնտեսական բովանդակությամբ ոչ մի առնչություն չունեն սոցիալական ապահովագրության հետ: Աշխատողը կամ հիմնականում նրա գործատուն, փաստացի առանց որևէ պայմանագրային հարաբերության և կոնկրետ շահի, վճարում է ոչ թե ապահովագրավճար, այլ սոցիալական հարկ, և այս դեպքում աշխատողի համար միևնույն է, թե որքան կվճարի գործատուն իր համար, քանի որ այդ վճարն իր հետագա կենսաթոշակի հետ որևէ կապ չունի և կոչված է լուծելու ներկայիս կենսաթոշակառուների և սոցիալապես այլ անպաշտպան խմբերի սոցիալական նվազագույն երաշխիքների ապահովման խնդիրը: Նպատակահարմար է նշված վճարը փոխարինել սոցիալական հարկով և դրա գանձման վարչարարությունը ամբողջովին փոխանցել հարկային մարմիններին, որը կնպաստի գանձումների մակարդակի բարձրացմանը, պետական ապարատի զգալի կրճատմանը և միաժամանակ կպահպանվի սոցիալական հարկի վճարումը գործատուների կողմից: Դրա ներդրմամբ երկրում վերջնականապես կտարանջատվեն սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության համակարգերը:

Արտահանմանը խոչընդոտող գործոնի է վերածվել ավելացված արժեքի հարկի գծով առաջացած գերավճարների վերադարձման խնդիրը, որի լուծումը պահանջում է այդ նորմի կիրառումը տարածել միայն արտահանողների նկատմամբ՝ առավելագույնս պարզեցնելով գերավճարների վերադարձման ընթացակարգը:

Հայաստանի ստվերային տնտեսությունը

Հայաստանում իրականացվող բարեփոխումների և տնտեսական զարգացման համար այսօր լուրջ խոչընդոտ է հանդիսանում տնտեսության ստվերային հատվածը¹⁷: Ընդհանրապես ընդունված է այն մտեցումը, որ ստվերային տնտեսության առկայության հիմնական պատճառը պարտադիր վճարումներից խուսափելն է, սակայն երբեմն մարդիկ ներգրավվում են օրինազանց գործունեության մեջ, ինչի պատճառով էլ չեն հայտարարագրում իրենց եկամուտները հարկային մարմիններում, արդյունքում կրկնակի խախտելով օրենքը:

Ստվերային տնտեսության առաջացմանը և ընդարձակմանը նպաստող գործոնների շարքում առաջնային դիրք են զբաղում հարկային և մաքսային «կոշտ» ու անարդյունավետ քաղաքականությունը, պետական խիստ կարգավորումն ու սահմանափակումները, ինչպես նաև կոռուպցիան:

Հայաստանում 1990-ականների սկզբում տնտեսական բարեփոխումների շրջանակներում իրականացված տնտեսության ազատականացման գործընթացները, մասնավոր սեփականության հաստատումը, եկամուտների ցածր մակարդակը և բնակչության կենսամակարդակի կտրուկ անկումը, դրամի ուշ ներդրումը, նոր և չկանոնակարգված հարկային ու մաքսային համակարգերը, բանկային համակարգի նկատմամբ բնակչության ունեցած անվստահությունը և, դրա հետ կապված, որպես վճարման միջոց հիմնականում կանխիկ դրամի օգտագործումը, օրենսդրական դաշտի և դատական համակարգի անկատարությունը, ստվերային գործունեության համար նախատեսված անհամեմատ մեղմ պատժամիջոցները (ի հակադրություն ստվերային գործունեությունից ակնկալվող շահույթի), տնտեսության պետական «կոշտ» ու անարդյունավետ կարգավորումը՝ կոռուպցիայի զգալիորեն բարձր մակարդակի պայմաններում, նպաստեցին մեր երկրում ստվերային տնտեսության ծավալների ընդարձակմանը: Այն այսօր իր բազմապիսի դրսևորումներով առկա է Հայաստանի տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում՝ լրջորեն խոչընդոտելով տնտեսական քաղաքականության իրականացմանը:

Այլ երկրների համեմատ Հայաստանի ստվերային տնտեսությունն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցից կարելի է նշել հետևյալը.

❖ ստվերային տնտեսությունը համեմատաբար քրե-

ածին չէ և հիմնականում կապված չէ քրեական խմբավորումների հետ, ինչը պայմանավորված է մեր երկրում կոռուպցիայի բարձր մակարդակով: Ստվերային ոլորտի խոշոր ներկայացուցիչները, պետական տարբեր օղակներում ունենալով տարբեր տեսակի «տանիքներ» և հովանավորներ, հանցագործ խոշոր խմբեր պահելու կարիք, ըստ էության, չեն զգում,

- ❖ ստվերային երևույթների չափազանց տարածվածության արդյունքում ստվերային գործունեության շատ տեսակներ հասարակության համար դարձել են հարաբերականորեն «նորմալ» երևույթ (օրինակ՝ «թաքնված» բարձր աշխատավարձերի ստացումը), և այդ իմաստով ստվերային և քրեածին գործունեությունները տարանջատվել ու տարբեր կերպ են ընկալվում մարդկանց կողմից,
- ❖ տնտեսության ստվերային հատվածը բավականին «տեսանելի» է. հասարակության ծանր սոցիալական պայմաններից ելնելով, պետությունը ստվերային գործունեության շատ տեսակների նկատմամբ մեղմ քաղաքականություն է վարում:

Ստվերային տնտեսությունը հասարակության և տնտեսության վրա ունի խիստ բացասական ազդեցություն, որից հիմնականում կարելի է առանձնացնել հետևյալը.

- ❖ ստվերային գործողությունները, որպես հակաօրինական գործունեություն, նպաստում են հասարակության մեջ անպատժելիության մթնոլորտի ձևավորմանը և խաբիխում օրենքի գերակայության հիմքերը,
- ❖ հարվածի տակ է դրվում արտադրության և առևտրի ոլորտների զարգացումը՝ անհավասար մրցակցային պայմաններ ստեղծելով այդ ոլորտներում օրինականորեն տնտեսավարող ընկերությունների համար,
- ❖ կասկածելի է դառնում տնտեսության պաշտոնական ցուցանիշների ճշգրտությունը, դրանով իսկ նվազեցնելով իրականացվող տնտեսական քաղաքականության արդյունավետությունը,
- ❖ մեծացող ստվերային տնտեսությունը ենթադրում է պետական եկամուտների նվազում, որը առաջացնում է պետական բյուջեի պակասորդի հիմնախնդիրներ,

¹⁷ Գրականության մեջ օգտագործվում են նաև «թաքնված», «գորշ», «անկանոն», «ոչ պաշտոնական», «զուգահեռ», «անօրինական», «չգրանցված», «չհայտարարագրված», «չդիտարկվող», «ընդհատակյա», «չհաշվառված», «մոխրագույն» և այլ տերմիններ: Ամերիկացի տնտեսագետ Վիտո Թանզիի սահմանմամբ՝ ստվերային տնտեսությունը տնտեսության այն հատվածն է, որտեղ «ստեղծված եկամուտը հարկային մարմիններում չի հայտարարագրվում կամ հայտարարագրվում է մասամբ» (Tanzi V. "The Underground Economy in the United States: Estimates and Implications." "Banca Nazionale del Lavoro, Quarterly Review", 1980, p. 428)

- ❖ հասարակությունում անարդար եկամուտներ են առաջանում, որոնք այլ, հավասար պայմաններում, բյուջետային մեխանիզմների միջոցով կվերաբաշխվեն հասարակության մեջ,
- ❖ ընդարձակվող ստվերային տնտեսությունը մեծացնում է տնտեսության ներսում աշխատուժի նկատմամբ պահանջը և նպաստում է առավել որակյալ մասնագետների ներգրավմանը ստվերային ոլորտում արդյունքում նվազեցնելով աշխատանքի արդյունավետությունը տնտեսության պաշտոնական հատվածում:


Հարկ է նշել, որ անցած տասը տարիների ընթացքում, բացասական հետևանքներից բացի, Հայաստանի ստվերային տնտեսությունը անցումային փուլում գտնվող երկրի հասարակության սոցիալական կայունության ապահովման, մասնավորապես՝ բնակչության անապահով խավի համար եկամուտ վաստակելու տեսանկյունից ունեցել է նաև որոշակի դրական ազդեցություն, ինչը չի կարելի անտեսել: Այդ առումով 1990-1994 թթ. կարելի է համարել ՀՀ-ում ստվերային տնտեսության ունեցած դրական ազդեցության գերիշխման ժամանակահատված, ինչը հիմնականում

պայմանավորված էր տնտեսական բարեփոխումների սկզբնական շրջանի առանձնահատկություններով, մասնավորապես՝ սեփական արժույթի բացակայությամբ, մասնավոր ձեռնարկատիրության թերզարգացածությամբ, տարբեր ապրանքատեսակների պակասորդով, ինչպես նաև պետության հիմնականում արտաքին հիմնախնդիրներով զբաղվածությամբ: Պետությունը, չկարողանալով ապահովել բնակչության հիմնական մասի նվազագույն կենսամակարդակը, այսպես ասած «աչք էր փակում» ստվերային գործունեության շատ տեսակների վրա:

1995-2000թթ. տնտեսության և հասարակության բարեփոխումների գործընթացում աստիճանաբար սկսեցին գերիշխել ստվերային տնտեսության ապակայունացնող, բացասական գործոնները: Ստվերային տնտեսության ընդարձակումը ներքաղաքական լարված պայմաններում իր արտահայտությունն էր գտնում հարկային մուտքերի հարաբերական նվազման մեջ, որն իր նվազագույն կետին հասավ 1996թ.-ին: Այսպես, 1997թ.-ին կոշտ հարկային վարչարարության արդյունքում սկսեց որոշակիորեն բարելավվել պետական բյուջեի հարկային եկամուտների հավաքագրման գործընթացը (նկար 2.4.):

ՀՀ-ում հարկային եկամուտների և անվանական ՀՆԱ-ի հարաբերակցության գործակցի դինամիկան 1994-2000թթ.

Նկար
2.4



Իհարկե, հարկային եկամուտների և անվանական ՀՆԱ-ի հարաբերակցությունը հարկային ոլորտի գործունեության գնահատման լավագույն ցուցանիշը չէ, սակայն, արժանահավատ վիճակագրության բացակայության պայմաններում, այն ընդհանուր պատկերացում է տալիս հարկային եկամուտների հավաքագրման ոլորտում հաջողությունների կամ թերացումների վերաբերյալ:

Ներկայումս քաղաքական իշխանության և ստվերային տնտեսության միջև ձևավորվում է մի յուրահատուկ փոխհարաբերություն, երբ ստվերային գործունեությամբ ստեղծված գումարները օգտագործվում են երկրի քաղաքական դաշտում իշխանություն ձեռք բերելու համար: Վերջինիս վառ օրինակ կարող են ծառայել 1999թ. խորհրդարանական ընտրությունները, երբ տնտեսության ստվերային ոլորտի շատ ներկայացուցիչներ ներթափանցեցին ԱԺ:

Հայաստանի ստվերային տնտեսության ծավալների ընդարձակման և տնտեսության պաշտոնական հատվածի զարգացման վերջին տարվա միտումների շարունակման պայմաններում Հայաստանը մի քանի տարի անց արդեն կարող է հայտնվել խիստ ծանր վիճակում: Այդ իսկ պատճառով կառավարության համար այսօր առաջնային խնդիր է համարվում լայնածավալ «հակաստվերային» միջոցառումների իրականացումը, որը կմեղմի ստվերային տնտեսության ապագայում սպասվող առավել կործանարար հետևանքները: Հարկ է նշել, որ վերջին ժամանակներս ՀՀ կառավարությունը զգալի քայլեր է ձեռնարկում ստվերային տնտեսության դեմ պայքարը ուժեղացնելու, այն նոր, առավել արդյունավետ հունի վրա դնելու համար: Մասնավորապես, մշակվում է կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարություն, իրականացվում են պետական կառավարման համակարգի բարեփոխումներ՝ ուղղված պետական

հատվածի արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականության մեծացմանը, քայլեր են ձեռնարկվում հարկային և մաքսային վարչարարության բարձրացմանը, կատարվում են ձեռնարկատիրական դաշտի ապակարգավորման ու տարբեր տեսակի սահմանափակումների վերացմանն ուղղված գործողություններ և այլն: Նշված գործողությունները նպատակային և շարունակական լինելու դեպքում կարելի է ակնկալել ստվերային տնտեսության ծավալների իրա-

կան կրճատում: Միաժամանակ պետք է գիտակցել, որ տնտեսության ստվերային հատվածի ամբողջական վերացումը, այդ երևույթի առանձնահատկություններից ելնելով, գրեթե անհնարին է, սակայն կառավարությունը, հասարակության առողջ ուժերի ներգրավմամբ, պետք է ձգտի համապատասխան միջոցառումների իրականացման շնորհիվ ստվերային տնտեսության ծավալները կրճատել մինչև հնարավոր նվազագույն սահմանը:

Հայաստանի ստվերային տնտեսության ծավալների հաշվարկը


Ստվերային տնտեսության ծավալների հաշվարկը բավականին բարդ խնդիր է, որը պայմանավորված է այդ երևույթի առանձնահատկություններով: Այդուհանդերձ, համաշխարհային փորձը վկայում է, որ գոյություն ունեն տարբեր մեթոդներ՝ տնտեսության թաքնված հատվածի մեծությունը չափելու համար, թեև դրանցից և ոչ մեկն էլ լիարժեք չէ: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ տնտեսության ստվերային աստիճանի գնահատման առավել ճշգրիտ մեթոդներ են հանդիսանում այսպես կոչված «մոնետար» մեթոդները, որոնք իրենց հաշվարկների մեջ օգտագործում են տարբեր տեսակի դրամական ցուցանիշներ: Մասնավորապես, ամերիկացի տնտեսագետ Ֆիլիպ Գուտմանի 1977թ.-ին առաջարկված կանխիկ փողի պահանջարկի գնահատման մեթոդի տեղային կիրառման արդյունքում հաշվարկվել է ՀՀ տնտեսության ստվերային հատվածի մեծությունը 1994-2000թթ.¹⁸:

Այլ մեթոդ է օգտագործում ՀՀ ԱՎԾ-ն ստվերային տնտեսության ծավալները¹⁹ (չհաշվառվող տնտեսություն) հաշվարկելիս: Այն օգտագործում է տնտեսության մեջ զբաղվածների և պարբերական վիճակագրությամբ ընդգրկվածների թվաքանակի վերաբերյալ տվյալները, անուղղակի մակրոտնտեսական մեթոդները՝ ընդգրկելով ընտրանքային և հատուկ հետազոտությունների արդյունքները, տեղեկատվության բոլոր հնարավոր աղբյուրները: Հարկ է նշել, որ նման բազմազան մեթոդներով ստացված գնահատականների վերջնական ցուցանիշները փողի պահանջարկի մեթոդի գնահատականների հետ համեմատ ներառում են սխալի բարձր գործակից՝ պայմանավորված հաշվարկներում օգտագործվող սկզբնական տվյալների անճշտությամբ, տարբեր մեթոդներով ստացված արդյունքների անհամադրելիությամբ և վերջնարդյունքի սուբյեկտիվ ճշգրտման հնարավորությամբ:

Վերը նշված երկու մեթոդների գնահատականները ներկայացված են նկար 2.5-ում:

Փողի պահանջարկի մեթոդով և ՀՀ ԱՎԾ կողմից հաշվարկված Հայաստանի ստվերային տնտեսությունը բնութագրող ցուցանիշները²⁰ 1994-2000թթ.: Տոկոսը տվյալ տարվա պաշտոնական անվանական ՀՆԱ-ի նկատմամբ

Նկար 2.5



¹⁸ Մանրամասն տես Բ. Թունյան «Հայաստանի ստվերային տնտեսությունը և դրա դեմ պայքարը» ատենախոսությունը, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ, 2000թ. դեկտեմբեր:

¹⁹ Չհաշվառվող տնտեսության վերաբերյալ տվյալները վերցված են ՀՀ ԱՎԾ պաշտոնական գրությունից: 2000թ. համապատասխան գնահատականները բացակայում են:

²⁰ Հաշվարկներում օգտագործվել են IMF International Financial Statistics 2000, ինչպես նաև «Armenia Economic Trends. Quarterly Issue, October-December 2000» (TACIS) տեղեկագրի վերգրած տարբեր զուգանիշների ամսական և տարեկան տվյալները:

Փողի պահանջարկի մեթոդով իրականացված հաշվարկների հիմքում ընկած են բացառապես դրամական ցուցանիշներ (շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամի և բանկային համակարգում ցպահանջ դեպոզիտների տվյալները), ինչը ենթադրում է, որ մեթոդի հիմքում ընկած սկզբնական տվյալները առավելագույնս ճշգրիտ են: Մեթոդի շրջանակներում կատարվում են մի շարք ենթադրություններ, մասնավորապես՝ տնտեսության պաշտոնական և ստվերային հատվածներում կանխիկ փողի շրջանառության արագության, ստվերային տնտեսությունում բացառապես կանխիկ դրամի օգտագործման, կանխիկ փողի և ցպահանջ դեպոզիտների հարաբերակցության վերաբերյալ:

Պետք է նկատել, որ ստվերային տնտեսության ծավալների վերաբերյալ ստացված գնահատականները ներառում են միայն այն ստվերային գործարքները, որոնցում որպես վճարման միջոց օգտագործվել է հայկական դրամը: Ռուսական ռուբլով կամ ամերիկյան դոլարով կատարված ստվերային գործարքները չեն ընդգրկվել հաշվարկներում, քանի որ տեսականորեն և գործնականում անհնար է անուղղակի՝ փողի պահանջարկի մեթոդներով ճշգրտորեն հաշվարկել արտարժույթով իրականացվող ստվերային գործարքների ծավալները:


Փողի պահանջարկի մեթոդով ստացված գնահատականները վկայում են, որ Հայաստանում ստվերային տնտեսությունը նվազագույն մակարդակի վրա է եղել 1994 թ. (ինչը պայմանավորված է հայկական դրամի նոր ներդրմամբ), այնուհետև այն մեծացել է՝ հասնելով իր առավելագույն ցուցանիշին 1997թ. (ՀՆԱ-ի 66,3%): 2000թ. ստվերային տնտեսության մեծացումը հիմնականում կարելի է բացատրել տարեսկզբին երկրում տիրող անկայուն քաղաքական վիճակով, որը չէր կարող չանդրադառնալ հարկերից խուսափողների և տնտեսության ստվերային հատվածում գործող մարդկանց վարքագծի վրա (նկար 2.5): Նշենք նաև, որ արտարժույթով իրականացվող ստվերային գործարքների ծավալների հաշվարկման դեպքում այդ ցուցանիշները կմեծանան շուրջ 10-15%-ով:

Ստվերային տնտեսության (փողի պահանջարկի մեթոդով) ստացված գնահատականների օգտագործմամբ կարելի է հաշվարկել պետության հարկային եկամուտների կորուստի այն չափը, որ պայմանավորված է տնտեսության ստվերային հատվածի առկայությամբ (նկար 2.6): Հարկ է նշել, որ ներկայացված գնահատականները ներառում են ստվերային տնտեսության միայն հարկային եկամուտների ոլորտից առաջացած կորուստները: Մասնավորապես, այստեղ չեն հաշվարկված պարտադիր սոցիալական վճարումների գծով պետությանը և հասարակությանը հասցված վնասները, որոնք նույնպես մեծ չափերի են հասնում:

ՀՀ պետական բյուջեի փաստացի հավաքագրված հարկային եկամուտները և ստվերային տնտեսության առկայության հետևանքով հարկային կորուստները 1994-2000թթ. (մլն. դրամ)

Նկար

2.6



Բազրատ Թունյան

2.9

Կոռուպցիան որպես երկրի փնտրեսական զարգացման խոչընդոտ

Մարդկության պատմությունն ակնհայտորեն վկայում է, որ կոռուպցիան գոյություն է ունեցել հազարավոր տարիներ շարունակ: Դեռևս յոթ դար առաջ՝ Դանտեն կաշառակերներին հատկացրել էր Դժոխքի ամենաստորին պարունակը: Իսկ ամերիկյան Սահմանադրությամբ այն երկու հանցանքներից մեկը, որ կարող է բերել ԱՄՆ նախագահի հրաժարականի պահանջի (ինչպիսիք են՝) կաշառակերությունն է: Համաձայն ամենատարածված և հաճախակի օգտագործվող սահմանման՝ կոռուպցիան հանրային իշխանության չարաշահումն է հոգուտ մասնավոր շահի²¹: Որոշ դեպքերում մասնավոր շահ է հետապնդում ոչ թե անձը, այլ առանձին կուսակցություն, հասարակության մի ամբողջ խումբ, ընտանիք և այլն: Հարկ է նշել, որ կոռուպցիան չպետք է նույնացվի կաշառակերության հետ, քանի որ վերջինս կոռուպցիայի դրսևորման սոսկ մի տեսակն է:

Կոռուպցիան հիմնականում կապված է պետության կողմից իրականացվող գործունեության հետ, հատկապես մենաշնորհային և դժվար վերահսկվող ոլորտներում, և բնորոշ է բոլոր՝ անցումային, անկայուն և զարգացած պետություններին: Այս ենթատեսքատում խիստ կարևոր է, թե ինչպես է պետությունն իրականացնում իրեն վերապահված գործառնությունները:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, նախկին ԽՍՀՄ երկրներում, մասնավորապես՝ նաև Հայաստանում, շուկայական տնտեսության զարգացման, նոր քաղաքական և սոցիալական ենթակառուցվածքների ձևավորման և սոցիալական արժեքների վերափոխման գործընթացները բարենպաստ հող ստեղծեցին կոռուպցիայի զարգացման համար:

Իր տարածվածության առումով կոռուպցիան կարող է արտահայտվել անձնային, ինստիտուցիոնալ և համակարգային մակարդակներում.

1. *անձնային* մակարդակում կոռուպցիան հիմնականում մասնակի բնույթ ունի. որևէ պաշտոնատար անձ կամ քաղաքական գործիչ չարաշահում է հասարակությունում զբաղեցրած իր դիրքը, որը մեծամաս-

սամբ պայմանավորված է տվյալ անձով և ոչ բնավ տիրող համակարգով,

2. *ինստիտուցիոնալ* կոռուպցիայի դեպքում ակնհայտ է կոռուպցիոն երևույթների տարածվածությունը տնտեսության որոշակի հատվածներում միայն (ասենք՝ տնտեսության առավել շահութաբեր ոլորտներում, կամ պետության կողմից առավել վերահսկվող հատվածներում),

3. *համակարգային* կոռուպցիան իր դրսևորումներն է գտնում հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Ընդ որում, վերջինս իրականացվում է անձնային և ինստիտուցիոնալ մակարդակների ներգրավմամբ: Իր արտահայտման ձևերից հասարակության համար ամենակործանարարը և ամենադժվար հաղթահարելին, ըստ էության, հենց համակարգային կոռուպցիան է:

Ցավալիորեն կարելի է փաստել, որ ներկայումս ՀՀ-ում կոռուպցիայի բոլոր տեսակներն էլ լայն տարածում ունեն մեր կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, այսինքն այն համակարգային բնույթ ստանալու վտանգ է պարունակում իր մեջ: Ըստ Ինստիտուցիոնալ բարեփոխումների և ոչ ֆորմալ հատվածի կենտրոնի (IRIS) կովկասյան գրասենյակի կողմից իրականացված մի հետազոտության արդյունքների, ներդրողների գնահատմամբ՝ «Հայաստանում կոռուպցիայի մակարդակը ավելի ցածր է, քան ԱՊՀ այլ երկրներում, և այն համակարգված չէ: Վերացել է նախկին կոռուպցիոն համակարգը, իսկ նորը չի ստեղծվել»: Սակայն այս իրավիճակը ներդրողները գնահատում են ավելի անբարենպաստ, որովհետև այն անկանխատեսելի է: Այլ աղբյուրներ, ինչպես օրինակ «Տրանսպարենսի Ինտերնեշնլը», 2000թ. իր զեկույցում Հայաստանում կոռուպցիայի բավական բարձր մակարդակ է արձանագրել՝ գնահատելով կոռուպցիայի պատկերացման վարկանիշը (ԿՊՎ) 2.5 բալ (ԿՊՎ-ն տատանվում է 10-ի (առավել մաքուր) և 1-ի (առավել կոռումպացված) սահմաններում) (ՄՁԱԶ 2000, էջ 112):

²¹ Այս սահմանումից կարծես թե հետևում է, որ կոռուպցիան չի կարող գոյություն ունենալ մասնավոր սեկտորում: Սակայն այն որոշակիորեն գոյություն ունի, հատկապես խոշոր ձեռնարկություններում (մասնավորապես՝ գնումների կամ կադրերի ընտրության խնդիրներում):

2.3
Ներդիր


Կոռուպցիայի առանձնահատկությունները անցումային երկրներում

Անցումային երկրներում կոռուպցիայի ծագման և նրա հետևանքների միջև տարբերությունների բացահայտման նպատակով ՉԲ-ն մշակել է նոր դասակարգում՝ *պետության զավթում* և *վարչական կոռուպցիա*: *Պետության զավթումը* վերաբերում է պետական և մասնավոր սեկտորում գործող առանձին անհատների, խմբերի, ընկերությունների գործունեությանը, որն ուղղված է օրենքների, որոշումների կամ պետական քաղաքականություն ձևավորող այլ օրենսդրական ակտերի մշակման վրա ներագրմանը՝ նպատակ ունենալով պետական պաշտոնյաների համար ապահովել արգելված և ոչ թափանցիկ մասնավոր շահ: Այն տարբեր ձևեր է ընդունում՝ կախված զավթվող սուբյեկտից (օրենսդիր, գործադիր, դատաիրավական) և զավթման գործընթացն իրականացնողներից (մասնավոր ընկերություն, քաղաքական կուսակցության առաջնորդ կամ նեղ շահի հետապնդող խումբ): Պետության զավթման բոլոր տեսակներն էլ ուղղված են իրավական և կարգավորող-նորմատիվային դաշտի խեղաթյուրման միջոցով պետությունից մասնավոր օգուտների ստացմանը և ուղեկցվում են հասարակության համար զգալի կորուստներով: Պետության զավթումը լայն ծավալներ է ստանում այն երկրներում, որտեղ տնտեսական իշխանությունը խիստ կենտրոնացված է, սոցիալական ապահովության համակարգերը՝ թույլ, իսկ քաղաքական ազդեցության և շահերի միջնորդավորման ֆորմալ ուղիները՝ թերզարգացած:

Վարչական կոռուպցիան վերաբերում է գործող օրենքների, օրենսդրական-նորմատիվային ակտերի կիրարկման մտածված-նպատակային խախտումներին, որը շահ է ապահովում պետական կամ ոչ-պետական անձերի համար՝ արդյունքում ստեղծելով անօրինական և ոչ-թափանցիկ մասնավոր եկամուտներ: Կոռուպցիայի այս տեսակի հիմքում ընկած են պետական պաշտոնյաների մի մասի կողմից իրենց հայեցողությամբ բացառությունների տրամադրումը, հանրային ծառայությունների բաշխումը, օրենքների և օրենսդրական ակտերի տարբերակված կիրարկումը: ԱՊՉ երկրների համար վարչական կոռուպցիայի «արժեքը» կազմում է ընկերությունների եկամուտների մոտ 3,7%-ը, արևելաեվրոպական երկրներում 2,2%, Հայաստանում՝ 4,6%²²:

Արևելյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ երկրների դասակարգումը ըստ կոռուպցիայի մակարդակի ՉԲ գնահատականների ներկայացված է նկար 2.7-ում:

Նկար Կոռուպցիայի դասակարգումը



Հայաստանը դասվել է միջին-բարձր այն երկրների խմբին, որտեղ հիմնական խնդիրը վարչական կոռուպցիան է, մինչդեռ մասնավոր սեկտորի կողմից պետության զավթման մակարդակն ավելի ցածր է, քան մյուս անցումային երկրներում: Այս խմբի երկրների համար հիմնական ցուցանիշը թույլ պետական ինստիտուտներն են՝ ինչպես հիմնական հանրային բարիքների և կարգավորող ֆունկցիաների բաշխման, այնպես էլ պետական վարչակազմում ներքին հսկողության և հաշվետվության գործող մեխանիզմների առումով:

Նարինե Սահակյան

²² Anticorruption in Transition; A Contribution to the Policy Debate, WB, Washington, D.C. 2000.

Հայաստանում կոռուպցիայի առաջացմանը նպաստող գործոնները կարելի է բաժանել երկու՝ կոռուպցիոն գործողությունների նկատմամբ առաջարկի և պահանջարկի խմբերի: Պահանջարկի (հանրության կողմից ձևավորվող) վրա ազդող գործոններից ամենակարևորն են.

- ❖ իրավասությունները և կարգերը (արտոնագրերի, լիցենզիաների, թույլտվությունների տրամադրումը, տնտեսության շահութաբեր ոլորտների վերահսկումը, պետական գնումների իրականացումը և այլն),
- ❖ հարկային համակարգի որոշակի առանձնահատկությունները (արտոնությունների տրամադրումը, կանխավճարների համակարգը, պարտքերի ներման կամ սառեցման գործընթացները և այլն),
- ❖ ֆինանսական միջոցների, ապրանքների և ծառայությունների ապահովումը շուկայականից ցածր գներով (արտոնյալ վարկերի տրամադրումը, պետական գնումների իրականացումը և այլն),
- ❖ հատկացումների վերաբերյալ որոշումները և այլն


(պետական պատվերի ապահովումը և այլն): Պետական պաշտոնյաների կողմից կոռուպցիոն գործողությունների առաջարկի վրա ազդում են հետևյալ գործոնները.

- ❖ վարչական-բյուրոկրատական ավանդույթները,
- ❖ պետական սեկտորում աշխատավարձերի մակարդակը,
- ❖ պատիժների (կամ դրանց բացակայության) համակարգը,
- ❖ ինստիտուցիոնալ հսկողության բացակայությունը կամ անարդյունավետությունը,
- ❖ օրենքների, օրենսդրական ակտերի կիրարկման ոչ թափանցիկությունը,
- ❖ իշխանությունների պահվածքը, նրանց գործողությունները, և այլն:

Հասարակական կարծիքի հարցման արդյունքներով, Հայաստանում կոռուպցիայի մակարդակի վրա ամենամեծ ազդեցություն ունեցող գործոնները պետական պաշտոնյաների ցածր աշխատավարձն է և կոռուպցիոն գործողությունների համար պատժի մեխանիզմների անբավարարությունը (նկար 2.8):

Կոռուպցիայի հիմնական պատճառները ՀՀ-ում²³

Նկար
2.8



Հարկ է նշել նաև երկու այլ գործոններ, որոնք անդրադարձել են ՀՀ-ում կոռուպցիայի մակարդակի ընդլայնման վրա՝ միջազգային առևտրի/բիզնեսի ընդլայնումը և սեփականաշնորհման գործընթացը: Միջազգային բիզնեսի ընդլայնումը ստեղծում է այնպիսի իրավիճակներ, երբ կաշառքների վճարումը²⁴ ընկերությունների համար դառնում է խիստ շահավետ, հնարավորություն ստեղծելով ստանալ լավագույն պայմանագրերը՝ շուկաներ արտոնյալ մուտք գործելու կամ հարկային արտոնություններ ստանալու նպատակով: Վերջին շրջանում իրականացված տնտեսական բարեփոխումների շարքում կոռուպցիոն խնդիրների հետ ա-

մենասերտ կերպով առնչվում են սեփականաշնորհման գործարքները: Անցումային տնտեսություններում կոռուպցիայի ամենամեծ աղբյուրը պետական կամ հանրային ձեռնարկություններն են:

Ինչպես համարյա բոլոր անցումային տնտեսություններում, Հայաստանում նույնպես առկա է օրինական, իրավական և վարչական գործառութային դաշտից դուրս իրականացվող ընդարձակ գործարար պրակտիկան, որով և պայմանավորված են պետական պաշտոնյաների և մասնավոր հատվածի փոխհարաբերությունները: «Հեշտացնող մուծումները» հաճախ օգ-

²³ Civil Society development Union, 2000, Perception of Corruption in Yerevan.

²⁴ Կոռուպցիան կաշառակերությունից զատ կարող է արտահայտվել նաև հովանավորչության, հասարակական ապրանքների և ծառայությունների գողության, քաղաքական կյանքի կոռումպացվածության, այլ ճանապարհներով հասարակությանը վնաս հասցնող գործողությունների տեսքով և այլն:

տագործվում են վավերացումներ և արտոնագրեր ստանալու նպատակով: Այն կարծես թե դարձել է հասարակության կողմից ընդունելի գործելակերպ: Այսօր մեր երկրի ցանկացած քաղաքացի համոզված է առանց կաշառքի իր օրինական իրավասությունների իրագործման անհնարինության մեջ: Ազդեցություն և կապեր ունեցող անձանց ներգրավվածությունը այս գործընթացներում նույնպես հազվադեպ է: Գործարարները վստահում և հենվում են այսպես կոչված «տանիքի» վրա:

Գործարար աշխարհի տեսանկյունից ընդհանուր օրենսդրական դաշտը զնահատվում է բավականին լավ, սակայն օրենքների կիրարկումը շատ հեռու է կատարյալ լինելուց: Օրենքները փոփոխվում են հաճախակի, իսկ կիրարկման նորմատիվային և կարգավորման ակտերը ուժի մեջ են մտնում զգալի ուշացումներով: Թե պետական ծառայողները և թե մասնավոր հատվածը շատ վատ են տեղեկացված օրենսդրական վերջին փոփոխությունների և նրանց կիրարկման մեկնաբանությունների մասին:

Տեղական և օտարերկրյա ներդրողներից շատերը որպես հնարավոր և արդյունավետ տարբերակներ բացառում են դատարան դիմելու և բողոքարկելու մեխանիզմները: Դրա փոխարեն նրանք ընտրում են «հեշտացնող վճարների» և «տանիքի» տարբերակները: Քիչ չեն դեպքերը, երբ խոշոր ներդրողը, հետագա հնարավոր բարդությունները բացառելու համար, մինչև գործունեություն ծավալելն է ձեռք բերում երկրի առաջին դեմքերի անմիջական և գործուն աջակցությունը: Ցավալի է, բայց սա է այսօր Հայաստանում գործող ամենավստահելի երաշխիքային համակարգը՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով:

Հասարակության մեջ կոռուպցիայի ունեցած բացասական հետևանքները կարելի է պայմանականորեն բաժանել չորս խմբերի՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական և զարգացման հիմնախնդիրների:

Կոռուպցիայի ունեցած քաղաքական հետևանքներից կարելի է ընդգծել այն, որ, փաստորեն, զանգվածային անօրինականությունների ու կաշառակերության արդյունքում կոռուպցիան կասկածի տակ է դնում իշխանությունների օրինականությունը, իշխող քաղաքական համակարգը և, ընդհանրապես, խարխլում է պետական կառույցների նկատմամբ բնակչության ունեցած հավատն ու վստահությունը²⁵, որն այնքան անիրաժեշտ է բարեփոխումների այս դժվարին փուլում: Ըստ էության, Հայաստանում կոռուպցիան քաղաքական ուժերի համար միջոց է ծառայում իշխանական տարբեր լծակներ և քաղաքական վերահսկման մեխանիզմներ ձեռք բերելու և դրանք իրենց ձեռքում պահելու համար:

Տնտեսական տեսանկյունից կոռուպցիան նպաստում է հասարակության մեջ եկամտների անօրինական վերաբաշխմանը, որը ոչ միայն դուրս է մնում պաշտոնական մարմինների վերահսկողությունից, այլև հանգեցնում է նրան, որ այդ թաքցված եկամուտ-

ները չեն հայտարարագրվում և համապատասխան հարկային եկամուտներ չեն մուտքագրվում պետական բյուջե՝ դրանով իսկ նպաստելով հասարակությունում եկամտների անարդյունավետ վերաբաշխմանը: Կոռուպցիայի և ստվերային տնտեսության միջև գոյություն ունի փոխադարձ կապ. մի կողմից ստվերային տնտեսությունը նպաստում է կոռուպցիոն տարրերի զարգացմանը, մյուս կողմից՝ կոռուպցիան ինքն է նպաստում տնտեսության ստվերային հատվածի ընդարձակմանը: Ընդհանրապես, կոռուպցիան, խաթարելով առողջ տնտեսական մրցակցությունը, բացասաբար է անդրադառնում նաև տնտեսական զարգացման վրա:

Սոցիալական տեսանկյունից կոռուպցիան, եկամտների նման անարդյունավետ վերաբաշխման, պետական հատվածի անարդյունավետության և պետության կողմից մատուցվող ծառայությունների ցածր որակի ու ծավալի միջոցով, ըստ էության, ուղղակիորեն նպաստում է անապահով խավի վիճակի առավել վատթարացմանը:

Զարգացման տեսանկյունից կոռուպցիան նվազեցնում է դոնոր երկրների և կազմակերպությունների կողմից իրականացվող տարբեր ոլորտների զարգացմանը նպաստող ծրագրերի արդյունավետությունը: Արդյունքում՝ պակասեցվում են նաև այդ ծրագրերի ծավալները: Դրանով կարելի է բացատրել դոնոր երկրների և կազմակերպությունների աջակցությունը կոռուպցիայի վերացման հարցում:

Կոռուպցիայի դեմ պայքարը հնարավոր է իրագործել պետական համակարգի բարեփոխումներից անկախ: Կոռուպցիայի մակարդակի կրճատման նպատակով մշակված ցանկացած ծրագրի հիմքում պետք է ընկած լինեն համապատասխան միջոցառումներ՝ ուղղված կոռուպցիոն գործողությունների նկատմամբ արդեն իսկ նշված պահանջարկի և առաջարկի գործունեների վերացմանը:

Պետք է նշել, որ ՀՀ կառավարության կողմից արդեն ընդունվել է կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգ, իսկ ներկայումս մշակվում է հակակոռուպցիոն ծրագիր, որն իր աջակցությունն է ստանում միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից (ներդիր 2.4): Այն նախատեսում է ինչպես գործող օրենսդրական դաշտի, մասնավորապես տնտեսական, դատական և իրավական ոլորտների կատարելագործում, այնպես էլ հակակոռուպցիոն օրենսդրական հատուկ փաթեթի ընդունում: Այն ուղղված է պետական պաշտոնյաների այսպես կոչված «եկամուտ կորզող» (rent seeking) գործողությունների սահմանափակմանը, ինչպես նաև, պետական կառավարման համակարգի բարեփոխումների իրականացման միջոցով, երկրի պետական կառույցների գործունեության արդյունավետության բարձրացմանը: ՀՀ վարչապետի որոշմամբ հակակոռուպցիոն հանձնաժողովի ստեղծման փաստը ևս վկայում է ՀՀ կառավարության լուրջ մտադրությունը կոռուպցիայի դեմ պայքար իրականացնելու գործում:

Կոռուպցիայի դեմ պայքարի ամենակարևոր, թեև ոչ բավարար նախապայմաններից մեկը երկրի ղեկավարության և քաղաքական վերնախավի կամքն է, շահագրգռվածությունն ու վճռականությունը, առանց որի ցանկացած հակակոռուպցիոն ծրագիր կմատնվի անհաջողության: Մյուս կողմից՝ վերջինիս հաջողությու-

յունը մեծապես պայմանավորված է նաև կառավարության կողմից կոռուպցիայի հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ հնարավորություններ և շահագրգռություն ունեցող հասարակությանը որպես գործընկեր ճանաչելով և նրա հետ արդյունավետ համագործակցությամբ:

Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի պետական ծրագրի հիմնական ուղղությունները

2.4
Ներդիր

ՀՀ կառավարության կողմից մշակվող կոռուպցիայի դեմ պայքարի պետական ծրագրի հիմնական ուղղությունները.

1. Նորմատիվային, իրավական և ինստիտուցիոնալ նախադրյալների ձևավորում.

«Կոռուպցիայի դեմ պայքարի մասին», «Պետական ծառայության մասին», «Քաղաքական կուսակցությունների մասին», «Կոռուպցիայի դեմ պայքարի պետական գործակալության մասին», լրբբինգի մասին, ապօրինի ճանապարհով ձեռք բերված ունեցվածքի օրինականացումը կանխող օրենքների ընդունում, հակամենաշնորհային օրենսդրության կատարելագործում,

ունեցվածքի ձեռք բերման և գրանցման մեխանիզմների, ստանդարտացման արտոնագրերի և հավաստագրման համակարգի պարզեցում, իշխանությունների գործունեության թափանցիկության ապահովում,

2. Դատաիրավական և իրավապահ համակարգի կատարելագործում.

ճյուղի քրեական օրենսգրքի ընդունում, կաշառակերության նկատմամբ տարբերակված մոտեցման կիրառում և քրեաիրավական նորմերի ներդրում՝ հանցագործության նշված տեսակի սուբյեկտների հասցեատերերի ընդլայնման համար, վարչական պատժամիջոցների լայն կիրառում,

3. Քաղաքացիական հասարակության ինստիտուտների դերի և միջազգային փորձի նշանակության բարձրացում.

քաղաքացիական հասարակության ինստիտուտների կողմից պետության առանձին սոցիալական գործառույթների իրականացման իրավունքի օրենսդրական ամրագրում,

Եվրախորհրդի քրեական և քաղաքացիական իրավունքի հարցերով և կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիաներին միացում:

Նարինե Սահակյան

2.10

Բյուջեֆային գործընթաց


Բյուջետային գործընթացի արդյունավետ իրականացմամբ են առաջին հերթին պայմանավորված երկրի տնտեսական կայունությունը, տնտեսության զարգացման աճի տեմպերը, բարեփոխումների նպատակամետ և լիարժեք իրականացումը: Սա տեսությունն է: Իրականում ՀՀ-ում բյուջեի կատարման ընթացքում մշտապես արձանագրվող խնդիրներից են՝ ծրագրային ցուցանիշների սահմանման իսկ փուլում անճշտությունների ամրագրումը, կառավարության կողմից բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունների ոչ ժամանակին կամ իսպառ չսահմանումը (բացառություն է 2001թ. բյուջեն, երբ դրանք սահմանվեցին տարեսկզբին), բազմաթիվ պաշտպանված հոդվածների պարբերական չկատարումը, համայնքային բյուջեների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության բացակայությունը, անգամ ակնհայտ չկա-

տարման պարագայում բյուջեի սեկվեստրի կիրառման անտեսումը:

2000թ. առաջին կիսամյակում բյուջեն եկամուտների ու տրանսֆերտների մասով կատարվեց 34,7%, ծախսայինը՝ 31,9%-ով²⁶, և բացահայտ էր տարեկան բյուջեի կատարման անհնարիությունը, սակայն եղած եկամուտների սահմաններում բյուջեի անհրաժեշտ ծախսերի կատարումը երաշխավորող սեկվեստրը չկիրառվեց: «Ավանդական» է դարձել բյուջեի կատարողականի արհեստական բարձրացումը հաշվանցումների միջոցով: Հարկ է օրենքով ամրագրել, որ հաշվանցումների իրականացման անհրաժեշտության դեպքում անգամ՝ դրանց գումարը արտացոլման ենթակա չէ բյուջեի կատարողական ցուցանիշներում: Սասնավորապես 2000թ.-ին կատարվել են 23,7 մլրդ. դրամի²⁷ հաշվանցումներ, կամ պետական բյուջեի կատարման ծավալի 11,3%:

Նկար 2.9 Դեֆական բյուջեի կափարողականը 1999-2000թթ.

2.9



Ծախսերն ըստ գործառնական դասակարգման

- Ընդհանուր բնույթի պետ. ծառայություններ
- Պաշտպանություն և անվտանգություն
- Կրթություն և գիտություն
- Առողջապահություն
- Սոցիալ. ապահովագր. և ապահովություն
- Մշակույթ և սպորտ
- Բնակ-կոմունալ տնտեսություն
- Վառելիք-էներգետիկ համալիր
- Գյուղատնտ., անտառ. և ջրային տնտես.
- Լեռնա-հանք. և վերամշ. արդյունաբ., շինարարություն և բնապահպանություն
- Տրանսպորտ և կապ
- Այլ ծախսեր

²⁶ ՀՀ 2000թ. պետական բյուջեի կատարման տարեկան հաշվարկները հաստատելու մասին օրենքի նախագիծ:
²⁷ Նույնը:

Խիստ անբավարար են բյուջեի ծախսերի արդյունավետությանն ուղղված միջոցառումները՝ ինչպես դրանց պահանջի ձևավորման, այնպես էլ վերահսկման փուլերում: Արդյունքում բյուջետային ֆինանսավորմամբ իրականացվող ծախսերը շատ հաճախ փոշիացվում են և չեն տալիս ցանկալի արդյունք: Այս առումով բյուջետային ծախսերի էական տնտեսում կարող է առաջացնել բոլոր ոլորտների պետական գնումների միասնական համակարգը, որը սկսել է գործել 2000թ. ընդունված «Պետական գնումների մասին» օրենքի հիման վրա:

Բյուջեի կառուցվածքում արմատական փոփոխությունները հնարավոր կլինի կատարել, եթե էներգետիկ, ինչպես նաև ջրային ռեսուրսների (ոռոգման և խմելու) օգտագործման համալիրներում, դրանց ռեսուրսների համար վճարելիության սկզբունքն անվերապահ ամրագրվի, որի արդյունքում հնարավոր կլինի հանել այդ ոլորտներից յուրաքանչյուրին տրվող տարեկան շուրջ 4.5-5 մլրդ. դրամ դոտացիաները: Նշված դոտացիաների կրճատումից առաջացող միջոցների, ինչպես նաև հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման միջոցով ստվերային ոլորտի կրճատման հաշվին բյուջեի հնարավոր հավելյալ եկամուտների (շուրջ 15 մլրդ. դրամ՝ ըստ փորձագիտական գնահատման) ծախսման առաջնահերթություններում պետք է լինեն բյուջետային աշխատողների աշխատավարձերի, կենսաթոշակների բարձրացումը, ինչպես նաև հանրապետական բյուջեի ծախսումների ապակենտրոնացումը հոգուտ տեղական բյուջեների, դրանց հատկացվող դոտացիաների անվերապահ կատարումը, (դրանց տեսակարար կշիռը պետական բյուջեի

հանդեպ ներկայումս կազմում է ընդամենը շուրջ 5%), իսկ հետագայում նաև տեղական բյուջեների ավելացումը ի հաշիվ հարկային եկամուտների վերաբաշխման: Հայաստանում բյուջետային միջոցների ապակենտրոնացումը, հաշվի առնելով դրանց կենտրոնացման խիստ բարձր աստիճանը, հանդիսանում է դրանց ծախսման հասցեագրվածության բարձրացման կարևոր ուղիներից մեկը:

Բյուջեի առանց այն էլ սուղ միջոցների, նրա պաշտպանված հողվածների չկատարման պարագայում, կասկածելի է բյուջեի միջոցներով իրականացվող վարկավորման պրակտիկան: Այդ վարկերը որպես կանոն ժամանակին չեն վերադարձվում, հաճախ վատնվում են՝ ընկալվելով որպես բյուջետային անվերադարձ ֆինանսավորման յուրովի ձև:

Բյուջեի եկամուտների հաշվառման և ծախսերի իրականացման արդյունավետության բարձրացման առումով՝ կարևորագույն խնդիրներից էր վերջին տարիների ընթացքում զանձապետական համակարգի կայացումը, որի սպասարկման մեջ անհրաժեշտ է ներառել նաև արտաբյուջետային ֆոնդերը, մասնավորապես սոցիալական ապահովագրության ֆոնդը:

Անցումային շրջանի բյուջեում առկա են միանվագ եկամուտներ, այն է՝ սեփականաշնորհումից գոյացած միջոցները, որոնք իրենց բնույթով չպետք է ուղղվեն բյուջեի ընթացիկ ծախսերին, այլ անհրաժեշտ են երկրի համար խոշորամասշտաբ ծրագրային խնդիրների լուծման համար և չեն կարող իրականացվել առանց պետական մասնակցության, ինչպիսին է տնտեսության համար անհրաժեշտ ենթակառուցվածքային ճյուղերի զարգացումը:

2.11

Ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորումը


Ներդրումների ներգրավման խթանումը, տնտեսությունում նրանց զգալի ծավալների առկայությունը եղել և մնում են խիստ որոշիչ՝ ՀՀ-ում տնտեսական զարգացման անհրաժեշտ տեմպեր և ծավալներ ապահովելու առումով: Ներդրումների ոլորտում ստեղծված իրավիճակի, ինչպես նաև ներդրումների վերլուծությունը ըստ առկա ծավալների, նրանց ճյուղային բաշխվածության և ծագման երկրների, թույլ է տալիս փաստել, որ չնայած ՀՀ կառավարության և հասարակության կողմից ներդրումների որոշիչ դերի գիտակցմանը, ձևավորված մակրոտնտեսական և ներքաղաքական կայունությանը, ներդրումները կարգավորող օրենսդրական դաշտի, դրանք խրախուսող ու պաշտպանող ենթակառուցվածքների գոյությանը, հարուստ և բավականին հզոր սփյուռքի առկայությանը և այդ ներուժի ներգրավման ուղղությամբ տարվող բավականին ակտիվ աշխատանքներին՝ ներդրումների ներկայիս ծավալները շատ հեռու են բավարար լինելուց. դրանք խիստ ցածր են տնտեսության կտրուկ և կայուն աճ ապահովելու համար:

Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) գումարային ծավալը 1995-2000թթ. ըն-

թացքում կազմել է մոտ 580 մլն. ԱՄՆ դոլար (նկար 2.10), որը ամենցածրն է ԱՊՀ երկրներում Մոլդովայից, Ղրղզստանից և Տաջիկստանից հետո: 2000թ.-ին իրականացվել են շատ քիչ թվով նոր ներդրումային ծրագրեր: Ներդրումների ծավալի երկու երրորդը կատարվել է Հայաստանում արդեն գործող ընկերությունների կողմից (ՕՏԵ, Գազարոմ/Իտերա և այլն): Ավելին, 1998թ.-ից ներդրումների ավելի քան կեսը իրականացվել է այդ երկու ընկերությունների կողմից, համապատասխանաբար՝ 142 մլն. և 148 մլն. ԱՄՆ դոլար: 2001թ. առաջին եռամսյակում ՕՈՒՆ-ների ծավալը կազմել է 36 մլն. ԱՄՆ դոլար: 2001թ. հունվարի դրությամբ Հայաստանում օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ գրանցված ձեռնարկություններից (1972 ձեռնարկություն) միայն 20-ն ունի 1 մլն. ԱՄՆ դոլարը գերազանցող ներդրում և միայն 6-ը՝ ավելի քան 10 մլն. դոլար: 1998-2000թթ. ներդրումները իրականացվել են հիմնականում հունական (27%), ռուսական (26%), կանադական (11%), ամերիկյան (10%) և ֆրանսիական (9%) ներդրողների կողմից: Այդ տարիներին իրականացված ներդրումները ուղղվել են էներգետիկայի (27%), կապի և հեռահաղորդակցության (26%), առևտրի (14%) և սննդի վերամշակման (13%) ոլորտներ:

Նկար 2.10 ՕՈՒՆ-ի դինամիկան ՀՀ-ում²⁸

2.10



Արտադրության և առևտրի ծավալների, զբաղվածության և տնտեսության զարգացման այլ չափորոշիչների վրա ՕՈՒՆ-ների ազդեցության վերաբերյալ համապատասխան վիճակագրության բացակայությունը թույլ չի տալիս հստակ գնահատել Հայաստանի տնտեսության վրա վերջինիս ազդեցության աստիճանը: Այդուհանդերձ այն կարելի է գնահատել խիստ սահմանափակ՝ ելնելով ներդրումների փոքր ծավալներից և շատ քիչ թվով ընկերություններում նրանց կենտրոնացվածությունից: Հայաստանում այսօր իրականացվող երկու ամենախոշոր ներդրումային ծրագրերի արդյունքում ունենք մենաշնորհներ՝ հեռահաղորդակցության և գազի շուկաներում, այստեղից բխող բոլոր բացասական հետևանքներով: ՕՈՒՆ-ները որոշակի ազդեցություն են ունեցել արտահանման զարգացման վրա, բայց հիմնականում հումքատար ապրանքատեսակների գծով (ադամանդների մշակում, ծխախոտի արտադրություն, ոսկու արդյունահանում և այլն): Մինչդեռ ներդրումները անհրաժեշտ է ուղղել այն ճյուղերի զարգացմանը, որոնք ունեն արդյունաբերության վերակառուցման, նրա տնտեսական մրցունակության բարձրացման ներքին ներուժ:

Ներդրումների փոքր ծավալները հիմք են տալիս փաստելու, որ իրական ներդրողը Հայաստանը չի դիտարկում որպես ներդրումների համար գրավիչ երկիր: Ներդրումներ կատարելու վերաբերյալ որոշումների ընդունման վրա ազդում են մի շարք գործոններ, որոնք ընդհանուր առմամբ հանգում են քաղաքական և սոցիալական կայունությանը, շուկայի մատչելիությանը, օրենսդրական դաշտի ապահովմանը, աշխատուժի որակի և նրա արժեքի միմյանց համապատասխանությանը, ռեսուրսների, բարձր տեխնոլոգիաների, ֆինանսական միջոցների մատչելիությանը, ակնկալվող շահույթի և շուկայի մեծությանը, ենթակառուցվածքի որակին և այլն: Միաժամանակ չի կարելի անտեսել նաև այնպիսի գործոն, ինչպիսին աշխարհաքաղաքական դիրքն է, որը որոշակի դեպքերում (Հայաստանի դեպքում մասնավորապես՝ մասնակի շրջափակման և «ընթացող» հակամարտության պայմաններում) կարող է առավելագույն բացասական ազդեցություն ունենալ ներդրումների ներգրավման համար: Վերը նշված գործոնների որոշ մասը օբյեկտիվ հիմք ունի և շատ քիչ է ենթակա ազդեցության և փոփոխության, մինչդեռ մյուսները մեծապես պայմանավորված են վարվող տնտեսական և ներդրումային քաղաքականությամբ:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների առավելագույն ծավալները գրանցվել են 1998թ., ինչը հիմնականում պայմանավորված էր սեփականաշնորհման մինչև այժմ իրականացված ամենախոշոր գործարքներով:

1999-2000թթ. ներդրումային ակտիվության զգալի անկումն, իհարկե, պայմանավորված էր նաև հոկտեմբերի 27-ի դեպքերով, որը լրջորեն սասանեց ներդրողների հավատը Հայաստանի, նրա քաղաքական կայունության նկատմամբ: Տնտեսական հետևանքները իրենց երկար սպասեցնել չտվեցին: 1999թ. վերջին և 2000թ. առաջին կիսամյակում ներդրումների ծավալները աննշան էին: Հայաստանի ներդրումային վարկանիշի բարձրացման անհրաժեշտությամբ են պայմանավորված վերջին երկու տարիներին բազմաթիվ բիզնես-ֆորումների կազմակերպումը, հատկապես 2001թ. մայիսին Նյու Յորքում անցկացված ֆորումը, որը շատ ներկայացուցչական էր:

րումային վարկանիշի բարելավման խնդիրը դարձավ խիստ արդիական²⁹:

Վերջին ժամանակներս ներդրումային միջավայրի ուսումնասիրությանն ուղղված բոլոր հետազոտությունները որպես ներդրումների ներգրավումը կասեցնող հիմնական գործոններից մեկը նշել են կոռուպցիան և, մասնավորապես, վարչարարական խոչընդոտները³⁰: Օրինակ, ներդրողների 78%-ը նշում է վարչարարական քաշքշուկները, 90%-ը ընդունում է, որ հաջող գործունեության համար խիստ կարևոր է քաղաքական և տնտեսական հզոր խմբերի հետ համագործակցելը (նրանց «տանիքի» ներքո աշխատելը), իսկ 87%-ի կարծիքով՝ անօրինական «օժանդակող մոնոսները» կամ կաշառքները բիզնեսի անբաժանելի մասն են կազմում:

Հետևապես, ներդրումների նկատմամբ վարվող քաղաքականության անհրաժեշտ փոփոխությունների օրենսդրական ամրագրման, ներդրումային միջավայրի բարելավման և ներդրումների խթանման նպատակով պետք է իրականացվեն մի շարք առաջնահերթ քայլեր: Անհրաժեշտ է.

- ✦ ներդրումները (օտարերկրյա և տեղական) կարգավորող օրենսդրական և նորմատիվային դաշտը դարձնել կանխատեսելի, նպաստող և հստակ՝ հնարավորինս քիչ տեղ թողնելով մեկնաբանությունների համար, վստահելի դարձնել դատաիրավական համակարգը (մասնավորապես՝ ներդրումները կարգավորող և գործարարության հետ առնչվող), շարունակել միջկառավարական ներդրումային համաձայնագրերի կնքման գործընթացը՝ լրացուցիչ երաշխիքներ ստեղծելով օտարերկրյա ներդրողների համար: Այս համաձայնագրերի առկայությունը հատկապես կարևոր է բարձր ռիսկային երկրների համար, որոնց թվին է պատկանում նաև Հայաստանը,
- ✦ օրենսդրորեն ամրագրել նույն իրավական ռեժիմը օտարերկրյա և տեղական ներդրողների համար: Այս խնդիրը հատկապես կարևորվում է այս փուլում, երբ զգալիորեն ավելացել են ներքին ներդրումների ծավալները և սկսել է «վերադառնալ» նախկին տարիներին Հայաստանից դուրս հոսած կապիտալը,
- ✦ օրենսդրորեն ամրագրել վեճերի լուծման միջազգային ընթացակարգերին դիմելու հնարավորությունը,
- ✦ վերջնականորեն ձևավորել ներդրումների խթանման օժանդակող ենթակառուցվածքը և արդյունավետ համակարգել նրանց աշխատանքը: Ապահովել Գործարարությանն աջակցման խորհրդի ակտիվ ներգրավվածությունը ներդրումային քաղաքականության իրականացման աշխատանքներին և ապահովել Հայկական զարգացման գործակալության կայացումն ու արդյունավետ գործունեությունը,

²⁹ Հայաստանի ներդրումային վարկանիշի բարձրացման անհրաժեշտությամբ են պայմանավորված վերջին երկու տարիներին բազմաթիվ բիզնես-ֆորումների կազմակերպումը, հատկապես 2001թ. մայիսին Նյու Յորքում անցկացված ֆորումը, որը շատ ներկայացուցչական էր:
³⁰ Օտարերկրյա ներդրումների խորհրդատվական ծառայության ներկայացրած հաշվետվություն, 2001:

2.11 | ԼԵՐՈՂՈՒՄԱՅԻՆ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՄԻՋՎՈՐՈՒՄԻ ԶԵՎՎՈՐՈՒՄ

- ✦ հաշվի առնել միջազգային պրակտիկայում ներկայումս առավել կարևորվող սոցիալ-մշակութային այնպիսի գործոնները, ինչպիսիք են ազգերի մշակութային, կրոնական, սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, դրանց ազդեցությունը, որը հատկապես սրվում է համատեղ ձեռնարկությունների ստեղծման, ձեռնարկությունները օտարերկրացիներին սեփականաշնորհելու ժամանակ: Անհրաժեշտ է հասարակության մեջ օտարերկրացիների, մասնավորապես՝ օտարերկրյա ներդրողների նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորել, ինչպես նաև հայկական ձեռնարկությունները և ձեռնարկատերերին նախապատրաստել որակապես նոր տնտեսական հարաբերություններում ներգրավվելու համար, հատուկ ռազմավարություն մշակել սփյուռքահայ ներդրողի համար՝ ելակետ ընդունելով այն հանգամանքը, որ հենց նա է հանդիսանում տնտեսության այսօրվա իրական ներդրողը,
- ✦ կայացնել արտերկրում ՀՀ առևտրական ներկայացուցչությունների համակարգը, որի հիմնական խնդիրներից պետք է լինի օտարերկրյա ներդրումների ներգրավումը,
- ✦ օգտագործել միջազգային հանրության աջակցությունն ու փորձը համապատասխան բնագավառներում, օրինակ՝ ամբողջականորեն ձևավորել նաև երկրի ներդրումային հնարավորությունները ներկայացնող ծրագրերի տեղեկատվական բազան: Այն հնարավորություն կտա երկրի ներսում ճիշտ գնահատել

- ներդրումային ներուժը, իսկ միջազգային ֆինանսական կազմակերպություններին և առանձին ներդրողներին՝ գրագետ և մրցունակ ձևով ներկայացնել ՀՀ տնտեսությունը,
- ✦ օգտվել միջազգային հանրության (WB, UNDP, UNIDO, USAID, IFC, TACIS, Know-How Fund և այլն) տեխնիկական աջակցությունից և գիտելիքներից ոլորտի զարգացման նպատակով,
- ✦ հայտարարել ներդրումների համար գերակա համարվող ոլորտները, օրենսդրորեն ամրագրել պետության վերաբերմունքը այդ ոլորտների զարգացմանը և այնտեղ կատարված ներդրումներին: Մինչև օրս ներդրումների համար պաշտոնապես գերակա ոլորտ է հայտարարվել (2000թ. դեկտեմբեր) միայն ինֆորմացիոն տեխնոլոգիաների ճյուղը,
- ✦ ձևավորել միջազգային չափանիշներին համապատասխան ապահովագրական համակարգ՝ ներդրումները հնարավոր ռիսկերից ապահովագրելու համար:

Տնտեսական աճը ցանկացած երկրի զարգացման սցենարի կարևոր գործոն է, սակայն այն ինքնապատակ չէ: Հայաստանում այն պետք է նպատակաուղղված լինի աղքատության կրճատմանը, որի համար առաջին հերթին անհրաժեշտ են որակական փոփոխություններ, մասնավորապես, բաշխման հարաբերություններում՝ նպատակաուղղված եկամուտների անհավասարության կրճատմանը, մարդկային կապիտալում կատարվող ներդրումների, փոքր բիզնեսի, սոցիալական ապահովագրության զարգացման հիմնախնդիրներում:



Անկախ

**Հայաստանի
սոցիալական
կողմնորոշումը**

3.1	Աղքատությունը և սոցիալական աջակցության քաղաքականությունը	91
3.2	Կենսաթոշակային ապահովություն	98
3.3	Զբաղվածություն և աշխատանք	101
3.4	Միգրացիան որպես սոցիալական խնդիր	105
3.5	Կրթություն	107
3.6	Առողջապահություն	110
3.7	Մշակույթ. ավանդույթներ և հնարավորություններ	112
3.8	Մշակութային քաղաքականության իրականացման գործիքները	113

Ներդիրներ

- 3.1 Փոքրիկ օրրան փոքրիկների համար
- 3.2 Մարդկանց անօրինական փոխադրումներ և մաքսանենգ ճանապարհով մարդկանց փոխադրումներ
- 3.3 Մշակութային ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը

Նկարներ

- 3.1 Բնակչության եկամուտների միջին չափերը և նվազագույն սպառողական զամբյուղը
- 3.2 Զբաղվածների, կենսաթոշակառուների և փաստացի հատկացում կատարողների թվաքանակը 1998-2000թթ.
- 3.3 Կենսաթոշակային ապահովությանն ուղղված ֆինանսական միջոցները
- 3.4 Միջին աշխատավարձի և միջին կենսաթոշակի աճի դինամիկան ԶՀ-ում 1997-2000թթ.
- 3.5 Կենսաթոշակային ապահովության նոր (առաջարկվող) համակարգի կառուցվածքը ԶՀ-ում
- 3.6 Գործազուրկների տարիքային կազմը ԶՀ-ում
- 3.7 ԶՀ-ում աշխատանքի և զբաղվածության ոլորտի կառավարման պետական համակարգը
- 3.8 Ամուսնությունների թվի և բնական աճի գործակիցը 1000 բնակչի հաշվով
- 3.9 Կրթության ոլորտի ֆինանսավորման ծախսերը ԶՀ-ում 1992-2000թթ.
- 3.10 Արդի կյանքում հաջողության հասնելու նախադրյալների ստորակարգումը
- 3.11 Ժողովրդագրական ցուցանիշների շարժը 1991-2001թթ.

Աղյուսակներ

- 3.1 ԶՀ հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները անկախության 10 տարիներին (1991-2000թթ.)
- 3.2 Աղքատության ցուցանիշների միտումները 1996 և 1998/1999 թթ. ընթացքում
- 3.3 Զբաղվածության հիմնական ցուցանիշները ԶՀ-ում
- 3.4 ԶՀ կրթական համակարգի որոշ բնութագրեր

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության դրույթը ենթադրում է, որ պետությունը ժողովրդի առջև պարտավորություն է ստանձնում պայմաններ ստեղծել անհատի համար կազմակերպելու իր կենսագործունեությունը ընտանիքում, աշխատանքային կոլեկտիվում և հասարակության մեջ:

Սոցիալական ոլորտում բարեփոխումների իրականացումն անհնարին է առանց հասարակական կյանքի բոլոր կողմերի արմատական փոփոխությունների, իսկ հաջողությունների մասին հնարավոր է դատել բնակչության կենսամակարդակի աստիճանով և գործընթացի նկատմամբ բնակչության տարբեր խավերի ունեցած վերաբերմունքով: Սոցիալական (ինչպես նաև ցանկացած ոլորտում) անհրաժեշտ են բարեփոխումների իրականացման հետևյալ նախադրյալները. շահագրգիռ մթնոլորտի ձևավորում և քաղաքական կամքի դրսևորում, բարեփոխումների հայեցակարգի մշակում, տարածում, հետադարձ կապի ապահովում, համաձայնողականության (կոնսենսուսի) ձևավորում, նոր օրենսդրական դաշտի ձևավորում և դրա համարժեք կիրառում: Անկախության տասը տարիներին ՀՀ-ում վարվող սոցիալական քաղաքականությունը վեր-

լուծելու նպատակով, պայմանականորեն այն կարելի է բաժանել երկու փուլի.

1-ին փուլը (1990-1995թթ.) պետության և անհատի միջև նոր՝ շուկայական հարաբերությունների ձևավորման սկիզբն էր: Այս փուլում Հայաստանում սոցիալական քաղաքականությունն իրականում դիտվում էր որպես ընդհանուր տնտեսական ռազմավարության տարր:

2-րդ փուլը (1996թ.- ցայսօր) կազմակերպական առումով սոցիալական ապահովության համակարգը ինքնուրույն և ֆինանսավորման տարբեր աղբյուրներ ունեցող, այսինքն՝ սոցիալական աջակցության և սոցիալական ապահովագրության համակարգերի տարանջատման սկիզբն էր:

Անկախության տասը տարիներին ՀՀ-ում իրականացված սոցիալական քաղաքականության ցուցանիշների դինամիկայի վերլուծությունը (աղյուսակ 3.1) ցույց է տալիս, որ սոցիալական ոլորտի բարեփոխումները չեն առաջնորդվել հստակ մշակված սոցիալական քաղաքականության գերակայությունների և նպատակների դասակարգմամբ և ունեցել են ավելի շատ մարտավարական, քան ռազմավարական բնույթ:

ՀՀ հիմնական սոցիալ-փնտեսական ցուցանիշները անկախության 10 տարիներին (1991-2000թթ.)¹

Աղյուսակ

3.1

Ցուցանիշները	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000
Տնտեսության մեջ զբաղվածների թվաքանակը, հազ. մարդ	1672	1578	1543	1488	1476	1436	1372	1337	1298	1283
Գործազրկության մակարդակը (%)	-	1.8	5.3	6.6	6.7	9.3	10.8	9.4	11.2	10.9
Բնակչ. դրամ. եկամուտները, մլրդ. դրամ	14.7	41.7	395.0	93.7	289.3	434.3	514.4	581.3	627.1	698.4
Բնակչ. դրամ. ծախսերը, մլրդ. դրամ	12.6	27.5	250.1	84.9	274.5	423.6	519.8	578.9	631.7	682.0
Միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ	337	1395	12173	174.8	7680	9469	13581	18000	20157	21330*
Նվազագույն աշխատավարձը, դրամ	130-140	1200	7350	375	540	830	1000	1000	5000	5000
Միջին ամսական կենսաթոշակը, ռուբլի/դրամ	167	1497	9024	1509	2584	3114	3673	3793	4421	4481
Բնակչության դեպոզիտները խնայքանկի հիմնարկներում ² , մլրդ. դրամ	2111	2284	10300	146	952	2148	3124	5524	8073	12282

1991-1993թթ. եկամուտների, ծախսերի, աշխատավարձի և դեպոզիտների հաշվարկը արված է ռուբլով:

ՀՀ-ում իրականացվող սոցիալական բարեփոխումները դեռևս համարժեք չեն բնակչության կենսական հիմնախնդիրներին: Հանրապետության բնակչության 68,3%-ը բավարարված չէ ներկայիս իրավիճակով, իսկ 74,3%-ը անբավարար է գնահատում իրականացվող տնտեսական բարեփոխումների ընթացքը³: Կենսամակարդակի և կյանքի որակի խիստ անկման հետևան-

քով նկատվում են սոցիալական «հյուսվածքի» քայքայման վտանգավոր կանխանշաններ՝ հանցագործությունների, հիվանդությունների, հաշմանդամության, մահացության աճ, իսկ ինչ վերաբերում է կենսամակարդակի և սոցիալական զարգացման որոշ ցուցանիշներում նկատվող դրական տեղաշարժերին, ապա դրանք այդպես էլ զարգացման կայուն միտումներ չունեցան:

¹ ՀՀ ԱԿԾ կողմից տրամադրված տվյալներ:

² 1995թ. սկսած՝ ներգրավված են առևտրային բանկերը:

³ Գ. Պողոսյան, Բնակչության վերաբերմունքը Հայաստանում ընթացող տնտեսական բարեփոխումների նկատմամբ, «Հայացք տնտեսությանը», 2000թ., 20 մարտի, էջ 7:

Սոցիալական ոլորտում որպես դրական տեղաշարժ կարելի է նշել համակարգում իրականացված կառուցվածքային բարեփոխումները, բնակչության սոցիալական ապահովության նոր կառուցակարգերի (մեխանիզմների) ստեղծումը, ոլորտը կանոնակարգող բազմաթիվ իրավական ակտերի առկայությունը, սոցիալական աշխատողների պատրաստման և վերապատրաստման ծրագրերը, կայուն համագործակցությունը միջազգային կառույցների հետ, սոցիալական ոլորտի կառավարման համակարգի որոշակի տեխնիկական զինումը և, հիարկե, ոլորտի բարեփոխումներին ուղղված բազմաթիվ ծրագրերի առկայությունը: Ոլորտի հետագա զարգացումը հիմնականում կախված է վերջիններիս ծավալից և հետևողական իրագործումից:

ՀՀ սոցիալական քաղաքականությունը դեռևս կայացման փուլում է, իսկ առկա բացթողումները պայմանավորված են ՀՀ-ում տնտեսական իրական հնարավորությունների վրա հիմնված սոցիալական քաղաքականության միասնական հայեցակարգի բացակայությամբ, սոցիալական ապահովության համակարգի սահմանակարգային (ինստիտուցիոնալ) ու օրենսդրական հիմքերի անբավարարությամբ, ինչպես նաև սոցիալական գործընթացների մոնիտորինգի համակարգի բացակայությամբ, որի ներդրումը կբարձրացներ իրականացվող բարեփոխումների սոցիալական հետևանքների (օրինակ աղքատության) կանխատեսումների ճշգրտությունը:

3.1

Աղքատությունը և սոցիալական աջակցության քաղաքականությունը

Նախկին ԽՍՀՄ երկրներում, ինչպիսին Հայաստանն է, մարդկային և եկամտային աղքատությունը նոր երևույթներ են, որոնք լայն տարածում են ստացել վերջին տասնամյակում: Կառավարության և քաղաքացիական հասարակության խնդիրն է մշակել աղքատության կրճատման ռազմավարություններ և ընդգրկել դրանք մակրոտնտեսական մակարդակում և բյուջետային գործընթացներում:

Աղքատության գնահատումները գլխավորապես հիմնված են 1996թ.⁴ և 1998-1999թթ.⁵ ՀՀ ԱԿԾ կողմից

միջ անցկացված կենսամակարդակի գնահատման երկու մեծածավալ հետազոտությունների տվյալների վրա: Դրանց արդյունքների համեմատությունը աղքատության կրճատման դրական միտում չմատնանշեց (աղքատ է համարվում բնակչության 54%-ը 1996թ. և 55%-ը՝ 1999թ.), բացառություն է կազմում աղքատության սրությունն ու խորությունը բնութագրող ցուցանիշների (աղյուսակ 3.2), ինչպես նաև ծայրահեղ աղքատների տեսակարար կշռի նվազումը 27,7%-ից 22,9%-ի, ինչը մասամբ վերագրվում է ընտանեկան նպաստների համակարգի ներդրմանը:

Աղքատության ցուցանիշների միպոլմները

Աղյուսակ 1996–1998/1999 թթ. ընթացքում⁶

3.2

	1996			1998-99		
	Ընդամենը	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
Աղքատության մակարդակ, % բնակչության թվում	54.73	58.8	48.0	55.05	58.27	50.76
այդ թվում՝ շատ աղքատներ, %	27.67	29.6	24.4	22.91	23.17	22.55
Աղքատության սրություն, %	11.1	-	-	9.0	-	-
Աղքատության խորություն, %	21.5	-	-	19.0	-	-

⁴ Առաջին հետազոտությունը անց է կացվել 1996թ. նոյեմբեր-դեկտեմբերին և ընդգրկել է 5000 տնային տնտեսություններ: ՀՀ ԱԿԾ-ին մեթոդաբանական, տեխնիկական և ֆինանսական աջակցություն է տրամադրել ՀԲ-ն: Հետազոտության արդյունքները ամփոփվել և տպագրվել են, տես՝ «Սոցիալական պատկերը և աղքատությունը Հայաստանում», ՀՀ վիճակագրության նախարարություն, 1998թ. և «Սոցիալական աջակցության բարելավումը Հայաստանում», ՀԲ զեկույց N 19385-AM, հունիսի 8, 1999թ.

⁵ 1998-99թթ. անց է կացվել կենսամակարդակի մեծածավալ հետազոտություն (3600 տնային տնտեսություններ բոլոր մարզերից)՝ ՀԲ տեխնիկական օժանդակությամբ: Տես՝ «Սոցիալական իրավիճակը և աղքատությունը Հայաստանում», ՀՀ ԱԿԾ, 2001թ.

⁶ «Հայաստանի սոցիալական միտումներ», լրատու N 1 տպագրության մեջ է: Օգտագործվել են աղբյուր 4 և 5:

Չնայած վերջին տարիներին գրանցված բավական կայուն տնտեսական ցուցանիշներին Հայաստանին չի հաջողվել տնտեսական աճը ուղղել բնակչության լայն շերտերի բարգավաճմանը: Իրականում այդ աճը չի անդրադարձել աղքատության կրճատմանը և հակառակը՝ եկամուտների ոչ հավասար բաշխման հետևանքով էլ ավելի է խորացրել սոցիալ-տնտեսական բևեռացումը: Առավել հարուստ և առավել աղքատ բնակչության 20%-ի ծախսերի տարբերությունը կազմում է 6,6 անգամ, իսկ եկամուտներինը՝ 32,2 անգամ: Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի, Լատինական Ամերիկայի, հարավարևելյան երկրների շարքում Հայաստանը դեռևս առաջին տեղում է եկամուտների անհավասարությամբ⁷:

Տնտեսական բարեփոխումների արդյունքների և սոցիալական զարգացման նպատակների միջև եղած անհամապատասխանությունը հանգեցրել է մակրոտնտեսական, սոցիալական և աղքատության ցուցանիշների միջև հետևողականության բացակայությանը: Չնայած մարդկային հնարավորությունների բարձր մակարդակին (չափահասների գրագիտությունը 98.8% է, կյանքի սպասվելիք տևողությունը՝ 72.5 տարի) մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով (շուրջ 2545 ԱՄՆ դ.՝ ըստ ԳՀ-ի) և աղքատության մակարդակով Հայաստանը կարելի է համեմատել ցածր զարգացում ունեցող երկրների հետ:

Աղքատության կրճատումը կառավարության օրակարգի առավել կարևոր և հրատապ խնդիրներից մեկն է, որ օժանդակվում և խրախուսվում է միջազգային հանրության կողմից: Հայաստանը ԱՊՀ վեց այն երկրներից մեկն է, որ ներկայումս ձեռնամուխ են եղել Աղքատության նվազեցման ռազմավարական ծրագրին (ԱՆԻԾ), որի մշակման աշխատանքները ՀՀ-ում սկսվել են դեռևս 2000թ.: Գործընթացի առաջին քայլը միջանկյալ ԱՆԻԾ-ի պատրաստումն էր: Հիմնվեց ԱՆԻԾ մշակման աշխատանքների համակարգման խորհուրդ՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի գլխավորությամբ: Միջանկյալ ԱՆԻԾ-ն ընդունվեց 2001թ. մարտին, և կառավարությունը սկսեց ամբողջական ԱՆԻԾ-ի պատրաստումը:

Աղքատության կրճատման խնդրի նկատմամբ համապարփակ մոտեցում ապահովելու նպատակով նախատեսվում է կազմավորել աշխատանքային խմբեր, որոնք պատասխանատու կլինեն:


- ա) ծրագրի կազմման գիտա-մեթոդական ապահովման և ընդհանուր համակարգման,
- բ) աղքատության վիճակի վերլուծության, նպատակադրման և աղքատության կրճատման սոցիալական ուղղվածությամբ քաղաքականության մշակման,
- գ) կառավարման կատարելագործման և տնտեսության զարգացման միջոցով աղքատության կրճատման քաղաքականության մշակման,
- դ) ծրագրի մշակման գործընթացի լուսաբանման և քննարկումներին հանրությանը տեղեկացնելու և մասնակցության ապահովման կազմակերպման համար:

Չնայած գործընթացը և վերջնական արդյունքը գտնվում են պետության հովանավորության ներքո՝ միջազգային հանրության ընդգրկվածությունը զգալի է ինչպես ֆինանսական, այնպես էլ տեխնիկական օժանդակության տեսանկյունից: Ամփոփ ԱՆԻԾ-ն պետք է համընթաց լինի երկրի զարգացման ռազմավարությանը, ներառի զարգացման սցենարները՝ հատուկ ուշադրություն դարձնելով աղքատության նվազմանը նպաստող տնտեսական աճին, մարդկային զարգացմանը և պետական կառավարման բարելավմանը: Ներկայումս Հայաստանը փորձում է սոցիալական ապահովության համակարգի միջոցով լուծել խոցելի խմբերի և աղքատների կարիքները:

Հայաստանում հասցեական սոցիալական աջակցության քաղաքականության մշակման և իրականացման առաջին քայլերը կատարվել են դեռևս 1992-1995թթ.՝ բնակչության սոցիալապես խոցելի խմբերին տրվող տարբեր տիպի նպաստների, ինչպես նաև դրամական փոխհատուցումների ձևով: 1999թ. հունվարի 1-ից ՀՀ կառավարության որոշմամբ ներդրվեց ընտանիքների կարիքավորության աստիճանի վրա հիմնված հասցեական սոցիալական աջակցության միասնական ընտանեկան նպաստների համակարգը (ԸՆՀ): Կարիքավորության աստիճանից ելնող սոցիալական օգնության հասցեագրումն ընտանիքին սոցիալական աջակցության քաղաքականության երկրորդ լուրջ քայլն էր: ԸՆՀ-ի հիմքում դրվեց կարիքավորության աստիճանի զնահատման անուղղակի եղանակը, որը ենթադրում է, եկամտից բացի, մի շարք այլ, աղքատության հետ անուղղակի կապ ունեցող ցուցանիշների հաշվառում: ԸՆՀ-ն ընդգրկեց ՀՀ բնակչության մոտ 27%-ը:

Բնակչության եկամուտների միջին չափերը և նվազագույն սպառողական զամբյուղը

Նկար



3.1

7 Making Transition Work for Everyone, Poverty and Inequality in Europe and Central Asia. WB 2000, Washington D.C. 2000, p. 140



ԸՆՅ-ն (կամ աղքատության նպաստը) հաշվարկվում է՝ նպաստի բազային մասին (3000 դրամ) ավելացնելով ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար տրվող հավելումը (1300 դրամ): ԸՆՅ-ում ընդգրկված ընտանիքների թվաքանակի տատանումները հաճախակի են՝ 1999թ. հունվարի 211 հազարի փոխարեն մայիսին այն կազմել է 229 հազար, մինչդեռ 2001թ. հուլիսին նվազել է՝ հասնելով 183 հազարի: Բացի դրանից, միայն մարտ ամսին ավելի քան 13000 ընտանիքի կողմից ՀՀ սոցապ նախարարություն է ներկայացվել առավել անապահով ճանաչվելու և ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկվելու հայտ:

ԸՆՅ-ի ներդրումը վերջին տարիներին իրականացված սոցիալական ապահովության քաղաքականության ամենամեծ և ընդգրկուն ծրագիրն էր, որի հիմնական նպատակն է սոցիալական արդարության հիմքով սոցիալական աջակցության ապահովումը: Օգտագործելով նախորդ տարիներին ձեռք բերած փորձը՝ ընտանիքների անապահովության գնահատման կարգի կատարելագործման նպատակով 3.07.2000թ. թիվ 350 որոշմամբ հաստատվեց աղքատության ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության նշանակման ու վճարման նոր կարգ, ինչպես նաև սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններին կից ստեղծվեցին սոցիալական աջակցության խորհուրդներ և առաջին անգամ հասարակական կազմակերպություններին (ՀԿ) հնարավորություն տրվեց մասնակցելու պետական սոցիալական աջակցության տրամադրման աշխատանքներին:

ՀՀ սոցապ նախարարության կողմից մշակված «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծով համակարգի հետագա զարգացումը նախատեսում է անցնել սոցիալական աջակցության տրամադրման տարբերակված մոտեցման, որը նպատակաուղղված կլինի չափազանց աղքատ տնային տնտեսությունների վիճակի բարելավմանը: Նշյալ օրենքի նախագծով սոցիալական աջակցությունը նախատեսվում է տրամադրել նաև անօթևանության, գործազրկության, հաշմանդամության, ծերության, երկարատև (ժամանա-

կավոր) անաշխատունակության, բռնության ենթարկվելու, մուրացկանության և թափառաշրջիկության, ակոհոլամոլության և թմրամոլության, երեխաների ծնողական խնամքից զրկված լինելու, դժբախտ պատահարի, ազատագրված վայրերում գտնվելու և այնտեղից վերադառնալու, նաև օրենքով սահմանված այլ դեպքերում:

Սոցիալական աջակցության արդյունավետության ապահովման և սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման գործում կարևոր նշանակություն ունի նաև «սոցիալական աշխատողի» ինստիտուտի ձևավորումն ու կայացումը, որը նույնպես նախատեսված է նշյալ օրենքի նախագծով:

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում առաջին անգամ մշակվում է ընտանիքի նկատմամբ իրականացվող պետական քաղաքականության հայեցակարգ, ինչը նախապայման է ստեղծում ընտանիքը քայքայող բացասական միտումների հաղթահարման, աղքատության կրճատման, ընտանիքի անդամների առողջության և երեխաների դաստիարակության բարելավման համար:

ՀՀ կառավարության 2000 թ. հոկտեմբերի 14-ի որոշմամբ ստեղծվել է տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման հանրապետական կենտրոն, որը Երևանում սպասարկում է մոտ 1200 միայնակ տարեց և հաշմանդամ անձանց:

2001 թվականը հանրապետությունում հայտարարված է «Երեխայի իրավունքների պաշտպանության տարի», որը մեծ խթան է երեխաների հիմնախնդիրների լուծման համար: Սկսվել է որդեգրման ենթակա երեխաների, որդեգրողների թեկնածուների և որդեգրողների կենտրոնացված հաշվառումը: Ներկայումս ՀՀ-ում գործող 8 պետական և 3 ոչ պետական մանկատներում խնամվում են 1000-ից ավելի երեխաներ: Վիճակի բարելավման ուղղությամբ մեծ դեր են խաղում ՀՀ-ում գործող բազմաթիվ հասարակական կազմակերպությունները (ներդիր 3.1):

3.1 Փոքրիկ օրրան փոքրիկների համար

Տասը տարեկան Հերմինեն ընտանիքի միակ վաստակողն է: Նա օրվա հացով ապահովում է մորն ու հաշմանդամ կրտսեր եղբորը: Հերմինեի հայրը ազատամարտիկ էր և մի քանի տարի առաջ զոհվել է Լաչինում: Հերմինեն մուրացկանություն էր անում Երևանի մարդաշատ փողոցներում և այգիներում: Քչերն էին անտարբեր Հերմինեի վարդագույն թշիկների և պայծառ սև աչքերի հանդեպ, որոնք ընդգծվում են նրա վարակիչ ժպիտով:

«Օրրանի» աշխատակիցները, փողոցում հանդիպելով Հերմինեին ու նրա մորը, հրավիրեցին այդ յուրահատուկ հայկական օրրանը: Իհարկե, առաջին անգամ չէր, որ Հերմինեի ընտանիքին աջակցություն էր առաջարկվում, սակայն դեռևս ոչ մեկը իրական օգնություն չէր ցուցաբերել նրանց և խոսքից գործի չէր անցել: Այս անգամ հանդիպման հաջորդ օրը Հերմինեն ինքն իրեն ու իր մանկությունը գտավ «Օրրանի» ջերմ մթնոլորտում՝ 44 այլ երեխաների հետ, որոնք իր նման կամ մուրացկանություն էին արել, կամ ծաղիկ վաճառել, կամ գոյատևել իրենց ընտանիքներում, որոնք հազիվ կարողանում են ծայրը ծայրին հասցնել:

«Օրրան» կենտրոնը հիմնադրվել է 2000թ. ապրիլին՝ նպատակ ունենալով կարիքավոր երեխաներին կտրել փողոցային կյանքից, կանխել մուրացկանության աճը և օգնել անապահով ընտանիքների երեխաներին ու միայնակ թոշակառուներին:

Երեխաները դպրոցական պարապմունքներից հետո գալիս են կենտրոն, ճաշում են, որից հետո «Օրրանի» ութ աշխատակիցների օգնությամբ, պատրաստում են տնային աշխատանքները:

Մանկաբույժը մշտապես հսկում է երեխաների առողջական վիճակն ու հիգիենան, հոգեբանը երեխաների հետ պարբերաբար զրուցում է նրանց հուզող հարցերի շուրջ, իսկ սոցիալական աշխատողը լուծում է դպրոցում և ընտանիքում ծագող ամենօրյա հարցերը: Երեխաները հաճախ այցելում են թանգարաններ, թատրոններ, զբոսայգիներ, եկեղեցիներ, հյուրեր ընդունում Յայաստանից և արտերկրից: Ընդհանրապես «Օրրանի» ծրագրերում ընդգրկվածների բոլոր կարիքները հոգում է կենտրոնը:

Ժամը 6-ին երեխաները գնում են իրենց օջախները: «Օրրանի» հիմնադիրները (Արմինե և Ռաֆֆի Յովհաննիսյաններ) համոզված են, որ երեխան պետք է մեծանա մոր գրկում, ընտանեկան հարկի տակ: Այն ժամանակ, երբ երեխաները դպրոցում են, կենտրոնը հյուրընկալում է 27 կարիքավոր ծերերի: Երբ երեխաները ազատ ժամանակ են ունենում, փորձում են օգտակար լինել ծերերին: Վերջիններս էլ իրենց հերթին երեխաներին սովորեցնում են գրել, կարդալ, զբաղվել ասեղնագործությամբ, այգեգործությամբ, տարբեր արհեստներով:

«Օրրան» այցելող ծերերը մեծ ոգևորությամբ են մասնակցում մանուկների կազմակերպած միջոցառումներին. երգում են, պարում, պատմում հետաքրքիր պատմություններ:

Երեխաների և ծերերի այդօրինակ շփումները չափազանց արդյունավետ են: Նախ՝ ծերերը «Օրրանի» սաների մեջ տեսնում են իրենցից հեռացած զավակներին ու թռռներին, իսկ մանուկների դաստիարակության մեջ արմատավորվում է ավագներից հարգելու, սատարելու բարոյական սկզբունքը:

Այնուամենայնիվ ամեն ինչ չէ, որ Յերմինեի կյանքում հեքիաթային է ու բարի: «Օրրանի» աշխատակիցները անվերջ աշխատում են Յերմինեի մայրիկի հետ, որը փոքրիկին կրկին ուզում է տեսնել փողոցում:

Սակայն Յերմինեն արդեն ճիշտ ուղու վրա է: Նա սովորել է, որ մարդը պետք է իր ապրուստը վաստակի և ոչ թե մուրա: Յերմինեն և նրա պես հազարավորները պետք է փրկվեն: Դա են պահանջում մարդկությունը և Յայաստանի ապագան:

«Օրրան» կենտրոն

Շուկայական տնտեսության անցման ժամանակաշրջանում կանայք հայտնվում են առավել անբարենպաստ պայմաններում: Նրանք ավելի հաճախ են հայտնվում աղքատության մեջ, քան տղամարդիկ, ավելի երկար են հայտնվում այդ վիճակում և աղքատության դեմ պայքարելիս ավելի հաճախ են հանդի-

պում խոչընդոտների: Յայաստանում անապահովների ընդհանուր թվի 53%-ը կազմում են կանայք, 46%-ը՝ տղամարդիկ: Առավել խոցելի խմբերի շարքում են նաև կենսաթոշակառուները, քանի որ նրանք տուժում են երկակի. կորցնելով իրենց խնայողությունները և հնարավորություն չունենալով ստեղծել «նոր եկամուտներ»:

3.2

Կենսաթոշակային ապահովություն

Խորհրդային իշխանության տարիներին սոցիալական դաշտում գործում էր «պետությունը սոցիալական վճարումների մենաշնորհային կատարողն է» սկզբունքը, որի պատճառով հասարակության գիտակցության մեջ քիչ տեղ էր մնում գործատուի և աշխատողի պատասխանատվության համար: Վերջինս հատկանշական էր նաև կենսաթոշակային համակարգին, որտեղ բացակայում է աշխատողի անձնական ներդրման և կենսաթոշակի միջև կապը, բավականաչափ շատ են արտոնյալ կենսաթոշակները և, վերջապես, գոյություն ունի կենսաթոշակային ապահովության պետական մենաշնորհ:

Վերջին տասը տարիներին ՀՀ կենսաթոշակային համակարգի (ԿՀ) գործառնությունն ապահովող օրենսդրական դաշտը ենթարկվել է եական փոփոխությունների:


Ըստ «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի (1996թ.) կենսաթոշակների վճարման աղբյուր են հանդիսանում պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները, որոնք կենտրոնացվում են ինքնուրույն արտաբյուջետային հիմնադրամում: Հիմնադրամի մի-

ջոցների 85%-ը ծախսվում է կենսաթոշակային ապահովության, մնացածն՝ այլ ապահովագրական դեպքերի հետ կապված վճարումների համար:

ՀՀ ԿՀ-ն ներկայումս գործում է «հընթաց», այսինքն՝ մուտքագրվող բոլոր ֆինանսական միջոցներն ամբողջությամբ ուղղվում են կենսաթոշակների վճարմանը: Ըստ գործող ԿՀ-ի ամբողջ կյանքում աշխատածը ստանում է գրեթե նույնքան, որքան ընդամենը մի քանի տարի աշխատած անհատը⁸: Ներկայումս ԿՀ-ն սպասարկում է 30%-ով ավելի կենսաթոշակառուի, քան 10 տարի առաջ: 1999թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ բնակչության յուրաքանչյուր վեցերորդը կենսաթոշակառու էր, իսկ յուրաքանչյուր իններորդը՝ տարիքային կենսաթոշակառու⁹: Իսկ ՀՀ տնտեսության մեջ զբաղվածների և կենսաթոշակառուների թվաքանակի հարաբերակցությունը՝ ԿՀ-ի բեռնվածության գործակիցը (մեկ կենսաթոշակառուին ընկնող զբաղվածների թիվը), պաշտոնական տվյալներով կազմում է 2,3:1 (փորձագիտական գնահատումներով՝ 1:1)¹⁰: Նման իրավիճակը պայմանավորված է ոչ միայն ժողովրդագրական, այլև կենսաթոշակի նշանակման և վճարման պայմաններով (նկար 3.2):

Զբաղվածների, կենսաթոշակառուների և փաստացի հարկացու կապարողների թվաքանակը 1998-2000թթ.¹¹ (հազ. մարդ)

Նկար 3.2



⁸ ԿՀ սոցիալական արդարության սկզբունքի բացակայության մասին է վկայում հետևյալ փաստը: «ՀՀ սոցալ նախարարությունը բողոքի համար եկել էր մի կենսաթոշակառու, խիստ դժգոհ էր այն փաստից, որ ինքը, ունենալով 30 տարվա աշխատանքային ստաժ, ստանում է ընդամենը 1500 դրամով ավելի կենսաթոշակ, քան իր կինը, որն ամբողջ կյանքում չի աշխատել: Նա այնքան վրդովված էր, որ անգամ առաջարկում էր չվճարել իր կնոջ կենսաթոշակը»: (ՀՀ սոցալ նախարարության կենսաթոշակային ապահովության վարչության պետի պատմածից):

⁹ Սոցիալ- տնտեսական իրավիճակը և աղքատությունը Հայաստանում: Ազգային զեկույց, ՀՀ ԱԿԾ, 1998թ.:

¹⁰ Պաշտոնական և անկախ տվյալների տարբերությունը կարելի է բացատրել նրանով, որ խոսքը վերաբերում է այն վարձու աշխատողներին, որոնց համար գործատուները հաշվարկում և կատարում են վճարումներ, զբաղվածների մնացած մասը հարկադիր պարապուրդում գտնվողներն են, որոնց համար գործատուները վճարներ չեն կատարում և ստվերային տնտեսության մեջ աշխատողները և, վերջապես, առկա են նաև վիճակագրական ոչ ճշգրիտ տվյալներ:

¹¹ Հաշվարկները կատարվել են ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի փաստագի նյութերի վերլուծության հիման վրա:

Անցումային ժամանակաշրջանում կտրուկ ընդլայնվել են ստվերային տնտեսության շրջանակները՝ զգալիորեն փոքրացնելով պարտադիր սոցիալական ապահովագրական վճարների հավաքման բազան: Ըստ անկախ գնահատումների, պաշտոնապես չհաշվառվող գործունեության բաժնեմասը 1998թ. կազմել է ՀՆԱ-ի գրեթե մեկ երրորդը¹²: Պարտադիր սոցիալական ապահովագրական վճարներ կատարելուց խուսափելու ամբողջական ազդեցությունը կարելի է հաշվարկել՝ ապահովագրական վճարների հավաքման «պոտենցիալ» բազան համեմատելով փաստացիի հետ (կկազմի 38,6%), միաժամանակ ենթադրելով 100%-ի հասնող լիակատար օրինապահություն: Այդ դեպքում ապահովագրական վճարներ կատարողների կողմից փոխանցված գումարները ներկա մակարդակի համեմատ կաճեին մոտ 2,6 անգամ, իսկ միջին կենսաթոշակը՝ 4481-ից կհասներ 11 650 դրամի:

Ներկայումս ՀՀ-ում գործող սոցիալական, այդ թվում նաև կենսաթոշակային ապահովության համակարգին շատ ավելի բնորոշ է սոցիալական աջակցությունը, քան ապահովագրությունը. բացի դրանից, նշված համակարգերը հստակ տարանջատված չեն: Այսօր կենսաթոշակային ապահովությանը տրամադրվող միջոցների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում տատանվում է 3,0-4,0%-ի սահմաններում (1998թ. - 2,6%), որը աշխարհի զարգացած, նույնիսկ ԱՊՀ և բալթյան երկրների (բացառությամբ Վրաստանի) համեմատությամբ ցածր ցուցանիշ է (10-12%)¹³:

Բավականաչափ բարձր է ՀՀ-ում ԿՀ-ի «ոչ ապահովագրական» ծանրաբեռնվածությունը: Այսօր սոցիալական (առանց ապահովագրական մուծումներ կատարելու) կենսաթոշակ են ստանում կենսաթոշակառուների ընդհանուր թվի 8,3%-ը: Բացի դրանից, բավականաչափ միջոցներ են ծախսվում արտոնյալ, այ-

սինքն՝ վաղաժամկետ կենսաթոշակային իրավունք ունեցողների կենսաթոշակների վճարմանը (նկար 3.3):


ԿՀ-ի ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամում հավաքվող ապահովագրական վճարների հաշվին (90,3%-ը կազմում են գործատուի վճարները, իսկ 9,7%-ը՝ աշխատողի աշխատավարձից կատարվող վճարները): Պետության՝ որպես ԿՀ-ի հիմնական դոնորի, դերը խիստ կրճատվել է. եթե մինչև 1991թ. պետական բյուջեից ֆինանսավորվում էր համակարգի 70%-ը, ապա ներկայումս այն կրճատվել է 14 անգամ և կազմում է ընդամենը 4,81%¹⁴:

ՀՀ-ում սոցիալական սուբյեկտների՝ պետության, գործատուների և աշխատողների դերն ու գործառույթներն արմատապես փոխվել են: Միաժամանակ դեռևս պահպանվում է համակարգի գործունեության հիմնական՝ բաշխման հարաբերությունների և «ընդհանուր կաթսայի» սկզբունքը: Կենսաթոշակի չափը կախված չէ ապահովագրական վճարների մեծությունից: «Համահարթեցումը», այսինքն՝ ԿՀ-ի ոչ ապահովագրական բնույթը դրա զարգացման հիմնական խոչընդոտն է:

ՀՀ ժողովրդագրական իրավիճակի կանխատեսումները վկայում են, որ առաջիկա 15 տարիներին կենսաթոշակային տարիքի է հասնելու 2-րդ աշխարհամարտի տարիներին (երբ ծնունդների թիվը խիստ նվազել էր) ծնված սերունդը, որի արդյունքում մինչև 2015թ. ՀՀ-ում կենսաթոշակի անցնողների թիվը կպակասի: Սակայն ԿՀ-ի համար նպաստավոր ժողովրդագրական այս իրավիճակը 2015թ. հետո զգալիորեն կվատթարանա, քանզի 2-րդ աշխարհամարտից հետո և խորհրդային իշխանության տարիներին Հայաստանում ծնելիության ցուցանիշները բարձր էին¹⁵:

Կենսաթոշակային ապահովությանն ուղղված ֆինանսական միջոցները

Նկար 3.3



¹² “Экономика и жизнь”, 1999, N 10.

¹³ “Пенсия “. Ежемесячный журнал РФ. 1999 г. N 11, стр. 56.

¹⁴ Հաշվարկները կատարվել են խորհրդային իշխանության տարիներին կենսաթոշակների ֆինանսավորման, իսկ հետագայում ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեի եկամուտների աղբյուրների փաստացի տվյալների վերլուծության հիման վրա:

¹⁵ Հայաստանի կենսաթոշակային համակարգի ֆինանսական և ակտուարական վերլուծություն: USAID/PADKO, հաշվետվություն թիվ 35, 19.03.2001 թ.: Միջազգային համատեղ պլանավորում և զարգացում, 21-րդ դարի լուծումներ, էջ 15:



Կանխատեսումները ցույց են տալիս, որ ՀՀ բնակչության ընդհանուր թվում 65 և բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռը 2020թ. կհասնի 19,6, իսկ 2050թ.՝ 27,9 տոկոսի¹⁶ ներկայիս 11,3%-ի դիմաց:


ԿՀ-ի հիմնական նպատակը կենսաթոշակի անցնելու դեպքում աշխատողից նախկինում ստացած եկամտի փոխհատուցումն է: Այդ է պատճառը, որ սոցիալական ապահովագրական վճարները հաշվարկվում են կազմակերպությունների աշխատավարձի ֆոնդից (միջինը 28%-ի չափով) և աշխատողների աշխատավարձից (3%-ի չափով): Մինչդեռ ներկայումս ստեղծվել է մի իրավիճակ, որի պայմաններում աշխատավարձը ձևավորվում է փոփոխվում է իր օրենքներով, կենսաթոշակն՝ իր հայտնվելով «բարիկաղի մյուս կողմում»: Ըստ ՀՀ ԱԿԾ տվյալների, միջին աշխատավարձի մակարդակը՝ կենսամիջոցների նվազագույնի համեմատ

շատ ցածր է (աղյուսակ 3.1) և չի կարող բավարարել անգամ աշխատողի նվազագույն պահանջումները:

Նման պայմաններում ԿՀ-ի փոխհատուցման գործակիցը՝ միջին կենսաթոշակի հարաբերությունը միջին աշխատավարձին, կազմում է ընդամենը 21,2%, իսկ ՀՀ միջին կենսաթոշակը (մոտ 4500 դրամ)՝ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի ընդամենը 17%-ը¹⁷: Այն ՀՀ-ում երբևէ չի գերազանցել 35%-ը (ԽՍՀՄ-ում այդ ցուցանիշը կազմում էր 50%): Բացի դրանից, սկսել է ի հայտ գալ աշխատուժի՝ զբաղվածության մեկ վիճակից մյուսին անցնելու շարժ. վարձու աշխատող-ինքնագաղված աշխատող-գործազուրկ-ընկերության անդամ-գործատու և այլն, որի արդյունքում առաջանում են չգրանցված աշխատանքային հարաբերություններ՝ առանց պարտադիր սոցիալական ապահովագրական վճարներ կատարելու պարտավորության:

Միջին աշխատավարձի և միջին կենսաթոշակի աճի դինամիկան ՀՀ-ում 1997-2000 թթ.

Նկար 3.4



ԿՀ-ի բարելավման նպատակով բարեփոխումները պետք է ուղղվեն ծրագրային քաղաքականության մշակմանը և դրա իրականացման վարչական կառավարմանը: ԿՀ-ի կառավարմանը մասնակցող տարբեր մարմինների (ՀՀ սոցապ նախարարություն, ՀՀ սոցապահովագրության պետական հիմնադրամ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն) աշխատանքում բազմաթիվ գործառույթներ կրկնվում են, բացակայում է դրանց միջև իրավասությունների և պարտականությունների հստակ տարանջումը: Այսպիսով, «վերջնական արդյունքի» նկատմամբ հստակ պատասխանատվության բացակայությունը համակարգի կառավարումը դարձրել է անարդյունավետ, իսկ վերջինս ՀՀ-ում երբևէ չի դիտարկվել որպես արդյունավետության բարձրացման գործոն:

խություն, սոցիալական գործընկերության ստեղծման միջոցով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև իրավասությունների, գործառույթների և պարտականությունների իրավական ամրագրում:

Գործող համակարգի խորացող ճգնաժամը կանխելու համար ՀՀ սոցապ նախարարության կողմից մշակվել է կենսաթոշակային համակարգի կայունացման ծրագիր և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի նախագիծ, ըստ որի կենսաթոշակային նոր համակարգը կընդգրկի պետական կենսաթոշակային ապահովագրություն, պետական կենսաթոշակային ապահովություն, կամավոր կենսաթոշակային ապահովագրություն (Նկար 3.5):


Այդ տեսանկյունից ռազմավարական խնդիր է այնպիսի ԿՀ-ի ստեղծումը, որը պետությանը վերապահելով նոր դերակատարում՝ հասարակության անդամների համար պայմաններ կստեղծի «վաստակելու» իրենց կենսաթոշակը և հոգ կտանի միայն նրանց մասին, ովքեր ի վիճակի չեն այդ անելու: Խնդիրը պահանջում է համակարգված մոտեցում՝ ԿՀ-ի նոր մոդելի ձևավորում, դրա սահմանակարգային բազայի փոփո-

Առաջարկվում է նաև կենսաթոշակի հաշվարկման նոր կառուցակարգ, կենսաթոշակի գնալու տարիքի (63) և պարտադիր ապահովագրական ստաժի (դարձնել 25 տարի) հավասարեցում կանանց և տղամարդկանց համար: ԿՀ-ում արդեն սկսվել է անհատական (անձնավորված) հաշվառման ներդրման գործընթացը, որը հնարավորություն կտա կենսաթոշակի մեծությունը կապել յուրաքանչյուրի մասնակցության հետ:

¹⁶ Материалы международного семинара: "Пенсионная реформа", 15-22 сентября 1997г., Тель-Авив, Израиль.
¹⁷ Հիմք է ընդունվել ՀՀ ԱԿԾ և ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սենդամբերի կազմով, կառուցվածքով և էներգետիկայով հաշվարկված նմանազան սառնոտան ժամուրհի ամօթը 2001թ. 1-ին եռամսյակի միաստացի միջին ցուցանիշը:

Կենսաթոշակային ապահովության նոր (առաջարկվող) համակարգի կառուցվածքը 33-ում

Նկար
3.5



3.3

Զբաղվածություն և աշխատանք

1994-2001թթ. աշխատաշուկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավիճակը Հայաստանի աշխատաշուկայում դեռևս խիստ լարված է. շարունակում է խորանալ

աշխատուժի պահանջարկի և առաջարկի անհամապատասխանությունը, իսկ զբաղվածության հիմնահարցերը ոչ միայն չեն լուծվել, այլև ավելի են սրվել (աղյուսակ 3.3):

Զբաղվածության հիմնական ցուցանիշները 33-ում

Աղյուսակ
3.2

Ցուցանիշներ	Չափի միավորը	1992թ.	1993թ.	1994թ.	1995թ.	1996թ.	1997թ.	1998թ.	1999թ.	2000թ.
Աշխատուժի թիվը	հազ մարդ	1607,2	1630,2	1593,1	1581,9	1583,5	1538,3	1476,4	1462,4	1447,2
Զբաղվածների թիվը	—,,—	1578	1543	1488	1476	1436	1372	1337	1298	1283
Գործազուրկների թիվը	—,,—	29,1	86,9	105,5	105,5	147,9	166,1	139,1	164,2	169,5
Գործազուրկների թիվը ըստ կրթության բարձրագույն միջն. մասնագիտական	—,,—	12,2	14,9	15,2	14,8	18,8	21,6	16,4	20,1	18,4
Գործազուրկների թիվը՝ ծանայողներ բանվորներ	—,,—	18,7	25,7	22,9	31,3	36,2	39,4	31,8	40,2	36,7
Գործազուրկների թիվը՝ ծանայողներ բանվորներ	—,,—	29,9	33,7	36,4	46,2	55,7	72,3	49,2	63,7	54,2
Գործազուրկների թիվը ըստ տարիքի՝ մինչև 30 տարեկան	—,,—	46,8	56,0	56,0	83,9	99,8	102,1	84,6	111,2	99,7
30 - 50 տարեկան	—,,—	39,1	46,9	47,7	59,6	70,6	69,7	49,6	54,4	45,5
50 - ից բարձր	—,,—	29,9	36,1	36,2	61,0	75,1	88,8	73,2	105,0	94,6
Զբաղվածության ծանայության միջոցով աշխատանքի տեղավորվածների թիվը տարվա ընթացքում	—,,—	7,7	8,4	28,6	11,1	13,6	15,9	11,0	15,6	13,8
Գործազրկության նպաստի ստացման միջին տևողությունը	ամիս	4255	5351	4075	2758	4418	4091	5379	10702	10557
Գործազրկության մակարդակը	%	5,6	4,4	4,1	4,0	8,5	8,5	8,5	8,5	8,5
Գործազրկության մակարդակը	%	1,8	5,3	6,6	6,7	9,3	10,8	9,4	11,2	11,7

* Աշխատուժի, զբաղվածների և գործազուրկների թիվը, ինչպես նաև գործազրկության մակարդակը հաշվարկված է միջին տարեկանով:



Վերջին տարիներին ՀՀ աշխատաշուկայում նկատվում է նաև թաքնված գործազրկության և թաքնված զբաղվածության աճ: Վերջինս պայմանավորված է չգրանցված գործունեություն իրականացնող գործատուների (հատկապես մասնավոր հատվածում) և որևէ տեղ չգրանցված աշխատողների, ինչպես նաև չգրանցված ինքնազբաղվածների 41,3%-ի¹⁸ առկայությամբ:

Թաքնված գործազրկությունը (ԱՄԿ-ի առաջարկած մեթոդաբանությամբ հաշվարկված) կազմել է 12,7%¹⁹: Իրականում այն ավելի բարձր է՝ ի հաշիվ ոչ տեսանելի թերզբաղվածների, ինչպես նաև հողասեփականատեր գյուղացիների այն մասի, որը չունի հողը մշակելու կարողություն, սակայն որպես գործազուրկ չի հաշվառվում:

2000թ. տվյալներով Ջրաղվածության հանրապետական ծառայությունում (ԶՀԾ) հաշվառման են կանգնել 178767 չզբաղված քաղաքացիներ, որոնցից 86,1%-ը (153919 մարդ) ստացել է գործազուրկի կարգավիճակ: Նպաստառու գործազուրկների թիվը 2000թ. դեկտեմբերին կազմել է 10,9 հազ. մարդ (գործազրկության նպաստի միջին չափը՝ 3185 դրամ՝ մոտ 6 ԱՄՆ դոլար): 2000թ. ընթացքում ԶՀԾ կողմից աշխատանքի է տեղավորվել 10557 գործազուրկ: Գործազրկության մակարդակը (հաշվարկված գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության հարաբերակցությամբ), ըստ պաշտոնական տվյալների, 2000թ. կազմել է 11,7%, իսկ 1999թ.՝ 11,2%²⁰:


Սակայն, ըստ 1999թ. 1075 տնային տնտեսություններում իրականացված աշխատուժի ընտրամրային հետազոտության նախնական արդյունքների, ԱՄԿ կողմից ընդունված «գործազուրկի» սահմանմամբ²¹ գործազրկության իրական մակարդակը կազմել է 34,4%: Երկարատև գործազուրկների թիվը (1 տարի և ավելի) շարունակում է մնալ բարձր և 2001թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է գործազուրկների 73,5%-ը:

Մարզերում գրանցված տվյալների վերլուծությունը²² ցույց է տալիս, որ գործազրկության մակարդակը հանրապետության միջինից 2,1 անգամ բարձր է աղետի գոտում՝ Շիրակի մարզում, 1,9 անգամ՝ հարավում՝ Սյունիքի մարզում, և 1,6 անգամ՝ Լոռու մարզում: Գործազուրկ բնակչության 94,9%-ը կենտրոնացած է քաղաքային բնակավայրերում, նրանցից 29,7%-ը՝ Երևան, 16,8%-ը՝ Գյումրի և 7,7%-ը՝ Վանաձոր քաղաքներում: Կանանց տեսակարար կշիռը գործազուրկների կազմում շարունակում է մնալ բարձր և 2001թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 64,6%: Գործազուրկների կրթական մակարդակը տարվա համեմատ մնացել է գրեթե անփոփոխ (աղյուսակ 3.3):

Գործազուրկների տարիքային կազմում (նկար 3.6) նկատելի է 31-50 տարեկանների տեսակարար կշռի աճի միտում, ինչը փաստում է նաև վերամասնագիտացման դասընթացների և ծառայությունների զարգացման անհրաժեշտությունը:

Նկար 3.6 Գործազուրկների տարիքային կազմը ՀՀ-ում

3.6



Վերջին տարիներին իշխանությունների կողմից որդեգրվել է զբաղվածության ակտիվ քաղաքականություն և իրականացվում են աշխատաշուկայի լարվածության մեղմացմանը ուղղված միջոցառումներ: Սակայն, ըստ փորձագիտական կանխատեսումների (մինչև 2007թ.), ամեն տարի աշխատանքային տարիք մուտք կգործեն միջին հաշվով 70-80 հազար պատանիներ ու աղջիկներ, և տարեկան միջին հաշվով աշխատանքի կարիք կզգա 50-55 հազար մարդ, որը Հայաստանի համար էական թիվ է, ինչը կհանգեցնի աշխատաշուկայում անհավասարակշռության հետագա խորացմանը²³: Ցավոք, ներկայումս անզամ աշխատանքի առկայությունը դեռևս ասպիտակ կյանքի գրավական չէ: Տնտեսության պետական հատվածում միջին անվանական աշխատավարձը 2000թ. հունվար-սեպտեմբերին

կազմել է 17996 դրամ (մոտ 33 ԱՄՆ դոլար), ոչ պետական հատվածում՝ 25710 դրամ (մոտ 47 ԱՄՆ դոլար): Ընդ որում աշխատավարձի չափը որևէ կապ չունի նվազագույն սպառողական զանբյուրի (ն.ս.զ.) արժեքի հետ, որը տարբեր փորձագիտական գնահատումներով կազմում է 60-65 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: ՀՀ-ում զբաղված բնակչության 17%-ը դասվում է շատ աղքատների խմբին այն դեպքում, երբ փաստացի ն.ս.զ. արժեքը, այսինքն աղքատության բացարձակ գիծը գնահատվել է 11735 դրամ (մոտ 21 ԱՄՆ դոլար²⁴): Փաստորեն ՀՀ-ում այսօր աշխատավարձը չի կատարում իրեն վերապահված վերարտադրողական և խթանիչ գործառնությունները և չարտացոլելով կազմակերպությունների ներսում ստեղծված նոր հարաբերությունները՝ սոցիալական լարվածության խորացման պատճառ է դառնում:

¹⁸ ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ ԱԿԾ, Երևան 2001թ.:
¹⁹ ՀՀ ԱԿԾ-ին տեղեկություններ տրամադրող 9000 տնտեսավարող սուբյեկտներ, 2000թ.:
²⁰ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի համաձայն, գործազուրկ են համարվում 16 և բարձր տարիքի այն քաղաքացիները, ովքեր չունեն աշխատանք, դիմել են ԶՀԾ աշխատանք ստանալու նպատակով և ունեն առնվազն 1 տարվա աշխատանքային ստաժ:
²¹ Ըստ ԱՄԿ կողմից առաջադրվող գործազրկության ստանդարտ սահմանման, գործազուրկ են համարվում բոլոր այն անձինք, ովքեր աշխատանք չեն ունեցել, աշխատանք են փնտրել և պատրաստ են եղել անմիջապես անցնել աշխատանքի:
²² Վ. Ե. Խոջաբեկյան, Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում, Երևան, 1998թ.:
²³ ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ ԱԿԾ, Երևան, 2001թ.:
²⁴ Հայաստանում սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծությունը, ՀՀ ԱԿԾ տարեկան զեկուլյա, 2000թ.

Եթե մինչև վերջին տարիները ՀՀ զբաղվածության քաղաքականությունը հիմնականում կարելի էր առավելապես պասիվ բնութագրել, ապա 1999թ.-ից այն սկսեց ձեռք բերել ակտիվ քաղաքականությանը բնորոշ կողմնորոշիչներ. սոցիալական ապահովության համակարգի զարգացման 1999-2001թթ. ծրագրում աշխատանքի և զբաղվածության ոլորտի ռազմավարությամբ առաջադրված խնդիրները արդեն առաջնային են համարում մարդկանց աշխատանքային ակտիվության խթանումը և դրա համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Սակայն ծրագրով նախանշված միջոցառումները կամ թերի են իրականացվել, կամ էլ բոլորովին չեն կատարվել: Այսպես, զբաղվածության ակտիվ քաղաքականության ռազմավարության առանցքային դրույթներից մեկի՝ ձեռնարկատիրական գործունեության և ինքնազբաղվածության ծրագրերի խրախուսման շրջանակներում 2001թ. հունվարի 1-ի դրությամբ պլանավորված 300 գործազուրկի փոխարեն ֆինանսական աջակցություն է տրվել ընդամենը 10 գործազուրկի՝ 4,2 մլն. դրամ (մոտ 8000 ԱՄՆ դոլար) ընդհանուր գումարով, որի արդյունքում ստեղծվել է 23 աշխատատեղ: 2000թ. ընթացքում ֆինանսավորվել են 98 բիզնես-ծրագրեր 153 գործազուրկների համար 36 մլն. դրամ ընդհանուր գումարով: Սակայն, 2001թ. ապրիլին ֆինանսական միջոցների սղության և բիզնես-ծրագրերի անհատույց տրամադրման դրամաշնորհային ծրագրերը անարդյունավետ համարվեցին և գործընթացը կասեցվեց: Չեն իրականացվել նաև ծրագրով նախատեսված հաշմանդամների մասնագիտական ուսուցման, նրանց աշխատանքի վերականգնման նպատակով նախատեսված կենտրոնի ստեղծման աշխատանքները: ՀՀ-ում բավականին ցածր են ակտիվ աշխատաշուկայի ստեղծմանն ուղղված ծախսերը

(ՀՆԱ-ի 0,03%-ը): 1999թ. աշխատաշուկայի կարգավորմանը հատկացված միջոցների ընդամենը 5,1%-ն է ուղղվել զբաղվածության ակտիվ քաղաքականության իրականացմանը, մինչդեռ 93%-ը օգտագործվել է նպաստների վճարման համար:

ԶՀԾ կողմից գործազուրկների վերամասնագիտացմանն ու որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումները նույնպես դժվար է արդյունավետ համարել: 1998թ. ԶՀԾ կողմից վերապատրաստվել է 348 գործազուրկ, 1999թ.՝ 441, 2000թ.՝ նախատեսված 933-ի փոխարեն՝ 612 գործազուրկ, որոնց 70%-ն է տեղավորվել աշխատանքի: Բացակայում է տեղեկատվությունը վերջինների նոր աշխատատեղերում աշխատելու տևողության մասին, սահմանափակ է ներգրավված գործազուրկների քանակը և չի համապատասխանում ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին: Անբավարար են գործազուրկների վերապատրաստման և կրթության ծախսերը (1999 թ. դրանք կազմել են աշխատաշուկայի ընդհանուր ծախսերի 2,1%-ը)²⁵:

Որպես ակտիվ շուկայի տարր՝ խիստ կարևոր գործոն են հասարակական աշխատանքները: Մինչև այժմ կազմակերպվել են 31223 մարդ-օր ընդհանուր ծավալով աշխատանքներ, հիմնականում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրով: Մինչդեռ հասարակական աշխատանքների սխեման շատ ճկուն է, և նրա առավել լայն կիրառումը կարող էր լուծել մի շարք նյութական և սոցիալական խնդիրներ:

ՀՀ բնակչության զբաղվածության պետական կառավարումը իրականացվում է ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական մարմնի՝ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության կողմից (նկար 3.7):

ՀՀ-ում աշխատանքի և զբաղվածության ոլորտի կառավարման պետական համակարգը

Նկար
3.7



Ձբաղվածության հանրապետական ծառայությանը (ԶՀԾ) վերապահված են զբաղվածության պետական կարգավորման մարտավարական և օպերատիվ գործառնություններ: ՀՀ-ում գործում են զբաղվածության ծառայության 51 տարածքային կենտրոններ, որոնցից 10-ն ունեն մարզային կենտրոնների կարգավիճակ: Երևան քաղաքում, ըստ համայնքների, գործում են 10 տարածքային կենտրոններ:

Մինչև վերջերս ԶՀԾ-ին վերապահված էին նաև ՀՀ աշխատանքային օրենսդրության և կանոնների

պահպանման հսկողական գործառնություններ, որոնք, սակայն, չէին կարող իրականացվել անհրաժեշտ կազմակերպական կառուցվածքների, մեխանիզմների և համապատասխան օրենսդրական դաշտի բացակայության պայմաններում: Աշխատանքի տեսչական գործառնությունները ՀՀ կառավարության թիվ 428 որոշմամբ (16.05.01թ.) վերապահվեցին ՀՀ սոցապ նախարարության աշխատանքի և աշխատավարձի քաղաքականության վարչությանը, այնուհանդերձ, քանի դեռ բացակայում են տեսչական գործառնություններ իրականացնելու

²⁵ Արևիկյան ՀՀ զբաղվածության քաղաքականությանը: TACIS, փետրվար, 2001 թ.:



համար անհրաժեշտ մեխանիզմները, կատարված կառուցվածքային փոփոխությունը չի կարող հանգեցնել աշխատանքի տեսչությունների ինստիտուտի կայացմանը, և խնդիրը առաջիկա ժամանակաշրջանում կմնա չլուծված:

Զբաղվածության ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտը չի համապատասխանում տնտեսության իրական վիճակին և չի նպաստում նրա զարգացմանը: Այն էական բարելավման կարիք ունի:

Մշակման փուլում են «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ նոր օրենքի, «Գործազրկության դեպքերից պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ աշխատանքային նոր օրենսգրքի նախագծերը: Գործող աշխատանքային օրենսգրքը ոչ միայն չի համապատասխանում ազատականացված տնտեսության պահանջներին, այլև չի երաշխավորում սեփականության կազմակերպչական տարբեր ձևերի գոյությունը:

Զբաղվածության ոլորտի կարգավորմանը նպաստող կարևոր խնդիրներից կարելի է առանձնացնել՝

- աշխատանքի և զբաղվածության բնագավառների հստակ և ամբողջական գաղափարախոսության մշակումը,
- զբաղվածության քաղաքականության կողմնորոշիչների, արդյունավետության չափանիշների հստակեցումը,
- ոլորտին առնչվող օրենսդրական դաշտի կատարելագործումը,
- զբաղվածության քաղաքականության մշակումը տարածքային և տեղական մակարդակներով՝ հաշվի առնելով տարածքային առանձնահատկությունները,
- կառավարման համակարգի կառուցվածքի կատարելագործումը,
- նոր պայմաններին աշխատանքի վարձատրության խնդիրների հարմարեցումը,
- հասարակական աշխատանքների ընդլայնումը,
- բիզնես-ծրագրերի մշակման և բիզնեսը վարելու վերապատրաստման ծրագրերի նախորդումը ձեռներեցության օժանդակման ծրագրերին,
- ձեռնարկությունների ներսում վերապատրաստման կազմակերպումը, դրան ակտիվ մասնակցություն ապահովող մեխանիզմների ստեղծումը:

Սոցիալական գործընկերություն

Ներկայիս պայմաններում, երբ գործող աշխատանքային օրենսգրքը այլևս անկարող է լուծել հասարակության առջև ծառայած խնդիրները, սոցիալական գործընկերությունը՝ որպես սոցիալ-աշխատանքային հարաբերությունների յուրահատուկ տարատեսակ, կարող է նպաստել զանազան սոցիալական խմբերի, առաջին հերթին աշխատողների և գործատուների շահերի լավագույն հաշվեկշիռն ապահովելուն: Այս-

տեղ որպես հիմնական սուբյեկտներ հանդես են գալիս.

- պետությունը,
- արհմիությունները,
- գործատուները:

Հայաստանում սոցիալական գործընկերության իրավական հիմքերը ստեղծվել են դեռևս 1993թ. ՀՀ նախագահի «ՀՀ կառավարության և Հայաստանի արհեստակցական միությունների կոնֆեդերացիայի միջև աշխատանքի վարձատրության, կենսաթոշակների, նպաստների, բնակչության եկամուտների ինդեքսավորման, աշխատանքի պաշտպանության հարցերի վերաբերյալ համաձայնագրեր կնքելու կարգը հաստատելու մասին» հրամանագրով, որով սահմանվում են համաձայնագրեր և պայմանագրեր կնքելու հիմնական սկզբունքները: Այս նախաձեռնությունը թեև զարգացում չստացավ, այնուամենայնիվ հիմք դարձավ ներկայումս պետական կառավարման մարմիններում ստեղծվող օղակների համար, որոնք այսուհետ պետք է զբաղվեն համապատասխան ՀԿ-ների հետ աշխատանքների համակարգմամբ: Օրինակ՝ 2000թ. սեպտեմբերին հիմնվել է ՀՀ սոցալ նախարարության ու սոցիալական ոլորտում գործող հասարակական և այլ կազմակերպությունների համագործակցություն՝ **Սոցիալական լիգա**, 2001թ. մարտին կառավարության որոշմամբ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի կառավարման խորհրդում ընդգրկվել են սոցիալական գործընկերության բոլոր երեք սուբյեկտները, և այլն: Սակայն տվյալ կառույցների գործունեությունը դեռևս զուրկ է «բովանդակությունից», քանզի ենթադրվում է, որ առանց տնտեսական զարգացման՝ սոցիալական երկխոսությունը դառնում է անհասանելի: Որպեսզի վերջինս վերածվի ժողովրդավարական հասարակության և սոցիալական շուկայական տնտեսության զարգացման հիմնաքարի, անհրաժեշտ է ստեղծել աշխատավորների և գործատուների հզոր կազմակերպություններ և օրենքները կյանքի կոչելու գործուն կառուցակարգեր: Մինչդեռ պաշտպանիչ գործառնություններն անհրաժեշտ է իրականացնել օրենսդրական հիմքերով, քանզի պետությունը չի կարող իրեն ազատել աշխատավորների սոցիալական պաշտպանվածության պատասխանատվությունից, հատկապես այն ձեռնարկություններում, որտեղ արհմիություններն ուժեղ չեն կամ գոյություն չունեն:

Տնտեսական բարեփոխումների նոր փուլը Հայաստանում պահանջում է բոլոր շահագրգիռ կողմերի գործողությունների համաձայնեցված ծրագրի ընդունում, որի մշակումը պետք է իրականացնել սոցիալական գործընկերության բոլոր մակարդակներում և այն դարձնել սոցիալական ապահովության արդարացի քաղաքականության հիմնաքարը: Այս միջոցառումները, այլ նախաձեռնությունների հետ համատեղ, կարող են որոշակի ազդեցություն ունենալ ներկայումս Հայաստանի համար լուրջ խնդիր դարձած միգրացիոն հոսքերի կարգավորման գործում:

3.4

Միգրացիան որպես սոցիալական խնդիր

1988-1999թթ. ընթացքում Հայաստանի արտաքին միգրացիոն գործընթացներին այս կամ այն կերպ մասնակցել է գրեթե 3 մլն. 250 հազ. մարդ: 1992-2000թթ. հանրապետությունից մեկնողների թիվը մոտ 644 հազ. մարդով գերազանցել է ժամանողներին²⁶: Միաժամանակ ՀՀ սահմանային կետերում մուտքի-ելքի հաշվառման հստակ համակարգի բացակայության պայմաններում արտաքին միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունը չի կարելի բավականաչափ հավաստի համարել: Հարկ է նշել, որ միայն 2000թ. մայիս-հունիսից սկսած սահմանային հատման կետերից տեղեկություններ են ստացվում երկաթգծով, ավտոտրանսպորտային միջոցներով ուղևորափոխադրումների վերաբերյալ: Եթե հիմք ընդունենք ՀՀ 1991-1998թթ. արտաքին միգրացիոն գործընթացի ուսումնասիրության փորձագիտական տվյալները²⁷, ըստ որոնց 1991-1998թթ. Հայաստանից ընդհանուր առմամբ արտագաղթել է 760-780 հազ. մարդ, դրան հավելենք անկախ փորձագետների գնահատումներով միգրացիայի բացասական մնացորդը՝ 1999թ.-ին 75-80 հազ. մարդ, և ՀՀ ԱԿԾ տվյալներով՝ միգրացիայի բացասական մնացորդը 2000թ.-ին 52,6 հազ. մարդ, ապա 1991-2000թթ. ՀՀ-ից ընդհանուր առմամբ արտագաղթել է մոտ 900 հազ. մարդ:

Կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ միայնակ էմիգրանտների (որոնք կազմում


են ընդհանուր զանգվածի ավելի քան 55%-ը) մոտ կեսը չի բացառում չվերադառնալու հնարավորությունը: Էմիգրանտների 3/4-ը գտնվում է նախկին ԽՍՀՄ տարածքի երկրներում, որից 80-85%-ը ՌԴ-ում: Մնացյալ 1/4-ի գրեթե կեսը մեկնել է եվրոպական երկրներ և մոտ 40%-ը՝ ԱՄՆ:

Էմիգրանտների շրջանում բնորոշ է տղամարդկանց բարձր տեսակարար կշիռը (ավելի քան 60%), որոնց մեծամասնությունը ակտիվ աշխատանքային և վերարտադրողական տարիքի են (20-44 տ.), ինչպես նաև՝ երեխաների և հատկապես ծեղերի ցածր տեսակարար կշիռը, միջին հանրապետական չափանիշներին զգալիորեն գերազանցող կրթամակարդակը²⁸:

Վերջին տասնամյակում ՀՀ-ում միգրացիայի անմախաղեպ մեծ չափերը իրենց բացասական ազդեցությունն են թողել ՀՀ ժողովրդագրական վիճակի վրա՝ դառնալով նրա ապակայունացման, մասնավորապես ամուսնությունների և բնական աճի ավելի քան կրկնակի կրճատման գործոններից մեկը (նկար 3.8): Այն նաև խարխուլում է ամուսնա-ընտանեկան հարաբերությունների հիմքերը՝ ամուսնական զույգերի և ընտանեկան կառույցների տևական տարանջատման, զավակների լիարժեք դաստիարակության գործընթացի խափանման, սեռերի և սերունդների փոխհարաբերությունների վատթարացման առումով:

Ամուսնությունների թվի և բնական աճի գործակիցը 1000 բնակչի հաշվով

Նկար
3.8



Քանի որ ՀՀ քաղաքացի հանդիսացող էմիգրանտների թիվը բավականին մեծ է, կարևոր խնդիր է ՀՀ-ից արտագաղթած քաղաքացիների օրինական իրավունքների և շահերի պետական պաշտպանության իրականացումը: Աշխատանքային միգրացիայի չկարգավորված հոսքերի մեծացումը, իր բացասական

հետևանքներից բացի, որոշակի դրական գործոն է Հայաստանում գործազրկության խնդրի լուծման համար: Սակայն այդ փոքր դրականն էլ շատ արագ իր բացասական հետևանքն է ունենում այն առումով, որ այդ զանգվածն արագորեն դառնում է նոր էմիգրացիոն ալիքի ձևավորման գործոն:

²⁶ ՀՀ ԱԿԾ հաշվետվություն, 2001:

²⁷ ՀՀ 1991-98թթ. արտաքին միգրացիայի գործընթացի ուսումնասիրություն, TACIS, Երևան, 1999:

²⁸ ՀՀ բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգ, Երևան 2000թ.:



Միջպետական համաձայնագրերի բացակայության պայմաններում առկա է նաև աշխատանքային միգրանտների իրավունքների պաշտպանության խնդիրը: Մեծ մասամբ «օրինական կարգավիճակի» բացակայության պատճառով նրանք հաճախ բախվում են թե՛ իրենց

փոխադրումը կազմակերպողների, թե՛ ժամանցան երկրի գործատուների կողմից պայմանավորվածությունների խախտման, շահագործման, բռնությունների դեպքերի, այլ բնույթի աշխատանքների կատարման հարկադրման և այլ անօրինականությունների (ներդիր 3.2):

3.2 Ներդիր

Մարդկանց անօրինական փոխադրումներ (trafficking) և մաքսանենգ ճանապարհով մարդկանց փոխադրումներ (smuggling)

Մարդկանց անօրինական փոխադրումների (trafficking) և օտարերկրացիների մաքսանենգ ճանապարհով փոխադրումների միջև (smuggling) կան և՛ նմանություններ, և՛ տարբերություններ:

Եթե վերջինս ենթադրում է անօրինական օժանդակություն սահմանն անցնելիս, ապա ՄԱԿ-ը **մարդկանց անօրինական փոխադրումները (ՄԱՓ)** սահմանում է որպես անձանց հավաքագրում, տեղափոխում, փոխանցում, ապաստանում կամ ընդունում սպառնալիքի կամ ուժի գործադրմամբ, հարկադրանքի, առևանգման, կեղծիքի ու խաբեության այլ ձևերով, իշխանության չարաշահման, կամ դիմացինի անպաշտպան վիճակից օգտվելով, ինչպես նաև շահագործման դիտավորությամբ գումար կամ շահույթ տալով կամ վերցնելով՝ այն անձի համաձայնությունն ստանալը, որը ազդեցություն ունի մեկ այլ անձի վրա: Շահագործումը ներառում է այլ անձանց մարմնավաճառության շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձևեր, հարկադիր աշխատանք կամ ծառայություններ, ստրկություն կամ նմանատիպ պրակտիկա, պարտույթ կամ օրգանների հեռացում: ՄԱՓ-ը սահմանող համակցված բաղադրիչներն են 1) միգրացիա, 2) միջնորդներ, 3) տուժածներ:

Անգամ այն դեպքում, երբ անձինք սեփական կամքով են որոշում արտագաղթել, նրանք հաճախ ենթարկվում են շահագործման ու չարաշահումների: Նրանք Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) հայաստանյան գրասենյակի կողմից վերջերս կատարված հետազոտության մեջ դասակարգվել են իբրև ապօրինաբար փոխադրված անձինք (trafficked persons): Հետազոտության նախնական տվյալները վկայում են, որ Հայաստանից կանանց և երեխաների անօրինական փոխադրման երևույթն առկա է. արտերկրից վերադարձած 59 անձանց 49%-ը զբաղվել է մարմնավաճառությամբ: Նրանցից ունենալով (19%-ը) նախքան մեկնելը ակնկալել են նման բան, մեծ մասը (31%-ը) ոչ, 25%-ը ենթարկվել է այլ չարաշահումների, ինչպիսին են չվարձատրվող աշխատանքը, տեղաշարժի սահմանափակումն ու բռնությունը և բռնի սեռական հարաբերությունները: Հարցման մասնակիցների 25%-ը ՄԱՓ-ի չի ենթարկվել: ՄԱՓ-ի ենթարկված ու մարմնավաճառությամբ զբաղված կանանց 65%-ը մինչև 30 տարեկան է:

Հայաստանից կանանց անօրինական փոխադրումները հիմնականում միտված են դեպի Արաբական Միացյալ Եմիրություններ և Թուրքիա: Բացի վերը նշված արտանդող գործոններից (push factors) և մուտքի երկրներում նման ծառայությունների պահանջարկից, որոնք ներքաշող գործոններ են (pull factors), ՄԱՓ-ի երևույթը արդյունք է նաև տեղական հավաքագրողների, կավատների և օտարերկրյա գործատուների գործողությունների, որոնք գործարքի մեջ են մտնում հեշտ տեղի տվող և ցածր վարձատրվող պաշտոնյաների հետ, իսկ վերջիններս էլ՝ աչք են փակում կամ կեղծում են ճամփորդական փաստաթղթերը:

ԵԱՀԿ-ի և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակների, ՀՀ կառավարության և հիմնականում Նիդերլանդների ֆինանսական աջակցությամբ իրագործված ՄՄԿ հետազոտության առաջարկությունները վերաբերում են հինգ հիմնական ոլորտների՝ իրազեկության բարձրացում, ՄԱՓ-ով զբաղվողների հետապնդում, տուժածների պաշտպանություն և օժանդակություն, հետագա ուսումնասիրությունների ծավալում և տնտեսական զարգացում:

Անկանոն միգրանտների դեպքում գերակշռում են անօրինական մաքսանենգ ճանապարհով փոխադրումները: Գերմանիան մուտքի հիմնական երկիրն է, որին հաջորդում են Հունաստանը, Բելգիան, Նիդերլանդները և Շվեյցարիան: Հարցման մասնակիցների մեծ մասը նշել է, որ իրենք ապաստան են հայցել ու մերժում ստացել: Հարցվածների ավելի քան 80 %-ի պարագայում ուղևորությունը կազմակերպվել է ճամփորդական գործակալության կամ միջնորդի կողմից: Նույն հետազոտության շրջանակներում անցկացված 24 ճամփորդական գործակալությունների և տուրիստական գործակալների հարցումը բացահայտել է, որ նրանցից շատերը բավական բարձր վարձատրության դիմաց առաջարկել են կարգավորել դեպի արևմտաեվրոպական երկրներ պոտենցիալ միգրանտների ուղևորության, վիզայի և աշխատանքի հետ կապված հարցերը: 2000թ. ՄՄԿ-ի օժանդակությամբ Հայաստան է վերադարձել 532 հայ Արևմտյան ու Կենտրոնական Եվրոպայի երկրներից, 58%-ը՝ Գերմանիայից, 20%-ը՝ Բելգիայից, իսկ 10%-ը՝ Նիդերլանդներից: Ըստ Փախստականների հարցերի գերագույն հանձնակատարի գրասենյակի նախնական տվյալների, 2000թ. Եվրոպայում ապաստան է հայցել 6590 հայ, ինչը ՈՂ-ից հետո ամենաբարձր ցուցանիշն է ԱՊՀ-ում: Բելգիան, Գերմանիան և Նիդերլանդները հանդիսանում են հիմնական ընդունող երկրները:

Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակ

ՀՀ բնակչության միգրացիոն գործընթացները վերջին տարիներին այնպիսի չափերի են հասել, որ էականորեն սկսել են ազդել երկրի տնտեսական զարգացման ընթացքի, սոցիալ-ժողովրդագրական իրավիճակի, բարոյահոգեբանական մթնոլորտի և, դրանցով պայմանավորված, երկրի ազգային անվտանգության վրա: Մինչև վերջերս, չնայած միգրացիոն իրավիճակի զար-

գացմանը, բացակայում էր միգրացիոն գործընթացների կարգավորմանն ուղղված պետական քաղաքականությունը, և միայն 2000թ. նոյեմբերին ՀՀ կառավարության կողմից ընդունվեց ՀՀ բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգը, որը սահմանում է միգրացիոն քաղաքականության առաջնահերթ խնդիրները և նախանշում դրանց լուծման ուղիները:

3.5

Կրթություն

Հայաստանում կրթությունը իր որակով և կադրերի պատրաստման զարգացած համակարգով ավանդաբար ունեցել է բարձր վարկանիշ, և կարելի է ասել,

որ չնայած անցած տասնամյակում համակարգը ունեցել է շատ լուրջ խնդիրներ, կրթական ոլորտը անդառնալի կորուստներ չի կրել:

ՀՀ կրթական համակարգի որոշ բնութագրեր²⁹

Աղյուսակ

3.4

N	Կրթահամակարգի բնութագրիչներ	1991	2000	Փոփոխություն (%)
1.	Նախադպրոցական հաստատություններ	1283	844	-34.2
	Ընդգրկված երեխա	143900	53200	-63.0
2.	Հանրակրթական դպրոցներ	1326	1388	4.7
	Ընդգրկված աշակերտ	583797	560000	-4
	Մանկավարժներ	55500	59600	7.3
3.	Հատուկ ընդհանուր կրթ. հաստատություն	47	51	8.5
	Ընդգրկված աշակերտներ	8500	11244	32.3
4.	Պետական և համայնքային արտադպրոցական հաստատություններ	224	161	-28.1
	Ընդգրկված երեխա	155000	55300	2.8 անգամ
5.	ՄՏՈՒ-ներ	93	56	-39.8
	Ընդգրկված ուսանողներ	33000	2121	15.5 անգամ
6.	Միջին մասն. հաստատություններ	68	77**	13.2
	Ընդգրկված սովորողներ	40600	28048	-31
7.	Բուհեր (պետական և մասնավոր)	14	89	6.4 անգամ
	Ընդգրկված ուսանողներ	66100	62280	-5.7


* Անհրաժեշտ է հաշվի առնել 80-ականներին ՀՀ-ում ծնված երեխաների համեմատաբար մեծ քանակը և ծնելիության կտրուկ անկումը 90-ականներին, ինչով էլ մեծապես պայմանավորված է նախադպրոցական կրթության բնութա րիչների գ ալի անկումը և ետդպրոցականների աճը:

** Սա պետական հաստատությունների թիվն է, սակայն ործում են նաև 62 ոչ պետական հաստատություն:

90-ականների սկզբից սկսած՝ ՀՀ-ում վատթարացող սոցիալ-տնտեսական իրավիճակն էապես ազդեց կրթական ողջ համակարգի վրա. կրճատվեցին ուղրտին տրամադրվող բյուջետային ծախսերը (նկար

3.9), նվազագույնի հասան ուսումնական հաստատությունների նորոգումն ու տեխնիկական սպասարկումը, փակվեցին ուսուցիչների վերապատրաստման դասընթացները և այլն:

Նկար 3.9 Կրթության ուղրտի ֆինանսավորման ծախսերը ՀՀ-ում 1992-2000 թթ.



Պայմանավորված բնակչության հիմնական զանգվածի ցածր կենսամակարդակով և անվճարունակությամբ՝ նման իրավիճակը առավել խորացավ՝ նվազեցնելով կրթության մատչելիությունը:

Այնինչ կրթությունը՝ որպես մարդկային զարգացման շարժիչ ուժ և մարդու իրավունք, պետք է հասանելի լինի բոլորին (ՀՀ Սահմանադրությամբ անրագրված է յուրաքանչյուր քաղաքացու կրթության իրավունքը): Ուստի ՀՀ կառավարությունը ապահովում է անվճար ուսուցման համակարգը, որն ընդգրկում է միջնակարգ դպրոցն ամբողջությամբ և ետդպրոցական ուսուցման 20%-ը:

Իրականում անվճար ուսուցման այդ երկու աստիճաններում էլ անխուսափելի են դարձել ընտանեկան բյուջեներից շոշափելի լրավճարումները, ինչը կտրուկ սահմանափակում է անվճարունակ խավերի՝ ուրակյալ կրթություն ստանալու հնարավորությունները: Արդեն սկզբնական փուլում որոշ ընտանիքներ հնարավորություն ունեն ավելի որակյալ կրթական ծառայություններ ապահովել իրենց երեխաների համար և դրանով իսկ ապագայում նրանց ավելի մրցունակ դարձնելու նախադրյալներ ստեղծել:

Բոլորի համար կյանքի շեմին հավասար մեկնարկային պայմաններ ապահովելու խնդիրն, անկասկած, մնում է սոցիալական արդարության կարևորագույն նախադրյալը, որը սակայն ավելի է բարդանում վերջին տարիներին կրթության ուղրտում պետական ծախսերի սահմանափակությամբ. այն ՀՆԱ-ի 2-3%-ն է, 1980-ականներին տրամադրվող 7-9%-ի դիմաց, իսկ մեկ դպրոցականի հաշվով բյուջեի հատկացումները կազմում են մոտ 40 ԱՄՆ դոլար: Երկու ցուցանիշներն էլ այլ երկրների համեմատությամբ բավական ցածր են:

Ներկայումս համակարգում ձեռնարկված բարեփոխումները ներառում են կրթության կառուցվածքը, բովանդակությունն ու կառավարումը, ինչն առաջին հերթին ենթադրում է կառավարման ապակենտրոնա-

ցում՝ էապես ընդլայնելով համայնքների իրավասություններն ընտրված դպրոցական խորհուրդների միջոցով: Ընդունելով այս մոտեցումների ներդաշնակությունը ժողովրդավարության հիմնական սկզբունքներին և դրանց անհրաժեշտությունը՝ համակարգի կառուցվածքը օպտիմալացնելու, դպրոցների և ուսուցիչների ունձացված ցանցը կրճատելու (այժմ ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը ՀՀ-ում կազմում է 1:10, մինչդեռ զարգացած երկրներում՝ 1:20-1:25 է, իսկ զարգացող երկրներում՝ 1:40-1:50), մեկ դպրոցին և մեկ աշակերտին ընկնող հատկացումներն ավելացնելու և ուսուցիչների աշխատավարձը բարձրացնելու առումներով, այնուհանդերձ հասարակությունը դեռևս բավականին զգուշավոր է մոտենում այդ նորամուծությանը: Ըստ ՄԱԶԾ 2001թ. անցկացված դպրոցական տարիքի երեխաներ ունեցող 1200 ռեսպոնդենտների «Կրթություն, աղքատություն, տնտեսական ակտիվություն» հետազոտության արդյունքների, հարցվողների միայն 15%-ն է կողմ այդ բարեփոխմանը, 27%-ը դժվարացել է իր վերաբերմունքը ձևակերպել, իսկ 58%-ը դեմ է:

Շուկայական տնտեսության համար կադրերի պատրաստման նոր համակարգի արդյունավետության չափանիշը պետք է լինի այն, թե որքանով է վերջինս օգնում երիտասարդ սերնդին հասարակությունում համապատասխան տեղ գրավելու համար գիտելիքների ու հմտությունների փոխանցմանը, մասնավորապես՝ արժանավայել կենսամակարդակ ապահովող մասնագիտության ուսուցմանը: Այժմ առանց որևէ մասնագիտական պատրաստվածության՝ տասնյակ հազարավոր երիտասարդներ մուտք են գործում աշխատաշուկա. ընդհանուր միջնակարգ դպրոցների շրջանավարտների մեծամասնությանը փաստորեն պետական պատվերի շրջանակներում մասնագիտություն սովորելու որևէ հնարավորություն չի ընձեռվում տեղերի սահմանափակության, ինչպես նաև համապատասխան ուսումնական հաստատությունների սակավության հետևանքով (աղյուսակ 3.4): Ավելին, հստակեցված չէ նախնա-

կան մասնագիտական (արհեստագործական) ուսուցման հայեցակարգը:

Սյուս կողմից՝ բուհերը շարունակում են «արտադրել» անգամ տեսականորեն աշխատաշուկայում պահանջարկ չունեցող հազարավոր մասնագետներ: 2001թ. բուհ են ավարտել 1154 մանկավարժ, 1161 իրավաբան, 503 արվեստագետ և այլն (հինգ տարի հետո այդ մասնագիտություններով բուհեր կավարտեն 1771, 1514, 762 երիտասարդներ): Ակնհայտ է, որ մոտ հեռանկարում այդ երիտասարդների ճնշող մեծամասնությունը մասնագիտությամբ աշխատելու ոչ մի իրատեսական հավանականություն չի ունենա:

Բուհական համակարգի կախվածությունը կադրերի շուկայական պահանջարկից կնպաստի բուհերի քանակը, դրանցում ուսուցանվող մասնագիտությունների անվանացանկը, ուսումնական պլաններն ու ծրագրերը, տեսական և գործնական պարապմունքների հարաբերակցությունը օպտիմալացնելուն:

ՀՀ կրթահամակարգում ձևավորված երիտասարդ մասնագետի գիտելիքների ու հմտությունների և դրանց նկատմամբ աշխատաշուկայի պահանջների միջև անհամապատասխանությունը նույնպես լուրջ խնդիր է: Համակարգչային հմտություններ ունի 23-33 տարեկանների միայն 22,7%-ը, իսկ անգլերենին ազատ կան լավ է տիրապետում 10,0%-ը (բավարար՝ ևս 15,8%-ը), միայն 12%-ն է բարձր գնահատում իր մրցունակությունը ՀՀ աշխատաշուկայում²²:


Այս իրավիճակը պայմանավորված է կրթահամակարգի իներտությամբ, որին նպաստում է ինչպես հանրակրթական, այնպես էլ բուհական մանկավարժական կադրերի միջին տարիքը կենսաթոշակային մոտենալու հանգամանքը, այնպես էլ մասնագետների պատրաստման համակարգի մենաշնորհային կարգավիճակը:

Ինչ վերաբերում է երիտասարդներին, ապա նրանք բավականին առողջ և հեռանկարային մտածելակերպ ու արժեքային համակարգ ունեն (նկար 3.10):

Արդի կյանքում հաջողության հասնելու նախադրյալների դասակարգումը (2278 ռեսպոնդենտ 13-33 տարեկան) (միջին բալ)

Նկար

3.10



Կրթության ոլորտի հիմնախնդիրները և դրանց կարևորությունը աղքատության նվազեցման ու մարդկային զարգացման տեսանկյունից արդեն գիտակցվում են ինչպես հասարակության, այնպես էլ պետության կողմից: ՀՀ կրթական համակարգում կատարվում են մի շարք նորամուծություններ. 2001 թվականի հունիսի 26-ին ԱԺ-ի կողմից ընդունված է «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2001-2005թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը, որը նպատակամղված է Հայաստանում կրթության որա-

կը ապահովելուն, իսկ ՀՀ կառավարության հաստատած լիցենզավորման և հավատարմագրման կարգերի կիրառումը հնարավորություն կտա կանոնակարգել ոչ պետական բուհերի գործունեությունը, ինչը կխթանի մրցակցությունը բարձրագույն կրթության ոլորտում: Կրթության բնագավառի առաջընթաց զարգացումը (ինչպես հռչակված է «Կրթության մասին» ՀՀ օրենքով) հնարավոր է ապահովել միայն կրթական և գիտական գործունեության համադրմամբ, որը միտված է նորագույն գիտելիքի արագ փոխանցմանը:

3.6


Առողջապահություն

Վերջին 10 տարիների ընթացքում ՀՀ առողջապահության համակարգի արմատական վերափոխումները պայմանավորված էին համակարգը շուկայական մեխանիզմներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ: Մարդկային զարգացման կարևորագույն բնութագրիչներից մեկը՝ բնակչության առողջության վի-

ճակն ընդունված է գնահատել նաև հիվանդացության, սոցիալական ակտիվության աստիճանով և մահացության մակարդակով: Վերլուծությունները ցույց են տալիս ծնելիության և բնական աճի ցուցանիշների կտրուկ վատթարացում՝ նույնիսկ մահացության ցուցանիշի հարաբերական կայունացման պայմաններում (նկար 3.11):

Նկար 3.11 Ժողովրդագրական ցուցանիշների շարժը 1991-2001թթ. (%)

3.11



Աղբյուր՝ ՀՀ ԱԿԾ, ՀՏՄ հաշվարկներ:

Միևնույն ժամանակ, վերջին տարիներին աճի միտում ունեն սոցիալական վիճակի հետ առնչվող այնպիսի հիվանդություններ, ինչպիսին են վարակիչ և մանկական, արյան և արյունաստեղծ օրգանների հիվանդությունները: Աճել են նաև սրտանոթային համակարգի հիվանդությունները, որոնք կազմում են ընդհանուր մահացության 53-54%-ը, և այդ ցուցանիշը շարունակում է աճել, ընդ որում այդ հիվանդությունը հաճախակիացել է նաև կանանց մոտ: Հիվանդացությունների շարքում առաջնային տեղ են գրավում չարորակ նորագոյացությունները, որոնց հետևանքով մահացությունը, ըստ վիճակագրական տվյալների, գրավում է իր հաստատուն տեղը՝ սրտանոթային համակարգի հիվանդացություններից հետո: Նորից ի հայտ է եկել տուբերկուլոզը, որը վերջին 5 տարիների ընթացքում զգալիորեն աճել է (66,3%), և հատկապես երիտասարդների մոտ: Անցման ժամանակաշրջանի ծանր սոցիալական հե-

տևանքները նպաստել են նաև վեներական հիվանդությունների մոտ 10 անգամ աճին: Դեռահասների մոտ այդ ցուցանիշը կրկնապատկվել է:

Բուժօգնության մատչելիությունը, հատկապես բնակչության սոցիալապես առավել խոցելի խավերի համար դարձել է կարևորագույն խնդիր: Առողջապահական ծառայությունների գերակշռող մասը պաշտոնապես համարվում է անվճար, սակայն հիվանդների կողմից կատարվող ոչ պաշտոնական վճարումների պատճառով լուրջ արգելքներ են ստեղծվում բնակչության զգալի մասի համար, որի անմիջական հետևանքը հիվանդացության աճող տեմպերի պայմաններում բուժօգնության զրկումներն են: Որոշ փորձագիտական գնահատումներով հիվանդ մարդկանց 59,4%-ը գերադասում է ինքնաօգնությունը և բուժօգնություն չզննելու հետևանքով արհեստականորեն նվազում է հիվանդների թիվը:

Համակարգը աշխատում է իր հնարավորությունների կիսով չափ: 2000թ.-ին հիվանդանոցներում մահճակալների զբաղվածությունը կազմել է ընդամենը 35% (մարզերում այն որոշ դեպքերում 10-15% է), 1990թ.-ի համեմատ պոլիկլինիկաներում հաճախումները նվազել են 45%-ով, տնային կանչերի թիվը 53%-ով, իսկ շտապ օգնության կանչերը՝ 60%-ով: Անկասկած այս ամենը պայմանավորված է ոչ թե մարդկանց առողջության լավացմամբ, այլ հետևանք է բարձր գների և բուժօժանայությունների որակի զգալի անկման և բնակչության անվճարունակության:

Բնակչության համար պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնությունը և ծառայությունները հիմնված են Հիմնական ծառայությունների փաթեթի վրա և իրականացվում են առողջապահական նպատակային ծրագրերին համապատասխան ընդգրկելով համարյա ամբողջ բնակչության զանազան հիվանդությունների, ինչպես նաև բնակչության որոշ խավերի՝ համարյա բոլոր հիվանդությունների բուժման պետական ֆինանսավորումը: Մինչդեռ ակնհայտ է, որ նույնիսկ այսպես կոչված «անապահով» խավերի ցուցակը չի ընդգրկում բնակչության սոցիալական աջակցության իրական կարիք ունեցող խավերի ցանկը: 1997թ.-ից **առողջապահական համակարգի բարեփոխումները** ընթանում են չորս ուղղություններով՝ համակարգի կազմակերպական կառուցվածք և կառավարում, ցանցի կառուցվածք, առողջապահության ֆինանսավորում և բժշկական կրթություն:

ՀՀ առողջապահության համակարգի կառավարման բարեփոխումների ռազմավարական նպատակը առողջապահության համակարգի բարելավումն է պետական մենաշնորհի հանդիսացող առողջապահական կառույցների արմատական վերափոխումների իրականացման, մասնավորեցման և ապապետականացման միջոցով: Ներկայումս մասնավորեցված են 18 առողջապահական հաստատություններ, ընդ որում՝ 4 ստացիոնար, ատամնաբուժական պոլիկլինիկաներ, առողջարաններ և մեկ գիտահետազոտական ինստիտուտ: Այդ ձեռնարկումները, հաշվի առնելով ներկայիս սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակը, նպատակահարմար չեն բնակչության լայն շերտերի համար:

Առողջապահության համակարգի կառավարման բարեփոխումը ենթադրում է երկու ուղղություն՝ ապակենտրոնացում և մի շարք գործառնությունների կենտրոնացում: Ապակենտրոնացման արդյունքում ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը (ՀՀ առողջապահության նախարարությունը) որոշում է միայն զլոբալ առումով երկրում առողջապահական քաղաքականությունը՝ սահմանելով բնագավառի գերակայությունները, խնդիրներն ու ուղղությունները, առողջապահության համապետական չափորոշիչներն ու չափանիշները: Ապակենտրոնացման ուղղությամբ կարևոր քայլ է նաև պետական առողջապահական գործակալության ստեղծումը, որի միջոցով տարանջատ-

վել են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող և դրանց դիմաց վճարումներ կատարող մարմինները:

ՀՀ առողջապահության ֆինանսական համակարգի վերջին տարիների վերլուծությունը ցույց է տալիս, որ առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում իրականացված աշխատանքների ծավալները գերազանցում են ՀՀ պետական բյուջեով կատարված կանխատեսումները: Ուստի անխուսափելի փուլ է դառնում վճարովի ծառայությունների ներդրումը՝ իր բոլոր բացասական անդրադարձներով: Այս գործընթացը բնակչության համար պակաս ցավազին դարձնելու համար առողջապահության համակարգի զարգացման քաղաքականությունը ներկայումս փորձ է անում իրականացնել առողջապահության ֆինանսավորման բազմաձևության՝ պետական պատվերի, համավճարի, բժշկական ապահովագրության, ինչպես նաև ուղղակի վճարումների համակարգի ներդրում: Առողջապահության ֆինանսավորման համակարգում 2000թ. հունիսի 1-ից ներդրված հիվանդանոցային հաստատությունների կողմից իրականացված ծառայությունների դիմաց վճարման զլոբալ բյուջեի մեթոդը նպատակ ունի առավել կառավարելի դարձնել համակարգում ծախսերի վերահսկումը, հստակեցնել պետության պարտավորությունները բուժօգնության տրամադրման հարցում:

Բարեփոխումների կարիք ունի նաև առողջապահության կրթական համակարգը: Բժիշկների և բուժքույրերի նախկինում ստեղծված «ավելցուկը» պահանջում է կադրերի պատրաստումը համապատասխանեցնել իրական պահանջարկին: Ներկայումս ընդունելությունը պետական բժշկական համալսարան 1992թ. 1400 տեղից կրճատվել է մինչև 300-ի, քույրական գործի բազային կրթությունը դարձել է 3 տարի (2-ի փոխարեն), ընդլայնվել են մասնագիտական կրթական ծրագրերը՝ ետդիպլոմային մասնագիտացումը հասցվել է 4 տարվա: Կադրերի պատրաստման կարգավորմանը զուգընթաց կրթական բարեփոխումներն ուղղվում են նաև նրանց մասնագիտական որակի բարելավմանը: 1996թ.-ից բոլոր բժիշկները, բուժքույրերը և դեղագործները 5 տարին մեկ անգամ ենթարկվում են լիցենզավորման:

Առողջապահության համակարգում ներկայումս ՀԲ-ի աջակցությամբ իրականացվում են արմատական վերափոխումներ ընտանեկան բժշկի ինստիտուտի ստեղծման ուղղությամբ, որի նպատակն է ընտանիքի անդամներին առաջնային բժշկական օգնություն իրականացնելու իրավունք ունեցող բազմապրոֆիլ ընտանեկան (ընդհանուր պրակտիկայի) բժիշկների պատրաստումը, որն, ըստ առողջապահության բարեփոխումների ծրագրի, մոտակա 15 տարիների ընթացքում կփոխարինի ներկայիս ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգին:

3.7

Մշակույթ. ավանդույթներ և հնարավորություններ

Անկախ Հայաստանը ժառանգեց մշակութային դարավոր ավանդույթներ և պետական կառավարման տասնամյակների ընթացքում կուտակված պատկառելի փորձ, ինչպես նաև համամարդկային արժեք ունեցող մշակութային իրական նվաճումներ, մշակութային ժառանգության պահպանման, զարգացման, կրթության, նոր արժեքների ստեղծման ու տարածման հաստատությունների հզոր ցանց, մշակութային արդյունաբերության բարենպաստ պայմաններ ու հնարավորություններ: Երկրի անկախացումը, ժողովրդավարություն հաստատելու կամքը, քաղաքական, գաղափարական և տնտեսական ոլորտների ազատականացումը մշակույթի զարգացման նոր հնարավորություններ ու հեռանկարներ էին խոստանում: Թվում էր՝ ձերբազատումը գրաքննությունից, միակուսակցականության գաղափարական կապանքներից, կառավարման վարչաիրամայական մեթոդներից և համատարած պլանավորումից մշակութային շեշտակի վերելք է նշանավորելու: Սակայն այդ հույսերը չարդարացան:

1991-95թթ. (անցած տասնամյակի առաջին փուլին) բնորոշ էր էներգետիկ և տնտեսական ճգնաժամը: Այս օբյեկտիվ պատճառներին գումարվեց նաև մշակութային քաղաքականությունն իրականացնողների շփոթահար վիճակը, որոնք պատրաստ չէին ոչ միայն արտակարգ իրավիճակներին, այլև նոր հարաբերություններին ու խաղի կանոններին:

Մշակույթի ոլորտի գաղափարականացվածությունը փոխարինվեց պարզապես գաղափարագրկության: Անկախության հասնելու և իշխանափոխության գործընթացները ուղեկցվում էին կոմունիստական գաղափարախոսությունը թոթափելու և ազգային գաղափարախոսություն ստեղծելու, ապա և դրանով առաջնորդվելու կարգախոսներով: Սակայն իշխանության եկած կուսակցության ռազմավարությունը սահմանափակվեց միայն առաջին խնդրով: Որդեգրած մշակութային քաղաքականության առումով թերևս էական դեր էր խաղում մինչև օրս էլ տիրապետող այն թյուր մտայնությունը, թե տնտեսական խոր ճգնաժամի ու հակամարտության պայմաններում մշակութային հարցերին ջանքեր ու միջոցներ նվիրելը անպատեհ ու անհարկի շոշալություն է:

Նշված ժամանակաշրջանում հիմնական ջանքերն ուղղվեցին մշակութային հաստատություններն ամեն գնով պահպանելու խնդրին: Այս մարտավարությունը բնորոշ էր մշակույթի կառավարման հիերարխիայի թե՛ ամենաստորին և թե՛ վերին օղակներին: Առկա սուղ ֆինանսական միջոցները տրամադրվում էին մշակութային հաստատությունների աշխատողների աշխատա-

վարձին և ամենաառաջնահերթ կարիքներին միայն: Այդ աշխատավարձը չնչին էր (և է մինչև օրս) աշխատողների գոյատևումը ապահովելու համար, այսուհանդերձ այս ոլորտում աշխատուժի էական արտահոսք չնկատվեց, և հնարավորինս պահպանվեց հաստատությունների գործունեությունը: Միաժամանակ, չնայած հասարակարգի արմատական վերափոխմամբ պարտադրված նոր մոտեցումներին, մշակույթի կառավարման համապարզ ու մեթոդները որևէ փոփոխություն չկրեցին:

Ակնառու էր նաև միջազգային ասպարեզ դուրս գալու, արտասահմանյան երկրների հետ անմիջականորեն համագործակցելու ձգտումը, որ պետք է բացատրել անկախացումից և ԽՍՀՄ սահմանների վերացումից հետո ստեղծված աննախադեպ հնարավորություններով: Սակայն միշտ չէ, որ ստեղծվող կապերը հեռանկարային էին ու զարգացման նպատակ էին հետապնդում, շատ հաճախ դրանք սահմանափակվում էին սոսկ հյուրախաղային միանվագ ձեռնարկումներով, որոնք ֆինանսական հսկայական և չարդարացված միջոցներ էին կլանում: Այս «ցուցադրական» միտումը, որ հիմնականում բնորոշ էր վերին օղակներին, աստիճանաբար տիրապետող դարձավ նաև առանձին հաստատությունների մակարդակում:

1995թ.-ից հետո ընկած ժամանակաշրջանում, նախորդ փուլի համեմատությամբ, մշակութային կյանքի աշխուժացումն ակնառու է և միանգամայն օրինաչափ (պայմանավորված էներգետիկ ճգնաժամի վերացումով), բայց և այնպես ոլորտի կառավարման համակարգում զգացնել էին տալիս որոշ ճգնաժամային միտումներ. պասիվություն, իներցիա, պրոֆեսիոնալ որակների ու չափանիշների անկում: Այդ ընթացքում թե՛ գերակայությունները, թե՛ կառավարման համակարգը, թե՛ ֆինանսավորման մեթոդները էական փոփոխություններ չկրեցին: Այնուամենայնիվ էապես փոխվեց մշակութային գործիչների դիրքորոշումը. պետության կողմից ֆինանսական լիարժեք աջակցություն ստանալու հավակնությունները հետզհետե տեղի տվեցին սեփական նախաձեռնություններին, հույսը սեփական ուժերի վրա դնելու, գործունեության նորարարական ուղիներ փնտրելու մտայնությանը:

Եթե զնահատելու լինենք անցած տասը տարիների մշակութային զարգացումները, ապա հարկ է վավերացնել, որ կորուստներն ակնբախ են՝ պայմանավորված օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Խոսքը մասնավորապես գրախրատարակչության ծավալների կտրուկ անկման, կինոարտադրության ճգնաժամի, տասնյակ գրադարանների, մշակույթի տների և ակումբ-

ների, թանգարանների, կինոթատրոնների, համույթների ու ստեղծագործական խմբերի կորստյանն է վերաբերում: Անշուշտ, երևան էին գալիս նաև նոր ստեղծագործական խմբեր, որոնց թիվը տասնապատիկ փոքր էր անհետացողների համեմատությամբ, դրանց մի մասն էլ թիթեռի կյանք էր ունենում կամ հայտնվում էր ճգնաժամի մեջ: Սակայն ամենալուրջ բացթողումն արձանագրվեց մշակութային կրթության ու արժեքների տարածման ու քարոզչության ասպարեզում: Շուկան ողողող մշակութային ցածր արժեքները և համահարթեցնող գլոբալացման վտանգները չափազանց թույլ դիմադրության են

հանդիպում: Թե՛ հանրակրթական դպրոցներում գեղագիտական դաստիարակության ներկայիս վիճակը, թե՛ գեղարվեստի դպրոցների օրավուր ծանրացող դրությունը, թե՛ ճանաչողական բնույթի հեռուստահաղորդումների ու հրատարակությունների նվազումը, թե՛ գրադարանների համալրման դժվարությունները ցույց են տալիս, որ աճող սերնդի գեղագիտական ճաշակի ձևավորման խնդիրը մեծ հարցականի տակ է: Այս իրավիճակը հղի է մշակութային և հոգևոր զարգացման խզում առաջացնելու և ապագայում շատ ավելի դժվարին կացություն ստեղծելու վտանգով:

3.8

Մշակութային քաղաքականության իրականացման գործիքները

Հանրապետության մշակութային քաղաքականության հայեցակարգի մշակման նախաձեռնությունները սկսվել են դեռևս 1995-ից, որոնք վերջնականապես ձևակերպվեցին և հաստատվեցին միայն 2000թ. հոկտեմբերին: Համաձայն այդ հայեցակարգային հիմնադրույթների, պետական մշակութային քաղաքականության հիմնական նպատակը մշակութային ժառանգության պահպանումն ու ամխաթար փոխանցումն է սերունդներին, աջակցումը գեղարվեստական ստեղծագործական գործունեությանը, ինչպես նաև նպաստումը մշակութային արժեքների ընկալմանն ու տարածմանը: Այս միանգամայն ընդունելի նպատակին

հասնելու համար պետությունը որդեգրել է կառավարման ժողովրդավարական, մշակութային գործունեության ազատության, միջազգային նշանակության արժեքների նախապատվության և կառավարման ապակենտրոնացման սկզբունքները:

Անցած տասը տարիներին որոշակի աշխատանք է կատարվել միջազգային համաձայնագրերին միանալու և ազգային օրենսդրական դաշտը ձևավորելու ուղղությամբ (ներդիր 3.3), սակայն օրենսդրական գործիքները բավարար չափով չեն կիրառվում մշակույթի ոլորտում, մի շարք ճյուղեր տակավին զուրկ են օրենքներով կարգավորվելու հնարավորությունից:

Մշակութային ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը

Հայաստանը միացել է մի շարք միջազգային կոնվենցիաների. Զինված կոնֆլիկտի դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին (1993թ.), Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պահպանության մասին (1993թ.), Մշակութային արժեքների ապօրինի ներմուծման, արտահանման և սեփականության իրավունքի փոխանցման արգելմանը և կամխաման ուղղված միջոցառումների մասին (1993թ.), Սևծովյան տնտեսական համագործակցության դաշնության շրջանակում կնքված մշակույթի, կրթության, գիտության և տեղեկատվության բնագավառներում համագործակցելու մասին (1993թ.) կոնվենցիաներ, ՅՆԵՍԿՕ-ի իրավունքների և հարակից իրավունքների պաշտպանության բնագավառում համագործակցության մասին համաձայնագիր (1995թ.), Եվրոպական մշակութային կոնվենցիա (1997թ.), Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պահպանության մասին Բեռնի կոնվենցիա (2000թ.): Ընդունվել են սրանց համահունչ մի շարք օրենքներ, որոնք կարգավորում են մասնավորապես մշակութային արժեքների արտահանումն ու ներմուծումը («Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին», 1994թ.), տարածումը («Գովազդի մասին», 1996թ.), արխիվային ֆոնդերի պահպանումը («Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի մասին», 1997թ.) և հուշարձանների պահպանությունը («Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին», 1998թ.), հեղինակային իրավունքը («Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», 1996թ., նորը՝ 1999թ.): Հեղինակային իրավունքի, մշակութային արժեքների պահպանման ու տեղափոխման հարցերը կարգավորվում են նաև ՀՀ Քաղաքացիական (հոդվ. 284, 1100-1143), Քրեական (հոդվ. 73, 210/1, 228, 243, 140) և Մաքսային (հոդվ. 21, 26-29) օրենսգրքերով: Ընդունման գործընթացում է «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» շրջանակային օրենքը, որին կիստեղծ կինոարվեստի, թատերարվեստի, գրադարանային, թանգարանային և գրահրատարակչության ոլորտները կարգավորող շուրջ ութ օրենքներ:

«Հոգևոր Հայաստան» ՀԿ

3.3
ներդիր

Մշակութային արժեքների պահպանման խնդրում որոշակի առաջընթացն ակնառու է, սակայն այստեղ էլ մի հսկայական դաշտ՝ գրադարաններն ու թանգարանները, տակավին զուրկ են օրինական կարգավորումից: Օրենսդրորեն կարգավորված չեն նաև թատերական և կինոարտադրության բնագավառները, դրանց պետական աջակցություն ցույց տալու սահմաններն ու կարգը:

Հրատապ է «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի վերանայումը: Ըստ գործող օրենքի, ԱԱՀ-ից ազատվում են միայն մանկական, ուսումնական և գիտական հրատարակությունները, այն էլ սոսկ իրացման օղակում: Սա մեծապես խոչընդոտում է գրահրատարակչության զարգացումն ու ծավալումը: Նվազ կարևոր բացթողում չէ նաև նոր լույս տեսնող հրատարակությունների պարտադիր օրինակի մասին օրենքի բացակայությունը, որը լուրջ դժվարություններ է հարուցում գրադարանների համալրման և տպագիր արտադրանքի արձանագրման ոլորտներում:

Ֆինանսական միջոցների սղությունը հնարավորություն չի տալիս մշակութային հաստատություններին ոչ միայն զարգացման ծրագրեր մշակել, այլև իրականացնել որոշ հիմնական գործառնություններ: Թատերարվեստի, կինոարտադրության և գրահրատարակչության ոլորտում գործում է պետական պատվերի համակարգը, սակայն չափազանց սահմանափակ շրջանակներում: Բացի դրանից, բավականին մշուշոտ է ստեղծագործությունների ընտրության կարգը. հայտնի չէ, թե գերատեսչությունների համապատասխան պաշտոնյաները ինչ չափանիշներով են որոշում ֆինանսավորել ստեղծագործական կոլեկտիվների առաջադրած գործերը:

Առայժմ չեն արդարանում բարեգործական խողովակով միջոցներ հայթայթելու հույսերը, որը կարող է իբրև մշակութային ավանդույթների խաթարում դիտվել (անվիճելի փաստ է, որ հայ մշակույթը դարեր շարունակ զարգացել է մեկենասության ու բարեգործության շնորհիվ): Հանրապետությունում առկա մի քանի մշակութային հիմնադրամներ գնահատելի նպաստ են բերում, սակայն նրանց միջոցները չեն գորում, այնուամենայնիվ, փոխելու ընդհանուր իրավիճակը: Սա անտարակույս պայմանավորված է տնտեսության մի զգալի հատվածի ստվերայնությամբ, ինչպես նաև մշակութային աջակցող մեկենասների ու հովանավորների համար հարկային արտոնությունների բացակայությամբ: Այս ոլորտում օրենսդրական բարենորոգումը (մոտ ժամանակներս քննարկման է դրվելու «Բարեգործության մասին» օրինագիծը) ամենայն հավանականությամբ առաջընթաց քայլ կլինի: Սակայն իրավիճակի շեշտակի բարենորոգում կարելի է ակնկալել միայն պետական մակարդակով մշակույթի զարգացման հիմնադրամի ստեղծումից:

Անցած տարիների մշակութային քաղաքականության ամենախոցելի կողմերից մեկը կառավարման համակարգն է, և խոսել այս ոլորտում ժողովրդավարական սկզբունքների մասին, ինչպես ասվում է հայե-

ցակարգում, դեռևս վաղ է: Մշակութային հաստատությունների գիտական ու գեղարվեստական խորհուրդներն ու նախարարության կոլեգիաները, որոնք կազմավորվում են ղեկավարների հայեցողությամբ, ձևական բնույթ են կրում: Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության կանոնադրությամբ նախատեսված գիտատեխնիկական խորհուրդն էլ (քաղկացած մասնագետներից, փորձագետներից) մնացել է թղթի վրա: Չեն գործում նաև նախկին միջգերատեսչական խորհուրդները, որոնք ինչ-որ չափով մեղմում էին գերատեսչական տարանջատվածությունը: Այս տեսակետից միանգամայն ողջունելի է բուլրովին վերջերս՝ 2001թ. սկզբին Հայաստանի ինը խոշոր գրադարանների կոնսորցիումի ստեղծումը, որը հնարավորություն կտա այսուհետև համատեղ քննարկել ու լուծել գրադարանային ոլորտի հանգուցային խնդիրները:

Եական որևէ բան չի փոխվել նաև մշակույթի նախարարության կառուցվածքում (չնայած առկա վարչությունների միավորման ու նորերի ձևավորման փորձերին) և նրա ու ղեկավարվող հաստատությունների հարաբերություններում: Գործառնությունների և պարտականությունների վերաբաշխումը, փաստորեն, կատարվել է կառավարման նախկին վարչական համակարգի շրջանակներում: Կադրային քաղաքականության ճգնաժամը, որն առկա է հանրապետության գործադիր իշխանության բոլոր ոլորտներում, հատկապես ցավազին հետևանքներ է ունենում այս ասպարեզում: Վերին օղակները, մի կողմից, օտարվել են հաստատությունների բուն մասնագիտական խնդիրներից, մյուս կողմից՝ ամուր են պահում վերահսկողական և կադրային քաղաքականության լծակները:

Օրենսդրական ու տնտեսական մեխանիզմների բացակայության պատճառով լուրջ խնդիրներ է առաջացրել ապակենտրոնացումը (չստ համայնքներում, պայմանավորված ֆինանսական հնարավորություններով և տեղական իշխանության հակումներով, մշակութային հաստատություններ են լուծարվում): Կառավարման նոր մոդելների մշակման փոխարեն մշակույթի նախարարությունը ջանքեր է գործադրում իր լիազորությունները վերականգնելու ուղղությամբ (օրինակ՝ 1997թ. մարզային գրադարանների կառավարումը վերստին հանձնվեց մշակույթի նախարարությանը), որը բնավ հեռանկարային մտեցում չէ:

Մշակույթի կառավարման համակարգում առայժմ գրեթե չեն օգտագործվում կառավարման տեղեկատվական ու հետազոտական հնարավորությունները: Խոսում փաստ է, որ մինչև օրս հասարակության մշակութային պահանջմունքների, մշակութային գործիչների ու հաստատությունների որևէ հետազոտություն կամ գոնե հարցախույզ չի կատարվել: Առանց տեղեկատվական բազայի և իրավիճակի խորքային ուսումնասիրությունների՝ հազիվ թե իրականություն դառնան այն խնդիրները, որոնք առաջադրված են մշակութային քաղաքականության հայեցակարգում:



**Հայաստանի
գարգացման
հեռանկարային
ուղղութիւնները**

4.1	Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ. զարգացման նախադրյալները	117
4.1.1	ՏՀՏ զարգացումը կարգավորող միջավայրը	119
4.1.2	ՏՀՏԱ զարգացման ներուժը	119
4.1.3	ՏՀՏԱ զարգացման դերը համաշխարհային տնտեսության մեջ ՀՀ-ի ներգրավման առումով	121
4.2	Գլոբալացում և ինֆեզրացում	122
4.2.1	Գլոբալացման տնտեսական գործընթացը և Հայաստանը. իրողություններ և հնարավորություններ	125
4.3	Գիտական և ծրագրային ապահովումը՝ արդյունավետ կառավարման կարևորագույն նախապայման	128
4.3.1	Կառավարման ծրագրային ու գիտական ապահովման և արդյունավետության գնահատման համակարգեր	129
4.4	Մարդկային զարգացման հայեցակարգը և հարացույցի փոփոխությունը	132
4.5	Հայաստանի ապագան գլոբալացվող աշխարհում	133
4.6	Ամփոփում	137

Ներդիրներ

- 4.1 ՀՀ ՏՀՏ արդյունաբերության ենթաբաժինները
- 4.2 Հայաստանից ուղեղների արտահոսքը և դրա առանձնահատկությունները
- 4.3 Գլոբալացումը որպես երևույթ
- 4.4 Բնապահպանական հիմնախնդիրները գլոբալ համատեքստում
- 4.5 Ի՞նչ կարելի է սպասել ԱՀԿ-ին Հայաստանի մոտալուտ անդամակցությունից
- 4.6 Հայաստանի Միջազգային օժանդակության տվյալների շտեմարանը
- 4.7 Նոր մոտեցումներ Հայաստանի զարգացման համար

Նկարներ

- 4.1 ՏՀՏ ձեռնարկությունների ստեղծման միտումները
- 4.2 ՏՀՏ հատվածի անձնակազմի աճի միտումները 1995-2000թթ.
- 4.3 Հայաստանի արտահանման կառուցվածքը 2000թ.
- 4.4 Անցումային երկրներում 1991-99թթ. ընթացքում կատարված ՕՈՒՆ-երի գումարային մեծությունը մեկ շնչի հաշվով

Աղյուսակներ

- 4.1 ՀՀ-ին հատկացված և առաքված գումարները

Ներկա զարգացումները՝ թե՛ տեղական, թե՛ գլոբալ մակարդակում, թելադրում են համակարգված գործողությունների ռազմավարություն՝ հեռահար նպատակներով և նախանշված գերակայություններով: Ներկայումս, հաշվի առնելով Հայաստանի զարգացման ներուժը և համեմատական առավելությունները, հեռանկարային են համարվում բարձր տեխնոլոգիաները, որոնք ներառում են տեղեկատվական տեխնոլոգիաները, գիտական հետազոտությունների և մշակումների ոլորտը (R&D) և ծառայությունների զարգացումը, ինչպես օրինակ զբոսաշրջիկությունը, ապահովագրությունը, կապը և այլն: Առևտրի կիսաշրջափակման և դրա հետ կապված Հայաստանում առկա տրանսպորտային խնդիրների տնտեսական զարգացման սցենարում տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրանքը, էլեկտրոնային կոմերցիայի ոլորտը և էլեկտրոնային տվյալների շարժի վրա հիմնված այլ ծառայությունները (որոնք տրանսպորտային համակարգից անկախ գործելու հնարավորություն ունեն) հանդիսանում են այն ոլորտները, որոնցում Հայաստանը զարգացման ներուժ և համեմատական առավելություններ ունի: Տեղեկատվական տեխնոլոգիաների գին/ծավալ բարձր հարաբերակցություն ունեցող ապրանքների արտադրությունը, համակարգչային ոլորտի և տվյալների մշակման հետ կապված ծառայությունները այժմ սրընթաց վերելք են ապրում՝ հանդիսանալով Հայաստանի զարգացման հիմնական հեռանկարային բնագավառները՝ արտահանման լայն հնարավորություններով: Առևտրի և տրանսպորտային կիսաշրջափակման վերացման տնտեսական զարգացման սցենարում վերը նշված հիմնական համեմատական առավելությունները կարող են ընդլայնվել, արագացնելով վերջիններիս փոխակերպումը մրցակցային առավելությունների:

ը (որոնք տրանսպորտային համակարգից անկախ գործելու հնարավորություն ունեն) հանդիսանում են այն ոլորտները, որոնցում Հայաստանը զարգացման ներուժ և համեմատական առավելություններ ունի: Տեղեկատվական տեխնոլոգիաների գին/ծավալ բարձր հարաբերակցություն ունեցող ապրանքների արտադրությունը, համակարգչային ոլորտի և տվյալների մշակման հետ կապված ծառայությունները այժմ սրընթաց վերելք են ապրում՝ հանդիսանալով Հայաստանի զարգացման հիմնական հեռանկարային բնագավառները՝ արտահանման լայն հնարավորություններով: Առևտրի և տրանսպորտային կիսաշրջափակման վերացման տնտեսական զարգացման սցենարում վերը նշված հիմնական համեմատական առավելությունները կարող են ընդլայնվել, արագացնելով վերջիններիս փոխակերպումը մրցակցային առավելությունների:

4.1

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման նախադրյալները

Հայաստանի Հանրապետությունը նախկին Խորհրդային Միության տեխնոլոգիապես ամենազարգացած երկրներից մեկն էր՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) արդյունաբերության զարգացման հատուկ շեշտադրմամբ: Այդ ոլորտում գործում էր մոտ 40 գիտահետազոտական կենտրոն: Նրանցից ամենամեծը Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտն էր, որն ուներ ավելի քան 1000 աշխատող և արտադրում էր համակարգչային տեխնիկա (հիմնականում խորհրդային ռազմական արդյունաբերության համար) և դրանց համար նախատեսված ծրագրային ապահովում: 1960թ.-ից առ այսօր Երևանի պետական և ճարտարագիտական համալսարանները պատրաստել են տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) մոտ 13.300 մասնագետներ, որոնցից մոտ 5000-ն աշխատում են ըստ մասնագիտության: 1975թ.-ից հետո ավարտածներից 7000-ը (որոնցից 3100-3600-ը ծրագրավորողներ, համակարգերի ադմինիստրատորներ և ՏՏ դասախոսներ են) չեն աշխատում ըստ մասնագիտության կամ ընդհանրապես չեն աշխատում, քանի որ նրանց որա-

կավորումը չի բավարարում շուկայի պահանջները: Մինչդեռ ՏՏ ձեռնարկությունները դեռևս մոտ 1800 որակյալ մասնագետի կարիք ունեն¹: Արդեն այսօր ՏՏ մասնագիտությունների գծով դիմումները ուսումնական բարձրագույն հաստատություններ գրեթե եռապատկվել են:

Տեղական ծրագրային ապահովման արտադրությունը, որը (ի տարբերություն արտահանման ուղղվածություն ունեցող արդյունաբերության այլ ճյուղերի) ավելի քիչ է կրել վերջին տասը տարիների անկայուն իրավիճակի բացասական ազդեցությունը, բավականին արագ վերագտավ իր նախկին դիրքերը: 1997թ. սկսած, ՏՀՏ արդյունաբերությունը իր երեք՝ սարքավորումների (hardware), ծրագրային ապահովման (software) և տեղեկատվության հավաքման, պահպանման, մշակման, հաղորդման և ներկայացման ենթաճյուղերով, զարգանում է առաջանցիկ տեմպերով: Միայն ծրագրային ապահովման արտահանումը, համաձայն հաշվարկային գնահատականի, կազմել է առնվազն 20 մլն. դոլար²:

¹ Տեր-Նիկողոսյան Վ., Ասրյան Ա., «Հայաստան՝ ԻՏ արդյունաբերության իրավիճակը: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների ուսումնասիրության գտածոները»: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության կողմից իրականացված հետազոտություն: Մայիս, 2001:

² Armenia Growth Challenges and Potential Opportunities. World Bank, 2001.



4.1
Ներդիր

ՀՀ ՏՀՏ արդյունաբերության ենթաբաժինները

Հայաստանում ներկայումս գործում են՝

- ❖ Ծրագրային ապահովման 60 ձեռնարկություններ, որոնց գործունեությունը ուղղված է օպերացիոն համակարգերի, կիրառման ծրագրերի և այլնի մշակմանը: Այս կազմակերպություններից 28-ը ստացել են արտերկրյա ներդրումներ (հիմնականում ԱՄՆ-ից),
- ❖ Ինտերնետ ծառայության 19 ձեռնարկություններ, Ինտերնետին համընդհանուր և անձնական կապ տրամադրող կազմակերպություններ,
- ❖ ՏՏ ծառայությունների 35 ձեռնարկություններ, որոնք իրականացնում են սպասարկման, տվյալների բազաների կենտրոնի, տվյալների մշակման և համակարգչային սարքավորումների սպասարկման և այլ ծառայություններ,
- ❖ ՏՏ կրթության 24 ձեռնարկություններ, որոնց խնդիրն է համակարգչային սարքավորումների շահագործման և ծրագրային ապահովման բոլոր ասպեկտների համար անհրաժեշտ գիտելիքների ուսուցումը՝ ինչպես մասնագիտական, այնպես էլ օգտագործողի մակարդակում,
- ❖ ՏԷՄ (տեղեկատվական էլեկտրոնային մշակման) սարքավորումների 29 ձեռնարկություններ՝ համակարգիչների և ցանկացած տեսակի լրացուցիչ արտաքին կամ ներքին պարագաների արտադրությամբ, մոնտաժով և վաճառքով զբաղվող կազմակերպություններով,
- ❖ ՏՏ հարակից սարքավորումներ՝ հեռահաղորդակցման սարքեր կամ գրասենյակային տեխնիկա արտադրող և վաճառող 55 ձեռնարկություններ:


Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն

Ըստ անկախ դիտորդների կողմից իրականացված հետազոտությունների (ICT³, UNDP/UNIDO⁴, UNDP/ UNIDO⁵, USAID⁶, USAID⁷, WB⁸)՝ Հայաստանը համաշխարհային ՏՀՏ ոլորտում իր շոշափելի ներկայությունը ապահովելու և զարգացնելու մեծ ներուժ ունի (հատկապես ծրագրային ապահովման ոլորտում), քանի որ առկա է կրթական և մշակութային այնպիսի հա-

մակարգ, որն օգնում է ստեղծել ՏՀՏ-ի ոլորտում որակյալ մասնագետների համեմատաբար մեծ բանակ: Հայաստանում ՏՀՏ ոլորտում գործում են 222 ձեռնարկություններ (ներդիր 4.1), որոնց 87%-ը մասնավոր են⁹: ՏՀՏ-ի բոլոր ենթաճյուղերը, բացառությամբ «ՏՏ սարքավորումներ» ենթաճյուղի, հաստատուն զարգացում են ապրում (նկար 4.1):

Նկար **ՏՀՏ ձեռնարկությունների սպեկտրի միությունները (միաբերված)**

4.1



³ Global Technology Market. Information Technologies. Country profile-Export Potential. ARMENIA 2000, ICT/UNCTAD/WTO, Geneva, 2000.

⁴ Assessment of Rationale for the Establishment of IT Park in Armenia, prepared by Dr. Victor Brjabrin, UNDP/UNIDO Expert January 2000

⁵ Information Technology and Electronic Commerce Park (ITEC-Park) Establishment, UNDP/UNIDO, Project Document, 2000.

⁶ Republic of Armenia: ICT Assessment, 15 July 2000 Version, SETA, USAID

⁷ Armenia IT Master Strategy Inception Report, March, 2001, USAID

⁸ World Bank IT Enterprise Incubator, WB, 2001

⁹ Տեր-Նիկողոսյան Վ., Ասրյան Ա., «Հայաստան՝ ԻՏ արդյունաբերության իրավիճակը: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների ուսումնասիրության գտածոները»: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության կողմից իրականացված հետազոտություն: Մախ, 2001:

4.1.1 ՏՀՏ զարգացումը կարգավորող միջավայրը

ՀՀ կառավարությունը տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերության (SSU) զարգացմանը օժանդակելու նպատակով 2000թ. դեկտեմբերի 28-ի որոշմամբ ուղորտը հայտարարեց տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը: Արդյունքում ակնկալվում է, որ պետք է բարելավվի և փոփոխվի ուղորտը կարգավորող միջավայրը: ՏՏԱ-ի զարգացման հայեցակարգը կառավարության կողմից ընդունվել է 2001թ. ապրիլի 4-ին, իսկ ծրագիրն այժմ մշակման փուլում է:

Չնայած ՏՏԱ-ն տնտեսության այլ ճյուղերի համեմատ իրավական և վարչարարական նվազագույն խոչընդոտների է բախվում, սակայն վերջիններս դեռևս առկա են, և ՏՏԱ զարգացման ծրագրի նպատակներից մեկն էլ այս խնդիրները լուծելն է:

Հեղինակային իրավունքի մասին օրենքով խնդիրը կարգավորող դրույթների, էլեկտրոնային կոմերցիայի և էլեկտրոնային ստորագրության (ֆաքսիմիլ) մասին օրենքների (նախագծերը քննարկվում են) բացակայության պայմաններում առկա են որոշ խոչընդոտներ, որոնք սահմանափակում են այդ առումով Հայաստանի զարգացման հնարավորությունները: Զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոններն են Ինտերնետ կապի մատչելիության խնդիրը (USAID-ի կողմից պատրաստված ՏՀՏ-ի գնահատման հաշվետվության համաձայն) և իրավական նորմերը, որոնք բարենպաստ չեն Ինտերնետի տարածման համար և, որպես հետևանք, արգելակում են Հայաստանում ՏՀՏ արդյունաբերության և հատկապես էլեկտրոնային կոմերցիայի զարգացումը:


Դա առաջին հերթին վերաբերում է «ԱրմենՏել» ընկերության մենաշնորհին, որը դեռ 13 տարի փակամաքի տակ է պահելու երկրի կապի և հեռահաղորդակցման միջոցների զարգացումը: Չնայած Տրանսպորտի և կապի նախարարությունը հեռահաղորդակցման ոլորտի կարգավորման օրենսդրությամբ սահմանված իրավունք ունի, «ԱրմենՏել», ըստ էության, տիրել է այդ հատվածին և տեղական շուկայում ձեռք բերել բացառիկ դիրք: Օգտվելով դրանից՝ «ԱրմենՏելը» մինչ այժմ չի զարգացրել Ինտերնետը և, ՀՀ-ի հետ իր պայմանագրի համաձայն, ըստ փորձագետների, տնտեսական խթաններ չունի զարգացնելու այն: Մինևս ժամանակ, պետությունը ՏՏԱ-ն հայտարարել է իր տնտեսության զարգացման գերակա ճյուղ, մինչդեռ Ինտերնետը վերջինիս զարգացման հիմքն է:

Կառավարությունը միջոցներ է ձեռնարկում երկու մոտեցմամբ այս խնդիրը լուծելու համար. Ինտերնետին վերաբերող մենաշնորհ վերանայելու և իրավիճակը բարելավելու նպատակով «ԱրմենՏելին» լրացուցիչ խթաններ ստեղծելու առումով:

4.1.2 ՏՀՏԱ զարգացման ներուժը

ՏՀՏԱ-ն արդեն իսկ կայուն աճ է ապրում ՀՀ-ում, ստեղծում է նոր աշխատատեղեր (նկար 4.2) և ապահովում երկրում միջինից տասնապատիկ բարձր աշխատավարձ: Այն մեծ ներուժ ունի երկրի երկարաժամկետ տնտեսական զարգացումն ապահովելու առումով և կարող է մեծ ազդեցություն ունենալ տնտեսության այլ ճյուղերի ու ոլորտների զարգացման վրա: Ցանկացած պետության համար ՏՀՏԱ-ն և նրա ենթակառուցվածքները վճռորոշ են համաաշխարհային շուկայում հաջող գործելու համար:

ՏՀՏ հարվածի անձնակազմի աճի միփումները 1995-2000թթ.
(100 ՏՀՏ ձեռնարկություն գոյություն ունեցող 222-ից)



Ըստ էության, ՏՀՏԱ-ին ՀՀ տնտեսական զարգացման բնագավառում եռամիասնական դեր և գործառույթ է վերապահված.

- ❖ նախ՝ որպես արդյունաբերության ինքնին հեռանկարային ճյուղ,
- ❖ երկրորդ՝ որպես անհրաժեշտ արտադրական արդիական հենք այլ ճյուղերի զարգացման համար,

❖ երրորդ՝ որպես ենթակառուցվածք ներդրումների ներգրավման առումով:

Անհրաժեշտ է նշել նաև չորրորդ ակնկալվող գործոնը ՏՀՏԱ զարգացմանը զուգահեռ տնտեսությունը արդյունաբերականից տեղեկատվականի վերափոխելուն նպաստելու գործում (ներդիր 4.2):

Նկար
4.2

4.2
ԼԵՐՈՒՄ

**Հայաստանից ուղեղների արտահոսքը
և դրա առանձնահատկությունները***


Հայաստանից SS ուղեղների արտահոսքը սկսվեց 1990թ. սկզբին՝ անցումային շրջանի դժվարությունների հետ: Ըստ արտագաղթածների նախկին գործատուների, այս դեպքում ընդհանուր պատճառներին ավելանում են նաև՝

1. այլընտրանքային զինվորական ծառայության բացակայությունը (գորակազված SS մասնագետների 37%-ը լքել է երկիրը),
2. արտերկրում այդ մասնագետների «որսը» բարձր աշխատավարձերով,
3. Ինտերնետ կապի ցածր որակն ու հզորությունը և բարձր գինը (դժվարացնում է արդյունավետ աշխատանքը արտերկրում գտնվող պատվիրատուի հետ):

Ըստ SS ընկերությունների կառավարիչների, SS ոլորտի մասնագետներից արտագաղթողների քանակը և մասնագիտական ուղղվածությունը հետևյալն է. մինչ 1995թ. մեկնել է 500-1000 մասնագետ (հիմնականում համակարգչային ծրագրավորողներ), 1995–2000թթ.՝ մոտ 200 մասնագետ, որոնց 70%-ը SS ուսուցիչներ են, 16%-ը համակարգչային ծրագրավորողներ և 8%-ը համակարգերի վերլուծաբաններ: Արտագաղթած մասնագետների թիվը կազմում է տնտեսության մեջ զբաղված SS մասնագետների մոտ 20%-ը:

Նկար **SS մասնագետների արտագաղթի դինամիկան**

4.ա



Տեղական և օտարերկրյա ներդրումով SS ձեռնարկություններում թափուր տեղերի աճը, աշխատանքի ընտրության հնարավորությունները և արտերկրից պատվերների իրականացման և պայմանագրային հիմունքներով աշխատանքի փորձը նվազեցրել են համակարգչային ծրագրավորողների արտահոսքը: Նրանց մեծամասնությունը ներկայումս նախընտրում է ապրել և աշխատել Հայաստանում, քանի որ զգալիորեն աճել է վարձատրության չափը, և եկամտի համեմատության համար գնողականության հնարավորության գործոնը (PPP) կիրառելիս պարզ է դառնում, որ վարձատրության չափերի տարբերությունն այնքան էլ էական չէ:

Հայաստանից արտագաղթածների 68%-ը կապ է պահպանում իր նախկին ընկերությունների հետ, 24%-ը միջնորդի դեր է կատարում նոր շուկաների հայտնաբերման, ապրանքների արտահանման ընդլայնման և պատվերների ձեռք բերման գործում: Արտագաղթի ցավալի փաստի հետ մեկտեղ կարելի է արձանագրել նաև այն դրականը, որ նորաստեղծ SS սփյուռքը արդեն իսկ իր լուծման է ներդրում ՀՀ-ի տնտեսության զարգացման գործում:

* Տեր-Նիկողոսյան Վ., Ասրյան Ա., «Հայաստան՝ ԻՏ արդյունաբերության իրավիճակը: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների ուսումնասիրության տաժոնները»: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության կողմից իրականացված հետազոտություն: Մայիս, 2001:

Կարծում ենք, որ պետությունն իրապես գիտակցում է, որ շատ թանկ կվճարի, եթե ետ մնա այս բնագավառում, քանզի նոր արտադրատեսակների ստեղծմանն առնչվող գիտական մշակումները կարող են կանգ առնել միջազգային գիտական ցանցերի հետ համապատասխան կապեր չունենալու հետևանքով, իսկ տեղական արտադրողները համաշխարհային առևտրային ցանցերում ընդգրկվելու և շուկայում հա-

վասար պայմաններով մրցակցելու հնարավորության բացակայության պատճառով կարող են կորցնել շուկայի իրենց նույնիսկ համեստ մասնաբաժինները: ՏՀՏ հատվածը, ըստ էության, բավականին ճկուն է և շատ արագ կարող է փոխել իր ռազմավարությունը, մարտավարությունը, ապրանքների տեսականին և թեթևացնել ՀՀ-ի արդյունաբերության այլ ճյուղերի անցումային շրջանը:

ՏՀՏԱ-ն արդյունաբերության այլ ճյուղերի համեմատությամբ ունի մի շարք էական առավելություններ, մասնավորապես՝

- ❖ օգտագործում է համապատասխան որակավորում ունեցող առկա մարդկային ռեսուրսները,
- ❖ նվազագույն կապիտալ ներդրումներով ստեղծում է նոր աշխատատեղեր,
- ❖ արագորեն և հեշտությամբ արտահանում է իր ապրանքները՝ ցանկացած ծավալով,
- ❖ առավելապես գրավիչ է օտարերկրյա ներդրողների համար,
- ❖ օժանդակում է ՀՀ ներգրավմանը և մրցունակության ամրապնդմանը միջազգային շուկաներում:

Անգամ միայն ՏՏԱ (ոչ ամբողջ ՏՀՏԱ) բնագավառի որպես գերակա ճյուղի ճանաչումը և ոլորտի զարգացմանը նպաստող ծրագրերի մշակումը և արդեն իսկ իրականացումը կարելի է ոլորտի զարգացման համար ՀՀ կառավարության կողմից կատարված առաջին խոստումնալից քայլը համարել:

4.1.3 ՏՀՏԱ զարգացման դերը համաշխարհային տնտեսության մեջ ՀՀ-ի ներգրավման առումով

ՏՀՏԱ-ն, հատկապես Ինտերնետի զարգացումը, հանդիսանալով արագ զարգացող էլեկտրոնային բիզնեսի և էլեկտրոնային կոմերցիայի (e-commerce) հիմք, կարող է արագացնել ՀՀ-ի ներգրավումը համաշխարհային շուկայում: Այն կնպաստի տնտեսության մյուս ճյուղերի վերակառուցմանը և վերազինմանը, որը նրանց մրցունակության բարձրացման նախապայմաններից է: ՏՀՏԱ զարգացումը կնպաստի նաև ՀՀ-ի տնտեսական կարողությունների հզորացմանը և ներգրավմանը հավասար պայմաններ ապահովող և անսահման հնարավորություններ ընձեռող համաշխարհային շուկայում:

Ինտերնետն ունի բազմաթիվ կիրառություններ, սակայն էլեկտրոնային կոմերցիան դրանց «զուլտգործոցն» է (killer application): Գոյություն ունի հետադարձ կապ. էլեկտրոնային բիզնեսը խթանում է Ինտերնետի տարածումը, որն, իր հերթին, ստեղծում է նոր հնարավորություններ գործարար աշխարհի համար: Էլեկտրոնային բիզնեսն, ընդգրկելով էլեկտրոնային կոմերցիան, շատ ավելի լայն շրջանակներ ունի, քան վերջինս, որը Ինտերնետի հնարավորություններն օգտագործում է ապրանքների և ծառայությունների առք ու վաճառքի, ինչպես նաև միջնորդային գործունեության նպատակով:

Տեղեկատվության մշակման զարգացած կարողություններն աճում են փոքր և միջին ձեռնարկությունների, կազմակերպությունների և առանձին անհատների կողմից օգտագործման միջոցով: Ինտերնետի «պայթյունային» տարածումն առաջ է բերել Ինտերնետում բիզնեսի ներկայացված լինելու խիստ անհրա-

ժեշտությունը՝ էլեկտրոնային բիզնեսը դարձնելով առավել արդյունավետ և հուսալի:

Ակնկալվում է, որ ՏՀՏԱ-ն կշարունակի վերատեսչավորվել այն շրջանակներում, որտեղ այն գնային առումով կարող է ավելի նպաստավոր գործել: Զարգացած երկրներն ամենայն հավանականությամբ կպահպանեն իրենց առաջնային դերը բարձր տեխնոլոգիաների ասպարեզում: Զարգացող և անցումային տնտեսությամբ երկրները հնարավորություն կունենան ներդրումներ ներգրավել այն ոլորտներում, որտեղ հնարավոր է աշխատանքներ պատվիրել, և որոնք «գիտատար» են. օրինակ՝ գիտական հետազոտությունները և մշակումները, համակարգչային ծրագրերի ստեղծումը և ՏՏ ծառայությունները՝ վերանորոգման, պահպանման, տեղադրման աշխատանքները և առանձին մասերի արտադրությունը:

Այս բոլոր զարգացումները ծրագրային օժանդակության կարիք ունեն: Զարգացած երկրների՝ ՏՏ մասնագետների չբավարարված պահանջարկը այսօր իսկ կազմում է մոտ 1,5 մլն. և հաշվարկված է, որ 2008թ. այն կկազմի մոտ 5 մլն., քանի որ ՏՏ արդյունաբերությունը զարգանում է ավելի արագ, քան ՏՏ կրթական համակարգերը կկարողանան մասնագետներ մատակարարել (նման իրավիճակը, բայց փոքր մասշտաբներով, առկա է նաև ՀՀ-ում): Անցումային շրջանում գտնվող, ինչպես նաև զարգացող երկրները՝ իրենց սահմանափակ, անփոփոխ ենթակառուցվածքով, առաջին անգամ ի վիճակի կլինեն գործել այս կիբեռտարածությունում: Արագ, շարժունակ, «ամեն տեղ - ամեն ժամ» ինտերնետային կապը դառնալու է սովորական: Ինտերնետային կապի մեկ ժամվա գինը կհասնի համարյա զրոյի: Տեղեկատվության բոլոր ձևերը կդառնան թվանշանային և կհանդիպեն Ինտերնետում:

ՀՀ-ն, հենվելով իր կրթված, հեշտ վերապատրաստվող, ստեղծագործ, նորարարական, ճկուն և բարձր արտադրողականություն ունեցող աշխատուժի վրա, «պահից օգտվելու» և այս պայթյունային զարգացում ապրող անսահման շուկայում իր տեղը գտնելու բացառիկ հնարավորություն ունի: Ավելին՝ էլեկտրոնային կոմերցիան հայի՝ դարերով ձևավորված, գործարար միջնորդ լինելու մտածելակերպը և հմտությունները կիրառելու բացառիկ հնարավորություն է ստեղծում:

Ճյուղը արագ վերելք է ապրում և իր զարգացման խոչընդոտները վերացնելու նպատակով ճնշում է գործադրում պետության վրա, իսկ պետությունն իր հերթին արդեն իսկ արձագանքում է դրան՝ հստակ պատկերացնելով իր անելիքները.

- ❖ Ինտերնետի ոլորտում ստեղծել մրցակցային դաշտ և խթանել նրա զարգացումը,
- ❖ վերացնել պետության կողմից հարուցվող վարչարարական խոչընդոտները,
- ❖ վերացնել մտավոր սեփականության իրավունքի հետ կապված օրենսդրական խոչընդոտները,
- ❖ իրականացնել բարեփոխումներ ՏՏ կրթական համակարգում:

4.2

Գլոբալացում և ինտեգրացում

Անցած տասը տարիներին Հայաստանում տեղի ունեցած քաղաքական, տնտեսական և սոցիալական խոշոր վերափոխումների վրա էական ազդեցություն ունեցան նաև համաշխարհային զարգացման գործընթացները:

90-ականների սկզբին, ԽՍՀՄ փլուզումից հետո, Հայաստանը ետխորհրդային տարածքի մյուս պետությունների հետ ներգրավվեց գլոբալացման և ինտեգրացման գործընթացներում:

Անցած տասը տարիների ընթացքում Հայաստանը անդամագրվել է մի շարք միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների, որոնց թվում են Միավորված ազգերի կազմակերպությունը՝ 1992, Եվրոպայի անվտանգության և համագործակցության

կազմակերպությունը՝ 1992, Անկախ պետությունների համագործակցությունը՝ 1992, Սևծովյան երկրների տնտեսական համագործակցության կազմակերպությունը, Եվրոպայի խորհուրդը՝ 2001, ունի միակողմանի և երկկողմանի պայմանագրեր մի շարք երկրների հետ: Հայաստանի մասնակցությունը գլոբալ համաժողովներին և զագաթաժողովներին, ինչպես նաև հավատարիմ մնալը ստանձնած պարտավորություններին ու Հազարամյակի հռչակագրի նպատակներին (հավելված 4) նույնպես վկայում են գլոբալացման համաշխարհային գործընթացներին Հայաստանի մասնակցության մասին: Չնայած այս ամենին այսօր ՀՀ-ն պետք է լուծի երկմիասնական խնդիր՝ գլոբալացման նկատմամբ հայեցակարգային վերաբերմունքի բանաձևում և գլոբալացմանը մասնակցելու չափի որոշում:

4.3 Երեկի

Գլոբալացումը՝ որպես երևույթ

Գլոբալացումն՝ իբրև երևույթ, իբրև գործընթաց, նախորդեց իր եզրաբանական բնորոշմանը, այդ իսկ պատճառով յուրաքանչյուրը յուրովի է հասկանում գլոբալացման իմաստն ու նշանակությունը:

Ոմանք գտնում են, որ գլոբալացումը մշակութային երևույթ է և այլ իրողությունների թվում ուղղորդում է որոշակի արժեքների համընդհանուր տարածումն ու պարտադրումը: Եվ եթե մինչև օրս համաշխարհային ինտեգրացման գործընթացներն ուղեկցել են կոմունիստական կամ կապիտալիստական հասարակարգերին, ապա այժմ գլոբալացումը նույնացվում է առանձին պետության կամքի և շահերի հետ:

Ուրիշները գլոբալացումը համարում են քաղաքական հայեցակարգ, որն առաջին հերթին մարտահրավեր է նետում ազգային ինքնությանը և անկախ երկրների իրավունքներին:

Շատերը գլոբալացումը համարում են տնտեսական երևույթ և բնութագրում որպես ապրանքների, ծառայությունների, կապիտալի, գաղափարների և տեխնոլոգիաների գլոբալ շուկաների ձևավորման, ինչպես նաև պետությունների, դրանցում գոյություն ունեցող ինստիտուտների, ազգային մշակույթների և այլ սուբյեկտների փոխկապվածության և փոխազդեցության ուժգնացման գործընթաց:

Գլոբալացումը միաժամանակ կարող է դիտարկվել և՛ որպես սոցիալական, և՛ որպես պատմական երևույթ, որն առնչվում է տնտեսական ակտիվության արագ աճին, ընդ որում, ոչ թե մեկ պետության ներսում, այլ տարբեր պետությունների միջև:

Իբրև պատմական միտում՝ այն նոր երևույթ չէ: Սակայն օբյեկտիվ գործընթացների զարգացման ներկա փուլում գործ ունենք մասշտաբների էական ընդլայնման հետ, որն իր հերթին հին արժեքների նկատմամբ վերաբերմունքի վերանայում և վերագնահատում է պահանջում: Միով բանի՛վ՝ գլոբալացումը համաշխարհային ինտեգրացումն է. նման ծավալուն գործընթացները բնորոշ են եղել աշխարհին պատմական որոշակի փուլերում: Նորն այսօր միայն ինտեգրացման արդյունավետությունն ու աստիճանն է և այն երկրների ու մարդկանց թիվը, որոնք ի վիճակի են կամ էլ պարտադրված են մասնակցելու այդ գործընթացներին և կրելու են դրանց ազդեցությունը:

Աղավնի Կարախանյան

Գլոբալացման սպառնալիքների ու առավելությունների գնահատման ելակետը պետք է դառնա այն տեսակետը, որ գլոբալացումը օբյեկտիվ իրողություն է, անհրաժեշտ է պարզապես որոշել սեփական երկրի վերաբերմունքը, տեղը և վարքագիծը դրա շրջանակներում, և որ յուրաքանչյուր առանձին պետության համար գլոբալացման գործընթացների ներգործությունն ու հետևանքները անհատական բնույթ ունեն։ Քանի որ գլոբալացման գործընթացները նախ և առաջ ընդգրկում են արագ զարգացող երկրների շատ փոքր խումբ, և մեծ թվով երկրներ պարզապես դուրս են մնում այդ գործընթացից, վերջիններիս համար գլոբալացման օգուտներն այնքան ակնհայտ չեն, որքան բացասական հետևանքները։

Սակայն թե՛ տեղական, թե՛ ազգային ու գլոբալ մակարդակների գնահատման չափանիշը բոլոր դեպքերում նույնն է՝ կիսնագեցնի՞, վերջնահաշվում, գլոբալացումը մարդկանց կենսամակարդակի, միջավայրի, սոցիալական ապահովության, քաղաքական իրավունքների ամրապնդմանը, կապիտալի՞ մշակութային բազմազանությունը և ազգային ինքնատիպությունը, թե՛ ոչ։ Այս առումով Հայաստանը ևս բացառություն չէ։

Գլոբալացման գործընթացների ազդեցությունը կրող երկրի տեսանկյունից Հայաստանի համար գլոբալացման ելությունը նախ և առաջ հանգում է մշակութային ու սոցիալ-տնտեսական հետևանքների, քանի որ համաշխարհային շուկայում ինտեգրացումը մի կողմից մեծ հնարավորություններ է ընձեռում, մյուս կողմից՝ որոշակի և ոչ միանշանակ խնդիրներ է առաջադրում։ Հայաստանի համար գլոբալացման վտանգը եռամիասնական է և սպառնում է.

1. տնտեսական ինքնուրույնությանը՝ վերածելով նրան տնտեսական կցորդի՝ «մետրոպոլիա-գաղութի», ժամանակակից ընկալմամբ՝ օբյեկտի,
2. մշակութային ինքնությանը՝ խաթարելով ազգային կերպը ու ինքնատիպությունը,
3. քաղաքական ինքնիշխանությանը։

Հենց այս հնարավոր բացասական հետևանքներն են դառնում գլոբալացման երևույթի՝ իբրև լուրջ սպառնալիքի ընկալման հիմքը և հանգեցնում են շատ երկրներում դրա դեմ պայքարի կոչերի։

Հայաստանի խնդիրն է լավագույնս հարմարվել գլոբալացվող համաշխարհային հանրությանը՝ հնարավորինս օգտագործելով գլոբալացման առավելությունները, զուգահեռաբար նվազագույնի հասցնելով դրա բացասական ներգործությունը։ Օրինակ՝

- ✦ մշակութային ներխուժման վտանգի, մշակութային տարբերությունների և ինքնատիպության հնարավոր կորստյանը հակազդելու առավել արդյունավետ միջոցը «ֆիլտրի» համակարգն է, որ

հնարավորություն է ընձեռում ընտրողաբար օգտվել գլոբալացման արդյունքներից։ Ազգային մշակութային պաշտպանությունը նրա հետագա զարգացման և համընդհանուր դառնալու ունակ արժեքների հանրայնացման, ինչպես նաև ազգային ու համամարդկային արժեքների համադրման մեջ է։ Ի վերջո, պատմական խոր արմատներ ունեցող մշակույթները շատ դժվար են ենթարկվում փոփոխությունների՝ ի հեճուկս այլալեզու խոսքի, երաժշտության, գրականության կամ սննդի պարտադրման։ Ավելին՝ դարավոր պատմությունը և քրիստոնեական ավանդույթները՝ Հայաստանի աշխարհագրական դիրքի հավելումով, քաղաքակրթությունների երկխոսության խթանման կապող օղակ են և ոչ թե հակադրման աղբյուր։

- ✦ Գլոբալացմանն ուղղված իր նախաձեռնություններում Հայաստանը կարող է օգտագործել տարածաշրջանային համագործակցությունը, որը գլոբալացման ներկա փուլի կարևոր առանձնահատկությունն է. առկա է ինքնատիպ տեղական գլոբալացում, որը ենթադրում է տարածաշրջանի հարևանների հետ առավել սերտ համագործակցություն, նրանց ճանաչում՝ իբրև արդեն գոյություն ունեցող և հեռանկարային գործընկերներ տնտեսական, սոցիալական ու մշակութային ասպարեզներում, հավասարապես նաև անվտանգության և այլ հարցերում։ Տարածաշրջանային համագործակցության անհրաժեշտությունը հատկապես մեծ է մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաև տնտեսության բոլոր ոլորտներում։ Հայաստանը, ինչպես և տարածաշրջանի բոլոր պետությունները, միայն կշահեն այդ համագործակցությունից։
- ✦ Այսօրվա գլոբալացվող աշխարհում իր ավանդական նախնի սահմաններից դուրս է գալիս նաև անվտանգություն հասկացությունը, հատուկ նշանակություն է ստանում հասարակությունների բաց բնույթը և փոխկախվածությունը, որը պահանջում է առանձին պետությունների ջանքերի համատեղում ներտարածաշրջանային, տարածաշրջանային ու գլոբալ մակարդակներում։ Ինտեգրացումը քաղաքականապես և տնտեսապես դառնում է անհրաժեշտ ու նպատակահարմար, իսկ տարածաշրջանային համագործակցության ներուժով հնարավոր է թուլացնել ու վերացնել հարևանների միջև հարաբերությունների լարվածությունը, նաև՝ վերահսկել սպառազինություններն ու անվտանգությունը, լուծել բնապահպանական խնդիրները (ներդիր 4.4)։

4.4 Ներդիր

Բնապահպանական հիմնախնդիրները գլոբալ համապեքսություն

Ներկայումս ընթանում է 2002թ. կայանալիք Կայուն զարգացմանը (ԿՁ) նվիրված համաշխարհային գա-
զաթաժողովի նախապատրաստական համընդգրկուն գործընթացը, որը կայուն զարգացման տեսանկ-
յունից պետք է զննհատի քաղաքակրթության անցած տասնամյա ուղին, 1992թ. Ռիո դը ժանեյրոյում
կայացած Շրջակա միջավայրի և զարգացման ՄԱԿ-ի գիտաժողովի համաձայնագրերի կատարման ըն-
թացքը, ինչպես նաև ուրվագծի հետագա զարգացման ռազմավարությունը: Այդ գործընթացի շրջանակ-
ներում ՀՀ հասարակական և գիտական կառույցները պատրաստել են «Ռիո+10» ազգային գեկույցը, ո-
րը հաստատվել է 01.06.01թ. եզրափակիչ ազգային գիտաժողովի կողմից: Ձեկույցում արվել են
հետևյալ եզրակացություններն ու առաջարկությունները:

Թեև ՀՀ-ում գործում է ԿՁ առանձին ոլորտներին ուղղված մի քանի ծրագիր, 21-րդ դարի օրակարգի
կողմից պահանջվող համալիր մոտեցումը չի ապահովում ԿՁ հիմնախնդիրների իրականացումը: Երկ-
րում չի ստեղծվել ԿՁ ազգային խորհուրդ (ԿՁԱԽ), չի մշակվել ԿՁ ազգային ռազմավարություն: Ակտիվ
գործունեություն է ծավալվել «Գիտություն և կրթություն» կայուն զարգացման համար» ծրագրի, ինչպես
նաև «Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի» ու «Կենսաբազմազանության մասին կոն-
վենցիայի» շրջանակներում: Կենսաբազմազանության վերաբերյալ ռազմավարության և գործողու-
թյունների ծրագրի իրականացմանը էական խոչընդոտում է երկրի ծանր սոցիալ-տնտեսական իրավիճա-
կը, որի պայմաններում բնակչության մարզիցմալ շերտը գոյատևում է բնական պաշարների գերշահա-
գործման շնորհիվ:

Զնայած որոշակի տեսական մշակումների առկայությանը, որոնք կարող էին աջակցել կայուն զարգաց-
ման համար անհրաժեշտ հիմնախնդիրների լուծմանը, իրականում երկրի զարգացումը անցումային շր-
ջանում հիմնականում ընթացել է ԿՁ սկզբունքներին հակառակ ուղղությամբ՝ հանգեցնելով տնտեսա-
կան ներուժի և սոցիալական ծառայությունների մատչելիության զգալի անկման, հասարակության թե-
րատության և ըստ եկամուտների բեռնացման կտրուկ աճի, գործազրկության, գեոէկոհամակարգերի
բեռնվածության ավելացման:

Դիտարկելով գլոբալացման ազդեցությունը ՀՀ վրա՝ եզրակացվել է, որ միջազգային ֆինանսական
հաստատությունների կողմից երաշխավորված տնտեսության և շուկայի ազատականացման ստան-
դարտ ծրագրերի ու մեխանիզմների շուտափույթ կիրառումը (առանց հաշվի առնելու երկրի անպատ-
րաստ լինելը և առանձնահատկությունները) կործանարար եղավ Հայաստանի համար: Միջազգային
տնտեսության մեջ ինտեգրացվելու անհրաժեշտությունն ակնհայտ է, սակայն ոչ տնտեսական անվ-
տանգության կորստի, սոցիալական հսկայական գնի և մտավոր ընտրախափի արտահոսքի գնով:

Առաջարկվել է ձևավորել ԿՁԱԽ «կառավարական հատված» և արդեն ստեղծված ոչ կառավարական
հատվածի հետ միասին մշակել ԿՁ ազգային ռազմավարություն, որը կապահովի զարգացման տնտե-
սական, էկոլոգիական և սոցիալական առաջնությունների սերտ փոխկապակցվածություն: Սոցիալ-
տնտեսական զարգացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը պետք է համաձայնեցվեն այդ
հիմնարար փաստաթղթի հետ:

ԿՁԱԽ-ը պետք է առաջարկի անցումային գործընթացի սրբագրում՝ ԿՁ տեսանկյունից: Մասնավորա-
պես անհրաժեշտ է բարձրացնել պետության դերը վերափոխումների և գլոբալացման գործընթացնե-
րում երկրի ընդգրկման ժամանակահատվածում՝ դրանց բացասական ազդեցության նվազեցման, իրո-
ղությանը հնարավորինս լիարժեքորեն հարմարվելու, հասարակության մեջ սոցիալական համաձայ-
նության վերականգնման և արտադրության ոչ նյութական ոլորտի զարգացումը առավելագույնս խթա-
նելու շնորհիվ՝ մարդկային կապիտալի պահպանման և զարգացման նպատակով:

Տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում անհրաժեշտ է քննարկման ներկայացնել հետևյալ
հիմնահարցերը. անցումային տնտեսությամբ երկրների վրա գլոբալացման ազդեցությունը, վերափո-
խումների իրական գործընթացի հակասությունը ԿՁ սկզբունքներին, ինչպես նաև բնապահպանության
ոլորտում մշակված ծրագրերի «ներդրման ճգնաժամի» հաղթահարման նպատակով Արևելք-Արևմուտք
համագործակցության կատարելագործմանն ուղղված երկխոսության անհրաժեշտությունը:

Կարինե Դանիելյան

Աշխ. իտ. դոկ., «Հանուն կայուն մարդկային զարգացման»
ասոցիացիայի ՀՀ ԿՁԱԽ ոչ կառավարական հատվածի նախա ահ

Ինտեգրացումը և անվտանգության խնդիրների համատեղ լուծումը թույլ կտան արդյունավետ օգտագործել գլոբալացման առավելությունները և կանխել բացասական հետևանքները:

Համակարգված քաղաքականություն վարելու դեպքում Հայաստանը կարող է ամրապնդել իր ինքնիշխանությունը և ազգային պետականությունը՝ ակտիվորեն ներգրավվելով գլոբալացման գործընթացներում և հետևելով համընդհանուր մարդասիրական՝ հիմնարար իրավունքների և ազատությունների, ժողովրդավարական իշխանության սկզբունքներին: Պետության մասնակցությունը գլոբալացման կառավարմանը հնարավորինս կնվազեցնի ապակառուցողական համահարթեցման ներգործությունը:

4.2.1 Գլոբալացման փնտրական գործընթացը և Հայաստանը. իրողություններ և հնարավորություններ

Մարդկային զարգացման (ՄԶ) և տնտեսական կայուն ու բարձր տեմպերով աճի ապահովման ասպարեզներում նոր հարյուրամյակում Հայաստանի ձեռքբերումները մեծապես պայմանավորված են լինելու միջազգային տնտեսական ինտեգրացման գործընթացում արդյունավետ ընդգրկվելու և գլոբալացման ընձեռած հնարավորությունների օգտագործման ունակությամբ: Միջազգային տնտեսական ինտեգրացման արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե աշխատանքի միջազգային բաժանման համակարգում որքանով է տվյալ տնտեսության մասնակցությունը հիմնվում ունեցած համեմատական և մրցակցային առավելությունների վրա և ի վիճակի՞ է երկիրը լիարժեք օգտագործել դրանք, զարգացնել նորերը: Իսկ այդ բոլորի վրա, բացի երկրի ներսում վարվող համապատասխան քաղաքականությունից, անխուսափելիորեն իր մեծ ազդեցությունն է ունենում նաև գլոբալացման գործընթացը:

Զարգացող և անցումային երկրների համար գլոբալացումը ստեղծում է կապիտալի, ապրանքների, ծառայությունների, տեխնոլոգիաների շուկաներից օգտվելու և դրանցում համեմատաբար արագ տեղ գրավելու հնարավորություններ, որոնք լիարժեք օգտագործել կարողանալու դեպքում հնարավոր է ապահովել երկրի տնտեսության արագ և արդյունավետ ինտեգրացումը համաշխարհային մեջ: Հակառակ պարագայում գլոբալացումը կարող է սրել առկա հիմնախնդիրները և նորերի առաջացման պատճառ դառնալ:

Գլոբալացման բացասական հետևանքները նվազագույնի հասցնելու և դրականները երկրի արդյունավետ տնտեսական ինտեգրացման շահերին ծառայեցնելու համար Հայաստանի իշխանությունները պետք է հաշվի առնեն այդ գործընթացով պայմանա-

վորված օբյեկտիվ մի շարք իրողություններ, որոնցից ամենաէականներն են.


Առաջին (և ամենակարևորը)՝ ինչպես ասվել է, գլոբալացումը օբյեկտիվ երևույթ է, նրա հետագա զարգացումն ու տարածումը անհնարին է կանխել: Այն պայմանավորված է կապիտալի գլոբալ բնույթով և հետևանք է գիտության ու տեխնոլոգիաների, հատկապես կապի և հեռահաղորդակցության առաջընթացի, արտադրական գործընթացի միջազգայնացման և տնտեսությունների ազատականացման:

Երկրորդ՝ գլոբալացման հետևանքով անհամեմատ ուժեղանում է մրցակցությունը ապրանքների, ծառայությունների, աշխատուժի, կապիտալի և տեխնոլոգիաների միջազգային շուկաներում: Փոքր շուկա ունեցող Հայաստանի համար գլոբալացման գործընթացը սեփական շահերին ծառայեցնելու հիմնական ուղին ազգային տնտեսությունը միջազգայինին արդյունավետ ինտեգրացումն է, որը հնարավոր է բարձր տեխնոլոգիաներով հագեցված ճյուղերի արտադրանքի արտահանման ծավալների աստիճանական մեծացումով: Սակայն անցումային տասը տարիների ընթացքում օբյեկտիվ և սուբյեկտիվ տարբեր պատճառներով (այդ թվում՝ պայմանավորված նաև գլոբալացումով), հնարավոր չի եղել ապահովել բարձր մրցունակություն ունեցող տնտեսության ձևավորում: Դրա հետևանքով նախ դեռևս փոքր են համաշխարհային տնտեսության մեջ երկրի ինտեգրվածության աստիճանը բնութագրող կարևոր ցուցանիշներից մեկի՝ ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալները (2000թ. կազմել են ՀՆԱ-ի ընդամենը 23%-ը, որը շատ ցածր է Հայաստանի պես փոքր շուկա ունեցող երկրի համար), և արդյունավետ չէ հատկապես ապրանքների արտահանման կառուցվածքը, որում գրեթե բացակայում են ավելացված մեծ արժեք պարունակող գիտատար և տեխնոլոգիատար ապրանքները (նկար 4.3):

Երրորդ՝ գլոբալացման գործընթացի շարժիչ ուժը և ամենակատիվ մասնակիցները, հետևաբար և ամենամեծ չափով շահողները վերազգային (transnational) կորպորացիաներն են, որոնց հետ մրցակցելու նպատակով նոր ձևավորված տեղական ընկերությունները պետք է կատարեն զգալի ներդրումներ նոր տեխնոլոգիաների, մասնագետների պատրաստման, գովազդի և այլ բնագավառներում: Քանի որ փոքր տարողության շուկա ունեցող երկրների ընկերությունների համար նման ներդրումներ կատարելու հնարավորությունները խիստ սահմանափակ են, գլոբալ շուկայում ինտեգրացման տեմպերը արագացնելու համար Հայաստանը պետք է որքան հնարավոր է մեծ ծավալի վերազգային կորպորացիաների կապիտալ ներգրավի:

Նկար 3 Հայաստանի արտահանման կառուցվածքը 2000թ.¹⁰

4.3




Սա գլոբալացմամբ պայմանավորված այն իրողությունն է, որի պահանջները լիարժեք հաշվի առնելու և հաջողությամբ իրականացնելու դեպքում երկիրը անմիջապես զգում է այդ գործընթացի դրական հետևանքները: Նկար 4.4-ում բերված տվյալները ցույց են տա-

լիս, որ անցումային խնդիրները հաջողությամբ լուծող երկրները հիմնականում նրանք են, որոնք կարողացել են ներգրավել ավելի մեծ ծավալի օտարերկրյա ուղղակի ներդրումներ, որոնց գերակշիռ մասը կատարվում է վերազգային կորպորացիաների կողմից:

Անցումային երկրներում 199 1-99թթ. ընթացքում կապարված ՕՈՒՆ-ների գումարային մեծությունը մեկ շնչի հաշվով¹¹

Նկար

4.4



Միաժամանակ անհրաժեշտ է ակտիվորեն ներգրավվել վերազգային կառույցների և միջազգային տնտեսական կազմակերպությունների աշխատանքներ-

ում՝ միջազգային գործընթացների զարգացման միտումները լավ պատկերացնելու և, դրանից ելնելով, սեփական շահերը պաշտպանելու համար (ներդիր 4.5):

¹⁰ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

¹¹ Աղբյուրը՝ World Investment Report 1999: Foreign Direct Investment and the Challenge of Development, United Nations: World Investment Report 2000: Cross-border Mergers and Acquisitions and Development, United Nations, New York and Geneva.

Ի՞նչ կարելի է սպասել ԱՅԿ-ին Հայաստանի մուրալուար անդամակցությունից

Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՅԿ) անդամակցությունը, ստորև թվարկած հանգամանքների հաշվառումով, մեծ չափով կնպաստի Հայաստանի արդյունավետ տնտեսական ինտեգրացմանը համաշխարհային տնտեսության մեջ.

- ԱՅԿ անդամ 140 երկրների հետ առևտրում կհաստատվի «առավելագույն բարենպաստության ռեժիմ»,
- օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման տեսանկյունից Հայաստանը կդառնա ավելի գրավիչ,
- կբարձրանա Հայաստանի վարկը՝ որպես տնտեսական քաղաքականության տեսանկյունից կանխատեսելի և նվազ ռիսկային երկիր,
- որպես ԱՅԿ անդամ՝ Հայաստանը կօգտվի այդ կազմակերպության շրջանակներում բազմակողմ բանակցություններին, վեճերի կարգավորման մեխանիզմների և առևտրի քաղաքականության քննարկումներին մասնակից լինելու հնարավորություններից ու առավելություններից,
- մեծապես կապահովագրվի սեփական շահերը պաշտպանելու նպատակով ներքին արտադրողների օրեցօր աճող, ամբողջ տնտեսության համար ոչ արդյունավետ լոբբինգից,
- առավել արդյունավետ մեխանիզմներով կկարողանա պաշտպանել տեղական արտադրողների շահերը,
- հնարավորություն կստանա հարկ եղած դեպքում խուսափել պակաս ազատական տնտեսական (մաքսային) միություններին անդամակցելուց,
- կնպաստի Հայաստան-Եվրամիություն առևտրա-տնտեսական հարաբերությունների ավելի ինտենսիվ սերտացմանը:

Տնտեսական հետազոտությունների ինստիտուտ

Չորրորդ՝ անցումային ինստիտուցիոնալ և կառուցվածքային բարեփոխումները տարբեր պատճառներով (քաղաքական, տնտեսական, սոցիալական, ազգային-մշակութային) անհետևողականորեն և անարդյունավետ իրականացնող երկրներում չլուծված անցումային հիմնախնդիրներին ավելանում են գլոբալացմամբ պայմանավորված նոր խնդիրներ՝ ավելի մեծացնելով վերջինիս բացասական հետևանքները: Հայաստանում անցումային խնդիրների լուծման երկարածությունը նույնպես կհանգեցնի գլոբալացման բացասական հետևանքների ավելի մասշտաբային դրսևորման:

Յինգերորդ. գլոբալացման դրական ազդեցությունն ավելի մեծ կարող է լինել այն երկրներում, որոնք տարբեր գործոնների շնորհիվ (հարուստ բնական ռեսուրսներ, կարևոր աշխարհաքաղաքական դիրք և այլն) գլոբալ տնտեսության զարգացման վրա ազդելու ավելի մեծ պոտենցիալ հնարավորություններ ունեն: Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման դեպքում կարող է մեծ դրական գործոնի վերածվել: Նավթի և գազի խողովակաշարերի անցկացումը երկրի տարածքով, ինչպես նաև հյուսիսը հարավի հետ կապող ավտոճանապարհային և երկաթուղային հաղորդակցության վերականգնումը տնտեսության մեջ ներդրումների մեծ ներհույս պահանջով կարևոր գործոն կդառնան: Ի լրումն՝

Սիյուռքը կարող է դառնալ այն երկրորդ կարևոր գործոնը, որի ընձեռած հնարավորությունների լիարժեք օգտագործումը կհանգեցնի գլոբալացման դրական հետևանքների դրսևորման:

Վեցերորդ՝ գլոբալացման հետևանքով ազգային տնտեսությունների փոխկապվածության և փոխկախվածության ուժեղացումը դրանց ավելի խոցելի է դարձնում նրանց համաշխարհային ապրանքային և ֆինանսական շուկաներում, ինչպես նաև տարբեր երկրներում ծագած ճգնաժամերի դեպքում: Հայաստանի տնտեսական ակտիվությանը շոշափելի հարված հասցրեց հատկապես 1998թ. օգոստոսին ՌԴ-ում բռնկած տնտեսական ճգնաժամը (վերջինս իր հերթին կրել է 1997-1998թթ. «ասիական» ճգնաժամի անմիջական ազդեցությունը). էականորեն կրճատվեցին Ռուսաստան արտահանվող ապրանքների և այնտեղից ստացվող մասնավոր տրանսֆերտների ծավալները: Ըստ տարբեր գնահատումների՝ վերջիններս մի քանի անգամ գերազանցում էին ամբողջ արտահանումից ստացած զուտ արժեքը: Հաշվի առնելով վերը նշված իրողությունը՝ Հայաստանը նման ցնցումների ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով պետք է ընդլայնի իր արտաքին տնտեսական կապերը տարբեր երկրների հետ, չափավոր մակարդակի հասցնի առանձին երկրներից ունեցած մեծ կախվածությունը և ամրապնդի իր դիրքերը ավելի կայուն և զարգացած շուկաներում:

Յոթերորդ` գլոբալացման հետևանքով ազգային տնտեսությունը դառնում է համընդհանուրի բաղկացուցիչ մաս, սակայն կառավարող ինստիտուտները մնում են ազգային: Այս իրողությունը որակապես նոր խնդիրներ է առաջացնում ցանկացած երկրում, ինչպես և Հայաստանում, որը լինելով փոքր երկիր՝ ավելի մեծ կախվածություն ունի գլոբալ տնտեսությունից: Տնտեսությունը կառավարող ազգային ինստիտուտները պետք է կարողանան կազմակերպել այդ գործընթացը՝ հաշվի առնելով գլոբալ տնտեսության զարգացման օրինաչափությունները և պահանջները: Այդ խնդիրների իրագործումը պար-

տադրում է կառավարման նոր հայեցակարգի մշակում՝ գիտա-ծրագրային ապահովմամբ, և համապատասխան մասնագետների պատրաստում:

Այս ամենը ցույց է տալիս, որ գլոբալացման պայմաններում երկրի տնտեսության արդյունավետ ինտեգրացումը համատեղ ջանքեր է պահանջում և մեծապես կախված է ազգային տնտեսության կառավարման արդյունավետության բարձրացումից, ըստ որում, ինչպես նշել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանը, «... մենք պետք է սովորենք լավ կառավարել և պետք է սովորենք, թե ինչպես լավ կառավարել միասնաբար»¹²:

4.3

Գիտական և ծրագրային ապահովումը՝ արդյունավետ կառավարման կարևորագույն նախապայման

Կառավարման արդյունավետությունը արտացոլում է սովյալ օբյեկտի և կոնկրետ խնդրի լուծման համար ընդունված կառավարչական որոշումների հիմնավորվածությունը և նպատակահարմարությունը, իսկ դրանց միջոցով՝ նաև կառավարիչների գիտելիքները և կառավարման հմտությունները: Կառավարման բարձր արդյունավետությունը նպատակների իրականացման ուղու ճիշտ ընտրությունն ու կենսագործումն է:

Կառավարման արդյունավետության բարձրացմանը և կառավարչական որոշումների գիտագործնական բարձր հիմնավորվածությանը ներկայումս մեծ ուշադրություն է դարձվում ողջ աշխարհում, և դրա անհրաժեշտությունը մեծանում է տնտեսության գլոբալացման և ինտեգրացման խորացման ու տնտեսությունում փոփոխությունների ինտենսիվացման (օրինակ, անցումային շրջանի երկրներում) հետ մեկտեղ, քանի որ այդ գործընթացները պարտադրում են կառավարման դաշտի, ազդող գործոնների, ստացվող արդյունքների (ուղղակի և անուղղակի) և մասնակից սուբյեկտների ավելի լայն ընդգրկում:

Այս խնդիրը ավելի քան կարևոր է Հայաստանի համար, եթե նկատի ունենանք բարդ աշխարհաքաղաքական դիրքը, տնտեսական, ինչպես նաև մի շարք այլ դժվարություններ: Կառավարման արդյունավետությանը, սակայն, ՀՀ-ում բավարար ուշադրություն չի դարձվել. հիմնականում բացակայում են դրա գնահատման

համապատասխան մեթոդները, կառույցներն ու փորձը, փաստացի վիճակի և ազդող գործոնների խոր վերլուծությունները, իսկ արդյունավետության բարձրացմանը նպատակաուղղված համակարգված ու համալիր միջոցառումները իրավիճակային են և հիմնականում վերաբերում են կառուցվածքային փոփոխություններին:

Կառավարման արդյունավետության բարձրացումը ներկայումս առանցքային խնդիր է և այն պետք է համարվի ՀՀ կառավարության գործունեության առաջնահերթ ուղղություն, մշտապես գտնվի ուշադրության կենտրոնում, իրականացմանը նպատակաուղղված միջոցառումների մշակումը ամրագրվի որպես տնտեսության կառավարման համակարգի մի հատուկ մարմնի լրջագույն պարտավորություն:

Պետական կառավարման արդյունավետության զգալի բարձրացումը ՀՀ-ում ներկա պայմաններում մեծ ջանքեր կպահանջի, որոնց թվում կարևորում ենք **կառավարման ծրագրային ու գիտական ապահովման և արդյունավետության գնահատման** համակարգերի ստեղծումը, որոնց գոյությունը և բնականոն գործունեությունը, մեր կարծիքով, տնտեսության արդյունավետ կառավարման առաջնային նախապայմաններն են: Դրանց ստեղծումը կհանգեցնի նաև կառավարման ժողովրդավարացմանը, թափանցիկությանը, մասնագետների ավելի լայն մասնակցությանը որոշումների նախապատրաստման գործընթացին:

¹² Kofi A. Annan, Secretary-General of the United Nations, "We the peoples", The role of the United Nations in the 21st century, New York, NY 10017. p. 12.

4.3.1 Կառավարման ծրագրային ու գիտական ապահովման և արդյունավետության գնահատման համակարգեր

Կառավարման ծրագրային ապահովման համակարգ

Կառավարչական որոշումների ընդունման նպատակային մոտեցումը ենթադրում է համապատասխան ծրագրի մշակում, որը դառնում է նպատակադրված գործը սկսելու նախապայմանը ու հիմքը, գործը վարելու միտքն ու ուղղությունը: ՀՀ-ում այժմ մշակվում են զարգացման, վերափոխումների, ձեռնարկությունների վերագործարկման կամ վերապրոֆիլավորման ծրագրեր՝ մակրո, միկրո և տարածաշրջանային մակարդակների համար, ընդ որում ընդլայնվել է դրանց կիրառման դաշտը, մեծացել են լուծվող խնդիրների քանակն ու ընդգրկումը, բարձրացել են պահանջները այդ ծրագրերի որակի նկատմամբ: Սակայն տարբեր ծրագրերում առաջարկվող լուծումների ոչ բավարար փոխհամաձայնեցումը զլոբալացման և ինտեգրացման ներկայիս պայմանների հետ կարող է լրջորեն խոչընդոտել երկրի տնտեսական զարգացման միասնական քաղաքականության իրականացմանը բոլոր ասպարեզներում:

Երկրի համակարգված, նպատակային և կարգավորվող զարգացումն ապահովելու խնդիրն առավել հրատապ է դառնում դեռևս զարգացած շուկա չունեցող և որպես լիովին ինքնակարգավորվող համակարգ չձևավորված տնտեսություններում, ինչպիսին է նաև Հայաստանը: Անհրաժեշտ է ընտրել այն մեխանիզմը կամ կազմակերպական ձևը, որը հնարավորություն կընձեռնի համակարգել կառավարման ծրագրերի համալիրի մշակումը, դրանցում ընդունվող որոշումները նպատակաուղղել նաև մակրոմակարդակային խնդիրների լուծմանը, նպաստել առաջնային ճյուղերի զարգացմանը, կանխել սխալների և կորուստների վտանգը, օժանդակել ՀՀ-ում տնտեսության ծրագրային կառավարման արդյունավետության բարձրացմանը: Լուծման այդպիսի ուղի կարող է դառնալ ՀՀ-ում կառավարման ծրագրային ապահովման համակարգի (ԿՕԱՀ) ձևավորումը, որի նախաձեռնողը պետք է դառնա կառավարությունը և իրականացվի հասարակության ակտիվ մասնակցությամբ:

Այս համատեքստում ևս կարևորվում է ԿՕԱՀ-ի իրականացվելիք գործունեությունը, որն ի վիճակի կլինի ծրագրերի համալիր մոտեցման միջոցով հաշվի առնել և հաշվարկել նախատեսվող փոփոխությունների ազդեցությունը այլ օղակների վրա և դրանից եկող իմպուլսները, ինչպես նաև հնարավորինս ճշտորեն կանխատեսել այդ «ուրիշ» օղակներում ծրագրավորվելիք փոփոխությունները և դրանց անմիջական կամ միջնորդավորված ազդեցությունը՝ «սպասարկելով» շահագրգիռ կողմերին թե՛ որոշումների կայացման, թե՛ դրանց իրականացման գործում:

Կառավարման գիտական ապահովման համակարգ

Երկրի զարգացման և շուկայական տնտեսակարգի ձևավորման գործընթացը տարբեր երկրներում շատ ընդհանրություններ և տարբերություններ ունի ինչպես ընտրված ճանապարհի, անցնելու արագության և այդ ընթացքում օգտագործվող մոտեցումների ու մեխանիզմների, այնպես և ստացված արդյունքների տեսանկյունից՝ պայմանավորված երկրների մի շարք առանձնահատկություններով, դրանք հաշվի առնելու մեթոդներով ու մեխանիզմներով, կառավարող սուբյեկտների գաղափարախոսությամբ և տեսական ու գործնական պատրաստվածությամբ, առաջադրված նպատակներով և դրանց նկատմամբ հասարակության վերաբերմունքով:

Տեղական առանձնահատկությունների անտեսումը Հայաստանում բնակչության որոշ խավերի համար սոցիալական, բարոյական և տնտեսական զգալի կորուստների պատճառ կարող է դառնալ և կառավարության առաջնահերթ խնդիրն է դրանք նվազագույնի հասցնել կառավարչական որոշումներ ընդունելիս, բարեփոխումներ նախապատրաստելիս և իրականացնելիս բոլոր հնարավոր հետևանքները հաշվի առնելու միջոցով: Կառավարման յուրաքանչյուր որոշում պետք է հիմնվի ոչ միայն կառավարողի ներգզացողության, կուտակած փորձի ու գիտելիքների, այլև փորձագիտական ու փորձաքննական համալիր հետազոտության վրա՝ կառավարչին թողնելով ընտրության հնարավորությունը:

Նման հետազոտությունները իրենց հիմքում պետք է ունենան զարգացման կուռ տեսություն (ըստ ամերիկյան ճանաչված տնտեսագետ Պոլ Հեյնեի¹³, որ էթե մեկը, իր կարծիքով, կառավարման գործընթացում տեսություն չի օգտագործում, ապա նա փաստորեն օգտագործում է ամենավատ տեսությունը), որը ելնում է հասարակության զարգացման օբյեկտիվ օրինաչափություններից: Այդպիսի տեսության մշակումը և կիրառումը պահանջում է կառավարման տեսական և մեթոդական ապահովում և գիտական սպասարկում՝ մասնագիտացված հատուկ ծառայությունների և կառավարման մարմինների հետ դրանց համատեղ աշխատանքի միջոցով: Այն պետք է համարժեք կերպով արտահայտի զարգացման պատմական ընթացքը Հայաստանում, հաշվի առնելով նաև տարածաշրջանի առանձնահատկությունները, նախանշելով հետագա զարգացման ուղեցուցիչները:

Այս տեսանկյունից, հետազոտությունները, հարցումները (տես հավելված 3) և կառավարման տվյալների շտեմարաններն ու գործիքները (ներդիր 4.6) օգնում են գործնական ճշտությամբ կանխատեսել ծրագրավորվող միջոցառումների ազդեցության բոլոր հետևանքները՝ առավելագույն արդյունավետություն և նվազագույն կորուստներ ապահովելու համար:

¹³ Poul Heyne, The Economic way of Thinking, University of Washington.

4.6
Ներդիր

**Հայաստանի միջազգային օժանդակության
փյալների շտեմարանը (ՄՕՏԸ)**

ՄԱԶԾ-ի և ՀՀ կառավարության ուժերով 2001թ. ստեղծված Հայաստանի միջազգային օժանդակության տվյալների շտեմարանը (ՄՕՏԸ) տեղադրված է Ինտերնետում (հայերեն և անգլերեն տարբերակները) և մատչելի է <http://www.undp.am/devcoop/index.html> և <http://www.gov.am/links/IADA> հասցեներով: Այն շարունակաբար վերանայվում և արդիականացվում է ՀՀ կառավարության և ՄԱԶԾ-ի կողմից:

ՄՕՏԸ-ի հնարավորությունները թույլ են տալիս ստանալ թե՛ ընդհանրացված և թե՛ մանրամասն տեղեկատվություն՝ ըստ ցանկացած ծրագրի, նվիրատուի, ոլորտի, բնակավայրի, շահառուի, կարգավիճակի, աջակցության բնույթի և այլն (աղյուսակ 4.1): Ինչ վերաբերում է տվյալների մուտքագրմանը, ապա այս մոդուլը տեսանելի է միայն այն դոնորներից, ովքեր հայտնել են իրենց պատրաստակամությունը համագործակցելու ՄՕՏԸ-ի հետ՝ տեղեկատվական սպասարկման առումով: Այսպիսով, արտոնագրված օգտագործողին հնարավորություն է ընձեռվում կառավարել (արդիականացնել, փոփոխել, հեռացնել) իրեն վերաբերող տվյալները և լինել միակ պատասխանատուն դրա համար:

Աղյուսակ **ՀՀ-ին հարկացված և առաքված գումարները (1000 ԱՄՆ դոլար)**

4.1

Դոնորների թիվը	կումուլյատ. հատկացում	կումուլյատ. առաքում	Առաքված է					
			մինչև 1997	1997	1998	1999	2000	2001 առ 01.06
26	2,197,972	1,717,365	673,466	210,134	249,651	194,096	355,072	34,946

ՄՕՏԸ-ի աշխատանքը և կառավարումը շարունակական խնդիր է, որը պահանջում է ՀՀ կառավարության, ՄԱԶԾ-ի և դոնոր հանրության մշտական ուշադրությունը: Շտեմարանում ներկայացված տվյալները դեռևս ամբողջականորեն չեն կարող ներկայացնել իրավիճակը, քանզի կարիք ունեն պարբերական ճշգրտման և արդիականացման: Շտեմարանը դեռևս կատարելագործման ներուժ ունի: ՄԱԶԾ-ն շարունակում է աջակցել ՄՕՏԸ-ի շահագործմանը, իրականացնելով ներկայումս տվյալների շտեմարանի կառավարչի գործառույթները՝ օգտագործողների կառավարման, տվյալների մատչելիության և անվտանգության ապահովման առումով: Սրա հետ մեկտեղ, դոնոր հանրության ներկայացուցիչների զգալի մասն արտահայտել են իրենց պատրաստակամությունը առ-ցանցին (on-line) սեփական միջոցներով իրականացվող ծրագրերի տեղեկատվության մոնիտորինգի և արդիականացման վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու: ՀՀ-ում ներկայացված դոնորների մի մասն արդեն իրականացնում է իրենց տվյալների կառավարումը:

Հայաստանը մուտք է գործում միջազգային օժանդակության համապարփակ համակարգման ոլորտ: Անհրաժեշտ են ծրագրված և համընդհանուր ջանքեր, որպեսզի հանրությունը և պետական կառավարման օղակներն ընդունեն այն իրողությունը, որ ՀՀ-ին տրամադրվող անցյալ, ներկա և ապագա միջազգային ամբողջ օժանդակությունը՝ վարկերի, դրամաշնորհների, տեխնիկական և մարդասիրական օգնության տեսքով, սոցիալ տնտեսական զարգացման էական գործոն է: Այս առումով ՄՕՏԸ-ը միջազգային օժանդակության արդյունավետ և տնտեսապես հիմնավորված համակարգման ժամանակակից տեխնոլոգիական հզոր միջոց է:

«Միջազգային օժանդակությունը համակարգելու և մոնիտորինգի համար ազգային ենթակառուցվածքների ուժեղացում» ՄԱԶԾ ծրագիր

Հարցի լուծումը կարելի է ստանալ տեսանթրոպական ապահովման և գիտախորհրդատվական սպասարկման մասնագիտացված հատուկ ծառայությունների ստեղծման և կառավարման մարմինների հետ դրանց համատեղ աշխատանքի միջոցով: Նման սպասարկում իրականացնող ինստիտուցիոնալ կառույցը, անկախ իր չափից ու կազմակերպական ձևից, պայմանականորեն անվանենք գիտական ապահովման կենտրոն (ԳԱԿ), իսկ կառավարման մարմնի գործառույթների կատարմանը նրա մասնակցությունը

(աշխատանքների համատեղումը)՝ գիտական ապահովման կենտրոնի ինտեգրացում կառավարման մարմնի հետ: Ներկայումս զգալի տարածում ունեն խորհրդակցականների ինստիտուտը, ինչպես նաև կառավարման մարմնում հատուկ գիտանթրոպական ստորաբաժանումների ձևավորումը (կամ մասնագետների հաստիքների առանձնացումը): Սակայն այդ կառույցները այժմ հիմնականում իրականացնում են ոչ այնքան գիտական սպասարկման, որքան կառավարման գործառույթներ:

Կառավարման գիտական սպասարկման գործառնությունների որոշ ընդհանրություններ և գիտական ներուժի ռացիոնալ օգտագործման պահանջը նպատակահարմար է դարձնում կառավարման համակարգի գիտական սպասարկումը իրականացնել համակարգային մոտեցումով՝ հանրապետությունում ձևավորել պետական կառավարման տեսամեթոդական ապահովման և կառավարության գիտախորհրդատվական սպասարկման ամբողջական համակարգ: Համապատասխան նպատակային ծրագրի մշակումը կառավարության և գիտական ներուժի ակտիվ համագործակցությամբ կնախանջի համակարգի նպատակահարմար կառուցվածքը, կառավարչական և գիտական ապահովման գործառնությունները, դրանց կատարողները, կհիմնավորվեն կազմակերպությունների մասնագիտացման ուղղությունները և սպասարկման ոլորտները, արդյունավետ գործունեության պայմանները և այլն: Այդպիսի համակարգի ձևավորման արդյունքում զգալի չափով կկրճատվի կառավարչական ապարատը, աշխատատեղեր կստեղծվեն գիտական ներուժի որոշ հատվածի համար, կբարձրանա կառավարչական որոշումների հիմնավորվածությունը, հետևաբար և կառավարման արդյունավետությունը:

Կառավարման արդյունավետության գնահատման համակարգ

Կառավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը Հայաստանում թելադրում է առաջին հերթին՝ կառավարման արդյունավետության գնահատման համակարգ (ԿԱԳՀ) ստեղծելու ծրագրի մշակում, որում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների թվում պետք է դիտարկվեն հասկացության միանշանակ բացատրությունը, գնահատման ցուցանիշների գոյությունը, արդյունավետության մակարդակի գնահատման մեթոդաբանությունը և մեթոդները, կիրառման մեթոդական ցուցումների ստեղծումը, տարածումը և ուսուցումը, կիրառող սուբյեկտների առանձնացումը և գործառնությունների կազմի որոշակիացումը, հաշվարկման տեղեկատվական, մաթեմատիկական, ֆինանսական ու տեխնիկական ապահովումը և այլն:

Վերը նկարագրված համակարգերի գործունեությունը առնչվում է կառավարման բոլոր ոլորտներին և գործառնություններին, նպաստում է դրանց արդյունավետ իրագործմանը: Սերտ են կապերն ու փոխազդեցությունը նաև այդ համակարգերի միջև: Գիտական ապահովումը անհրաժեշտ է ոչ միայն կառավարման որոշումների բազմակողմ հիմնավորման, այլ և հենց այդ նպատակով համապատասխան տեսությունների և արդյու-

նավետության գնահատման մեթոդների ձևավորման, ընդունվող որոշումների ծրագրային ապահովման մշակման ու փորձաքննության, իրականացման գործընթացի վերլուծության ու ճշգրտման և այլ նպատակներով: Ծրագրային ապահովումը իր հերթին ծառայելու է գիտական ապահովման և արդյունավետության գնահատման համակարգերի մշակման, ստեղծման, բնականոն ու արդյունավետ գործունեությանը, իսկ արդյունավետության այդ կարևորագույն բնութագրի գնահատման համակարգի անհրաժեշտությունը անընդմեջ է գործունեության բոլոր ոլորտներում, այդ թվում նաև անմիջականորեն գիտական ու ծրագրային ապահովումների ստեղծման ու գործունեության բոլոր փուլերում՝ առավել նպատակահարմար տարբերակներ մշակելու և իրականացնելու համար:

Դրանք ինստիտուցիոնալ համակարգեր են՝ առանձնացված նպատակային և մասամբ էլ գործառնային հատկանիշներով: Դրանց (միացյալ կամ առանձին-առանձին) իրական կառուցվածքն ու ենթահամակարգերի կազմը պետք է մշակվեն ՀՀ կառավարման համակարգի առանձնահատկություններին և տվյալ ժամանակահատվածում լուծվող խնդիրների պահանջներին համապատասխան, կառավարման համակարգի գործող կառույցների ու ենթակառույցների գործառնությունների վերաբաշխման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նոր կառույցներ ձևավորելու ճանապարհով: Այդպիսի համակարգերի ստեղծումը այսօր մեծապես կարող է նպաստել ՀՀ-ի համար մեծ կարևորություն ունեցող խնդրի՝ աղքատության հաղթահարման գործընթացի ծրագրավորման և իրականացման կառավարմանը:

Համակարգերի ստեղծման ծրագրի մշակման հետաձգումը մեծացնում է կորուստների հնարավորությունը, իսկ ստեղծումն ու զարգացումը ապահովում են կառավարման գործընթացների արդյունավետությունը, ինչպես նաև ավելի մեծ թափանցելիություն ու ժողովրդավարացում՝ որոշումների նախապատրաստմանը, փորձաքննությանը, ընդունմանը և իրականացմանը մասնագետների շատ ավելի լայն մասնակցության միջոցով, ինչը կառավարման համակարգի կատարելագործման կարևոր ուղղություն է:

Առաջարկվող համակարգերի գործունեությունը շարունակական բնույթ կունենա, այն երկրի զարգացման հետ ոչ թե կկրճատվի, այլ, ընդհակառակը, անընդհատ ընդլայնվելու և կատարելագործվելու է, որի պատճառներից մեկը ինտեգրացման և զլրբալացման պայմաններում կառավարման բովանդակության ու գործառնությունների բարդացումն է:

4.4

Մարդկային զարգացման հայեցակարգը և հարացույցի փոփոխությունը

Նոր զարգացումները թելադրում են վերանայել նախկինում կիրառված մոտեցումները, ստանալ ավելի հիմնավոր լուծումներ, որոնք հաշվի կառնեն յուրաքանչյուր երկրի, հասարակության առանձնահատկությունները: Գիտական և ծրագրային ապահովման և արդյունավետության զննհատման համակարգերի համալիրի (ԳԾԱԴ) ստեղծման և բնականոն գործունեության բարերար ազդեցությունը կարելի է ակնկալել նաև մարդկային զարգացման (ՄԶ) գործընթացներում՝ իրականացնելու համար մարդկային հասարակության զարգացման կարևորագույն օրինաչափությունների բացահայտմանը, ճանաչմանը և օգտագործմանը միտված նոր գիտական հետազոտություններ՝ հիմքում ունենալով զարգացման ընդհանուր օրինաչափությունների հայտնի տեսությունները:

Այդ գործառույթների իրականացման համար նպատակահարմար կլինի առանձին երկրներում ձևավորել ՄԶ ԳԾԱԴ՝ նրանում լայնորեն ներգրավելով տեղական գիտական ներուժը: Այդ կառույցը հնարավորություն կունենա կառավարությանը և շահագրգիռ մարմիններին հայեցակարգային առաջարկություններ ներկայացնել և տեղեկատվական ծառայություններ մատուցել տվյալ երկրում ՄԶ բնագավառում առկա հիմնախնդիրների վերաբերյալ:

ՄԶ-ին առնչվող բոլոր հիմնախնդիրների համատեղ և միանգամայա լուծման անհնարինության պարագայում ավելի են կարևորվում մասնագիտացված (հատվածային) հետազոտությունները՝ ըստ հիմնախնդիրների հրատապության կամ համատեղ ուսումնասիրելու անհրաժեշտությունն ու հնարավորությունները, որոնք պետք է հաշվի առնեն ՄԶ-ն պայմանավորող բազմաթիվ և տարաբնույթ գործոնների ազդեցությունը: Սակայն խնդիրն էլ ավելի է բարդանում գլոբալացման և ինտեգրացման պայմաններում, երբ բազմակի ավելանում են այդպիսի գործոնների թիվը, ազդեցությունը և կապերը:

Այս խնդրի լուծման համար կարող է օգտագործվել նպատակների աստիճանակարգված նկարագրության (նպատակների ծառի կամ գծապատկերի կառուցման) մոտեցումը, երբ հիմքում դրված է ոչ թե մեկ առանձին նպատակ, այլ այդպիսի «ծառի» պատճառահետևանքային փոխադարձ՝ ուղղաձիգ և հորիզոնական կապերով կապված մի շարք մակարդակների նպատակներ՝ իրենց ենթանպատակներով, դրանով իսկ հնարավորություն ընձեռելով փոխհամաձայնեցնել դրանք, հաշվի առնելով առաջնայնությունները, լուծումների հիմքում դնել դրանցից կարևորագույնների իրականացման պայմանը, միաժամանակ չհակասելով բոլոր մակարդակների նպատակներին:

Մարդկային զարգացման համատեքստում կարևորվում է՝

- ⚡ նպատակների հստակ ձևավորումը իրենց հիմնավորումներով,
- ⚡ այդ նպատակներին հասնելու առավելագույն արդյունավետ միջոցառումների մշակումը և ընտրությունը՝ կոնկրետ պայմանների համար:

Ընդհանուր կարող է լինել մոտեցումը, սակայն լուծումը ստացվելու է տվյալ շրջանի առանձնահատկություններին համապատասխան:

ՄԶ խնդիրների հետազոտության և զեկույցների մշակման կազմակերպման աշխատանքները հիմնականում իրականացվում են վերը նշված սկզբունքների կիրառմամբ: Ձեկույցներում արծարծվող խնդիրները, հետևաբար և քննարկվող հարցերի շրջանակը, կառուցվածքը և մոտեցումները երկրների նախաձեռնությամբ կարող են զգալիորեն ընդլայնվել: Արդյունքում տարբեր տարիների զեկույցները նույն երկրում հաճախ որոշակի նմանություն են ձեռք բերում, իսկ տարբեր երկրների նույն տարվա զեկույցները իրենց կառուցվածքով և հարցերի քննարկման մոտեցումներով զգալիորեն տարբերվում են: Այս տեսակետից կարող է օգտակար լինել խնդրի հետազոտման միասնական մոտեցումների առաջարկը՝ մեթոդական ցուցումների տեսքով, միաժամանակ ընձեռելով նախաձեռնության լայն հնարավորություններ տեղերում:

ՄԱԶԾ-ն ներկայացնելով մարդկային զարգացումը որպես զարգացման հարացույց, դրանով իսկ այն դարձրեց մարդկային գործունեության ուղղորդման, այսինքն զարգացման առնչվող որոշումներ ընդունելու և հիմնավորելու սկզբունք կամ հիմնադրույթ: Միաժամանակ, մարդկային զարգացման հարացույցը, լինելով ժամանակի հետ և ժամանակի մեջ գործող և զարգացող իրողություն, դեռևս կարիք ունի որոշ հստակեցման: Օրինակ, «մարդկային զարգացում» անվանումը հուշում է, որ վերջինիս հիմքում դրված է ավելի լայն հասկացություն՝ մարդկային հասարակության զարգացումը, ուստի անհրաժեշտ է պարզել վերջինիս աստիճանակարգված նկարագիրը, որոշել ՄԶ-ի տեղը և գերակայությունը՝ ապահովելու համար նաև գործնականում դրա լայն կիրառությունը:

Ներկայումս մարդկային զարգացման հարացույցը մարդուն դիտարկում է որպես զարգացման և՛ օբյեկտ, և՛ սուբյեկտ՝ հիմնական ուշադրությունը սևեռելով մարդու հնարավորությունների և ունակությունների բացահայտման և ընտրության ընդլայնման մթնոլորտի ստեղծմանը: Վերջինս ուղղակի և անուղղակի ձևով ազդում է մարդու գործունեության բոլոր

բնագավառների վրա: Մարդու բարոյությունը մեծապես կախված է նրանից, թե որքանով է նա կրթված, առողջ և սոցիալապես ապահով: Չնայած առկա են նաև մարդու անձնական և հասարակական ինքնահաստատման և հնարավորությունների ընդլայնման համար անհրաժեշտ բազմաթիվ այլ գործոններ, երկրի առաջընթացը կամ ետընթացը մարդկային զարգացումը ապահովելու հարցում չափվում է վերը նշված երեք բաղադրիչների համակցված արդյունքի միջոցով: Գալիլեյը գիտության նպատակն էր համարում չափել այն ամենը, ինչ չափելի է, և չափելի դարձնել այն ամենը, ինչ դեռևս չափելի չէ: Առանց քանակական գնահատման հնարավոր չէ բավարար պատկերացում կազմել գործունեության կամ ցանկացած գործողության ընթացքի ու արդյունքների մասին, նպատակաուղղել դրանք: ՄԱԶԾ-ն չափելի է դարձրել ՄՁ մակարդակը՝ մշակելով չափման բարձրորակ ու կիրառելի մոտեցում: Մարդկային զարգացման համաթիվը (ՄՁԳ) ընդհանուր առմամբ բավարար պատկերացում է տալիս զարգացման մակարդակի մասին: Սակայն բանավեճը այդ համաթվի հաշվարկման մեթոդիկայի շուրջ դեռ շարունակվում է, և տարբեր երկրներում ստեղծված և արդեն ստեղծվող ՄՁԳ-ի տարբերակները հաստատում են վերն ասվածը (հավելված 2):

ՄԱԶ-ի նկատմամբ աճող հետաքրքրության պայմաններում փոխվում են նաև դրանց նկատմամբ սպասելիքներն ու պահանջները: Հանդիսանալով անկախ տեղեկատվության աղբյուր, տարբեր կարծիքների և տեսակետների արտահայտման միջոց, զեկույցները վեր են հանում հրատապ խնդիրները, փորձ են անում առաջարկել նոր մոտեցումներ և այլընտրանքային լուծումներ, որոնք կարող են օգնել կառավարությանը ավելի թափանցիկ դարձնել վարվող քաղաքականությունը՝ ներառելով մարդու շուրջ կենտրոնացած հայեցակարգեր: Դժվար է ճշգրտորեն գնահատել զեկույցների ազդեցությունը հասարակության զարգացման գործընթացների և կառավարության ընտրած քաղաքականության վրա, սակայն դրանք կարող են ավելի բարձր արդյունավետություն ապահովել, եթե ՄԱԶ-ում բարձրացված հարցերը և առաջարկված լուծումները իրենց արտացոլումը գտնեն թե կառավարության, թե միջազգային կազմակերպությունների գործունեության մեջ:

4.5

Հայաստանի ապագան գլոբալացվող աշխարհում

Տնտեսության զարգացման պոստինդուստրիալ մոդելը Հայաստանի նման սակավառեսուրս երկրի համար զարգացման նոր հնարավորություններ է ստեղծում՝ ի հաշիվ մարդկային ռեսուրսի օգտագործման և զարգացման, իսկ իրենց արդյունավետությունն ապացուցած արժեքային համակարգի և սոցիալական ինստիտուտների վերարտադրումը բավարար հիմք է ապահովում դրա համար: Զարգացման հայեցակարգն իր հիմքում ունի երեք խումբ նախադրյալներ.

1. Զարգացման համաշխարհային համադրեքս

Առաջատար երկրներում տնտեսության և հասարակության ներկա վիճակը բնորոշվում է որպես զարգացման պոստինդուստրիալ փուլ, որի հիմնական բնութագրիչներն են՝ անհատի ազատագրումն ավտորիտար համակարգերի կոշտ վերահսկողությունից, մարդու իրավունքի գերակայությունը և գլոբալացումը, անցումը աշխատանքից գիտելիքների՝ որպես արտադրության գլխավոր ռեսուրսի, տեղեկատվության և կապիտալի ազատ շրջանառությունը: Ձևավորվում է մի համակարգ, որի կենտրոնում անհատի ներուժի լիակատար իրացման և զարգացման ապահովումն է: Պոստինդուստրիալ համագործակցությունում ինտեգրացվելու համար զարգացող և անցումային երկրների առջև խնդիր է դրվում ձևավորել զարգացման համաշ-

խարհային համատեքստին համարժեք տնտեսություն և կառավարման համակարգ: Վերջիններիս անկատարությունը հանգեցնում է ինքնամեկուսացման:

2. Տարածաշրջանային ասպեկտ

Զարգացման հայեցակարգում տարածաշրջանային խնդիրները դիտվում են առնվազն երեք հարթություններում.

- ✦ հակամարտությունների լուծում, անվտանգության համակարգի ձևավորում, փոխհամագործակցության և ինտեգրացման գործընթացների ծավալում,
- ✦ հասարակական գիտակցության մեջ փոխհամագործակցության արժեքային հիմքերի ամրապնդում, փոխադարձ վստահության ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորում,
- ✦ Հարավային Կովկասի տեղի և դերի որոշակիացում գլոբալացվող աշխարհում:

Եվրամիության ընդլայնման արդյունքում Հարավային Կովկասի կայունությունը դիտվում է որպես եվրոպական անվտանգության կարևոր օղակ, քանզի մեր տարածաշրջանը գլոբալ հաղորդակցային համակարգերի, ինչպես նաև զարգացած երկրների էներգետիկ ապահովության բաղկացուցիչ տարրերից է:

Ըստ այդմ, մեր ռազմավարական գործընկերները շահագրգիռ են Հարավային Կովկասը տեսնելու որպես միասնական աշխարհաքաղաքական, հաղորդակցական և տնտեսական տարածք, ինչը հնարավոր է միայն այսօր առկա բաժանարար գծերի վերացման և համակողմանի ինտեգրացիայի պայմաններում: Նույն կերպ տարածաշրջանում կայուն խաղաղությունը հնարավոր է միայն անվտանգության միասնական համակարգի ձևավորման պայմաններում:

Ժամանակակից քաղաքական հարացույցի (պարադիգմայի) շրջանակներում անհերքելի է համարվում այն դրույթը, ըստ որի երկարաժամկետ հեռանկարում կայունության և անվտանգության ապահովումը հնարավոր է միայն ժողովրդավարության և քաղաքացիական հիմնարար արժեքների ներդրման պայմաններում: Ըստ այդմ, մարդկային զարգացումը և մարդու իրավունքը որպես գլխավոր գերակայություն ճանաչելը բավարար հիմք կդառնան հակամարտությունների լուծման համար: Տարածաշրջանային համագործակցության հարթությունում բերված դրույթները կարող են վերափոխվել.

- ⌘ մշակութային հանդուրժողականության և բազմակացությամբ ինստիտուցիոնալ պաշտպանության,
- ⌘ կրոնական, մշակութային, էթնիկ փոքրամասնությունների իրավունքների ապահովման միջպետական մեխանիզմների ձևավորման,
- ⌘ անհատի ազատությունների իրավական ապահովման տարածաշրջանային ինստիտուտների ձևավորման:

Գլոբալացվող աշխարհի իրողություններին համապատասխան անվտանգության չափանիշների ընդունումը, ինչպես նաև տարածաշրջանային վերպետական կառույցների ձևավորումը, որոնք հնարավորություն կտան իրավական գործառնությունների օբյեկտ դարձնել Հարավային Կովկասում տեղ գտած ազգամիջյան կնճռոտ հարցերը (մարդու դեմ կատարված հանցագործությունները), բավարար հիմք կդառնան տարածաշրջանում փոխադարձ վստահության ինստիտուցիոնալ միջավայր ստեղծելու և մարդկային արժեքներն արմատավորելու համար:

3. Հայաստանի առկա իրավիճակի բնութագիրը

Հայաստանի զարգացումը պոստինդուստրիալ ուղիով ապահովելու համար պետք է հաշվի առնել առկա սահմանափակող գործոնները, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երկու փոխկապակցված տարածաշրջանային և կառուցվածքային խմբերի.

- ⌘ Ղարաբաղյան հակամարտության առկայությունը և ժողովրդավարության ավանդույթի բացակայությունը,
- ⌘ Կառուցվածքային բարեփոխումների

անկատարությունը (ՀՀ-ում չի ձևավորվել իրական մրցակցային տնտեսություն),

Սրա հետ միասին, սեփականության և ազատությունների պաշտպանության գաղափարը չի ամրապնդվել ո՛չ իրավական պրակտիկայի, ո՛չ քաղաքական գիտակցության և ո՛չ էլ արժեքային համակարգերի մակարդակներում և վտանգում է ներդրումային մթնոլորտը:

Ներկայումս ՀՀ-ում ձևավորված համակարգը ռեսուրսատար է և կարող է համարժեք լինել միայն զարգացման հնացած ինդուստրիալ մոդելին: Մինչդեռ տեղեկատվական հեղափոխության դարաշրջանում, երբ ազատությունը հանդես է գալիս որպես զարգացման գլխավոր ռեսուրս, երկրի զարգացումը և հաջողությունը որոշվում են ոչ թե քանակական ցուցանիշների, այլ առաջին հերթին իրենց արդյունավետությունն ու գերակայությունն ապացուցած սոցիալական ինստիտուտների և կենսաձևի վերարտադրության կարողությամբ: Ըստ այդմ, Հայաստանի զարգացումը դիտվում է լիբերալ տնտեսության, բաց հասարակության և սոցիալական պետության շրջանակներում և կարևորում է ազատություններ երաշխավորող ինստիտուտների սահմանումը և ամրապնդումը: Սոցիալական պետության դրույթը հաստատագրված է ՀՀ Սահմանադրության առաջին անփոփոխելի հոդվածում և ենթադրում է բացառապես դեպի սեփական քաղաքացիները կողմնորոշված պետության ձևավորում (իրավական և քաղաքական պրակտիկայում այն մինչ օրս մնում է չկիրառված):

Հայաստանի կողմնորոշումը

Հայաստանի զարգացման հայեցակարգում սահմանված չափանիշները, բացի պետության, տնտեսության, քաղաքացիական համակարգերի բարեփոխումների ուղենիշ լինելուց, ունենալու են նաև Հայաստանի քաղաքակրթական կողմնորոշումը հստակեցնող գործառնություն: Ըստ այդմ, որպես զարգացման ուղենիշներ՝ նպատակահարմար է ընդունել արևմտյան արժեքները, քանի որ.

- ⌘ Եվրոպական չափանիշները խարսխված են մեզ հոգեհարազատ հիմնարար արժեքային համակարգի և արդյունավետ տնտեսական փոխհամագործակցության վրա,
- ⌘ ինստիտուցիոնալ միջավայր է ապահովվում մի մոդելի համար, որի կենտրոնում մարդու իրավունքների և ազատությունների, զարգացման, սոցիալական պաշտպանվածության, ինչպես նաև բաց ու բազմակողմանի համագործակցության հիմքերի ապահովումն է,
- ⌘ կանխատեսելի է դարձնում մեր զարգացման ուղղվածությունը, ինչը ներդրումների ավելացման գլխավոր պայմաններից է:

Պետություն. բարեփոխումներ

Գլոբալացման պայմաններում Հայաստանում կառուցվածքային բարեփոխումների խնդիրը մասնավորեցվում է որպես.

- ❖ պետության դերի կրճատում, կառավարման արդյունավետ համակարգի ստեղծում, գլոբալ և տարածաշրջանային համագործակցության խնդիրներին համարժեք ինստիտուտների ձևավորում,
- ❖ տնտեսության կառուցվածքային բարեփոխումների խորացում և ներդրումային միջավայրի բարելավում,
- ❖ զարգացման և կայունության ներքին տրամաբանության ձևավորում:

Նշված խնդիրները փոխկապակցված են: Պետության քաղաքական գործառույթների և առաջին հերթին իրավական ոլորտի ամրապնդումն ի վերջո միտված է իրավունքի գերակայության, ազատությունների և սեփականության երաշխիքների ապահովմանը, որն էլ տնտեսական աճի գլխավոր նախապայմանն է: Նույն կերպ կայունությունը և տնտեսական աճն անհնար են առանց իրական ժողովրդավարության և ժամանակակից միջին դասի: Վերջինս, ձևավորվելով բարեփոխումների ընթացքում, հետագայում արդեն հանդես է գալիս որպես ազատությունների երաշխավոր և արդյունավետ պետության պատվիրատու:

1. Ժողովրդավարության ավանդույթի բացակայության և քաղաքացիական ինստիտուտների թուլության պայմաններում, ինչպես Հայաստանում է, բարեփոխումների արդյունավետությունը մեծ մասամբ պայմանավորված է պետության գործողություններով: Ըստ այդմ, կառավարման պետական համակարգի բարեփոխումներն առաջնահերթ նշանակություն են ձեռք բերում: Բարեփոխումների ուղղությունները և դրանց հիմնական բնութագրերը հետևյալն են.

Իրավական ապահովման համակարգերի ամրապնդում. դատարանների իրական անկախության ապահովում, իրավապահ համակարգի ապակենտրոնացում, գործառույթների սահմանափակում, դատախազության ներգրավում կառավարության կառուցվածքում, հարկային վարչարարության ամրապնդում, բանակի բարեփոխում:

Տնտեսության պետական վերահսկողության նվազեցում. գործարարության ապաքյուրոկրատացում, հարկային համակարգի պարզեցում, հակա-կոռուպցիոն ծրագրի իրականացում, պետական

ծառայության օրենքի ընդունում և այլն:

Պետական կառավարման համակարգի օպտիմալացումը հանգում է ապակենտրոնացմանը և տեղական ինքնավարության իրավասությունների ընդլայնմանը:

2. Ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված գործողությունները հանգում են տնտեսական ազատության համաթվի բարձրացմանը: Նշված համաթիվն ինտեգրալ ցուցանիշ է, որի չափորոշիչները հանրահայտ են՝ բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացում, հարկային ծանրաբեռնվածության վերաբաշխում, մաքսային պատնեշների համապատասխանեցում միջազգային չափանիշներին, մակրոտնտեսական կայունացում, իրավունքի գերակայություն, սեփականության պաշտպանվածություն և այլն:

3. Հասարակական վարքի որոշ դրսևորումներ ցույց են տալիս, որ Հայաստանում այսօր իսկ ձևավորվում են որոշակի խմբեր, որոնց կենսաձևն ու ձգտումները համարժեք են միջին դասի ժամանակակից բնորոշումներին: Միևնույն ժամանակ այժմյան իրողություններում դժվար է ենթադրել, որ միանման շահեր և կենսակերպ ունեցող, բայց սոցիալական տարբեր աստիճանակարգեր զբաղեցնող հասարակական խմբերն ինքնաբերաբար փոխադարձ ճանաչելի կդառնան ընդունակ հասարակական օրակարգ ձևակերպելու: Միջին դասի ձևավորումը սոցիալական նախագծման առարկա է և որոշակի խնդիրներ է առաջադրում պետության և քաղաքական համակարգին, որոնց իրագործումը հասարակական պայմանագրի առանցքն է:

Այսպիսով, տարածաշրջանային զարգացումների բարենպաստ ընթացքի պարագայում կառուցվածքային բարեփոխումները ներդրումների ներհոսքի և կայուն զարգացման հիմք կդառնան, որի նպատակով պետությունը և քաղաքական համակարգը պետք է հստակ ձևակերպեն այժմյան օրակարգը և այն հասարակության սեփականությունը դարձնեն. հակամարտությունների լուծում, ինտեգրացում, արդյունավետ պետության ձևավորում, ազատությունների երաշխավորում, մրցակցային տնտեսության ձևավորում, մարդկային ռեսուրսի զարգացում:

Նոր մոտեցումներ Հայաստանի զարգացման համար

Ձեկույցում ներկայացված ներկա իրավիճակը խոր արձանագրում ունի, որը պայմանավորված է պատմական զարգացման տրամաբանության անտեսմամբ և վերափոխվող, վերակառուցվող միջավայրի առանձնահատկություններով:

«Անցումային շրջանի» 10 տարին փաստորեն Հայաստանը վերադարձնում է 19-րդ դարի մոդելներին (ազգ-պետություն)՝ անտեսելով այն փաստը, որ հայերը ապրել են ԽՍՀՄ ժամանակաշրջանում և ունեցել են սոցիալական պետությունում ապրելու փորձ:

Ձանգվածային դժգոհությունը և արտագաղթը պարզորոշ մատնանշում են, որ ժողովրդի համար քաղաքական անկախության կարգավիճակը չի «փոխհատուցում» տնտեսական և սոցիալական կորուստները: Եվ այդ պայմաններում առաջնահերթ խնդիրը երկրի սոցիալացման, նրա ներքին քաղաքականության, ինչպես նաև աշխարհի առաջընթացային միտումներին նրա համապատասխանության մասին հոգածությունն է:

Հայաստանի յուրահատկությունը պարտադրում է ստեղծված իրավիճակից այնպիսի ոչ ստանդարտ ելքերի որոնում, որոնք հնարավորություն կտան արագորեն վերակերտել կորսվող ժամանակակից պետության կերպը, որին բնորոշ է զարգացած հոգևոր ու նյութական մշակույթը և այնպիսի ազգի ձևավորումը, որն ընդունակ է համարժեք արձագանքել և մասնակցել ժամանակակից կյանքի իրողություններին:

Եվ այս առումով անգնահատելի հենք կարող են հանդիսանալ ինչպես ժողովրդի բնական օժտվածությունը, այնպես էլ ձեռքբերումները և ժառանգությունը, որ Հայաստանն ստացել է նախկին ԽՍՀՄ կազմում լինելու ժամանակաշրջանից, ինչը և կարող է նոր պայմաններում հաջողությամբ օգտագործվել երկրի զարգացման համար: Անհրաժեշտ է փոխել վերաբերմունքը եկամտի և շահույթի ստացման ձևերի նկատմամբ՝ տեղափոխելով այն նյութականից հոգևոր ոլորտ: Մասնավորապես կրթությունը չպետք է դիտվի սոսկ ներքին սպառման համար նախատեսված արտադրանք, այլ, օրինակ, արտահանմանը փոխարինող ոլորտ: Այն կարող է օժանդակել արտարժույթի ներհուսքին՝ ՀՀ-ում սովորող արտասահմանցի ուսանողների հաշվին և կրճատել բնակչության առավել կրթված հատվածի արտագաղթը՝ երկրի ներսում համապատասխան աշխատատեղեր ստեղծելու հաշվին:

Այսպիսով, կրթության նկատմամբ ավանդական մոտեցումների փոփոխումը հնարավորություն է ընձեռում երկիրը դուրս բերել հոգևոր և նյութական լճացումից, կոտրել ետընթացի միտումը, օժանդակել միջազգային կապերի զարգացմանը և տարածաշրջանային մեկուսացվածության հաղթահարմանը: Այդ ամբողջը չի կարող դրականորեն չափորոշում առաջնահերթ բնակչության սոցիալական պաշտպանության մակարդակի, հասարակության և պետության սոցիալացման վրա:

Երկրում կրթական հաստատությունների լայնածավալ զարգացման իրողությունը պայմանավորված է մտավոր ներուժի ամրապնդմամբ, օտար լեզուների տիրապետմամբ, ներառյալ արևելյան լեզուները: Այդ զարգացմանը կօժանդակի նյութական հիմքի՝ բուհական շենքերի և հանրակացարանների առկայությունը, Հայաստանում հարաբերականորեն ոչ թանկ կյանքը և ուսման ոչ բարձր վարձը:

Ուսման որակը և նրա գրավչությունը կարող են բարելավվել ի հաշիվ Սփյուռքից հրավիրվող մասնագետների, այդ թվում նաև կարճաժամկետ դասախոսությունների սկզբունքով: Սփյուռքը կարող է դառնալ ՀՀ բուհերի համալրման կարևորագույն աղբյուր:

Նման մոտեցումները կարող են արդյունավետ լինել նաև առողջապահության, այդ թվում բնական հանքային աղբյուրների հիման վրա կառուցված առողջարանների զարգացման համար: Խոշոր բժշկական կենտրոնների ստեղծումը՝ Սփյուռքից համաշխարհային ճանաչում ունեցող մասնագետների ներգրավմամբ, կնպաստի արտարժույթների հոսքին և երկրի հեղինակության բարձրացմանը:

Մշակույթի՝ որպես արտարժույթ ստեղծող ոլորտի զարգացումը, ենթադրում է խոշոր կոնցեռնների ստեղծում (Հայկամերոզ և այլն), որոնք, երկրում ունենալով ամուր կազմակերպական հիմք, կարող են նպաստել մշակույթի արտահանմանը համերգային համույթների և առանձին մենակատարների գործունեության, նկարիչների աշխատանքների ցուցադրման, ցուցահանդեսների և պատկերասրահների բացման տեսքով:

Նույն սկզբունքով կարելի է կառուցել գիտատեխնիկական կառուցվածքների, ճարտարապետական, շինարարական, ինչպես նաև բարձր տեխնոլոգիաների արտահանման հետ կապված գործունեությունը՝ դրանց արդյունքների հետագա իրացումն ապահովելով պատրաստի արտադրանքի տեսքով:

Առաջարկվող մոտեցման կենսագործումը պահանջում է լուրջ կազմակերպական աշխատանք և կառավարում, պետական մակարդակով խնդրի բացահայտում և անհատական նախաձեռնությունների արդիականացում: Հեռանկարային արտահանման արտադրանք կարող են հանդիսանալ սննդի, թեթև արդյունաբերության, կենսաքիմիայի արտադրանքը, ձեռքի աշխատանքի գործերը:

Նշված մոտեցման հաջող իրագործման դեպքում հնարավորություններ կստեղծվեն բնակչության կենսամակարդակի բարձրացման, նոր աշխատատեղերի ստեղծման, արտագաղթի կրճատման համար: Հայաստանը հնարավորություն կունենա վերադառնալու իր նախկին սոցիալ-մշակութային կերպարին արդեն նոր հիմքով՝ հարստացնելով այն ժողովրդավարության, ազատ նախաձեռնությունների, համապատասխան նյութական և սոցիալական պաշտպանվածության պայմաններում անձի ինքնագնահատման և ինքնահաստատման ոլորտներում ակնկալվող նվաճումներով:

Սեդա Վերմիշևա

4.6

Ամփոփում

21-րդ դարը, զարգացման արդի միտումներն աշխարհի բոլոր երկրներին, այդ թվում ընդամենը տասնամյա անկախ Հայաստանին բոլորովին նոր հրամայականներ են պարտադրում:

Հայաստանը, որն ըստ էության գտնվում է համաշխարհային բոլոր քաղաքակրթությունների խաչուղիներում և այս տարի տոնում է քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ընդունման 1700-ամյակը, իր երկարամյա պատմության ժամանակ առաջնորդվել է քաղաքակրթությունների «երկխոսության» և գոյակցության սկզբունքներով:

Այդպիսին կլինի, ամենայն հավանականությամբ, Հայաստանի հետագա դիրքորոշումը ևս, քանզի, ինչպես փաստում են զեկույցի հեղինակները, այլևս անդառնալիորեն ընտրելով արևմտյան քաղաքակրթությանն ինտեգրացվելու ճանապարհը, որը, կարծում ենք, միանգամայն արդարացված և հիմնավորված է թե՛ դարերի ընթացքում մշակված ու ամրապնդված արժեքային համակարգով, մշակութային ու աշխարհայացքային ընդհանրություններով, թե՛ դավանած սկզբունքների միարժեքությամբ, Հայաստանը ի վիճակի է աշխարհի հետ փոխանակել գոյակցության իր երկարատև փորձը:

Հայաստանն այսօր երկու գերխնդիր ունի լուծելու.

- ❖ նախ՝ մշակութային, ազգային, դավանաբանական առանձնահատկության պահպանումը և
- ❖ ապա՝ պատմության զարգացման ընթացքից ետ չմնալը, այլապես աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը կարող է այսօր հայտնվել պատմության լուսանցքում՝ համաշխարհային հանրության լիիրավ ու լիարժեք անդամ դառնալու փոխարեն վերածվելով որևէ հզոր ու հաղթանակած քաղաքակրթության կցորդի:

Առաջին հայացքից այս երկու խնդիրները կարծես թե փոխբացառում են միմյանց: Բայց միայն առաջին հայացքից: Իրական խորքում դրանք փոխլրացնող խնդիրներ են, որոնց արդյունավետ լուծումը, սակայն, անպայման քաղաքական հզոր կամք և երկրի ու ժողովրդի ինչպես առկա, այնպես էլ պատմականորեն կուտակված հոգևոր, տնտեսական և մտավոր ներուժի լարում և համախմբում են պարտադրում:

Չռչակված արժեքներն ու գործունեության սկզբունքները, որոնք անհրաժեշտ է հագեցնել իրական բովանդակությամբ և քայլերով, հետևյալն են՝

- ❖ ժողովրդավարություն,
- ❖ նոր տեխնոլոգիաների ներդրում և խթանում,
- ❖ կայուն տնտեսական աճ,
- ❖ աղքատության և գործազրկության նվազեցում,
- ❖ արտագաղթի դադարեցում,

- ❖ ժողովրդագրական իրավիճակի բարելավում,
- ❖ շրջակա միջավայրի պաշտպանություն,
- ❖ իրական արդարադատության հաստատում,
- ❖ դարաբաղյան խնդրի արդարացի լուծում,
- ❖ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացում,
- ❖ մշակութային պահպանում և զարգացում,
- ❖ իշխանության թևերի իրական տարանջատում,
- ❖ ազատ շուկա և մրցակցային հավասար դաշտ,
- ❖ բոլոր ոլորտներում երկակի ստանդարտների բացառում,
- ❖ սոցիալական աջակցության և ապահովության համակարգերի բարեփոխում,
- ❖ սոցիալական վիճակի բարելավում,
- ❖ մարդկային կապիտալի նպատակային զարգացում և օգտագործում,
- ❖ կոռուպցիայի, ստվերային տնտեսության ու հովանավորչության բացառում,
- ❖ քաղաքացիական հասարակության ինստիտուտների դերի բարձրացում,
- ❖ ներդրումային բարենպաստ դաշտի ստեղծում,
- ❖ կրթական համակարգի, նրա կառուցվածքի ու բովանդակության բարեփոխում և համապատասխանեցում երկրի առջև դրված ռազմավարական խնդիրներին,
- ❖ գիտության զարգացում և այլն:

Նշված խնդիրներն արդյունավետորեն լուծելու քայլերն ու դրանց հերթականությունը մանրամասնորեն նկարագրված են զեկույցի համապատասխան բաժիններում:

Կարծում ենք, որ Հայաստանը այլևս իրեն չի կարող թույլ տալ ևս մեկ տասնամյակ խարխափել նոր «նոդելների, հեռանկարների և բարեկեցիկ կյանքի» իրավիճակային փնտրտուքում: Այդ ժամանակաշրջանը լի էր նվաճումներով ու հուսախաբություններով, ձեռքբերումներով ու կորուստներով: Ժամանակն է ստեղծել նպատակադրված, համակարգված, համապարփակ և մարդու շուրջ կենտրոնացած զարգացման ծրագիր, և որ հավասարապես կարևոր է, իրականացնել արդյունավետորեն:

Այս օրախնդրի հարցերի հրատապ լուծմամբ է պայմանավորված ինչպես Հայաստանի առաջընթացը, այնպես էլ, համաշխարհային զարգացման գործընթացներում նրա ինտեգրացվելու արագությունն ու արդյունավետությունը, որի շնորհիվ է միայն, որ հնարավորություն կստեղծվի ապահովելու ինչպես երկրի, այնպես էլ ժողովրդի ապագան:

Օգտագործված գրականություն

Գլուխ 1

1. Տեղական ինքնակառավարման հիմունքներ. Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Պետական ծառայություն», 2000:
2. ՀՀ կառավարության տարածքային վարչության նյութեր:
3. Ապակենտրոնացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Պետական ծառայություն», 2000:
4. Եվրոպական խարտիա տեղական ինքնակառավարման մասին, Ստրասբուրգ, 15.10.1985:
5. Шугрина Е.С. Муниципальное право. М., Дело, 1999.
6. Васильев В.И. Местное самоуправление. М., 1999.

Գլուխ 2

1. Address by James D. Wolfensohn, to the Board of the World Bank Group at the Join Annual Discussion Praque, September 26-28, 2000.
2. Poverty Reduction Strategy Sourcebook, Draft for Comments, April 2001, The World Bank/IMF.
3. Tax Policy for Emerging Markets: Developing Countries; Vito Tanzi and Howell H. Zee, IMF Working Paper, Fiscal Affairs Department, March 2000.
4. Янош Корнай, Путь к свободной экономике – десять лет спустя. “Трансформация”, Экономический бюллетень о странах с переходной экономикой. Издание Всемирного Банка, Института Уильяма Девидсона, SITE/BOFIT N 2, 2000.
5. Address by Horst Kohler, Chairman of the Executive Board and Managing Director of International Monetary Fund, to the Board of Governors of the Fund Praque, September 26-28, 2000.
6. Томас Вулф и Эмине Гюрген 2-ое Европейское управление МВФ, Ноябрь 1999г.
7. Улучшение государственного управления и борьба с коррупцией в странах Балтики и СНГ: Роль МВФ.
8. Шульга В. А., Чаплыгин Ю. П., Рыбкин О. Е., Казахский С. Л. Основные тенденции и особенности экономической политики в СНГ в переходный период, Журнал “Финансы”, Москва, 2001г., N 6.
9. Է. Սանդրյան, Ա. Քառյան, «Բարեփոխումների արդյունքները և դրանց հետագա համակարգման խնդիրները», «Էկոնոմիկա», N 3, 2000թ.:
10. Բ. Թունյան, «Ստվերային տնտեսության ծավալները և դրա կրճատման ուղիները Հայաստանում», Եր., 2000թ.:
11. Բ. Թունյան, «Ստվերային տնտեսության ազդեցությունը տնտեսական համակարգի վրա», «Էկոնոմիկա», թիվ 2, 2000թ., էջ 19-27:
12. IMF, International Financial Statistics 2000, CD-ROM, Washington D.C., June, 2000.
13. Johnson S., Kaufman D. and Shleifer A. “The Unofficial Economy in Transition.” //Brookings Papers on Economic Activity, No 2, pp. 159-239, 1997.
14. Schneider F., Enste D. “Shadow Economies Around the World: Size, Causes and Consequences” IMF Working Paper, Washington D.C., February, 2000.
15. Tanzi V. “The Underground Economy in the United States: Annual Estimates, 1930-80.” International-Monetary-Fund-Staff-Papers; 30(2), pp. 283-305, June 1983.
16. Vito, Tanzi, 1998, Corruption Around the World: Causes, Consequences, Scope, and Cures, IMF Working Paper.
17. Vito, Tanzi and Hamid, Davoodi, 1997, Corruption, Public Investment, and Growth, IMF Working Paper.
18. Robert, Klitgaard, 1995, National and International strategies for reducing Corruption, OECD International Symposium on Corruption and Good Governance.
19. Gray, Cherly W., and Daniel Kaufman, 1998, Corruption and Development, Finance and Development, IMF Working Paper.
20. World Bank, 2000, Anticorruption in transition: A Contribution to the Policy Debate.
21. Carlos, Leite and Jens, Weidmann, 1999, Does Mother Nature Corrupt? Natural Resources, Corruption and Economic Growth, IMF Working Paper.
22. Civil Society development Union, 2000, Perception of Corruption in Yerevan.
23. Center for Institutional Reform and the Informal Sector (IRIS) and USAID/Senegal, 2000, Good Governance and the Economy in Francophone Africa.
24. The UNDP, 2000, Governance: National Background Paper, Consulting Group Meeting.
25. Foreign Investment Advisory Service, 2000, Armenia: Administrative Barriers to Investment.
26. Robert White, 2000, Assessment Report and Recommendations on ADA, World Bank.
27. Foreign Investment Advisory Service, 1999, Report on Investigation of Factors Inhibiting Foreign Direct Investment in Armenia.

28. EBRD, 1999, Transition Report.
29. Michael, Fairbanks, 2000, Changing the Mind of a Nation: Elements in a process for Creating Prosperity.
30. Mihael E.Porter, 1990, The Competitive Advantage of Nations.
31. Francis Fukuyama, 1995, TRUST: The Social Virtues and the Creation of Prosperity World Bank, 2000, Armenia: Institutions and Governance.

Գլուխ 3

1. Գ. Պողոսյան, «Բնակչության վերաբերմունքը Հայաստանում ընթացող տնտեսական բարեփոխումների նկատմամբ», «Հայաստանի տնտեսությանը», 20 մարտի 2001թ.:
2. Հայաստանի կենսաթոշակային համակարգի ֆինանսական և ակտուարական վերլուծություն: USAID/PADKO, հաշվետվություն թիվ 35, 19.03.2001 թ.: Միջազգային համատեղ պլանավորում և զարգացում, 21-րդ դարի լուծումներ:
3. Материалы международного семинара: "Пенсионная реформа", 15-22 сентября 1997г, Тель-Авив, Израиль.
4. «Սոցիալ- տնտեսական իրավիճակը և աղքատությունը Հայաստանում», ազգային զեկույց, ՀՀ ԱՎԾ, 1998թ.:
5. "Экономика и жизнь", 1999. номер 10.
6. ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի փաստացի նյութեր:
7. «ՀՀ պետական կենսաթոշակների մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Պետական նպաստների մասին», «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքների նախագծերը, նշակված ՀՀ սոցիալական ապահովության նախարարության կողմից:
8. Համաշխարհային բանկի ինստիտուտի «Անցումային տնտեսություն ունեցող երկրներում սոցիալական քաղաքականության բարեփոխումներ» (SPRITE) ծրագրի կողմից 1997-2001 թթ. կազմակերպված սեմինարների նյութեր:
9. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, տեղեկատվական և վերլուծական զեկույցի նյութեր, Երևան 1999թ., 2001թ.:
10. ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2001թ.:
11. Ընտանիքը և երեխաները Հայաստանում, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2001թ.:
12. Աջակցություն ՀՀ զբաղվածության քաղաքականությանը (նախագծի առաջընթացի զեկույց) փետրվար 2001թ., TACIS:
13. Խոջաբեկյան Վ.Ե., «Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում», Երևան, 1998թ.:
14. Միգրացիայի և փախստականների վարչության, Զբաղվածության հանրապետական ծառայության, ՀՀ սոցիալական ապահովության նախարարության նյութեր:
15. ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր, 1993-1999թթ.:
16. Статистический ежегодник южно-кавказских стран, 2000г.

Գլուխ 4

1. Վ. Տեր-Նիկողոսյան, Ա. Ասրյան., «Հայաստան՝ ԻՏ արդյունաբերության իրավիճակը: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների ուսումնասիրության գտածոները», Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության կողմից իրականացված հետազոտություն: Մայիս, 2001:
2. Armenia Growth Challenges and Potential Opportunities. World Bank, 2001.
3. Global Technology Market. Information Technologies. Country profile-Export Potential. ARMENIA:2000, ICT/UNCTAD/WTO, Geneva 2000.
4. Assessment of Rationale for the Establishment of IT Park in Armenia, prepared by Dr. Victor Brjabrin, UNDP/UNIDO Expert January 2000.
5. Information Technology and Electronic Commerce Park (ITEC-Park) Establishment, UNDP/UNIDO, Project Document, 2000.
6. Republic of Armenia: ICT Assessment, 15 July 2000 Version, SETA, USAID.
7. Armenia IT Master Strategy Inception Report, March, 2001, USAID.
8. World Bank IT Enterprise Incubator, WB, 2001.

Հավելվածներ



Վիճակագրական աղյուսակներ¹

ՀԱՎԵԼՎԱԾ

1. Մարդկային զարգացման համաթիվ (ՄԶՀ)

	1997	1998	1999	2000
Նորածնի կյանքի սպասվելիք տևողությունը (տարի)	73.9	74.7	73.2	72.5
Չափահաս բնակչության գրագիտության մակարդակը (%), 1989	98.8	98.8	98.8	98.8
Առաջին, երկրորդ և երրորդ մակարդակների բոլոր ուսումնական հաստատություններն ընդունվածների ցուցանիշը (% , 7 և 17 տարեկաններից)	64.8	61.4	60.2	59.6
Իրական ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով	429.8	499.0	485.0	503.6
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (ԳՀ* դոլար)	2064	2229	2323	2545
Կյանքի սպասվելիք տևողության համաթիվ	0.815	0.828	0.803	0.792
Կրթական մակարդակի համաթիվ	0.875	0.863	0.853	0.857
ՀՆԱ-ի համաթիվ	0.505	0.518	0.525	0.540
Մարդկային ներուժի զարգացման համաթիվ (ՄՆԶՀ)	0.732	0.736	0.729	0.730
Իրական ՀՆԱ-ի վարկանիշը մեկ շնչի հաշվով՝ հանած ՄԶՀ-ի վարկանիշը				

* Գնողունակության հնարավորություն²

2. Զարգացման համաթիվը՝ գենդերային վարկանիշի հաշվառմամբ

		1997	1998	1999	2000
Զարգացման համաթիվի վարկանիշը՝ գենդերային վարկանիշի հաշվառմամբ					
Նորածնի կյանքի սպասվելիք տևողությունը (տարի)	կին	77.3	78.1	75.5	74.5
	տղամարդ	70.3	70.8	70.7	70.5
Չափահաս բնակչության գրագիտության մակարդակը (%), 1989	կին		98.8		
	տղամարդ		98.8		
Առաջին, երկրորդ և երրորդ մակարդակների բոլոր ուսումնական հաստատություններն ընդունվածների ցուցանիշը (%)	կին	68.2	68.1	63.1	63.6
	տղամարդ	58.7	59.1	57.3	55.6
Աշխատանքային եկամտի մասնաբաժինը (%)	կին	32.5	32.9	33.0	33.0
	տղամարդ	67.5	67.1	67.0	67.0
Գենդերային ֆոնդի զարգացման համաթիվ (ԳՖԶՀ)		0.719	0.732	0.722	0.715
ՄՆԶՀ-ի վարկանիշը՝ հանած ԳՖԶՀ-ի վարկանիշը					

¹ Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, եթե այլ նշում չկա: Ցուցանիշների փոփոխությունները արդյունք են վիճակագրական տեղեկատվությունների ճշգրտումների:

² 1997-1999 թթ. համար ՀՆԱ 1 շնչի հաշվով հաշվարկման հիմք են ընդունվել ՀՀ ԱՎԾ կողմից հաշվարկված և հրապարակված տվյալները (ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, հունվար-մարտ, 2000թ.): 2000թ. համար հիմք է ընդունվել ՀԲ եռաշաբաթոցի տվյալները:

3. Կանանց հնարավորությունների ընդլայնման ցուցանիշ

	1997	1998	1999	2000
Կանանց հնարավորությունների ընդլայնման ցուցանիշի վարկանիշը (տարեսկզբի դրությամբ)				
Ազգային ժողովի կին պատգամավորներ (%) (տարեսկզբի դրությամբ)	6.3	3.1	3.1	3.1
Վարչական և ղեկավար պաշտոններ (%) (տարեսկզբի դրությամբ)	29.4	31.7	34.3	34.5
Արհեստավարժ և տեխնիկական որակավորման կադրեր (%) ընդհանուրից)	68.5	65.1	65.6	65.2
Աշխատանքային եկամուտների բաժինը (կանանց մասնաբաժինը, %)	0.498	0.684	0.496	0.493
Կանանց հնարավորությունների ընդլայնման ցուցանիշը (ԿՅԸՑ)	0.370	0.351	0.351	0.359

4. Միտումներ մարդկային զարգացման և փնտեսական աճի ոլորտներում

Մարդկային ներուժի զարգացման համաթվի (ՄՆԶՀ) դեվալվացիայի (1-ՄՆԶՀ) միտումները (%-ով) (1994թ.=100)	1996	94.6
	1997	90.5
	1998	87.4
	1999	
	2000	
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	նվազագույն արժեքը 1994-98 ժամանակահատվածում	172
	նվազագույն արժեքը 1994-99 ժամանակահատվածում	172
	առավելագույն արժեքը 1994-98 ժամանակահատվածում	499.0
	առավելագույն արժեքը 1994-2000 ժամանակահատվածում	503.6
	1994	172
	1997	429.8
	1998	499.0
	1999	485.0
	2000	503.6
	փոփոխության միջին տարեկան արժեքը (%-ով)	1960-1994
1995-1998		4.1
1995-2000		7.8

5. Ընդհանուր տեղեկություններ մարդկային զարգացման մասին

	1997	1998	1999	2000	
Նորածնի կյանքի սպասվելիք տևողությունը (տարի)	73.9	74.7	73.2	72.5	
Բնակչությունը, որի համար մատչելի է	բժշկական ծառայությունը (%-ով)	80.0	80.5	81.2	81.3
	խմելու ջուրը (%-ով)	85.0	86.0	97.0	92.6
	սանմաքրումը (%-ով)	67.0	67.0	69.0	69.1
Ամենօրյա օգտագործված կալորիականությունը	2016		
Չափահաս բնակչության գրագիտությունը (%-ով), 1989	98.8	98.8	98.8	98.8	
Առաջին, երկրորդ և երրորդ մակարդակների բոլոր ուսումնական հաստատություններն ընդունվածների ցուցանիշը (%)	64.8	61.4	60.2	59.6	
Ամենօրյա թերթեր (տպաքանակը 100 մարդու հաշվով)	3.65	3.6	3.9	4.4	
Հեռուստացույց (100 մարդու հաշվով)	14.4	14.9	15.2	15.2	
Իրական ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով	429.8	499.0	485.0	503.6	
Իրական ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (ԳՀ դոլար)	2064	2229	2323	2545	

6. Միտումներ մարդկային զարգացման ոլորտում

Նորածնի կյանքի սպասվելիք տևողությունը (տարի)	1997	73.9
	1998	74.7
	1999	73.2
	2000	72.5
Մանկական մահացության գործակիցը (1000 կենդանածնի հաշվով)	1997	15.4
	1998	14.7
	1999	15.4
	2000	15.6
Բնակչության մասը, որին մատչելի է խմելու ջուրը (%-ով)	1997	85.0
	1998	86.0
	1999	97.0
	2000	92.6
Չափահաս բնակչության գրագիտությունը (%-ով)	1989	98.8
	1999	98.8
	2000	98.8
Առաջին, երկրորդ և երրորդ մակարդակների բոլոր ուսումնական հաստատություններն ընդունվածների ցուցանիշը (%)	1997	64.8
	1998	61.4
	1999	60.2
	2000	59.6
Իրական ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով	1997	429.8
	1998	499.0
	1999	485.0
	2000	503.6

* Համաձայն 1989թ. մարդահամարի տվյալների:

7. Կանայք և նրանց հնարավորությունները

		1997	1998	1999	2000
Կրթական համակարգեր կանանց ընդունվելու մաքուր ցուցանիշները	Միջնակարգ դպրոց	մասը, 90.8	91.8	95.6	96.5
		համաթիվ (1980=100)	95.6	96.7	100.7
Կրթական երրորդ մակարդակում սովորող կանայք	(100 հազ. կնոջ հաշվով)	1550	1643	1740	1749
	համաթիվ (1980=100)	88.2	93.5	99.0	99.5
Նորածին աղջիկների կյանքի սպասվելիք միջին տևողությունը	տարիքը	77.3	78.1	75.5	72.5
	համաթիվ (1980=100)	106.2	107.3	103.7	99.6
Ընդհանուր ֆերտիլիտետություն	գործակիցը	1.453	1.297	1.194	1.190
	համաթիվ (1980=100)	62.9	56.1	51.7	51.5

8. Կանայք և նրանց մասնակցությունը քաղաքական և փոփոխական կյանքին

		1997	1998	1999	2000
Վարչական աշխատողներ և ղեկավարներ	կանանց բաժինը (%-ով)	29.4	31.7	34.3	34.5
	կանանց և տղամարդկանց թվաքանակների հարաբերակցությունը (%-ով)	41.6	46.5	52.2	52.7
Մասնագետներ և տեխնիկական աշխատողներ*	կանանց բաժինը (%-ով)	68.5	65.1	64.5	64.1
	կանանց և տղամարդկանց թվաքանակների հարաբերակցությունը (%-ով)	217.4	186.6	181.7	178.6
Գրասենյակային ծառայողներ և առևտրի ոլորտի աշխատողներ (միայն առևտրի ոլորտի և հասարակական սննդի ոլորտի աշխատակիցներ)	կանանց բաժինը (%-ով)	43.4	48.2	40.9	40.5
	կանանց և տղամարդկանց թվաքանակների հարաբերակցությունը (%-ով)	76.6	93.0	69.2	68.1
Սպասարկման ոլորտի աշխատողներ	կանանց բաժինը (%-ով)	62.0	62.5	62.2	62.4
	կանանց և տղամարդկանց թվաքանակների հարաբերակցությունը (%-ով)	162.9	166.6	164.4	166.0
Կանայք կառավարման մարմիններում	ընդհանուր բաժինը (%-ով)	47.4	41.5	39.0	39.0
	ներնախարարական մակարդակով (%-ով)	...	2	2.4	2.4

* Ցուցանիշը հաշվարկված է՝ ելնելով ՀՀ ԱՎԾ-ում հաշվառված զբաղված բնակչության թվաքանակից:

9. Երեխաների կյանքը և զարգացումը

	1996	1997	1998	1999	2000
Անեմիայով տառապող 15-49 տարեկան հղի կանանց մասը (%-ով)	10.9	12.6	14.8	15.3	15.7
Բժշկական որակյալ անձնակազմի ընդունած ծնունդների քանակը (%-ով, հղիներից)	98.7	98.3	98.5	98.6	99.1
Պակաս քաշով Մորածինների մասը (մինչև 2500 գր., %-ով, կենդանածինների քանակից)	7.89	7.9	8.5	8.5	8.2
Մայրական մահացության գործակիցը (100 հազ. կենդանածնի հաշվով)	20.8	38.8	25.4	32.9	52.5
Մանկական մահացության գործակիցը (հազար կենդանածնի հաշվով)	15.5	15.4	14.7	15.4	15.6
Մինչև 5 տարեկան երեխաների մահացության գործակիցը (հազար կենդանածնի հաշվով) 1995, 1996, 1997	19.5	19.5	18.4	19.2	19.3
4 ամիս և ավելի երեխաներին կրծքով կերակրող մայրերի բաժինը (%-ով, կենդանածինների քանակից)	42.0	52.6	53.0	54.4	56.0

10. Առողջապահություն

	1997	1998	1999	2000
Մինչև 1 տարեկան երեխաների մասը, որոնք լրիվ պատվաստվել են	72.3	94.9	95.0	95.0
տուբերկուլյոզի դեմ (%-ով)	91.5	93.5	94.8	95.0
կարմրուկի դեմ (%-ով)				
ԶԻԱՎ-ով հիվանդացության դեպքերի թիվը (100 հազ. բնակչի հաշվով)	1.1	1.1	0.2	0.0
Տուբերկուլյոզով հիվանդացության հայտնի դեպքերի թիվը (հակատուբերկուլյոզային հիմնարկներում դիսպանսերային հսկողության տակ գտնվող հիվանդների թվաքանակը տարեվերջին, 100 հազար բնակչի հաշվով)	103.1	122.5	138.8	143.5
Մալարիայով հիվանդացության հայտնի դեպքերի թիվը (100 հազ. բնակչի հաշվով առաջին անգամ հայտնաբերված)	22.2	30.8	16.2	3.7
Մեկ ծխող մեծահասակի լրիվ ծխած ծխախոտների քանակը (գլանակ մեկ օրում)	15	16	16	15
Մեկ բժշկին ընկնող մարդկանց քանակը	291	292	301	319
Մեկ բուժքրոջը ընկնող մարդկանց քանակը	143	147	154	172
Հաշմանդամների քանակը (%-ով, բնակչության ընդհանուր քանակից)	2.66	2.62	2.60	2.73
Առողջապահության պետական ծախսումները (%-ով, ՀՆԱ-ից)	1.4	1.4	1.4	1.0

11. Պարենային անվտանգությունը

	1997	1998	1999	2000
Սննդամթերքի արտադրության համաթիվը՝ մեկ բնակչի հաշվով (1980=100)		10.4	11.0	11.5
Գյուղատնտեսական արտադրության բաժինը (% , ՀՆԱ-ից)	29.4	29.8	31.6	22.5
Սննդամթերքի սպառման բաժինը (% , անձնական սպառման ընդհանուր ծավալից)	64.6	70.4	67.0	58.7
Օրական սպառված կալորիականությունը	2016			
Ձկան և ծովային այլ սննդամթերքի սպառման բաժինը մեկ շնչի հաշվով (կգ, տարեկան)	2.5	2.6	4.3	4.3
Ներմուծվող սննդամթերքի բաժինը (% , ներմուծվող ապրանքների ընդհանուր քանակից)	30.7	32.6	26.1	23.0
Հացահատիկի ներմուծման ծավալները (հազ. տոննա)	221.9	310.5	272.7	418.0
Օգնություն ստացված հացահատիկի ծավալը (հազ. տոննա)	114.6	98.8	7.4	52.1

12. Հարաբերակցությունը կրթության ոլորտում

		1997	1998	1999	2000
Պարտադիր ուսուցումը (տևողությունը տարիներով)		10	8	8	8
Միջնակարգ տեխնիկական ուսումնարաններ ընդունվածների բաժինը (%-ով, միջին մասնագիտական հաստատություններ ընդունվածներից)		22.9	24.1	26.3	26.7
Կրթության երրորդ մակարդակի բնական և կիրառական բաժիններ ընդունվածների մասը (%-ով, կրթական երրորդ մակարդակ ընդունվածների ընդհանուր թվից)		61	58	51.3	49.3
Արտասահմանյան կրթական երրորդ մակարդակի ուսումնական հաստատություններում սովորողների բաժինը (%-ով, կրթական երրորդ մակարդակում սովորողների ընդհանուր թվից)		0.2	0.2	0.2	0.2
Գիտահետազոտական աշխատանքներով զբաղվող գիտնականներ և տեխնիկական մասնագետներ (հազար բնակչի հաշվով)		2.0	2.1	1.7	1.71
Պետական ծախսումների բաժինը	կրթության ոլորտում (%-ով, ՀՆԱ-ից)	2.0	2.1	1.9	2.6
	կրթության ոլորտում (%-ով, պետական ծախսումների ամբողջ ծավալից)	11.1	9.5	8.2	12.2
	տարրական և միջնակարգ կրթության ոլորտում (%-ով, կրթության ոլորտի ընդհանուր ծախսերից)	83.6	61.6	74.5	66.5
	բարձրագույն կրթության ոլորտում (%-ով, կրթության ոլորտում ընդհանուր ծախսերից)	15.5	15.1	13.7	11.4

13. Զբաղվածությունը

Աշխատուժի բաժինը (%-ով, բնակչության ընդհանուր թվից)		1997	1998	1999	2000
		40.6	38.9	38.5	38.2
Կանանց բաժինը չափահաս աշխատուժի կառուցվածքում (15 տարեկան և բարձր)		1997	1998	1999	2000
		51.3	50.1	49.0	50.7
Աշխատուժի բաշխվածության տոկոսն ըստ ճյուղերի	գյուղատնտեսությունում և անտառտնտեսությունում	1997	1998	1999	2000
		41.3	42.5	43.3	43.3
	արդյունաբերությունում	1997	1998	1999	2000
	16.7	15.7	15.0	15.0	
	ծառայությունների ոլորտում	1997	1998	1999	2000
	37.6	37.5	37.4	37.4	
ՀՆԱ-ի տարեկան աճը մեկ բնակչի հաշվով (%-ով)		1997	1998	1999	2000
		3.1	7.3	3.3	6.0

14. Կապի միջոցներ

	1997	1998	1999	2000
Ռադիոընդունիչների քանակը (1000 մարդու հաշվով)	39	36	32	28
Հեռուստացույցների քանակը (1000 մարդու հաշվով)	144	149	152	152
Հրատարակված գրքերի և բրոշյուրների քանակը (100 հազար մարդու հաշվով)	11.3	14.1	19.1	19.0
Տպագրական և գրելու թղթի սպառումը (տոննա, 1000 մարդու հաշվով)	0.66	0.71	0.77	0.8
Փոստային բաժանմունքների քանակը (10000 մարդու հաշվով)	2.2	2.4	2.4	2.4
Մագիստրալային հեռախոսագծերի քանակը (10000 մարդու հաշվով)	1.30	1.30	1.33	1.36
Միջազգային հեռախոսային խոսակցության տևողությունը (րոպե, մեկ մարդու հաշվով)	3.0	5.0	4.8	4.4
Բջջային հեռախոսակապի բաժանորդների քանակը (1000 մարդու հաշվով)	4.1	7.2	7.9	17.4
Ինտերնետային կապից օգտվողների քանակը (10000 մարդու հաշվով)	3.96	10.8	16.05	17.10

15. Ներդրումներ սոցիալական ոլորտում

	1997	1998	1999	2000	
Սոցիալական բնույթի ծախսումներ (%-ով, ՀՆԱ-ից)	5.9	5.9	6.5	6.0	
Ծախսումներն ըստ ուղղվածությունների (%-ով, ընդհանուր սոցիալական ծախսումներից)	նպաստներ	16.0	25.8	30.7	21.7
	կրթություն	34.1	29.4	29.6	40.2
	առողջապահություն	24.2	23.8	21.1	16.0

16. Ռազմական ծախսումների և ներուժի օգրագործման անհամապատասխանությունը

Ծախսումներ պաշտպանության վրա	%-ով, ՀՆԱ-ից	1997	3.9
		1998	3.5
մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար, 1995թ. գներով)		1999	3.6
		2000	3.5
		1997	11.5
		1998	17.8
Ռազմական ծախսեր (%-ով, կրթության և առողջապահության ընդհանուր ծախսումների նկատմամբ)		1999	17.5
		2000	17.9
		1997	135.0
		1998	109.2
		1999	109.8
		2000	99.6

17. Ռեսուրսների ներհոսքը

		1997	1998	1999	2000
Արտաքին պետական պարտքը	մլն. ԱՄՆ դոլար	682.5	775.3	870.3	859.5
	%-ով, ՀՆԱ-ից	42.0	42.4	45.8	44.9
Պարտքի սպասարկման գործակիցը (պարտքի սպասարկման բաժինը %-ով, արտահանվող ապրանքների և ծառայությունների ծավալից)		3.7	7.1	5.6	9.1
Զարգացման նպատակով ստացված պաշտոնական մաքուր օգնությունը (մաքուր դրամական մուծումներ)	մլն. ԱՄՆ դոլար	150.8	118.7	97.6	103.0
	%-ով, ՀՆԱ-ից	9.3	6.3	5.3	5.4
	մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	39.4	31.3	25.7	27.1
Ուղղակի արտասահմանյան զուտ ինվեստիցիաներ (%-ով, ՀՆԱ-ից)		3.2	12.2	6.6	6.2
Արտահանումների և ներմուծումների ծավալների հարաբերակցությունը (արտահանման %-ը ներմուծումից)		34.6	35.9	41.6	33.6
Ընթացիկ հաշիվների պակասորդը՝ չհաշված պաշտոնական փոխանցումները (մլն. ԱՄՆ դոլար)		-455.9	-515.6	-400.7	-380.9

18. Քաղաքակենտրոնացման աճի միպուսները

		1997	1998	1999	2000	
Քաղաքային բնակչությունը (%-ով, բնակչության ընդհանուր թվաքանակից)	1995, 1996, 1997	66.9	66.8	66.7	66.6	
	2000			67.0		
Քաղաքային բնակչության տարեկան աճի միտումները (%-ով)	1960=100			2.75		
	1997-2000		0.2		-0.05	
750 հազարից ավելի բնակիչ ունեցող քաղաքների բնակչությունը	%-ով, բնակչության ընդհանուր թվաքանակից	33.0	32.9	32.8	32.8	
	%-ով, քաղաքային բնակչության ընդհանուր թվաքանակից	49.3	49.2	49.2	49.2	
Խոշորագույն քաղաքը	քաղաքի անվանումը	Երևան				
	բնակչությունը (հազար մարդ)	1249.7	1248.7	1248.2	1247.2	
	աճի տեմպերը (%)	1990-95			- 0.05	
		1996-2000			- 0.05	

19. Ընդհանուր տեղեկություններ ժողովրդագրության ոլորտից

		1997	1998	1999	2000
Մոտավոր բնակչությունը (մլն. մարդ)	1960	1.8			
	1996, 1997	3.83.8	3.8	3.8	
	1998, 1999				
	2000	3.8			
Բնակչության տարեկան աճի տեմպերը (%-ով)	1960-96	2.1			
	1997-2000	0.20		0.15	
Ծննդի համախառն գործակիցը		11.6	10.4	9.6	9.0
Մահացության համախառն գործակիցը		6.36.1	6.3	6.3	
Ֆերտիլայնության ընդհանուր գործակիցը		1.45	1.3	1.19	1.19
Հակաբեղմնավորիչ միջոցների տարածման ցուցանիշը, պաշտպանիչ բոլոր մեթոդները (1000 ֆերտիլային հասակի կնոջ հաշվով)		17.9	33.7	31.5	32.0
Կախվածության գործակիցը (%)-ով		57.8	59.5	60.0	66.6
65 և ավելի տարիքի բնակչության բաժինը (%-ով, բնակչության ընդհանուր թվաքանակից)		8.38.6	8.3	8.9	

20. Էներգիայի օգտագործումը

		1997	1998	1999	2000
Էլեկտրաէներգիայի օգտագործումը	ընդամենը (մլն. կվտ/ժամ)	6030	6191	5717	5958
	համաթիվը (1990=100)	58	60	55	57
	մեկ շնչի հաշվով (կվտ/ժամ)	1593	1631	1503	1567
Էներգիայի բաժինը, որը ստացվում է տնային տնտեսություններում փայտի այրումից (նավթային համարժեքը), մեկ շնչի հաշվով, կգ		5.4	4.1	4.2	4.2
Էներգիայի կոներցիոն ծախսը (նավթային համարժեքը)	ընդամենը (մլն. տոննա)	1686	1733	1601	1668
	մեկ շնչի հաշվով (տ)	446	457	421	439
	ՀՆԱ-ն մեկ կգ-ի հաշվով (ԱՄՆ դոլար)	0.972	1.092	1.152	1.148

21. Բնական պաշարների օգտագործումը

	1997	1998	1999	2000
Երկրի տարածքը (1.000 հա)	2974.3	2974.3	2974.3	2974.3
Անտառապատ տարածքը (%-ով, երկրի տարածքից)	11.2	11.2	11.2	11.1
Վարելահող (%-ով, երկրի տարածքից)	16.6	16.6	16.6	16.6
Ոռոգվող հողեր (%-ով, վարելահողի ընդհանուր տարածքից)	41.1	41.1	41.4	41.0
Անտառների վերացման տարեկան տեմպերը (%-ով, 1990-1997)	0.2			
Անտառածածկ տարածքը (հազ. քառ.մ, մեկ շնչի հաշվով)	0.09	0.09	0.09	0.09
Անտառավերականգնման տարեկան տեմպերը (%-ով)	0.5	0.3	0.3	0.3
Վերականգնվող ներքին ջրային պաշարները մեկ շնչի հաշվով (հազ. խոր.մ 1 տարում)	1.74	1.74	1.74	1.72

22. Ազգային եկամուտների հաշիվ

	1997	1998	1999	2000	
ՀՆԱ (մլրդ. ԱՄՆ դոլար)	1.6	1.9	1.8	1.9	
Գյուղատնտեսություն (%-ով, ՀՆԱ-ից)	29.4	30.8	26.2	23.1	
Արդյունաբերություն (%-ով, ՀՆԱ-ից)	22.5	19.9	21.0	22.1	
Ծառայությունների ոլորտ (%-ով, ՀՆԱ-ից)	31.8	31.8	35.2	35.2	
Սպառում	անձնական սպառում (%-ով, ՀՆԱ-ից)	103.3	99.9	95.4	95.1
	պետական սպառում (%-ով, ՀՆԱ-ից)	11.2	11.1	10.7	12.0
Համախառն ներքին ինվեստիցիան (%-ով, ՀՆԱ-ից)	19.1	19.1	18.4	19.1	
Համախառն ներքին խնայողությունները (%-ով, ՀՆԱ-ից)	-5.3	-2.2	-0.03	-	
Ապրանքների և ներմուծման զուտ հարկեր	8.0	9.3	8.5	9.1	
Կառավարության ծախսումները (%-ով, ՀՆԱ-ից)	6.5	6.6	7.1	7.1	
Արտահանում (ապրանքներ և ծառայություններ) (%-ով, ՀՆԱ-ից)	20.3	19.0	20.8	23.2	
Ներմուծում (ապրանքներ և ծառայություններ) (%-ով, ՀՆԱ-ից)	58.3	52.8	49.8	50.3	

23. Տնտեսական ցուցանիշների դինամիկան

	1997	1998	1999	2000
ՀՆԱ (մլն. ԱՄՆ դոլար)	1638.9	1892.3	1844.6	1915.2
ՀՆԱ-ի տարեկան աճի տեմպերը (%-ով)	103.3	107.3	103.3	106.0
ՀՆԱ-ի աճի տեմպերը մեկ շնչի հաշվով (%-ով)	103.0	107.1	103.1	105.9
Միջին տարեկան սղաճը (%-ով)	14.0	8.7	2.0	-0.8
Արտահանման ծավալները* (%-ով, ՀՆԱ-ից)	20.3	19.0	20.8	23.2
Ուղղակի հարկային մուտքեր (%-ով, ՀՆԱ-ից)	3.9	2.9	4.1	3.3
Հարկային մուտքերի բաժինը (%-ով, ՀՆԱ-ից)	12.8	13.6	22.4	13.9
Ընդհանուր բյուջեի ավելցուկի (պակասորդի) բաժինը (%-ով, ՀՆԱ-ից)	-2.5	-4.2	-5.9	-3.6

* Ներառյալ ծառայությունները:

24. Առողջապահություն

		1997	1998	1999	2000
Ծխող մեծահասակների բաժինը (%-ով)	տղամարդ	70	69	68.8	68.8
	կին	6	6.2	6.6	6.7
Ալկոհոլի օգտագործումը մեկ շնչի հաշվով (լիտր)		2.6	2.6	2.58	2.59
65 տարեկանից հետո ելքը՝ հավանական մահացության ըստ պատճառների	սրտային հիվանդություններ (1000 բնակչի հաշվով)	317	322	306	221
	տղամարդ	306	285	287	205
	կին	71	75	76	75
	քաղցկեղային հիվանդություններ (1000 բնակչի հաշվով)	38	42	40	41
ԶԻԱԳ-ով հիվանդացության դեպքերի թիվը (100 հազար բնակչի հաշվով)		1.1	1.1	0.2	0.3
Հաշմանդամներ (%-ով, բնակչության ընդհանուր թվից)		2.66	2.62	2.60	2.73
Առողջապահության պետական ծախսումներ (%-ով, պետական ընդհանուր ծախսումներից)		7.7	7.3	5.8	4.7
Առողջապահության անձնական ծախսումներ (%-ով, առողջապահության ընդհանուր ծախսումներից)		88.0	87.0	89.0	89.0
Առողջապահության ընդհանուր ծախսումները (%-ով, ՀՆԱ-ից)		1.4	1.4	1.37	1.0

25. Կրթություն

		1997	1998	1999	2000
Ցերեկային կրթության համակարգում ընդգրկված սովորողների թվաքանակը (% , 7-22 տարեկաններից)		60.6	60.1	59.7	57.2
Միջնակարգ հանրակրթական դպրոցի ցերեկային ուսուցման ընդգրկվածության մաքուր ցուցանիշը (%-ով)		78.4	78.7	78.7	75.8
Միջին տեխնիկական ուսումնական հաստատություններ ընդունվածների բաժինը (%-ով, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվածների ընդհանուր թվաքանակից)		22.9	24.1	26.3	26.7
Երրորդ մակարդակի ուսումնական հաստատություններ ընդունվածների մաքուր ցուցանիշը (%-ով, 17 տարեկանների ընդհանուր թվաքանակից)		19.6	19.4	21.3	21.0
Կրթական երրորդ մակարդակի բնական և տեխնիկական ուսումնական բաժանմունքներ ընդունվածների բաժինը (%-ով, երրորդ մակարդակի կրթական ուսումնական հաստատություն ընդունվածների ընդհանուր քանակից)		38.9	39.0	39.2	39.2
Պետական ծախսումները բարձրագույն կրթության ոլորտում (%-ով, կրթության ոլորտում ընդհանուր ծախսումներից)		15.5	15.1	13.7	12.5
Պետական ծախսումները կրթական երրորդ մակարդակի ուսումնական հաստատությունների մեկ սովորողի հաշվով (դոլար)		119.7	135.1	121.7	131.8
Կրթության ոլորտում պետական ծախսումների բաժինը (%-ով, ՀՆԱ-ից)		2.0	2.1	1.9	2.4

26. Զբաղվածություն

		1997	1998	1999	2000
Աշխատուժի բաժինը (%-ով, բնակչության ընդհանուր թվաքանակից)		40.6	38.9	38.4	38.2
Աշխատուժի տոկոսային հարաբերակցությունն ըստ ճյուղերի	գյուղատնտեսություն և անտառտնտեսություն	41.3	42.5	43.3	43.3
	արդյունաբերություն	16.7	15.7	15.0	15
	ծառայությունների ոլորտ	37.6	37.5	37.4	37.4
Աշխատուժի տեղավորման գործակիցն ապագայում		157.6	131.6	137.1	147.9
Մեկ աշխատողի իրական եկամուտների տարեկան աճի տեմպերը (ըստ միջին ամսական աշխատավարձի, %-ով)		30.0	31.8	19.2	13.4
Արհեստակցական միություններին անդամակցված աշխատուժը (% , 1997-2000թթ. միջինը)		61			
Աշխատանքի շուկայի հետ կապված ծրագրային ծախսերը (%-ով, ՀՆԱ-ից)		0.104	0.069	0.155	0.091

27. Գործազրկություն

		1997	1998	1999	2000
Գործազուրկների թիվը (հազար մարդ)		174.4	133.8	175.0	153.9
Գործազրկության միջին մակարդակը (%)		10.8	9.4	11.2	11.7
Գործազրկության մակարդակը (%)	տղամարդ	3.1	2.8	3.8	4.2
	կին	7.7	6.6	7.4	7.5
Գործազրկության մակարդակը երիտասարդության շրջանում (%)	տղամարդ (18-22 տարեկան)	0.5	0.4	0.4	0.3
	կին (18-22 տարեկան)	1.2	0.7	0.7	0.6
Տևական գործազրկության տարածման մակարդակը (%-ով)*	6 ամսից ավելի	86.6	82.8	82.0	89.6
	12 ամսից ավելի	87.3	85.0	84.3	90.0
Աշխատողներ, որոնք ստիպված են աշխատում ոչ լրիվ աշխատանքային օր (%-ով, աշխատուժի ընդհանուր թվից)**	տղամարդ և կին	67.0	61.8	51.6	70.1
	կին	71.4	70.8	66.3	75.4
Աշխատողներ, որոնք ստիպված են աշխատում ոչ լրիվ աշխատանքային օր (%-ով, աշխատուժի ընդհանուր թվից)**		1.2	1.0	1.3	2.8
Գործազրկության նպաստ (%-ով, պետական ընդհանուր ծախսումներից)		0.4	0.3	0.5	0.1

* Տարեվերջի դրությամբ:

** Առանց մանր ու միջին մասնավոր ձեռնարկություններում ու կազմակերպություններում զբաղվածների:

28. Սոցիալական սպրեսներ և սոցիալական փոփոխություններ

	1997	1998	1999	2000	
Դատապարտվածների թվաքանակը (100 հազ. բնակչի հաշվով)	187	169	172	179	
Անչափահաս դատապարտվածներ (%-ով, դատապարտվածների ընդհանուր թվից)	6.1	4.4	5.1	3.9	
Տղամարդկանց կատարած կանխանտաժված սպանությունները (100 հազ. բնակչի հաշվով)	4.1	2.2	4.2	2.4	
Թմրանյութերի հետ կապված հանցագործություններ (100 հազ. բնակչի հաշվով)	11.3	14.3	12.6	12.7	
Չափահասների կատարած բռնաբարությունների թիվը (100 հազ. բնակչի հաշվով)	0.8	0.5	0.6	0.7	
Մահացու ելքերով ավտոտրանսպորտային պատահարներ (100 հազ. բնակչի հաշվով)	4.9	5.6	4.6	3.5	
Ինքնասպանությունների թիվը (100 հազ. բնակչի հաշվով)	տղամարդ	3.4	2.6	3.4	2.5
	կին	1.2	0.9	1.2	0.7
Ապահարգանքների թիվը (տարվա ընթացքում 1000 ամուսնությունների հաշվով տարեվերջի դրությամբ)	185	142	101	102	
Միայնակ մայրերով տնային տնտեսությունների թիվը (%-ով)	4.5	6.3	8.2		
Կենդանածինների քանակը (15-19 տարեկան 1000 մայրերի հաշվով)	43.4	34.6	29.8	29.0	
65 և բարձր տարիքի միայնակ մայրերով տնային տնտեսությունների բաժինը (%-ով, տնային տնտեսությունների ընդհանուր թվից)	4.5	3.3	1.2	1.2	

29. Ռեսուրսների ներհոսքը

	1997	1998	1999	2000
Ներմուծման և արտահանման հարաբերակցությունը (արտահանման ծավալները %-ով, ներմուծման ծավալներից)	34.6	35.1	41.6	33.6
Արտահանման աճի տեմպերը (%-ով, ներմուծման աճի տեմպերից)	76.7	124.0	118.0	117.7
Առևտրի կախվածությունը (ներմուծում գումարած արտահանում, %-ով, ՀՆԱ-ից)	70.2	59.1	56.5	50.0
Արտասահմանյան մաքուր ուղղակի ինվեստիցիաների բաժինը (%-ով, ՀՆԱ-ից)	3.2	12.2	6.6	6.2
Արտասահմանում աշխատողների մաքուր դրամական փոխանցումները (մլն. ԱՄՆ դոլար)	124.0	82.3	79.7	78.2
Ընթացիկ հաշիվները (մլն. ԱՄՆ դոլար)	-306.5	-402.9	-306.9	-278.4

30. Շրջակա միջավայրը և աղտոտվածությունը

		1997	1998	1999	2000
Ջերմոցային գազերի արտանետումը	CO ₂ , հազ. տոննա	8.3	7.4	8.7	15.5
	մեթան, հազ. տոննա	22.1	17.6	4.0	9.8
	ազոտի ենթօքսիդ, տոննա	1.2	0.3	0.7	2.0
Պահպանվող տարածքներ (%-ով, երկրի տարածքից)		10,6		10.8	11.0
Էներգիայի թափոնների ծավալները (տոննա ծանր մետաղ)		1.9	0.1	0.2	0.2
Առաջացած վտանգավոր թափոններ (տոննա/քառ. կմ)		0.02	0.03	0.05	0.05
Առաջացած քաղաքային թափոններ (կգ, մեկ քաղաքաբնակի հաշվով)		285	262.4	246.8	247.0
Աղբահավաք ծառայությամբ ապահովված բնակչությունը (%-ով)		67.0	67.0	67.8	67.9
Թափոնների վերամշակում (%-ով, օգտագործվածից)	թուղթ և ստվարաթուղթ	1.6	1.2	2.0	2.0
	ապակի	27.0	28.4	35.6	35.9



ՀԱՎԵԼԿԱՐԾ

Մարդկային զարգացման համաթիվ¹

ՄՏՀ-ի կարգը	Նորմանի կամ չկանցի սպասվելիք տնօրոքումը (տարի)	Չափառաբանության բնակչության գրագիտության մակարդակը (%)	I, II, III մակարդակների բոլոր ուսումնական հաստատությունների ցուցանիշը (%)	Իրական ՀՆԱ-ի մեկ շնչի հաշվով (ՉՀ որակը)	Կյանքի սպասվելիք տնօրոքումը համաթիվ	Կրթական մակարդակի համաթիվ	ՀՆԱ-ի համաթիվ	Մարդկային զարգացման համաթիվ	Իրական ՀՆԱ վարկածի շնչի հաշվով համաթիվ ՄՏՀ վարկածի շնչի հաշվով
Մարդկային զարգացման բարձր մակարդակ (1-48)									
1 Նորվեգիա	78.4	99.0	97	28,433	0.89	0.98	0.94	0.939	2
6 ԱՄՆ	76.8	99.0	95	31,872	0.86	0.98	0.96	0.934	-4
17 Գերմանիա	77.6	99.0	94	23,742	0.880	0.97	0.91	0.921	-3
22 Իսրայել	78.6	95.8	83	18,440	0.89	0.91	0.87	0.893	3
34 Արգենտինա	73.2	96.7	83	12,277	0.80	0.92	0.80	0.842	6
44 Եստոնիա	70.3	98.0	86	8,335	0.76	0.94	0.74	0.812	6
Մարդկային զարգացման միջին մակարդակ (49-126)									
50 Լատվիա	70.1	99.8	82	6,264	0.75	0.93	0.69	0.791	12
53 Բելառուս	68.5	99.5	77	6,876	0.73	0.92	0.71	0.782	5
55 Ռուսաստանի Դաշնություն	66.1	99.5	78	7,473	0.69	0.92	0.72	0.775	0
72 Հայաստան	72.7	96.3	80	2,215	0.80	0.92	0.52	0.745	44
76 Վրաստան	73.0	99.6	70	2,431	0.80	0.89	0.53	0.742	32
79 Ադրբեջան	71.3	97.0	71	2,850	0.77	0.88	0.56	0.738	27
82 Թուրքիա	69.5	84.6	62	6,380	0.74	0.77	0.69	0.735	-21
90 Իրան	68.5	75.7	73	5,531	0.73	0.75	0.67	0.714	-21
104 Բուլղարիա	62.0	85.0	70	2,355	0.62	0.80	0.53	0.548	7
126 Կոնգո	55.1	79.5	63	727	0.44	0.74	0.33	0.502	29
Մարդկային զարգացման ցածր մակարդակ (127-162)									
134 Չինիի	52.4	48.8	52	1464	0.46	0.50	0.45	0.467	-4
146 Սնգոլա	45.0	42.0	23	3,179	0.33	0.36	0.58	0.422	-44
162 Սիերա Լեոնե	38.39	32.0	27	448	0.22	0.30	0.25	0.258	0

Աղյուսակ 1 Հայաստանի կարգը այլ երկրների շարքում ըստ ՄՏՀ-ի²

¹ ՄՏՀ հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է տեխնիկական ցուցման մեջ: Տես՝ Մարդկային զարգացման զեկույց 2001: Օրսֆորդ, Նյու Յորք, 2001, էջ 239-247:

² Մատուսին առաջաման սենսուս 2001: Օրսֆորդ, Նյու Յորք, 2001, էջ 141-144:

Մարդկային զարգացման համաթիվ (ՄԶՀ)

ՄԶՀ-ն՝ որպես մարդկային հնարավորությունների նվաճումների կամ դրանց բացակայության չափանիշ, դասակարգում է երկրները ըստ իրենց քաղաքացիների երկարակեցության, գիտելիքների ձեռք բերման և պատշաճ կենսամակարդակի ապահովման գնահատման:

ՄԶՀ-ն տարեցտարի կարող է փոփոխվել՝ կախված տվյալ երկրի զարգացումներից: Առավել հետաքրքիր է

ՄԶՀ-ի վերլուծությունն ըստ բաղադրիչների, որն ակնհայտորեն ցույց է տալիս, որ տնտեսական բարգավաճման և մարդկային զարգացման միջև կապը մեխանիկական չէ: Օրինակ, Օմանը և Հայաստանը, որոնք ըստ ՄԶՀ-ի երկրների դասակարգման ցուցակում զբաղեցնում են համապատասխանաբար 71-րդ և 72-րդ տեղերը, խիստ տարբերվում են մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով, իսկ Օմանի, մինչդեռ «տարբերությունը» լրացվում է Հայաստանի զարգացած մարդկային կապիտալի (այսինքն առողջապահության և կրթության բարձր ցուցանիշների) հաշվին:


Աղյուսակ 2 Միևնույն ՄԶՀ, փարբեր եկամուտներ, 1999թ.

Երկիր	Նորածնի կյանքի սպասվելիք տևողությունը (տարի)	Զափահաս բնակչության գրագիտության մակարդակը (%)	ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (ԳՀ դոլար)	ՄԶՀ արժեք	Երկրի կարգը
Օման	70.8 (0.76)	70.3/58 (0.76)	13,356 (0.66)	0.747	71
Հայաստան	72.7 (0.80)	98.3/80 (0.80)	2,215 (0.52)	0.745	72


ՄԶՀ կազմող բաղադրիչների արժեքների հանրագումարը տատանվում է 0-ից 1-ի սահմաններում: ՄԶՀ արժեքը ցույց է տալիս այն ճանապարհը, որ պետք է անցնի երկիրը, որպեսզի հասնի առավելագույն հնա-

րավոր արժեքին՝ 1-ի, և հնարավորություն է ընձեռում երկրների միջև համեմատություն կատարել: Յուրաքանչյուր երկրի խնդիրն է ուղիներ որոնել՝ առավել արագ անցնելու այդ ճանապարհը:

Նկար 1 ՄԶՀ բաղադրիչների դինամիկան



Նկար 2 ՄՁՀ վարկանիշի դինամիկան⁴




Ըստ Սարդկային զարգացման զեկույց 2001-ի, Հայաստանը առաջադիմել է 93-րդ տեղից (ՄՁՁ 2000) 72-րդ տեղը՝ ՄՁՀ բոլոր բաղադրիչների կրթական մակարդակի (0.90-0.92) և կյանքի տևողության (0.76-0.80) բավականին բարձր ցուցանիշների և երկրում զրանցված որոշակի տնտեսական աճի շնորհիվ (0.51-0.52): Դրա հետ միասին ըստ ՄՁՀ-ի երկրների դասակարգման ցուցակում ընդգրկված երկրների թիվը 174-ից նվազել է 162-ի և Հայաստանից ավանդաբար ավելի լավ դիրք ունեցող յոթ երկրներ դուրս են մնացել այդ ցուցակից՝

մեխանիկորեն բարձրացնելով Հայաստանի վարկանիշը: Հայաստանի ՄՁՀ-ի դինամիկան բավական անկայուն է և Հայաստանին հաջողվում է մնալ «միջին» շարքերում բավական բարձր մարդկային կապիտալի հաշվին: Սակայն բազմիցս է արտահայտվել անհանգստություն, որ ներկայիս անբավարար ուշադրությունը մարդու սոցիալական, տնտեսական իրավունքներին, զարգացման և ինքնահաստատման հնարավորություններին՝ վտանգի է ենթարկում Հայաստանի համեմատական առավելությունը՝ «մարդկային կապիտալը և ներուժը»:

1. Սարդկային զարգացման համաթվերի հաշվարկները ըստ հայ փորձագետների⁴

Նկար 3 ՄՁՀ բաղադրիչների դինամիկան



³ Սարդկային զարգացման զեկույց 2001: Օքսֆորդ, Լյու Յորք, 2001, էջ 141-144:

⁴ Հայաստանում հաշվարկված տվյալները, որոնք հիմնված են ազգային վիճակագրության վրա, չեն համընկնում Գլոբալ զեկույցում բերված տվյալների հետ:


2. Չենդերային զարգացման համաթիվը (ՉԶՀ)

ՄՁ ցուցանիշների համակարգում տղամարդկանց և կանանց զարգացման մակարդակների անհամասնությունը բնութագրող այս ցուցանիշը տարբեր կերպ է դրսևորվել համաթվի բաղադրիչներում: Սպասվելիք կյանքի տևողության (ՍԿՏ) համաթվերի կին/տղամարդ հարաբերակցությունը 2000թ. համար կազմել է 1.044:1: Կրթական մակարդակի (ԿՄ) համաթվերի հարաբերակցությունը՝ 1.031:1, նույնպես հոգուտ կանանց է: Տնտեսական ակտիվության և տնտեսական գործունեության ոլորտում՝ տնտեսապես ակտիվ բնակչության կին/տղամարդ 0.91:1 հարաբերակցության պայմաններում կանանց եկամուտների հարաբերական մասը կազմել է 0.321, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ճշգրտված ցուցանիշների հարաբերակցությունը՝ 0.45:1, իսկ հավասարաչափ բաշխված եկամուտների համաթիվը կազմել է 0.519:

րաբերակցությունը՝ 1.031:1, նույնպես հոգուտ կանանց է: Տնտեսական ակտիվության և տնտեսական գործունեության ոլորտում՝ տնտեսապես ակտիվ բնակչության կին/տղամարդ 0.91:1 հարաբերակցության պայմաններում կանանց եկամուտների հարաբերական մասը կազմել է 0.321, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ճշգրտված ցուցանիշների հարաբերակցությունը՝ 0.45:1, իսկ հավասարաչափ բաշխված եկամուտների համաթիվը կազմել է 0.519:


Սպասվելիք կյանքի տևողության և միջին տևողության հավասարաչափ բաշխված համաթվերն ըստ ՄՁՀ և ՉԶՀ

Նկար 4




Կրթական մակարդակի և հավասարաչափ բաշխված համաթվերն ըստ ՄՁՀ և ՉԶՀ

Նկար 5




Նկար 6

Ճշգրտված իրական ՀՆԱ-ի (ըստ ՄՁ) և հավասարաչափ բաշխված եկամուտների (ըստ ՉՁ) համաթվերի դինամիկան



Նկար 7

ՄՁ և ՉՁ դինամիկան



3. Կանանց հնարավորությունների ընդլայնման ցուցանիշ⁵


Կանանց հնարավորությունների ընդլայնման ցուցանիշը հիմնականում շեշտը դնում է կանանց հնարավորությունների, քան ընդունակությունների վրա և գնահատում է գենդերային անհավասարությունը քաղաքական, տնտեսական կյանքում հարաբերական մասնակցության և վաստակած եկամուտներում: Թվարկված ցուցանիշներից յուրաքանչյուրի համար հաշվարկվում է հավասար բաշխվածության համարժեքային տոկոսը՝

որպես բնակչության կշռված միջին: Քաղաքական և տնտեսական ոլորտներում կանանց և տղամարդկանց գործունեության հնարավորությունները գնահատող 2000թ. կանանց հնարավորությունների ընդլայնման ցուցանիշը 1999թ. համեմատ ունեցել է դրական տեղաշարժ շնորհիվ կառավարման, վարչական և ղեկավար պաշտոններում և եկամուտներում կանանց մասնաբաժնի մի փոքր ավելացման: Հարկ է նշել, որ ծրագրավորված հետազոտությունների արդյունքները համապատասխան ոլորտներում հնարավորություն կտան առավել ճշգրտորեն հաշվարկել այս ցուցանիշը մոտ ապագայում:

⁵ Ցուցանիշի հաշվարկման մեթոդոստան մանրամասն նեկալաւած է ՄՁԱԶ 2000-ում:


Նկար 8

Կանանց հնարավորությունների ընդլայնման ցուցանիշի բաղադրիչների փոփոխությունը կազմը



Նկար 9

Կանանց հնարավորությունների ընդլայնման ցուցանիշների և նրանց բաղադրիչների դինամիկան 1996-2000թթ.



4. Հայաստանի Մարդկային աղքատության համաթիվը (ՄԱՀ)

Զարգացող երկրների համար ՄԱՀ-1-ը հաշվարկվում է հետևյալ բանաձևով⁷.

$$\text{ՄԱՀ-1} = [1/3 (P_1^3 + P_2^3 + P_3^3)]^{1/3}$$

և ցույց է տալիս ՄԱՀ-ի երեք կարևորագույն բաղադրիչներից զրկվածության աստիճանը.

1. կյանքի տևողություն - P₁-ը բնակչության այն մասն է (%), որը, ենթադրվում է, չի ապրելու մինչև 40 տարեկան:

2. գիտելիքներ - P₂-ը ընթերցանությունից և հեռահաղորդակցություններից մեկուսացվածությունը - 15 և բարձր տարիքի բնակչության շրջանում անգրագետ մասն է (%):

3. կյանքի պատշաճ մակարդակ - P₃-ը կապված է սակավ տնտեսական ապահովվածությամբ պայմանավորված կյանքի ցածր մակարդակի հետ, ներառյալ երեք փոփոխականների միջին թվաբանականը՝ $[P_3=1/3(P_{31}+ P_{32}+ P_{33})]$, որտեղ՝

⁷ Մառնևաիմ սառաժաման սենուս 2000. Օսսֆոոո. էո 272:

P₃₁-ը անվտանգ խմելու ջրի մատչելիությունից զուրկ բնակչությունն է (%),


P₃₂-ը բժշկական ծառայություններից օգտվելուց զուրկ բնակչության մասն է (%), իսկ

P₃₃-ը՝ մինչև 5 տարեկան որոշակի կամ խիստ արտա-հայտված թերքաշով երեխաների տեսակարար կշիռը:

Մեր նախորդ հաշվարկներում հիմք են ընդունվել փոր-ձագետների գնահատականները: Վերջին տարիների դիտարկումների արդյունքներով ճշգրտվել են նաև նա-խորդ տարիների համար բերված ցուցանիշի արժեք-ներն ու ստորև բերված ենք ՄԱՀ-1 համաթվի ճշգրտված հաշվարկային արժեքները:

	P ₁ , %	P ₂ , %	P ₃₁ , %	P ₃₂ , %	P ₃₃ , %	P ₃ , %	ՄԱՀ-1
1996	0.11	1.2	11.9	21.9	2.9	12.23	8.48
1997	0.10	1.2	15.0	20.0	3.0	12.67	8.78
1998	0.09	1.2	14.0	19.5	4.0	12.50	8.67
1999	0.08	1.2	7.3	18.8	2.6	9.60	6.63
2000	0.08	1.2	7.2	18.7	2.6	9.50	6.59

Նկար 10 ՄԱՀ-1 բաղադրիչների մասնաբաժինը համաթվում



Առաջարկվում է P₃ b բաղադրիչի դեպքում թերքաշով փոխարինել թերսնունով, քանի որ վերջինս ավելի հեշտ է հաշվառել և կախված չէ տարածքային կամ ազ-գային առանձնահատկություններից:

Թերքաշության դեպքում կոնկրետ չափումներ կա-տարվում են ոչ պարբերաբար և որոշակի խնդիր են ներկայացնում շատ երկրների համար:

5. Տեխնոլոգիական նվաճման համաթիվը (ՏՆՀ)

ՏՆՀ-ն ներկայացվել է առաջին անգամ Գլոբալ ՄՁԶ 2001թ. և բնութագրում է երկրների առաջընթացը տեխ-նոլոգիաների ստեղծման և տարածման, ինչպես նաև մարդկանց հմտությունների զարգացման համար հիմ-քերի ստեղծման գործում: ՏՆՀ-ն չափում է նվաճումնե-րը չորս ուղղություններով (աղյուսակ 3).

- ⊗ **տեխնոլոգիաների ստեղծում.** բնորոշվում է մեկ շնչին ընկնող՝
 - արտոնագրերի քանակով, որ տրվել են ռեզիդենտներին,

- արտերկրներից ստացվող ռոյալթիներով և լիցենզավճարներով,
- ⊗ **վերջին նորարարությունների տարածումը.** չափվում է մեկ շնչին ընկնող՝
 - Ինտերնետի հանգույցի քանակով,
 - բարձր և միջին տեխնոլոգիաների արտահանման բաժնով ընդհանուր արտահանման մեջ,
- ⊗ **հին նորարարությունների տարածում.** չափվում է մեկ շնչի հաշվով՝
 - հեռախոսների (հիմնական և բջջային) քանակով,
 - էլեկտրաէներգիայի սպառմամբ,
- ⊗ **մարդկային հմտություններ.** չափվում է 15 և ավելի տարեկան բնակչության շրջանում՝
 - ուսուցման տարիներով,
 - միջին և բարձրագույն մասնագիտական կրթահամակարգերում ընդհանուր ընդգրկվածությամբ:

Այս չափումների յուրաքանչյուր ցուցանիշի համար դիտարկվող առավելագույն և նվազագույն արժեքները (այն երկրների համար, որոնք տվյալներ ունեն) ընտր-

վել են որպես «նպատակներ»: Յուրաքանչյուր ցուցանիշի արժեքը բնութագրվում է իբրև 0-ի և 1-ի միջև արժեք հետևյալ բանաձևի կիրառմամբ.

$$\text{ցուցանիշի համաթիվ} = \frac{\text{իրական արժեք} - \text{դիտարկվող նվազագույն արժեք}}{\text{դիտարկվող առավելագույն արժեք} - \text{դիտարկվող նվազագույն արժեք}}$$

Աղյուսակ 3 Տեխնոլոգիական նվաճման համաթվի հաշվարկը Հայաստանի համար

ՏՆՀ ցուցանիշները ըստ բաղադրիչների	1999	2000
Ռեզիդենտներին տրված արտոնագրերը (մլն. մարդ հաշվով)	0.198	0.162
Արտոնագրերի համաթիվ	0.054	0.044
Ստացված ռոյալթիները և լիցենզավճարները (ԱՄՆ դոլար, 1000 մարդու հաշվով)*	139.9	144.6
Ռոյալթիների և լիցենզավճարների համաթիվ	0.513	0.530
1. Տեխնոլոգիաների ստեղծման համաթիվ	0.284	0.287
Ինտերնետային հանգույցներ (1000 մարդու հաշվով)	16.1	17.1
Ինտերնետային հանգույցների համաթիվ	0.069	0.074
Բարձր և միջին տեխնոլոգիաների արտահանում (% ապրանքների ընդհ. արտահանումից)	0	0**
2. Վերջին նորարարությունների տարածման համաթիվ	0.035	0.037
Չեռախոսներ (հիմնական և բջջային, 1000 մարդ հաշվով)	144.7	143.3
Չեռախոսի համաթիվ	0.731	0.730
Էլեկտրաէներգիայի սպառում (կվտ/ժ, մեկ շնչի հաշվով)	1503	1657
Էլեկտրաէներգիայի սպառման համաթիվ	0.734	0.750
3. Հին նորարարությունների տարածման համաթիվ	0.732	0.740
Ուսուցման տարիներ (15 և ավելի տարեկանների հաշվով)	10	10
Ուսուցման տարիների ցուցանիշ	0.821	0.821
Բարձրագույն կրթահամակարգում ընդհանուր ընդգրկվածությունը (17-22տ.)	0.153	0.146
Բարձրագույն կրթահամակարգում ընդգրկվածության ցուցանիշ	0.547	0.531
4. Մարդկային հմտությունների համաթիվ	0.684	0.676
Տեխնոլոգիական նվաճումների համաթիվ	0.434	0.435

* Առանց լիցենզավճարների, որոնք ներկայումս չեն հաշվառվում:

** Համաձայն ՀՀ ԱԿԾ տվյալների, բարձր և միջին տեխնոլոգիաների արտահանումը հավասար է 0-ի, սակայն փորձագետները այլ տվյալներ են ներկայացրել (աղյուսակ 4):

6. Բնապահպանական գործոնը որպես ՄՁՀ-ի բաղադրիչ

Հայ գիտնականները 1995թ. ՄՁԱԶ-ում ներկայացրել են Մարդկային կայուն զարգացման համաթիվը (ՄԿԶՀ), որը և ներկայացվել է 1997թ. ապրիլի 16-18-ին Մինսկում կայացած անցումային երկրների կայուն մարդկային զարգացմանը նվիրված գիտաժողովում (հաշվարկի մեթոդոլոգիայի մանրամասները տես ՄՁԱԶ -1998, հավելված III), 1999թ., մայիսին Բաքվում, 2001թ. Բանգկոկում: Մարդու տնտեսական գործունեության ցանկացած մակարդակ ենթադրում է շրջակա միջավայրի վիճակի փոփոխություն՝ որպես նրավրա բացասական ներգործության արդյունք, ինչը և պահանջում է նորմալ կենսամիջավայրի ապահովմանն ու բարելավմանը նպատակաուղղված միջոցառումների համակարգի մշակում: Ենթադրվում է, որ շրջակա բնական միջավայրի իրավիճակի (A) և բնապահպանության ոլորտում պետական քաղաքականության (B) բնորոշիչների ինտեգրալային ցուցանիշը կարող է իրատեսորեն համարվել մարդկային կայուն զարգացման համաթվի չորրորդ համարժեք բաղադրիչը: Այդ

դեպքում ՄԿԶՀ-ը հավասար կլինի կյանքի տևողության, կրթական մակարդակի, ճշգրտված ՀՆԱ-ի և բնապահպանության գործոնի համաթվերի գումարի մեկ քառորդին:


2000թ. համար Բնապահպանական համաթվի բաղադրիչները ունեցել են հետևյալ թվային արժեքները՝

- տարածքի (երկրի) բնապահպանական վիճակի ընդհանրացված ցուցանիշը՝ $A = -0.303$,
- բնապահպանական գործունեության ընդհանրացված ցուցանիշը՝ $B = -0.304$, իսկ
- բնապահպանական գործոնի համաթիվը՝ $P_e = -0.303$: ՄԿԶՀ դինամիկան հետևյալն է.

	1990	1997	1998	1999	2000
Pe	-0.362	-0.292	-0.294	-0.301	-0.303
ՄՁՀ	0.831	0.728	0.721	0.729	0.730
ՄԿԶՀ	0.533	0.475	0.479	0.472	0.472

2000թ. համար մարդկային զարգացման համաթվերի բաղադրիչների փոկոսաբաժինները

Նկար 11



Վերոհիշյալ համաթվերի հետ միասին մոտ 120 երկրներում պատրաստվող ՄՁԱԶ-ները, իրենց հերթին, առաջարկում են ՄՁՀ-ի նոր տարբերակներ՝ ուշադրությունը սևեռելով այս կամ այն խնդրին: Օրինակ,

- Մարդկային զրկվածության չափանիշ (Նեպալ, 1998)
- Մարդկային ազատության համաթիվ (Տաջիկստան, 2000)
- Մարդկային կառավարման համաթիվ (Արևելյան Ասիա, 1999)
- Մարդկային անվտանգության համաթիվ (Չիլի, 1998)

- Սոցիալական պատասխանատվության համաթիվ
- Իրավունքների վրա հիմնված զարգացման ցուցանիշներ կյանքի որակի համաթիվ (Կոլումբիա)
- Սոցիալական զարգացման համաթիվ (Հնդկաստան, 1999)
- Վարակի ռիսկի համաթիվ (Արգենտինա)
- Խոցելիության համաթիվ (Հայաստան, 1995-1996)
- Մարդկանց մասնակցության համաթիվ (Քոստա Ռիկա, 1997)
- Մարդկային խոցելիության համաթիվ (Մալդիվս, 1998):

«Անցման ներկա փուլի սոցիալ-տնտեսական առաջնահերթ հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»



ՀԱՎԵԼ

փորձագիտական հարցման մի քանի տվյալներ և արդյունքներ

Անցման ներկա փուլում ՀՀ կառավարության առջև կանգնած կարևորագույն մակրոտնտեսական հիմնախնդիրների համակարգված ամբողջական ցանկի կազմման փորձ արվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտում: Հետազոտությունում համատեղ օգտագործվել են տնտեսական հիմնախնդիրների ցուցակագրման մի քանի մոտեցումներ, հավաքագրված ցանկերի հիման վրա ձևավորվել է հիմնախնդիրների վերջնական բազմությունը, այն համակարգվել և ներկայացվել է 981 հիմնախնդիր պարունակող (191-ը մարզերից) ամբողջական ցանկ-աղյուսակի տեսքով:

«Անցման ներկա փուլի սոցիալ-տնտեսական առաջնահերթ հիմնախնդիրները ՀՀ-ում» փորձագի-

տական հարցման նպատակը ՀՀ-ում անցման արդի շրջանի կարևոր սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների հնարավոր լրիվ ցանկի կազմումը, առաջնայնությունների որոշումը և համակարգված ավտոմատացված շտեմարանի (բանկի) ստեղծումն է՝ ՀՀ զարգացման ծրագրերի մշակման ժամանակ դրանք օգտագործելու համար: Հարցաթերթի չորս բաժիններից վերջինը նախատեսված էր փորձագետների մասին տվյալներ ստանալու և մասնագետներին ըստ այդ բնութագրերի խմբավորելու համար:

Ընտրանքը բաղկացած է 107 փորձագետներից և տրոհվում է երկու խմբի. առաջին անկախ մասնագետներ (45 հոգի), և երկրորդ՝ իրենց կազմակերպությունների ընդհանրացված կարծիքն արտահայտողներ (62 կազմակերպություն) (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1 Փորձագիտական հարցման ընտրանքի կառուցվածքը

Մասնակիցների խմբեր	Մասնակիցների թիվը	Մասը ընտրանքում (տոկոս)
1. Անկախ փորձագետներ	45	42.1
2. Կառավարման համակարգ	26	24.3
3. Բանկեր	8	7.5
4. Ձեռնարկություններ	19	17.7
5. Հասարակական-քաղաքական կազմակերպություններ	9	8.4
Ընդամենը	107	100

Հարցաթերթի երեք հիմնական բաժիններում ներկայացնելով ՀՀ տնտեսության զարգացման ուղղությունների և ընդհանուր ու ճյուղային շուրջ 160 խոշորացված (որոշ առումով՝ համատեղված) հիմնախնդիրներ, փորձագետներին առաջարկվել է լրացումներ կատարել ցանկում և գնահատել յուրաքանչյուր հիմնախնդրի կարևորությունը:

1 բալ - ոչ կարևոր հիմնախնդիր, 2 - որոշակի կարևորության, 3 - կարևոր, 4 - խիստ կարևոր, 5 - բացառիկ կարևորություն: Եթե փորձագետը հնարավորություն չունի գնահատել հիմնախնդիրը, օգտագործում է

6 բալ նշումը: Ձարգացման ուղղությունների առաջնայնությունը գնահատելու համար առաջարկվել է կիրառել այլ մոտեցում՝ հաջորդական համարակալման (ստորակարգման) սկզբունքը:

Հարցաթերթի առաջին՝ «Մակրոտնտեսական հիմնախնդիրների առաջնայնության գնահատումը» բաժնում պահանջվել է թվարկված 13 մակրոտնտեսական հիմնախնդիրները ստորակարգել ըստ դրանց առաջնայնության: Առաջին երեք տեղերը (ըստ փորձագետների տված համարաթվերի միջինացված մեծության) գրավել են հետևյալ հիմնահարցերը:



1. Ժողովրդավարական հասարակարգի և իրավական պետության ձևավորում (ըստ առաջին խմբի՝ 3,4, ըստ երկրորդի՝ 3,2),
2. Տնտեսության իրական հատվածի (եներգետիկա, արդյունաբերություն, գյուղատնտեսություն և այլն) զարգացում, չաշխատող ձեռնարկությունների վերագործարկում, արտադրանքի մրցունակության բարձրացում (համապատասխանաբար՝ 4,0, 3,7 և 4,4),
3. Ազատականացված շուկայական տնտեսակարգի ձևավորում, նվազագույն պետական միջամտություն տնտեսական գործունեությանը (5,1, 6,0 և 4,3):

Փորձագետների կողմից առավել քիչ կարևորված հիմնախնդիրների ցանկում վերջին երեք տեղերը գրավել են ստորև բերվող հիմնահարցերը.

11. Ներքին շուկայի պաշտպանություն արտասահմանյան անորակ արտադրանքից, սեփական արտադրողների նպատակամետ հովանավորություն (7,0, 7,3 և 6,8),
12. Ազգային գաղափարախոսության ձևավորում, քարոզչություն, կիրառում, Հայաստան-Ղարաբաղ-Սփյուռք բազմակողմ կապերի ամրապնդում (7,7, 7,0 և 8,4),
13. Զարգացած երկրների և միջազգային կազմակերպությունների հետ կապերի ամրապնդում և ընդլայնում, տնտեսական սերտաճման ակտիվ քաղաքականության իրականացում, արտոնյալ վարկերի ստացում, օտարերկրյա ներդրումների ներգրավում (7,8, 7,6 և 7,9):

Կառուցվածքային քաղաքականության ձևավորման տեսանկյունից կարևորվում է փորձագետների կարծիքը ՀՀ տնտեսության ոլորտների առաջնայնությունների վերաբերյալ: Հարցաթերթում թվարկված 17 ոլորտներից (արտադրության ճյուղեր, ծառայություններ, գիտություն և այլն) իր կարևորությամբ առաջին տեղը (վերը նշված 5-բալային մոտեցմամբ) տրվել

է էներգետիկային, երկրորդ տեղում է գյուղատնտեսությունը, երրորդ և չորրորդ տեղերը կիսում են սննդի արդյունաբերությունը և կրթությունն ու կադրերի պատրաստումը: Կարևորության գնահատականով վերջինին մոտ է հաջորդ տեղը գրաված գիտության բնագավառը:

Ստացված գնահատականները հետաքրքրություն են ներկայացնում առաջին հերթին այն տեսանկյունից, որ զգալիորեն հակասում են հաճախակի արտահայտվող ավանդական կարծիքներին: Փորձագետները ցածր են գնահատել զբոսաշրջության զարգացման հեռանկարները Հայաստանում (3,4, 3,1 և 3,6 բալ): Ի հակակշիռ նախկինում մեքենաշինությունը տնտեսության ամենաառաջատար ճյուղ ընդունելու գաղափարախոսությանը, այդ ճյուղի զարգացման կարևորությունը ամենից ավելի ցածր է գնահատվել փորձագետների կողմից (3,0, 2,6 և 3,3 բալ): Ուշադրության է արժանի գյուղատնտեսությանը, սննդի, ապա և շինանյութերի արդյունաբերությանը տրվող գերակայությունը (վերջինի համար՝ 3,5 բալ ինչպես ընտրանքում, այնպես և խմբերում), ինչը ըստ երևույթին բացատրվում է տեղական հումքի առկայությամբ, եթե, իհարկե, լուծվեն նաև արտադրանքի մրցունակության և արտահանման շուկաների խնդիրները:

Հարցաթերթի երրորդ՝ «ՀՀ տնտեսության ոլորտներում առկա հիմնախնդիրները և դրանց կարևորության գնահատումը» բաժնում թվարկված են ավելի քան 120 հիմնախնդիրներ՝ դրանց կարևորությունը 5-բալանոց սանդղակով գնահատելու առաջադրանքով: Առաջին մի քանի տեղերը գրաված հիմնախնդիրները ներկայացնում են փորձագետների ընդհանրացված պատկերացումը տվյալ բնագավառում հիմնախնդիրների «ամբողջական» կարևորության մասին (Աղյուսակ 2):

ՀՀ տնտեսության ոլորտների հիմնախնդիրների կարևորության փորձագիտական միջինացված գնահատականները (5-բալանոց սանդղակով, ըստ կարևորության նվազման)

Աղյուսակ 2

Ոլորտներ	Կարևորության գնահատական (բալ)
Պետական կառավարման համակարգ	3.68
Հարկաբյուջետային քաղաքականություն	3.66
Տնտեսական քաղաքականություն	3.63
Բնապահպանություն	3.63
Արտադրական ոլորտ	3.61
Սոցիալական հիմնախնդիրներ	3.57
Տեղական ինքնակառավարման համակարգ	3.49
Դրամավարկային քաղաքականություն և բանկային համակարգ	3.48
Արտաքին տնտեսական կապերի բնագավառ	3.26



Առանձին բնագավառներում ըստ փորձագետների կարծիքի (5-բալանոց սանդղակով գնահատումների) առավել կարևորություն ունեցող հիմնախնդիրների տեսակետից, օրինակ, **պետական կառավարման համակարգի համար** հարցաթերթում թվարկված 13 հիմնախնդիրներից առավել կարևորվել են հետևյալները (փակագծում բերված թվերը ներկայացնում են ամբողջ ընտրանքի, անհատ փորձագետների և կազմակերպությունների խմբային միջին գնահատականները բալերով)։

- պետական պաշտոնյաների օրինազանցության, կաշառակերության, կոռուպցիայի, պաշտոնական դիրքի չարաշահման, բյուրոկրատական քաշքշուկի պատճառների ու գործոնների բացահայտում, հնարավոր վերացում (4,1, 3,8 և 4,4 բալ),
- դատախարակական համակարգի հետագա բարեփոխում, արդար դատավարության ապահովում, հսկելիություն և թափանցիկություն, վճիռների անվերապահ կատարում, դատարանի և օրենքի նկատմամբ հարգանքի և վստահության ստեղծում, օրինազանցության պատժելիություն ամենուրեք և առավել ևս դատախարակական համակարգում (4,1, 3,8 և 4,3 բալ),
- իրավական հասարակարգի ստեղծում, գործունեության բոլոր հատվածների լիարժեք իրավական ապահովում, օրենքի գերակայության սկզբունքի իրականացում՝ ամենուրեք և յուրաքանչյուրի համար (4,0, 3,8 և 4,1 բալ)։

Ջարկաբյուջետային բնագավառի հիմնախնդիրներ.

- բյուջետային, հարկային և մաքսային համակարգերում պաշտոնական օրինազանցությունների ու կաշառակերության դեմ գործուն պայքարի միջոցառումների մշակում և ներդրում (3,9, 3,5 և 4,1 բալ),
- հարկային օրենքների անհարկի փոփոխությունների բացառում (3,9, 3,8 և 3,9 բալ),
- պետբյուջեի ծախսային առաջնային հողվածների անվերապահ կատարում, այլ հողվածները չկատարելու բացասական հետևանքների համար պատասխանատվության սահմանում (3,8, 3,7 և 4,0 բալ)։

Տնտեսական քաղաքականության հիմնախնդիրներ.

- հարկային բեռի նպատակահարմար չափի որոշում և տարբերակում ռազմավարական նշանակության ճյուղերի առաջընթաց զարգացում ապահովելու նպատակով (4,0, 3,7 և 4,2 բալ),
- ռազմավարական նշանակության ճյուղերում ներդրումների ավելացման, առաջավոր տեխնոլոգիաների օգտագործման, ինովացիոն գործունեության, արտաքին կապերի ակտիվացման մեխանիզմների կիրառում (3,9, 3,9 և 3,8 բալ)։

Բնապահպանության բնագավառ.

- կարևորագույն բնապահպանական հիմնախնդիրների (Սևան, հողերի էրոզիա, սողանքներ, վերականգնում և այլն) լուծման նպատակային համալիր ծրագրերի մշակում և շարունակական ճշգրտում, առաջնահերթ միջոցառումների իրականացում (4,2, 3,9 և 4,5 բալ),
- ջրային ռեսուրսների խնայողական օգտագործում, վերականգնման ապահովում (4,0, 3,9 և 4,2 բալ),
- բնական պաշարների ուսումնասիրության, նպատակահարմար օգտագործման և բնապահպանության արդյունավետ քաղաքականության մշակում և իրականացում (3,8, 3,8 և 3,8 բալ)։

Արտադրական ոլորտի համար թվարկված 20 հիմնախնդիրներից կարևորվել են.

- օտարերկրյա ներդրումների պետական խթանումը, ինվեստիցիոն գրավիչ միջավայրի ստեղծումը (4,1, 3,7 և 4,3 բալ),
- ներմուծման փոխարինման և ներքին շուկայի պահանջները սեփական արտադրության ապրանքներով բավարարելու ծրագրերի իրականացումը (3,9, 3,6 և 4,1 բալ),
- փոքր և միջին ձեռներեցության խրախուսումը (առաջին հերթին՝ աղետի գոտում) (3,9, 3,7 և 4,0 բալ)։

Սոցիալական ոլորտի կարևորագույն հիմնախնդիրների շարքն են դասվել.

- աղքատության դեմ պայքարը, կյանքի նվազագույն պայմանների ապահովումը (սպառման նվազագույն զանբյուղ) (4,3, 4,2 և 4,4 բալ),
- բնակչության կենսամակարդակի բարձրացումը, միջին խավի ձևավորումը (3,9, 3,7 և 4,1 բալ),
- կենսաթոշակների չափի ավելացումը, կենսաթոշակային ապահովագրման կամավոր ձևերի զարգացումը (3,9, 3,8 և 3,9 բալ),
- կրթության, գիտության, մասնագիտական բարձր որակավորման և ուսումնառության նկատմամբ հետաքրքրության վերականգնումը երիտասարդության շրջանում (3,9, 3,8 և 3,9 բալ)։

Տեղական ինքնակառավարման բնագավառում որպես կարևորագույն առանձնացվել են հետևյալ հիմնախնդիրները.

- պետական կենտրոնացված և ապակենտրոնացված կառավարման նպատակահարմար հարաբերակցության որոշում, տեղական ինքնակառավարման ֆունկցիաների հստակեցում և օրենսդրական ձևակերպում, իրականացման ապահովում (3,7, 3,5 և 3,9 բալ),



- տարածաշրջանների բնական ռեսուրսների և տնտեսական առավելությունների բացահայտում, գնահատում, օգտագործման ծրագրերի մշակում, միջոցների հայթայթում, ըստ առաջնայնությունների իրականացում (3,7, 3,6 և 3,7 բալլ):

Դրամավարկային քաղաքականության և բանկային համակարգի կարևորագույն հիմնախնդիրներն են.

- վարկային շուկայի զարգացումը, ռեսուրսների ավելացումը, ներքին և արտաքին ներդրումների խթանումը, ինվեստիցիոն գրավիչ մթնոլորտի ստեղծումը (3,8, 3,6 և 3,9 բալլ),
- ազգային դրամի կայունության ապահովումը, առանցքային արտարժույթների հետ ճիշտ հարաբերակցության սահմանումը, անհրաժեշտ պահուստների հիմնավորումը և ձևավորումը, դրամի զանգվածի կարգավորումը (3,7, 3,8 և 3,7 բալլ),
- պետական պարտքի արդյունավետ կառավարումը և նորմատիվային սահմանափակումը, արտաքին պարտքի աճի և դրա հաշվին տնտեսության զարգացման տեմպերի նպատակահարմար հարաբերակցության ապահովումը, պետական պարտատոմսերի թողարկման և ֆինանսավորման այլ աղբյուրների ճիշտ ընտրությունը և օգտագործումը, տեղեկատվության թափանցիկությունը (3,7, 3,7 և 3,7 բալլ):

Եվ վերջինը, արտաքին տնտեսական կապերի բնագավառում կարևորագույն հիմնախնդիրներն են.

- արտահանման ուղղվածություն ունեցող արտադրությունների ու ծառայությունների զարգացումը խթանող գործուն միջոցառումների կիրառումը, արտահանման ու իրացման գործընթացներին աջակցումը (3,8, 3,7 և 3,9 բալլ),

- ՀՀ բացարձակ և համեմատական առավելությունների և դրանք իրացնելու հնարավորությունների ու ուղիների բացահայտումն ու գնահատումը, արտաքին տնտեսական կապերի զարգացման պետական հայեցակարգի, քաղաքականության, մանրամասնեցված ծրագրերի մշակումը (3,7, 3,8 և 3,7 բալլ),
- զբոսաշրջության զարգացման և աջակցման պետական քաղաքականության, ընթացիկ և հեռանկարային ծրագրերի մշակումը, զբոսաշրջության մասին օրենքների փաթեթի ընդունման արագացումը (3,5, 3,3 և 3,7 բալլ),
- Սփյուռքի ազգային, մշակութային, մասնագիտական, ձեռնարկատիրական կառույցների ցանցի առավելագույն օգտագործումը՝ ՀՀ տնտեսության մասին արտերկրում հարկավոր տեղեկատվություն հաղորդելու և ստանալու, կապերի ընդլայնման, քարոզչություն իրականացնելու նպատակով (3,5, 3,4 և 3,5 բալլ):

Բերված համառոտ տեղեկատվությունը, հասկանալի է, լրիվ պատկերացում չի կարող տալ ստացված արդյունքների մասին: Անհրաժեշտ է ծանոթանալ հիմնախնդիրների ամբողջական ցանկին, հարցաթերթում ներկայացված բոլոր հիմնախնդիրներին տրված կարևորության գնահատականներին, վերլուծել դրանք ոչ միայն փորձագետների ողջ ընտրանքի կամ երկու խոշորացված խմբերի, այլ նաև անհատ անձանց և կազմակերպությունների մասնակիցների ենթախմբերի առումով:

**ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության
Տնտեսագիտական
հետազոտությունների ինստիտուտ**

Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման մակարդակը



ՀԱՎԵԼ

(Հափվածներ ՄԱԶԾ «Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման մակարդակը» զեկույցից)

Հազարամյակի գագաթաժողովը, ՄԱԿ-ի կողմից երբևէ կազմակերպված մեծագույն իրադարձությունը, վերահաստատեց ստանձնած պարտավորությունները, նպատակները, որ վեր էին հանվել և հաստատվել ՄԱԿ-ի նախորդ համաշխարհային համաժողովներում գերակայությունը տալով մինչև 2015թ. աղքատության կիսով չափ կրճատմանը՝ որպես համայն աշխարհի մեծագույն փորձության:

Ի պատասխան ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ տկն. Կատիցա Ցեկալովիչի կողմից արված մի առաջարկի, Հայաստանը զեկույց պատրաստեց Հազարամյակի միջազգային նպատակների վերաբերյալ: Տեղեկատվությունն ու վերլու-

ծական աշխատանքներն իրականացվեցին ՄԶ փորձագետների ակումբի կողմից՝ հիմնվելով ՄԱԿ-ի տեղական գրասենյակի կողմից պատրաստված զեկույցագրերի վրա և կառավարության ու համապատասխան մարմինների հետ խորհրդակցելով: ՄԶ փորձագետների ակումբն ընդգրկում է բոլոր այն հեղինակներին, որոնք սկսած 1995թ.-ից մասնակցել են ՄՁԱԶ-ների պատրաստմանը: Ձեկույցում տեղ են գտել պաշտոնական վիճակագրական տվյալներ. փորձագետների հաշվարկները տրված են փակագծերում: Այս զեկույցում ներկայացված և ամփոփված նպատակներն ու խնդիրներն համընդհանուր են Հազարամյակի նպատակների իրականացման ուղղությամբ առաջընթացը նշելու համար:

Նպատակներ	Ցուցանիշներ	1990	2000	2015
Գեոդերային հավասարություն Վերացնել գեոդերային անհավասարությունը -տարրական կրթության մեջ -միջնակարգ կրթության մեջ	Աղջիկների և տղաների հարաբերակցությունը, % տարրական կրթություն միջնակարգ կրթություն	103.4 102.5	96.2 106.1	100 (2005)
ՄԻԱՎՁԻԱԸ	ՄԻԱՎՁԻԱԸ տառապող մարդիկ	1988 մինչև 1995 - երեք դեպք	135 (81%-ը 20-39 տարեկան), 75% տղամարդիկ և 25% կանայք (գրանցված) 1500 (ըստ գնահատումների)	
Մանկական մահացություն Կրճատել մինչև 1 տարեկան երեխաների մահացությունը 2/3-ով Կրճատել մինչև 5 տարեկան երեխաների մահացությունը 2/3-ով	Մանկական մահացությունը մինչև 1 տարեկան երեխաների մոտ (1000 կենդանածինների հաշվով) մինչև 5 տարեկան երեխաների մահացության տոկոսը (1000 կենդանածինների հաշվով)	22-24 23.8 29.3-ԱՅԿ	14-15 (1999) 19.2 (1999) Երկրի նպատակը 2000թ. համար 15.9 (պաշտոնական) 19.6 (ԱՅԿ)	12-13 8 10 (ԱՅԿ)

Նպատակներ	Ցուցանիշներ	1990	2000	2015
Մայրական մահացություն Կրճատել մայրական մահացության մակարդակը 3/4-ով	Մայրական մահացությունը (100.000 ծնունդներից)	40.1	35.6 (1999)	10
Կենցաղային հիմնական հարմարությունների ապահովում Կիսով չափ կրճատել ապահով խմելու ջրի բացակայությունից տառապող մարդկանց թիվը	Խմելու ջրով մշտապես ապահովված բնակչության տեսակարար կշիռը (%)	81.7	86.0	91.0
Համընդհանուր կրթություն Հասնել տարրական կրթության համընդհանուր ընդգրկվածության	Տարրական դասարաններում զուտ ընդգրկվածության տոկոսը	95.2	81.6 (2000)	100
Ծայրահեղ աղքատություն Կիսով չափ կրճատել ծայրահեղ աղքատության մեջ ապրող մարդկանց թիվը	Ընտանեկան նպաստների պետական համակարգում (ԸՆՀ) բնակչության թիվը ներառյալ ԸՆՀ համակարգում ընդգրկված ընտանիքների տեսակարար կշիռը, (%)	1998/99 884.400 27.2	773.000 24	
Սով Կիսով չափ կրճատել սովից տառապող մարդկանց տեսակարար կշիռը	Օրական 2100 կկալ սննդի էներգիայի նվազագույն մակարդակից քիչ սպառող բնակչության տեսակարար կշիռը (%)	1996 27.7	1998/99 22.9	10-12 (98/99-ի կեսը)
Շրջակա միջավայր Իրականացնել կայուն զարգացման ազգային ռազմավարությունը (որը մինչև 2015թ. կվերականգնի շրջակա միջավայրի ռեսուրսների կորուստները)	Կայուն զարգացման ազգային ռազմավարության մշակում և իրականացում	Ոչ	Ոչ	Այո
ՄԻԱՎ/ՉԻԱՐ	ՄԻԱՎ/ՉԻԱՐ տառապող մարդիկ	1988 մինչև 1995 - երեք դեպք	135 (81%-ը 20-39 տարեկան), 75% տղամարդիկ և 25% կանայք (զրանցված) 1500 (ըստ զնահատումների)	

Զարգացող երկրների համար ընտրված Հազարամյակի նպատակները ոչ բոլոր դեպքերում են համարժեք կերպով գնահատում երկրում իրականացող զարգացումները: Հայաստանը իրագործել է կրթության համատարած մատչելիությանը և գենդերային հավասարությանը վերաբերող նպատակները: Ինչ վերաբերում է մանկական և մայրական մահացությանը և ապահով խմելու ջրի հասանելիությանը, ապա սրանցով Հայաստանը շատ է հետ մնում զարգացած երկրներից. այնուհանդերձ, դրանք միանգամայն բավարար են համեմատած այլ զարգացող երկրների հետ: Այս դեպքում, Հազարամյակի նպատակների հետ մեկտեղ զեկույցը փորձել է ընդլայնել հարցերի շրջանակը և նշել է առն-

վազն երկու նպատակ, որոնք ավելի մոտ են Հայաստանին և ավելի շատ են համապատասխանում երկրի կարիքներին:

Շուկայական տնտեսությանը անցում կատարելու հետևանքով համեմատաբար ավելի բարձր կենսամակարդակի և սոցիալական երաշխիքների կտրուկ կրճատման առումով Հայաստանը բացառություն է: Բարեկեցիկ կյանք ունենալու հետ կապված ոգևորությունն ու հույսերը կարծես ի չիք են դառնում: Անհրաժեշտ է մշակել զարգացման նոր հայեցակարգ, որի կենտրոնում կլինի մարդը՝ իր խնդիրներով: Նման մոտեցումը, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, մեծապես անտեսվել է անցման տարիների ընթացքում:

Միաժամանակ, պետք է արձանագրել, որ 10 տարվա տևողությամբ բարեփոխումները ընդհանուր առմամբ չեն կարողացել ապահովել բնակչության բարեկեցությունը:

Հայաստանը 21-րդ դար մտավ բազմաթիվ հիմնախնդիրների ծանր բեռով, որոնք բնորոշ են միջին և նույնիսկ ցածր մարդկային զարգացման մակարդակ ունեցող երկրներին: Թռիչքային զարգացում ապրելու համար, մեր կարծիքով, Հայաստանը պետք է կենտրոնացնի իր ջանքերը սոցիալական համերաշխության հաստատման վրա, որն իր մեջ կներառի տնտեսական բարեփոխումները և կդառնա բարգավաճման գործիք: Կարևոր է, որ հասարակության մեջ հաստատվի և գերիշխի բարյացակամության և փոխադարձ հարգանքի մթնոլորտը՝ հատկապես սոցիալապես խոցելի խմբերի, ծերերի, կարիքավոր ընտանիքների նկատմամբ: Մենք կցանկանայինք նաև միջազգային զարգացման նպատակներով և հատկապես Հազարամյակի գազաթափոցի կողմից առաջնորդված գաղափարախոսության հիման վրա կառուցել զարգացման տեսակետ, օգտագործելով հիմնականում առկա ռեսուրսները:

Մենք համոզված ենք, որ տնտեսական զարգացման, օրենքի գերակայության և ժողովրդավարությ-

յան հետ մեկտեղ հավասար կարևորություն պետք է տրվի զարգացման շարժառիթներին, տարբեր մակարդակներում հստակ նշված նպատակներին, խաղի կայուն և արդար կանոնների հաստատմանը, հասարակության մեջ վերնախավի և իշխանությամբ օժտված խմբերի, ֆինանսական և գիտական շերտերի միջև և ընդհանրապես ամբողջ հասարակության մեջ ներդաշնակ հարաբերությունների հաստատմանը, խնայողական սպառմանը, զարգացման դրական արդյունքների հավասար բաշխմանը, հնարավորությունների ընդլայնմանը՝ թե եկամուտների և թե առողջապահական ծառայությունների և կրթության մատչելիության առումով, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանությանը: Մենք հավատում ենք, որ շոշափելի արդյունքներ գրանցելու համար անհրաժեշտ է, որպեսզի մոտ ապագայում կառավարության, քաղաքացիական հասարակության և նվիրատուների ջանքերը կենտրոնացվեն՝ իրագործելու վերը նշված նպատակները:

Այսպիսով, Հայաստանում մենք նպատակահարմար ենք համարում ընթացիկ բարեփոխումների վերանայումը և այդ ձեռնարկումների սոցիալական, բարոյական և արժեքային ասպեկտներին գերակայություն տալը:

Անկախության և անցումային

10

տարիները Հայաստանում



Մարդկային զարգացման ազգային զեկույց

Հայաստան 2001

Մարդկային զարգացման ազգային զեկույցը (ՄՁԱԶ) պատրաստվել է ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի (ՄԱԶԾ) աջակցությամբ: Այս տպագրությունը հեղինակային իրավունքի գրանցման կարիք չունի և, առանց ՄԱԶԾ-ի կանխավ թույլտվության, ենթակա է ամբողջական կամ մասնակի վերահրատարակության, սակայն աղբյուրը պետք է անպայմանորեն նշվի: Ձեկույցը պաշտոնական փաստաթուղթ չէ, այն բովանդակում է հեղինակների կարծիքները և նպատակ չունի ներկայացնել ՄԱԿ-ի, ՄԱԶԾ-ի կամ ՀՀ կառավարության պաշտոնական տեսակետները: Հայաստանի ՄՁԱԶ 2001-ի էլեկտրոնային տարբերակը կարելի է գտնել նաև Ինտերնետ համաշխարհային ցանցում հետևյալ հասցեով.

<http://www.undp.am>